



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
2(106)2022



Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2(106)
2022

ISBN 1829-1155

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Յ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ

Գլխավոր խմբագիր
Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Խմբագիր
Ս. Խաչատրյան

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Մահմանադրական դատարանի սլաշտոնական դիրքորոշումների հետ: Մահմանադրական դատարանը սլաշտասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ՑՈՒՑՄՈՒՆՔԻ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ - **Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ**8
- ՀԱԿԸՆԴԴԵՄ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ - **Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**39
- ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ, ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐԵԼՈՎ ՆԱԽԿԻՆ ԵՎ ՆԵՐԿԱ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ) - **Ա. ՂԱԶԱՐՅԱՆ**51
- ԶՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂՇ ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ - **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** 91
- ՄԵՂՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԵՎ ՊԱՏԺԻ ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ - **Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ** 102

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

- ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ - **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**112

2(106)2022
◆ ՍԵՂԵԿԱԿԻ
◆ ՏԵՂԵԿԱԿԻ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
3

- ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ - **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** 120
- ՏԱՐԱԾԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԱՐՅԵՐՆ ՕՐԵՆՔԻ ԱՆԱԼՈԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԵՏ - **Կ. ԱԴԱՄՅԱՆ**129

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1647-1657)

- ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի ԱԺՈ-01-Ա ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1647, 29 ապրիլի 2022 թվականի)140
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ156
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1648, 3 մայիսի 2022 թվականի)180
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....185

- «ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՊԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԱԳԱ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1649, 3 մայիսի 2022 թվականի)196
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....200
- ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵՎ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1650, 6 մայիսի 2022 թվականի)211
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԵՎ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ237
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....246
- 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՅԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԵՎ ՇԱՀՈՒՅԹՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆԶՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԲԱԶՄԱԿՈՂՄ ԿՈՆՎԵՆՅՈՒՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1651, 31 մայիսի 2022 թվականի)254
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....261

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ԱՆՅԿԱՑՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ.....273
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ.....275
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ.....276
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՆԻԴԵՐԼԱՆԴԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻՆ.....277
- ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԼԵՐ ԲԱԶԻ ՄԱԼՈՐԻԻ ՀԵՏ.....278
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԱՐԻԱ ՊԵՅՉԻՆՈՎԻՉ ԲՈՒՐԻՉԻՆ.....279
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՍՊԱՆՈՅԻ ՀԵՏ.....280
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ ԴՈՒՆՅԱ ՄԻՅԱՏՈՎԻՉԻ ՀԵՏ281

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(106)2022

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ282
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....283
- ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ.....284
- ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ.....285

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (IRZ) ՀԵՏ.....286
- ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ «ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ.....287



ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան

**ՑՈՒՑՄՈՒՆՔԻ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ամփոփագիր: Մինչդատական վարույթում ցուցմունքի դատական դեպոնացման ինստիտուտի էությունն այն է, որ դատական նիստում փաստացի իրականացվում է քննչական գործողություն՝ հարցաքննություն, որի պարագայում ստացվում է, որ դեպոնացման դատավարական կարգը կարող է պարունակել ինչպես նախաքննության, այնպես էլ դատական վարույթի տարրեր: Ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգի նկատմամբ վերաբերելի մասով (mutatis mutandis) կարող են կիրառվել նաև քննչական գործողությունների կարգը սահմանող ընդհանուր նորմերը: Դռնփակ դատական նիստում ցուցմունքի դեպոնացումը կատարվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 8-րդ բաժնի (դատական վարույթի ընդհանուր պայմանները) պահանջների՝ վերաբերելի մասով (mutatis mutandis) պահպանմամբ:

Հոգվածում քննարկվում են ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգի առանձին հիմնախնդիրներ՝ ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշումը, դատավորի կողմից այն քննարկելու ընթացակարգը, արձանագրման կարգը, ինչպես նաև՝ դեպոնացված ցուցմունքի ապացուցողական նշանակությունը: Յուրաքանչյուր ենթահարցի քննարկման արդյունքում հեղինակը ներկայացնում է խնդրի լուծման տարբերակները կամ կատարում է համապատասխան եզրահանգումներ:

Հիմնաբառեր. դեպոնացում, ցուցմունք, հարցաքննություն, դատավարական կարգ, հակընդդեմ հարցման իրավունք:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(106)2022

1. Ընդհանուր դրույթներ

1.1. *Ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգի ընդհանուր բնութագիրը* ՀՀ-ում: Ցուցմունքի դեպոնացման ինստիտուտի տարրերից է ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգը, որը ներառում է ցուցմունքի դեպոնացման միջնորդություն ներկայացնելու և այն քննարկելու կարգը, ցուցմունքի դեպոնացման ընթացակարգը, դեպոնացված ցուցմունքի արձանագրման կարգը:

Մինչդատական վարույթում ցուցմունքի դատական դեպոնացման ինստիտուտի էությունն այն է, որ դատական նիստում փաստացի իրականացվում է քննչական գործողություն՝ հարցաքննություն, որի պարագայում ստացվում է, որ դեպոնացման դատավարական կարգը կարող է պարունակել ինչպես նախաքննության, այնպես էլ դատական վարույթի տարրեր: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 29-րդ գլխում (քննչական գործողությունները) տեղակայված է հարցաքննության ընդհանուր պայմանների վերաբերյալ 217-րդ հոդվածը, որի 7-րդ մասում ամրագրված է ցուցմունքի դեպոնացման ընթացակարգով կատարվող հարցաքննության արձանագրման մասին հղում նախատեսող նորմ: Այս նորմից կարելի է եզրակացնել, որ ցուցմունքի դեպոնացման դատավարական կարգի նկատմամբ վերաբերելի մասով (*mutatis mutandis*) կարող են կիրառվել նաև քննչական գործողությունների կարգը սահմանող ընդհանուր նորմերը:

Ինչ վերաբերում է դռնփակ դատական նիստում ցուցմունքի դեպոնացմանը, ապա այն կատարվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 8-րդ բաժնի (դատական վարույթի ընդհանուր պայմանները) պահանջների՝ վերաբերելի մասով (*mutatis mutandis*) պահպանմամբ:

1.2. *Ցուցմունքի դատական դեպոնացման դատավարական կարգի հիմնական տարրերը:* ՀՀ քր. դատ. օր.-ով սահմանված են ցուցմունքի դեպոնացման միջնորդությամբ դատարան դիմելու սուբյեկտների շրջանակը, միջնորդությանը ներկայացվող պահանջները, ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշումը, դատավորի կողմից այն քննարկելու ընթացակարգը և արձանագրման կարգը:

Ցուցմունքը դեպոնացնելու միջնորդություն ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների համակարգը և միջնորդության վերաբերյալ հարցերը կքննարկվեն առանձին, ուստի սույն հոդվածում կքննարկենք երեք խումբ հարցեր՝ ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշումը, ցուցմունքի դեպոնացման ընթացակարգը և դեպոնացված ցուցմունքի ապացուցողական նշանակությունը:

2. Ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշումը

Ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը կայացնում է ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշում, որում պետք է նշվեն միջնորդությունը ներկայացրած վարույթի մասնակիցը, ցուցմունք տալու և դեպոնացմանը մասնակցելու համար հրավիրվող անձանց անունները, ինչպես նաև դեպոնացման վայրը, տարին, ամիսը, օրը և ժամը (<< քր. դատ. օր.-ի 308-րդ հոդվածի 1-ին մաս): Նշված նորմում գործածվող՝ «հրավիրվող անձանց անունները» ձևակերպումը պետք է մեկնաբանել տարածական, այսինքն՝ ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշման մեջ նշվում են հրավիրվող անձանց կարգավիճակը, ազգանունը, անունը, հայրանունը, անհրաժեշտության դեպքում՝ հասցեն և անձնական այլ տվյալներ:

Ցուցմունքի դեպոնացումը նշանակվում է ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշման կայացումից հետո՝ ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 10 օր հետո: Ցուցմունքի դեպոնացման օրը որոշելիս դատարանը հաշվի է առնում վարույթի մասնակիցների կողմից հակընդդեմ հարցում կատարելուն նախապատրաստվելու համար անհրաժեշտ ժամանակը (<< քր. դատ. օր.-ի 308-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր): Ցուցմունքի դեպոնացման ողջամիտ ժամկետը գնահատելիս պետք է նկատի ունենալ, թե ինչ հիմքով է ցուցմունքը դեպոնացվում: Դատարան ներկայանալու հնարավորություն չունեցող անձի ցուցմունքի դեպոնացման դեպքում, ողջամիտ ժամկետը որոշելիս, պետք է գնահատել, թե երբ կարող է վրա հասնել այն հանգամանքը, որն անհնարին է դարձնելու անձի՝ դատարան ներկայանալը: Այսպես՝ եթե վկան կամ տուժողը պետք է մեկնեն Հայաստանի Հանրապետությունից, ապա դատարանը պետք է պարզի մեկնելու հնարավոր օրը և դեպոնացման օրը նշանակի մինչ մեկնելը:

Ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքով օժտված անձի ցուցմունքների դեպոնացման դեպքում ողջամիտ ժամկետը որոշելիս պետք է հաշվի առնել, թե դատավարության որ ժամանակահատվածում է հավանական, որ անձը կհրաժարվի ցուցմունք տալուց: Այսպես՝ եթե մեղադրյալի կինը նախաքննության ընթացքում ամուսնու դեմ տվել է ցուցմունք, ապա ցանկալի է, որ նրա ցուցմունքը դեպոնացվի մինչև երկրորդ անգամ հարցաքննելը, որի ընթացքում անձը կարող է հրաժարվել ցուցմունք տալուց:

Ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է միջնորդությունը ներկայացրած անձին, ինչպես նաև վարույթի այն մասնակիցներին, որոնց մասնակցությունն անհրաժեշտ է դեպոնացմանը: Վարույթի այդ մասնակիցներին ուղարկվում են նաև

ՍԱՀՄԱՆԱՂՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(106)2022

հակընդդեմ հարցման իրավունքը պատշաճորեն իրականացնելու համար անհրաժեշտ նյութերը (ՀՀ քր. դատ. օր.-ի 308-րդ հոդվածի 4-րդ մաս):

3. Ցուցմունքի դեպոնացման ընթացակարգը

3.1. ՀՀ քր. դատ. օր.-ի 8-րդ բաժնի՝ վերաբերելի կանոնները: Ցուցմունքի դեպոնացումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ օրենսգրքի 8-րդ բաժնի պահանջների՝ վերաբերելի մասով (*mutatis mutandis*) պահպանմամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 1-ին մաս): ՀՀ քր. դատ. օր.-ի 8-րդ բաժինը վերաբերում է դատական վարույթի ընդհանուր պայմաններին, որը ներառում է հետևյալ ինստիտուտները՝ ընդդատությունը (գլուխ 33), դատական վարույթի կարգին վերաբերող պայմանները (գլուխ 34), դատական վարույթի մասնակիցներին վերաբերող պայմանները (գլուխ 35), դատական վարույթի այլ պայմաններ (գլուխ 36):

Մեկնաբանվող դրույթից բխում են հետևյալ պահանջները:

Առաջին՝ դատական վարույթի համար նախատեսված ընդհանուր պայմանները կիրառելի են ցուցմունքի դեպոնացման ընթացակարգի նկատմամբ: Բանն այն է, որ դատական վարույթի ընդհանուր պայմանների՝ *mutatis mutandis* կիրառման կանոնը զետեղված է ցուցմունքի դեպոնացման ընթացակարգերին վերաբերող ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածում, ուստի այն ինքնին կիրառելի չէ ՀՀ քր. դատ. օր.-ի 307-րդ և 308-րդ հոդվածներով նախատեսված հարաբերությունների նկատմամբ:

Եթե ՀՀ քր. դատ. օր.-ի 8-րդ բաժնում նախատեսված չեն դեպոնացման ընթացակարգի համար անհրաժեշտ նորմեր, ապա ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 1-ին մասում նշված կանոնը չի արգելում, որպեսզի դեպոնացման ընթացակարգի և արձանագրման հարաբերությունների նկատմամբ կիրառվեն ՀՀ քր. դատ. օր.-ի ընդհանուր դրույթները: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է, որ ցուցմունքի դեպոնացման արձանագրությունը կազմվում է «սույն օրենսգրքի» վերաբերելի պահանջների պահպանմամբ, ուստի ցուցմունքի դեպոնացման արձանագրության նկատմամբ կարող են կիրառվել նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 8-րդ հոդվածում ամրագրված՝ քրեական վարույթի ամրագրման վերաբերյալ կանոնները (այս մասին հաջորդիվ):

Երկրորդ՝ ցուցմունքը դատական կարգով դեպոնացնելիս դատական վարույթի ընդհանուր պայմանները կիրառելի են այնքանով, որքանով համապատասխանում են դեպոնացման էությանը (*mutatis mutandis*): Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ գլխով սահմանված դատական վարույթի մասնակիցներին վերաբերող մի շարք պայմաններ կիրառելի չեն ցուցմունքի դատական դեպոնացման վարույթի նկատմամբ, քանի որ մեկնա-

բանվող հողվածում սահմանված է, որ պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի չներկայանալը խոչընդոտ չէ դատական դեպոնացում կատարելու համար՝ բացառությամբ պաշտպանի առաջին անգամ չներկայանալու դեպքի:

Երրորդ՝ այս կանոնն ընդհանրացնելու դեպքում կարելի է նշել, որ նախաքննության ընթացքում ցուցմունքը դեպոնացնելիս նախաքննության և դատական վարույթին վերաբերող պայմանների մրցակցության դեպքում պետք է նախապատվություն տալ դատական վարույթի ընդհանուր պայմաններին:

3.2. Գուցմունքի դեպոնացմանը մասնակցող անձինք

3.2.1. Մասնակիցների ընդհանուր համակարգը: Դեպոնացմանը մասնակցում են միջնորդություն ներկայացրած անձը, այն անձը, որի ցուցմունքը պետք է դեպոնացվի (դեպոնենտ), հակընդդեմ հարցման իրավունք ունեցող անձը (այդ թվում՝ փաստաբանը), պաշտպանը, օրինական ներկայացուցիչը, լիազոր ներկայացուցիչը: Եթե դեպոնացվում են վկայի կամ տուժողի ցուցմունքները, ապա դեպոնացմանը կարող են մասնակցել նրա օրինական և լիազոր ներկայացուցիչները, իսկ որպես հակընդդեմ հարցման իրավունքի կրող՝ մեղադրյալը, նրա պաշտպանը, գույքային պատասխանողը, նրա ներկայացուցիչները: Անչափահաս վկաների և տուժողների ցուցմունքների դեպոնացմանը (հարցաքննությանը) կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ մասնակցում է նաև հոգեբանը (*mutatis mutandis* ՀՀ քր. դատ. օր.-ի 329-րդ հոդվածի 2-րդ մաս): Քրեական վարույթի լեզվին չտիրապետող անձի ցուցմունքի դեպոնացմանը մասնակցում է թարգմանիչը:

3.2.2. Քննիչի և դատախազի մասնակցությունը: Եթե քննիչը ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդություն ներկայացրած անձն է, ապա դատական նիստին մասնակցելը նրա ծառայողական պարտքն է: Եթե դեպոնացում կատարելու միջնորդություն ներկայացրել է վարույթի մասնավոր մասնակիցը, ապա քննիչի՝ դատական նիստին մասնակցելը նպատակահարմար է, քանի որ նա մինչդատական վարույթում ապացույց հավաքող հիմնական սուբյեկտն է և պետք է անմիջապես ընկալի և գնահատի դեպոնացված ցուցմունքը:

Եթե նախաքննության կատարումը հանձնարարվել է քննչական խմբին, ապա ցուցմունքի դեպոնացմանը կարող են մասնակցել ինչպես խմբի ղեկավար քննիչը, այնպես էլ՝ մյուս բոլոր քննիչները, անկախ նրանից, թե ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը որ քննիչն է ներկայացրել:

ՍԱՀՄԱՆԱՂՈՎՎԱՆ ՂԱՏԱՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

Մինչդատական վարույթում դատախազը քննչական գործողություններին, այդ թվում՝ հարցաքննությանը մասնակցելու լիազորություն չունի: Ինչպես նշվեց, դատախազը չունի նաև ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդություն ներկայացնելու լիազորություն, սակայն դա չի նշանակում, որ նա չունի ցուցմունքի դեպոնացման դատական նիստին մասնակցելու հնարավորություն: ՀՀ քր. դատ. օր.-ի 38-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազը իրավասու է մասնակցելու դատական երաշխիքների վարույթին: Ցուցմունքի դատական դեպոնացումը մինչդատական վարույթի դատական երաշխիքներից է:

Դատախազը, ով մինչդատական վարույթում իրականացնում է քրեական հետապնդման հարուցման, օրինականության նկատմամբ հսկողության, իսկ դատական վարույթի ընթացքում՝ նաև հանրային մեղադրանքի պաշտպանության գործառույթներ, պետք է մասնակցի հատկապես մեղադրյալի ցուցմունքի դեպոնացմանը: Այս դեպքում *mutatis mutandis* կիրառելի է ՀՀ քր. դատ. օր.-ի 273-րդ հոդվածի (հանրային մեղադրողի և պաշտպանի մասնակցությունը դատական նիստին և նրանց չներկայանալու հետևանքները) կարգավորումները:

Ցուցմունքի դեպոնացմանը դատախազի մասնակցության դեպքում հարց է ծագում, թե գործառույթային տեսանկյունից դատախազն ինչ կարգավիճակով է մասնակցում այդ գործողությանը՝ որպես հետապնդում հարուցող դատախազ, թե՞ հսկող դատախազ, թե՞ հանրային մեղադրող: Նախաքննության ընթացքում դատախազը հարուցում է քրեական հետապնդում և հսկողություն է իրականացնում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ, սակայն ցուցմունքի՝ դատական դեպոնացման դեպքում դատախազը չի կարող հանդես գալ որպես հսկողություն իրականացնող անձ, քանի որ այս գործընթացի պատշաճության ապահովման պարտականությունը դրված է դատավորի վրա, իսկ դատախազը չի կարող հսկողություն իրականացնել դատավորի գործողությունների նկատմամբ: Հիմնական դատախոսների (արդարադատության իրականացման) ընթացքում դատախազն իրականացնում է հանրային մեղադրանքի պաշտպանության գործառույթ, սակայն ցուցմունքը դեպոնացնելու դեպքում դատախազը հանդես չի գալիս որպես մեղադրող, քանի որ այդ ժամանակ բացակայում է դատական կարգով քննարկման ենթակա մեղադրանքը:

Այսպիսով՝ ցուցմունքը դեպոնացնելիս դատախազի մասնակցությունը դասական իմաստով քրեական հետապնդման հարուցման կամ մեղա-

դրանքի պաշտպանության գործառույթների շրջանակներում չէ¹, պարզապես դատախազը տեխնիկապես մասնակցում է ապացուցման գործընթացին, որի միջոցով հնարավորություն է ստանում ինչպես մինչդատական, այնպես էլ դատական վարույթներում պատշաճ իրականացնել իր սահմանադրական գործառույթները:

3.2.3. *Պաշտպանի պարտադիր մասնակցությունը*: Պետք է առանձնացնել ցուցմունքի դեպոնացմանը պաշտպանի մասնակցության երկու իրավիճակ:

Առաջին իրավիճակում պաշտպանը մասնակցում է վկայի կամ այլ անձի (տուժողի, մեղադրյալի հանցակցի, փորձագետի) ցուցմունքի դեպոնացմանը, եթե այդ անձի ցուցմունքն առնչվում է մեղադրյալին: Այս պարագայում պաշտպանի մասնակցությունը պարտադիր է.

«Վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից մեղադրյալի հրաժարվելը կամ անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, եթե դատարանը կայացրել է տվյալ մեղադրյալին առնչվող ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշում (ՀՀ քր. դատ. օր.-ի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետ)»:

Վկայի կամ այլ անձի ցուցմունքի դեպոնացմանը պաշտպանի պարտադիր մասնակցության մասին կարգավորում նախատեսվել կարելի է բացատրել մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման նպատակով:

Երկրորդ իրավիճակում պաշտպանը մասնակցում է մեղադրյալի ցուցմունքի դեպոնացմանը: Մեղադրյալի ցուցմունքի դեպոնացմանը պաշտպանի մասնակցությունը թեև ֆորմալ-իրավաբանական (ՀՀ քր. դատ. օր.-ի 46-րդ հոդվածի 2-րդ մասի) տեսանկյունից պարտադիր չէ, սակայն օրենքով նախատեսված են այնպիսի նորմեր, որոնք նախաքննության ընթացքում մեղադրյալի հարցաքննությանը պաշտպանի մասնակցությունը փաստացի դարձնում են պարտադիր: Այսպես ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված է.

¹Гамбарян А.С., Симонян С.А. Судебное депонирование показаний в современном уголовном процессе. - М.: Юрлитинформ, 2016.

«Պաշտպանի բացակայությամբ մեղադրյալի տված ցուցմունքները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, եթե մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից»:

ՀՀ քր. դատ. օր.-ում նախատեսված է նույնաբովանդակ մեկ այլ նորմ.

«Մինչդարևական վարույթում մեղադրյալի տված ցուցմունքները չեն կարող հրապարակվել, եթե դրանք ստացվել են պաշտպանի բացակայությամբ, և մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից (ՀՀ քր. դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 2-րդ մաս)»:

Սկզբունքային նշանակություն ունի այն հարցը, թե Օրենսդրի կողմից հետևողականորեն սահմանված այս նորմերը վերաբերում են միայն ընդհանուր կարգով մեղադրյալի հարցաքննությանը, թե՞ նաև մեղադրյալի ցուցմունքի դեպոնացմանը: Այս հարցին կարելի է պատասխանել իրավական նորմերի մեկնաբանման սուբյեկտիվ (Օրենսդրի կամքի բացահայտման) կամ օբյեկտիվ (օրենքի տեքստի վերլուծության) մոտեցումների հիման վրա:

Այս հարցի վերաբերյալ Օրենսդրի կամքը բացահայտելու համար պետք է վերլուծել ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծում առկա մոտեցումները և դրանց հետագա էվոլյուցիան: Մինչև ՀՀ քր. դատ. օր.-ի ընդունումը, ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծի 97-րդ հոդվածի 6-րդ մասում նախատեսված էր հետևյալ կանոնը.

«Պաշտպանի բացակայությամբ մեղադրյալի տված և չդեպոնացված ցուցմունքները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, եթե մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանից»¹:

¹ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծում նախատեսված էր կանոն, որի համաձայն՝ պաշտպանի մասնակցությամբ ցուցմունք տալու ցանկություն հայտնելու դեպքում դատարանը կազմում է ցուցմունքի դեպոնացում չիրականացնելու մասին արձանագրություն, որն ստորագրում են մեղադրյալը և նախագահող դատավորը: Փաստորեն Նախագծով սահմանված մոտեցմամբ՝

Նախագծի այս դրույթից բխում էր, որ դատարանում կարող էր օգտագործվել մեղադրյալի այն ցուցմունքը, որը տրվել էր կամ պաշտպանի մասնակցությամբ, կամ դեպոնացվել էր: Օրենսդիրը, 2021թ.-ին ՀՀ քր. դատ. օր.-ն ընդունելիս, փաստորեն Նախագծում արտացոլված այս մոտեցումից հրաժարվեց և մինչդատական վարույթում մեղադրյալի ցուցմունքները դատարանում օգտագործելու հարցում (եթե մեղադրյալը հրաժարվել է ցուցմունքից) կարևորությունը տվեց պաշտպանի մասնակցության երաշխիքին:

ՀՀ քր. դատ. օր.-ի ուղեցույցի հեղինակները նշում են.

«Մեղադրյալի հայտնած որևէ տեղեկության հետագա օգտագործումը բացառում է, եթե դրանք ստացվել են պաշտպանի բացակայությամբ, և մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից, նույնիսկ եթե մինչդատական վարույթում տվյալ մեղադրյալի ցուցմունքը դեպոնացվել է (...):»¹:

Այսպիսով՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 6-րդ մասի, 330-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանման սուբյեկտիվ տեսության հիման վրա կարելի է եզրակացնել, որ եթե մինչդատական վարույթում մեղադրյալը հարցաքննվել է առանց պաշտպանի մասնակցության, ապա դատարանում ցուցմունքից հրաժարվելու դեպքում, մեղադրյալի ցուցմունքը չի կարող օգտագործվել (հրապարակվել), նույնիսկ եթե ցուցմունքը դեպոնացվել է (առանց պաշտպանի մասնակցության):

Գործնականում միշտ առկա է իրական ռիսկ, որ մեղադրյալը դատարանում կարող է հրաժարվել մինչդատական վարույթում տված ցուցմունքից, հատկապես, եթե ցուցմունքը խոստովանական բնույթի է, ուստի մեղադրյալի հարցաքննությանը պաշտպանի մասնակցությունը բոլոր դեպքերում *փաստացի* դառնում է պարտադիր (այդպես է պահանջում արդարադատության շահը):

պաշտպան ունենալու ցանկությունն ինքնին բացառում էր դեպոնացումը: Ուստի մեկ երաշխիքի առկայությունն ինքնին բավարար էր մեղադրյալի ցուցմունքը դատարանում օգտագործելու համար:

¹ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Եր.: Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 482:

Եթե մեղադրյալի հարցաքննությանը պաշտպանի մասնակցությունը փաստացի պարտադիր է, ապա հարց է ծագում, թե քննիչն ինչ նպատակով պետք է դեպոնացնի մեղադրյալի ցուցմունքը: Որոշ իրավիճակներում մեղադրյալի ցուցմունքի դեպոնացումը և պաշտպանի մասնակցությունը կարող են փոխլրացնել միմյանց: Մեղադրյալի ցուցմունքը քննիչը պետք է դեպոնացնի, եթե առկա են հիմքեր ենթադրելու, որ նա դատարանում իրավաչափորեն կարող է հրաժարվել ցուցմունք տալուց: Իսկ եթե առկա է նաև ռիսկ, որ մեղադրյալը դատարանում կարող է հրաժարվել մինչդատական վարույթում տված ցուցմունքից, ապա ցուցմունքի դեպոնացմանը պետք է մասնակից դարձնել նաև պաշտպանին: Փաստորեն մեղադրյալի ցուցմունքի դեպոնացումը հնարավորություն կտա հրապարակելու նրա՝ մինչդատական վարույթում տված ցուցմունքը, եթե նա դատարանում օգտվի ցուցմունք չտալու իր իրավունքից, իսկ պաշտպանի մասնակցությունը հնարավորություն կտա հրապարակելու մեղադրյալի ցուցմունքը, եթե նա նաև հրաժարվի մինչդատական վարույթում տված ցուցմունքից:

Ի դեպ, եթե ՀՀ քր. դատ. օր.-ի տեքստը պարզաբանենք ոչ թե մեկնաբանման սուբյեկտիվ տեսության (Նախագծի դրույթների հիման վրա Օրենսդրի ենթադրյալ կամքը բացահայտելու եղանակով), այլ մեկնաբանման օբյեկտիվ դոկտրինի հիման վրա, ապա հնարավոր չէ միանշանակ պնդել, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 6-րդ մասում, 330-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված արգելքները վերաբերում են նաև մեղադրյալի՝ դեպոնացված ցուցմունքի օգտագործմանը: Բանն այն է, որ նշված արգելքների փոխարեն ձևակերպումը և դրա համակարգային կապը դեպոնացման ինստիտուտի հետ թույլ է տալիս եզրակացնելու, որ այդ արգելքները չեն վերաբերում մեղադրյալի ցուցմունքի դեպոնացմանը: Բանն այն է՝ ցուցմունքի դեպոնացման նպատակն ապացուցման պարզաճությունն ապահովելն է, ուստի եթե մինչդատական վարույթում մեղադրյալի ցուցմունքը օրենքով սահմանված կարգով դեպոնացվել է, ապա պետք է ելնել այն ենթադրությունից, որ դեպոնացման ընթացակարգերում ներդրված երաշխիքների պայմաններում ձևավորվել է պարզաճ ցուցմունք, նույնիսկ եթե պաշտպանը չի մասնակցել դեպոնացմանը:

3.2.4. *Ցուցմունքի դեպոնացումը մեղադրյալի բացակայության պայմաններում:* Դատական դեպոնացման միջոցով ապացուցման պատշաճության ապահովման հարցում մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի իրականացումն ունի սկզբունքային նշանակություն, ուստի առաջին հայացքից կարող է թվալ, որ մեղադրյալի բացակայությամբ ցուցմուն-

քի դեպոնացումն անթույլատրելի է: Մինչդեռ հարցը բազմաշերտ է և պահանջում է համալիր վերլուծություն:

Մեղադրյալի բացակայությամբ ցուցմունքի դեպոնացման հարցը կարող է ծագել հետևյալ իրավիճակներում.

*Առաջին*¹ առկա է մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձ, սակայն նա գիտակցաբար և կամավոր, կամ հակաիրավական վարքագծով² (օրինակ՝ փախուստի դիմելով) հրաժարվել է ցուցմունքի դեպոնացմանը մասնակցելու և հակընդդեմ հարցման իր իրավունքներից: Այս իրավիճակում դեպոնացմանը մեղադրյալի բացակայությունը, ընդհանուր առմամբ, բացասաբար չի ազդի ցուցմունքի պատշաճության վրա, քանի որ, ինչպես նշվեց, եթե դեպոնենտի ցուցմունքն առնչվում է մեղադրյալին, ապա պաշտպանի մասնակցությունը պարտադիր է: Այսինքն, մեղադրյալը, թեև չի մասնակցում ցուցմունքի դեպոնացմանը, սակայն այդ գործընթացին մասնակցում է նրա պաշտպանը, ով կարող է իրականացնել հակընդդեմ հարցման իրավունքը:

*Երկրորդ*³ ենթադրյալ հանցանք կատարած անձը, ում նկատմամբ պետք է հարուցել քրեական հետապնդում, դեռևս պարզված չէ, սակայն հիմքեր կան ենթադրելու, որ դեպքին ականատես օտարերկրացի վկան կարող է մեկնել Հայաստանի Հանրապետությունից և հիմնական դատալուծմանը ներկայանալու հնարավորություն չի ունենա: Մինչև ենթադրյալ հանցանք կատարած անձին պարզելը և նրա նկատմամբ հետապնդում հարուցելը, վկայի ցուցմունքը դեպոնացնելու դեպքում կստացվի, որ բացակայում է մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձը, այսինքն՝ հակընդդեմ հարցման իրավունքի կրողը:

Հակընդդեմ հարցման իրավունքի կրողի բացակայությունն անկասկած բացասաբար է ազդում դեպոնացված ցուցմունքի պատշաճության վրա: Մյուս կողմից, եթե մեղադրյալի բացակայության գործոնով պայմանավորված՝ վկայի ցուցմունքը չդեպոնացվի, ապա հետագայում այդ ցուցմունքը դատարանում հնարավոր չի լինի հրապարակել և գնահատել՝ դատարանում ցուցմունքը հրապարակելու իրավաչափության պայմանների («միակն է կամ վճռորոշն է» պայմանի, հակակշռող գործոնների²)

¹Гамбарян А.С. Отказ от права (утрата права) на встречный опрос посредством совершения противоправного деяния (forfeiture by wrongdoing) // Всероссийский криминологический журнал. 2019. Т. 13., № 2. - С. 322–331.

²Մեղադրյալի դատապարտումը հակակշռող բավարար գործոնների բացակայության պայմաններում չի կարող միայն կամ առավելապես հիմնվել այնպիսի անձի ցուցմունքի վրա, որի հակընդդեմ հարցման հնարավորություն տվյալ մեղադրյալը կամ նրա պաշտպանը կամ ներկայացուցիչը չի ունեցել (<< քր. դատ. օր.-ի 22-րդ հոդվածի 7-րդ մաս):

լույսի ներքո: Բանն այն է, որ Օրենսդիրը հրաժարվել է դատարանում վկայի ցուցմունքը հրապարակելու հետևյալ հիմքից. «վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը» (1998թ. ՀՀ քր. դատ. օր.-ի 342-րդ հոդվածի 1-ին մաս): Ոստի նկարագրված իրավիճակում ցուցմունքը դեպոնացնելն այն դատարանում հրապարակելու և գնահատելու միակ խողովակն է (ՀՀ քր. դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 1-ին մաս):

Հիմնական դատալսումների ընթացքում դատարանը չպետք է անտեսի նաև այն հանգամանքը, որ նկարագրված իրավիճակը պարունակում է վարույթի հանրային մասնակիցների կողմից գիտակցաբար ուշացումով քրեական հետապնդում հարուցելու (այդ ուղղությամբ միջոցառումներ չձեռնարկելու) և անձին հակընդդեմ հարցման իրավունքից զրկելու ռիսկ: Արդարադատություն իրականացնող դատարանը նման անբարեխիղճ վարքագիծը՝ քրեական հետապնդումն արհեստականորեն ուշացումով հարուցելը, պետք է դիտարկի դատական դեպոնացման շրջանակներում կատարված հարցաքննության կարգի էական խախտում և քննարկի դեպոնացված ցուցմունքի թույլատրելիության հարցը (այս մասին հաջորդիվ):

3.2.5. *Դեպոնենտի մասնակցության ապահովումը և դատական նիստին չներկայանալու հետևանքները:* Դատական վարույթի մասնակիցներին վերաբերող պայմանների համաձայն՝ դատական վարույթին ներգրավված և պատշաճ ծանուցված բոլոր անձինք պարտավոր են ժամանակին ներկայանալ դատական նիստին՝ ունենալով անձը հաստատող փաստաթուղթ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև լիազորությունը հաստատող փաստաթուղթ (mutatis mutandis ՀՀ քր. դատ. օր.-ի 271-րդ հոդվածի 1-ին մաս):

Դեպոնացման դատական նիստի մասին պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի չներկայանալը խոչընդոտ չէ ցուցմունքի դեպոնացում կատարելու համար (ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 2-րդ մաս): Եթե նիստի մասին պատշաճ ծանուցված վարույթի մասնակիցը գիտակցված և կամավոր չի ներկայանում դատական նիստին, ապա դա պետք է համարել դատական նիստին մասնակցելու իրավունքից և հակընդդեմ հարցման իրավունքից հրաժարում: Իրավունքից հրաժարվելու դեպքում անձը հիմնական դատալսումների ընթացքում զրկվում է տվյալ անձին խաչաձև հարցաքննելու իրավունքից¹:

¹Այս մասին տե՛ս **Гамбарян А.С.** Отказ от права и вопросы уголовно-процессуального вмешательства. - М.: Юрлитинформ, 2018:

ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված կանոնը չի վերաբերում դեպոնենտին, քանի որ առանց նրա մասնակցության դատական դեպոնացում հնարավոր չէ: Դեպոնենտի մասնակցությունը պետք է կազմակերպի ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդություն ներկայացրած անձը: Եթե դեպոնենտն առանց հարգելի պատճառի չի ներկայացել դատական նիստին, ապա դատարանի որոշմամբ կարող են կիրառվել օրենսգրքով նախատեսված դատավարական սանկցիաներ՝ հետագա դատական նիստերին նրա ներկայությունն ապահովելու նպատակով (mutatis mutandis ՀՀ քր. դատ. օր.-ի 271-րդ հոդվածի 3-րդ մաս):

Միջնորդություն ներկայացրած անձի մասնակցությունը, որպես կանոն, պարտադիր է. եթե միջնորդություն ներկայացրած անձը չմասնակցի դատական նիստին, ապա դժվար է հասկանալ, թե ով է դեպոնենտին հարցեր տալու (դատավորը չունի դեպոնենտին ըստ էության հարցեր տալու իրավունք):

Պատշաճ ծանուցված պաշտպանի կողմից ցուցմունքի դեպոնացման դատական նիստին մեկ անգամ չներկայանալու դեպքում դատախոսները հետաձգվում են (ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 2-րդ մաս): Սա չի վերաբերում պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերին:

3.3. Ծանր հիվանդի ցուցմունքն արտագնա նիստում դեպոնացնելը: ՀՀ քր. դատ. օր.-ի 265-րդ հոդվածը (այն տեղակայված է օրենսգրքի 8-րդ բաժնում), ի տարբերություն նախորդ օրենսգրքի կարգավորումների², սահմանում է արտագնա դատական նիստ անցկացնելու դեպքերի սպառնիչ ցանկ, որտեղ ծանր հիվանդությանը տառապող վկայի կամ տուժողի ցուցմունքը նրա գտնվելու վայրում դեպոնացնելու և այդ նպատակով, օրինակ, դատական նիստը հիվանդանոցի տարածքում անցկացնելու հնարավորություն նախատեսված չէ: Ստեղծվում է մի իրավիճակ, որ մի կողմից՝ հիվանդ վկային, նրա ցուցմունքը դեպոնացնելու նպատակով, դատարան ներկայացնելը հնարավոր չէ (օրինակ՝ նրան ֆիզիկապես տեղաշարժելը կվտանգի նրա կյանքը), մյուս կողմից՝ իրավաբանորեն անհնարին է նաև ցուցմունքի դեպոնացման արտագնա դատական նիստը հիվանդանոցի տարածքում անցկացնելը: Այս փակուղային իրավիճակից

¹Դատավարական սանկցիաների մասին տե՛ս **Ղամբարյան Ա., Իսրայելյան Շ.** Քրեադատավարական սանկցիաները (գիտագործնական մեկնաբանություններ): Եր., Տիգրան Մեծ, 2022:

²1998թ. ՀՀ քր. դատ. օր.-ի 41-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում էր, որ գործը քննող դատավորի որոշմամբ կարող է անցկացվել արտագնա դատական նիստ, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

դուրս գալու միակ ճանապարհը contra legem իրավակիրառման դոկտրինին դիմելն է: Եթե հիվանդ վկայի ցուցմունքը դեպոնացնելու նպատակով դատական նիստը հիվանդանոցի տարածքում չանցկացվի, ապա նրա մահվան դեպքում չդեպոնացված ցուցմունքը դատարանում հնարավոր չի լինի հրապարակել: Այս իրավիճակում contra legem իրավակիրառման հիմքում ընկած են այնպիսի սկզբունքային դրույթներ, ինչպիսիք են արդարադատության շահից բխող՝ մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի և դատական վարույթի անմիջականության պայմանի ապահովումը:

3.4. Հարցաքննության ընթացակարգի պահպանումը: Դեպոնացման ընթացքում դատարանն ապահովում է օրենսգրքով սահմանված՝ հարցաքննության ընթացակարգի պահպանումը (ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 3-րդ մաս): Դատական հարցաքննության ընդհանուր կարգը սահմանված է ՀՀ քր. դատ. օր.-ի 10-րդ բաժնում զետեղված 326-րդ հոդվածով: Պետք է քննարկել, թե հարցաքննության ընթացակարգի վերաբերյալ բազմաթիվ կանոններից որոնք են վերաբերելի քննարկվող ինստիտուտին:

3.4.1. Դատական հարցաքննության վերաբերելի կանոնները: ՀՀ քր. դատ. օր.-ի 326-րդ հոդվածում ամրագրված նորմերից դեպոնացմանը կարող են վերաբերելի համարվել ստորև նշված կանոնները:

Առաջին՝ հարցաքննությունն սկսելուց առաջ նախագահողը պարզում է հարցաքննվողի ինքնությունը, նրա հարաբերությունները վարույթի մասնակիցների հետ, բացատրում ցուցմունք տալու հետ կապված՝ օրենսգրքով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև այդ պարտականությունների չկատարման համար սահմանված պատասխանատվությունը:

Երկրորդ՝ մինչև հարցաքննությունն սկսելը հարցաքննվողն անում է հետևյալ բովանդակությամբ բանավոր հայտարարություն.

«Ես՝ անուն-ազգանուն, ցուցմունք տալիս ասելու եմ ճշմարտությունը, ողջ ճշմարտությունը և չեմ ասելու ոչինչ, բացի ճշմարտությունից»:

Տեսության մեջ սա անվանում են «ճշմարտացիության հայտարարություն», որն ունի ինչպես արարողակարգային, այնպես էլ բարոյահոգեբանական մեծ նշանակություն, քանի որ ցուցմունք տալու հետ կապված

պարտականությունների վերաբերյալ ֆորմալ նախազգուշացվելուց բացի անձը հրապարակայնորեն հավաստիացնում է, որ դրսևորելու է ինչպես իրավական, այնպես էլ բարոյական առումով ակնկալվող դրական վարքագիծ¹:

Ճշմարտացիության հայտարարությունը պետք է տարբերակել սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին նախազգուշացումից:

3.4.2. *Սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին նախազգուշացնելը:* ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածում, 8-րդ բաժնում, ինչպես նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 326-րդ հոդվածում սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին նախազգուշացնելու վերաբերյալ հատուկ նորմ նախատեսված չէ: Այնուամենայնիվ, ձևավորված պրակտիկայի համաձայն՝ հիմնական դատալսումների ընթացքում դատավորները հարցաքննվող անձին նախազգուշացնում են սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Ցուցմունքը դեպոնացնելիս նույնպես պետք է հարցաքննվողին զգուշացնել սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

Նախ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 57-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ անձը՝ որպես վկա կարող է հարցաքննվել (...) ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին գրավոր տեղեկացվելուց հետո: Սա ընդհանուր նորմ է, որը վերաբերում է վկայի հարցաքննության բոլոր ձևաչափերին, այդ թվում՝ դեպոնացման շրջանակում վկայի հարցաքննությանը:

Երկրորդ՝ եթե մեղադրյալը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում, ապա քննիչը նրան տեղեկացնում է ճիշտ ցուցմունք տալու պարտականության և նախազգուշացնում սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Այդ փաստը հավաստվում է մեղադրյալի ստորագրությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 221-րդ հոդվածի 3-րդ մաս): Այս նորմը վերաբերում է քննիչին, սակայն այն անալոգիայի կարգով կարող է կիրառվել նաև դատական վարույթի ընթացքում, քանի որ դրանով որոշակիացվում են մեղադրյալի վարքագծի թույլատրելի սահմանները:

¹ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Եր.: Եվրոպայի խորհուրդ, 2022, էջեր 476-475:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(106)2022

Երրորդ՝ հարցաքննությունը սկսելուց առաջ նախագահողը հարցաքննվողին բացատրում է պարտականությունների չկատարման համար սահմանված պատասխանատվության մասին (ՀՀ քր. դատ. օր.-ի 326-րդ հոդվածի 1-ին մաս): Մեղադրյալի և տուժողի օրենսդրական պարտականություններում ուղիղ նախատեսված չէ ճիշտ ցուցմունք տալու պարտականություն, սակայն ՀՀ քր. օր.-ի 504-րդ հոդվածի (սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն կամ կեղծ կարծիք տալը կամ սխալ թարգմանություն կատարելը) և դատավարական նորմերի համակարգային մեկնաբանությունից բխում է, որ մեղադրյալը և տուժողը դատական վարույթների ընթացքում կրում են ճիշտ ցուցմունք տալու պարտականություն:

3.4.3. *Բացարկի լուծումը:* Մինչդատական և դատական վարույթի ընթացքում դատավարության մասնակիցներին հայտնված բացարկը լուծող սուբյեկտները տարբեր են: ՀՀ քր. դատ. օր.-ում սույն հարցի վերաբերյալ սահմանված են հետևյալ ընդհանուր նորմերը.

1) ինքնաբացարկը, բացարկն իր իրավասության սահմաններում լուծում է վարույթն իրականացնող մարմինը (ՀՀ քր. դատ. օր.-ի 65-րդ հոդվածի 1-ին մաս):

2) դատավորին հայտնված բացարկը լուծում է տվյալ դատավորը (ՀՀ քր. դատ. օր.-ի 65-րդ հոդվածի 4-րդ մաս):

3) մինչդատական վարույթում դատախազին հայտնված բացարկը լուծում է վերադաս դատախազը, իսկ դատական վարույթում՝ համապատասխան դատարանը (ՀՀ քր. դատ. օր.-ի 65-րդ հոդվածի 5-րդ մաս):

4) քննիչին հայտնված բացարկը լուծում է հսկող դատախազը (ՀՀ քր. դատ. օր.-ի 65-րդ հոդվածի 6-րդ մաս):

Ժամանակին առաջարկել ենք՝ օրենսդրությամբ սահմանել դրույթ, ըստ որի՝ ցուցմունքը դեպոնացնելիս կողմերին հայտնված բացարկը լուծվում է մինչդատական վարույթի համար նախատեսված կարգով: Ցուցմունքի դեպոնացման դատական նիստի ընթացքում կողմերին բացարկ հայտնելու դեպքում դատավորը հետաձգում է նիստը՝ օրենքով սահմանված կարգով իրավասու մարմնի կողմից բացարկը լուծելու նպատակով¹: Այնուամենայնիվ՝ օրենսդրությամբ հստակ չի սահմանվել, թե դատական երաշխիքների վարույթով (մասնավորապես՝ ցուցմունքը դեպոնացնելիս) քննիչի, դատախազի կամ դեպոնացմանը մասնակցող այլ մասնակիցների բացարկն ով է լուծում:

¹Гамбарян А.С., Симонян С.А. Судебное депонирование показаний в современном уголовном процессе. - М.: Юрлитинформ, 2016. - С. 129.

Դատարանը՝ դատական երաշխիքների վարույթներով համարվում է վարույթն իրականացնող մարմին (ՀՀ քր. դատ. օր.-ի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), ուստի եթե այս դրույթը համակցում ենք ՀՀ քր. դատ. օր.-ի 65-րդ հոդվածի 1-ին մասի հետ (բացարկի միջնորդությունը լուծում է վարույթն իրականացնող մարմինը), ապա ստեղծվում է տպավորություն, որ ցուցմունքի դեպոնացման ընթացքում դատարանը՝ որպես վարույթ իրականացնող մարմին, լուծում է քննիչի և դատախազի բացարկը:

Այս դեպքում ծագում է մեկ այլ հարց՝ դատական երաշխիքների վարույթով քննիչին հայտնված բացարկի կապակցությամբ դատարանի որոշումը բացառում է քննիչի մասնակցությունը միայն ցուցմունքի դեպոնացմանը, թե՞ այդ որոշումը բացառում է նաև տվյալ վարույթով քննիչի կողմից նախաքննության իրականացումը: Ընդհանուր տրամաբանությունն այն է, որ դատական երաշխիքների վարույթով դատավորի կայացրած բացարկի մասին որոշումը գործում է միայն դատական երաշխիքների վարույթի սահմաններում, իսկ դրանից դուրս՝ այն ինքնին *իրավաբանական* հետևանքներ չի առաջացնում: Միևնույն ժամանակ, դատարանի այդ որոշումը պետք է առաջացնի *փաստացի* հետևանքներ, այսինքն՝ հսկող դատախազը կամ քննչական մարմնի ղեկավարը իրենց իրավասության սահմաններում պետք է քննարկեն տվյալ քննիչին փոխելու հարցը: Օրինակ՝ եթե դատարանում հայտնված բացարկի հիմքն այնպիսին է, որ այն կիրառելի է նաև նախաքննության ընթացքում, ապա քննչական մարմնի ղեկավարը նախաքննության կատարումը պետք է հանձնարարի իր անմիջական ենթակայության ներքո գործող այլ քննիչին:

3.4.4. Հարցեր տալու իրավունքը: Դեպոնացման շրջանակներում հարցաքննության կանչված անձին հարցեր տալու հարաբերությունների նկատմամբ *mutatis mutandis* կիրառելի են ՀՀ քր. դատ. օր.-ի 326-րդ հոդվածով նախատեսված կանոնները: Հարցաքննության կանչված անձին առաջինը հարցեր է տալիս այն կողմը, որի միջնորդությամբ իրավիրվել է անձը (ուղիղ հարցաքննություն): Ուղիղ հարցաքննությունից հետո անձին կարող է հարցեր տալ հակառակ կողմը (խաչաձև հարցաքննություն):

Ուղիղ հարցաքննության ընթացքում ուղղորդող հարցեր տալն արգելվում է: Կողմն իրավունք ունի առարկելու ուղղորդող հարցի դեմ: Նախագահողը կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ իրավասու է հանելու ուղղորդող կամ վարույթին չվերաբերող հարցերը: Խաչաձև հարցաքննության ընթացքում ուղղորդող հարցեր տալն իրավաչափ է:

Դատավորի կողմից դեպոնենտին հարցեր տալու հնարավորությունը պետք է քննարկել առանձին:

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԱՆ ՂԱՏՎՈՒՄ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 2(106)2022

3.4.5. *Դատավորի կողմից դեպոնենտին հարցեր տալը*: Ցուցմունքը դեպոնացնելիս դատավորը կարող է ըստ էության հարցեր տալ դեպոնենտին: Հարցադրման պատասխանը նախ՝ պետք է քննարկել դոկտորինալ, այնուհետև՝ պոզիտիվ իրավունքի տեսանկյունից:

Դոկտորինալ տեսանկյունից հարցն առնչվում է ապացույց հետազոտելիս դատավորի կարգավիճակին՝ դատավորը պե՞տք է լինի ակտիվ և իր նախաձեռնությամբ ձեռք բերի ապացույցներ կամ հարցաքննի վկաներին, թե՞ լինի պասիվ՝ պարզապես վերահսկելով հարցաքննության ընթացքի օրինականության ռեժիմը: Տ.Ն. Կարաբանովան նշում է, որ դատական քննության ընթացքում դատարանը պետք է լինի առավել ակտիվ՝ ձգտելով պարզել ճշմարտությունը, քանի որ ճշմարտություն չփնտրող պասիվ դատարանը չի կարող ամբողջ ծավալով պաշտպանել մարդու, պետության և հասարակության շահերը և կայացնել օրինական, հիմնավոր և արդարացի դատավճիռ¹: Ա.Ի. Կոնևան նույնպես նշում է, որ նախագահողը ոչ միայն օժտված է հարցաքննվողին հարցեր տալու իրավունքով, այլև ուղիղ և խաչաձև լրացուցիչ հարցաքննության իրավունքի սուբյեկտ է²:

Ի.Լ. Պետրովսինը դեմ է դատավորի ակտիվ դերակատարությանը՝ այն որակելով որպես ինկվիզիցիոն դատավարության ձեռքբերում: Մրցակցային դատավարությունում ապացույցների հետազոտում իրականացնում են կողմերը, իսկ դատավորը հետևում է, որ չխախտվի դատավարական կարգը³:

Արդարադատության այն մոդելում, որտեղ դատավորն ունի հարաբերականորեն ակտիվ դերակատարություն, նրան հնարավորություն է տրվում հարցաքննվող անձին տալու հարցեր. օրինակ՝ ՌԴ քր. դատ. օր-ի 278-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վկային առաջինը հարցեր է տալիս այն կողմը, որի միջնորդությամբ անձը հրավիրվել է դատարան: Դատավորը վկային հարցեր է տալիս կողմերի հարցաքննությունից հետո: Ուկրաինայի քր. դատ. օր-ի 352-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ ուղիղ և խաչաձև հարցաքննությունից հետո վկային հարցեր կարող են տալ տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց ներկայացուցիչը և օրինական ներկայացուցիչը, ինչպես նաև նախագահողը և դատավորները:

¹Карабанова Т.Н. Судебное следствие в уголовном процессе Российской Федерации: автореф. ... дисс. канд. юрид. наук. - М., 2008. - С.17.

²Конева С.И. Судебные допросы в уголовном процессе: доказательственное значение и порядок проведения: автореф. дисс. ... канд. юрид. наук. - Омск, 2013. - С. 10.

³Судебная власть / Под ред. Петрухина И.Л. - М.: Проспект, 2003. - С. 263-264.

Արդարադատության այն մոդելում, որտեղ դատավորն ունի պասիվ դերակատարություն, վկայի հարցաքննությունն իրականացնում են կողմերը: Վրաստանի քր. դատ. օր-ի 118-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեղադրանքի կողմի վկայի հարցաքննությունն սկսում է մեղադրանքի կողմը, և շարունակում է պաշտպանության կողմը, և հակառակը: Վրաստանի քր. դատ. օր-ի 244-246-րդ հոդվածները կարգավորում են ուղիղ և խաչաձև հարցաքննության կարգը: Նշված հոդվածներում բացակայում է դատավորի կողմից վկային հարցեր տալու մասին դրույթը:

Ցուցմունքը դեպոնացնելիս դեպոնենտին հարցեր տալու դատավորի լիազորությունը պետք է համապատասխանի ապացույցներ հետազոտելիս դատավորի ակտիվության կամ պասիվության ընդհանուր մոտեցմանը: Այլ կերպ ասած՝ եթե հիմնական դատախոսները կառուցված են հարաբերականորեն ակտիվ դատավորի հայեցակարգի վրա, ապա ցուցմունքը դեպոնացնելիս դատավորը պետք է ոչ միայն հետևի հարցաքննության ընդհանուր կարգի պահպանմանը, այլ նաև մասնակցի ապացուցմանը՝ հնարավորություն ունենալով ըստ էության հարցեր տալու դեպոնենտին:

Մինչդեռ այս հարցում Օրենսդիրը որդեգրել է ոչ հետևողական մոտեցում: Այսպես՝ հիմնական դատախոսների ընթացքում ՀՀ քր. դատ. օր-ի 326-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Նախագահողն իրավունք ունի անձին հարցեր տալու ուղիղ և խաչաձև հարցաքննություններն ավարտվելուց հետո: Դատարանի նախաձեռնությամբ կանչված անձին առաջինը հարցեր է տալիս նախագահողը, ապա մեղադրանքի և պաշտպանության կողմերը»:

Հետևողական տրամաբանությունը, հատկապես դատական վարույթի անմիջականության ապահովման պահանջը, թելադրում է նույն մոտեցումը ցուցաբերել նաև ցուցմունքի դեպոնացման ժամանակ, մինչդեռ Օրենսդիրը նախատեսել է ընդհանուր կարգից շեղվող մոտեցում: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանվել է.

«Դատարանն իրավասու է դեպոնացման վարույթի մասնակիցներին տալու պարզաբանող, ինչպես նաև վարույթի

*մասնավոր մասնակիցների հիմնական իրավունքների
երաշխավորման հետ կապված հարցեր»:*

Թեև նշված նորմում նախատեսված չէ դատավորի կողմից հարցեր տալու էքսպլիցիտ (ուղիղ ձևակերպված) արգելք, սակայն նման արգելք ուղիղ նախատեսված էր ՀՀ քր. դատ. օր-ի նախագծում, այսպես՝ «դատարանն իրավասու չէ դեպոնացման ընթացքում ըստ էության հարցեր տալ (ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծի 315-րդ հոդվածի 3-րդ մասի)»: Նախագծի հեղինակները գործող քր. դատ. օր.-ի պայմաններում նշում են.

*«Դեպոնացման ընթացքում դատարանն իրավացիորեն
զրկված է հարցաքննվողին գործի փաստական հանգա-
մանքների վերաբերյալ հարցեր տալու հնարավորու-
թյունից»¹:*

Մեկնաբանության հեղինակը չի բացատրում, թե դեպոնացման ընթացքում դատարանին՝ փաստական հանգամանքների վերաբերյալ հարցեր տալու հնարավորությունից զրկելն ինչու է արդարացված: Նա չի բացատրում, թե դատարանն ինչու հիմնական դատալսումների ընթացքում կարող է հարցեր տալ ցուցմունք տված անձին, իսկ դեպոնացման ժամանակ՝ ոչ (չէ՞ որ հետագայում՝ հիմնական դատալսումների ժամանակ դատարանը, ամենայն հավանականությամբ, զրկված է լինելու ցուցմունք տված անձին հարցեր տալու հնարավորությունից), հեղինակը չի քննարկում նաև այն հարցը, թե դատարանի կողմից դեպոնենտին հարցեր տալն արդյոք չի՞ համարվում պատշաճ ապացուցման (դատական վարույթի անմիջականության պայմանի) ապահովման միջոց, որը ցուցմունքի դեպոնացման օրենսդրական նպատակն է:

Հեղինակների՝ դատարանի հարաբերականորեն ակտիվ մոդելից շեղվող մոտեցումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է այն հանգամանքով, որ դատարանը, ցուցմունքը դեպոնացնելիս, իրականացնում է ոչ թե արդարադատություն, այլ դատական *ընթացիկ*

¹ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Եր.: Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 455:

վերահսկողություն¹, որի օրենսդրական նպատակը ոչ թե ապացույցի ձևավորումն է, այլ «օրենսգրքով սահմանված՝ հարցաքննության ընթացակարգի պահպանման ապահովումն է» (ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 3-րդ մաս): Նման հիմնավորումը թեև ունի պոզիտիվ իրավական հիմքեր, սակայն դոկտրինալ առումով՝ այն խիստ վիճելի է և ենթակա է վերանայման:

3.4.6. Հակընդդեմ հարցման իրավունքի ապահովումը: Դեպոնացված ցուցմունքը պատշաճ ապացույց է, եթե ցուցմունքը դեպոնացնելիս անձը հնարավորություն է ունեցել իրականացնելու հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքը:

Սահմանադրական և միջազգային իրավունքների տեսանկյունից հակընդդեմ հարցման իրավունքի կրողը մեղադրյալն է: ՀՀ քր. դատ. օր.-ում նույնպես հակընդդեմ հարցման իրավունքն էքսպլիցիտ ձևակերպված է որպես մեղադրյալի իրավունք (ՀՀ քր. դատ. օր. 43-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ), սակայն ցուցմունքի դատական դեպոնացման ինստիտուտի և պատշաճ ապացուցման սկզբունքի տեսանկյունից հակընդդեմ հարցման դատավարական իրավունքի կրող է ոչ միայն մեղադրյալը, այլ նաև վարույթի մասնավոր մյուս մասնակիցները, որոնց վերաբերյալ դեպոնենտը տալիս է այնպիսի ցուցմունքներ, որոնք կարող են օգտագործվել ի վնաս տվյալ անձանց: Օրինակ՝ վկայի ցուցմունքը դեպոնացնելիս նա տալիս է մեղադրյալի պատասխանատվությունը մեղմացնող այնպիսի ցուցմունքներ, որոնց հիման վրա կարող է տուժողին պատճառված վնասի չափը փոփոխվել: Այս պարագայում տուժողն ունի վկային՝ խաչաձև հարցաքննության շրջանակում հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունք:

Վարույթի մասնավոր այլ մասնակիցների՝ հակընդդեմ հարցման իրավունքը բխում է ոչ միայն դեպոնացման ինստիտուտի և պատշաճ ապացուցման սկզբունքի էությունից, այլ նաև խաչաձև հարցաքննության վերաբերյալ դատավարական նորմից: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 326-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարցաքննության կանչված անձին առաջինը հարցեր է տալիս այն կողմը, որի միջնորդությամբ իրավիրվել է անձը (ուղիղ հարցաքննություն): Ուղիղ հարցաքննությունից հետո անձին կարող է հարցեր տալ հակառակ կողմը (խաչաձև հարցաքննություն):

¹Այս մասին տե՛ս **Гамбарян А.С.** Судебное депонирование показаний в системе производства судебных гарантий (судебного контроля) // Вестник Калининградского филиала Санкт-Петербургского университета МВД России. 2015. № 2(40). - С. 48-50.

Այսպիսով՝ ցուցմունքի դեպոնացման ինստիտուտի շրջանակներում հակընդդեմ հարցման իրավունքի կրող է ոչ միայն մեղադրյալը (պաշտպանը), այլ նաև տուժողը և վարույթի մյուս մասնավոր մասնակիցները:

Սահմանադրական և միջազգային իրավունքներում հատկապես կարևորվում է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի երաշխավորման հարցը: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) ենթակետի համաձայն. «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. (...), դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք փոխ վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության (...):» Եվրոպական դատարանը, կիրառելով և մեկնաբանելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3 (դ) ենթակետը, եկել է այն ընդհանուր հետևության, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա նա զրկվում է արդար դատաքննության իրավունքից (տե՛ս Ունտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 9120/80, 31-33-րդ կետեր): Անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որին հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել (տե՛ս Սահակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (թիվ 1) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգատներ թիվ 29900/96 և այլն, 65-րդ կետ)¹:

Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու իրավաչափության հարցի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը 20.10.2011թ. որոշման 23-րդ կետում նշել է, որ հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելը քրեադատավարական օրենքի էական խախտում չի կազմի, եթե այդ ապացույցը վճռորոշ կշիռ չունի անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Այլ

¹ Հիշեցնենք, որ այս ընդհանուր մոտեցումից բացառություն է Ալ-Քավայն և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորությունների գործով Եվրոպական դատարանի (15.12.2011թ.) վճռի 123-րդ կետում արտացոլված այն դիրքորոշումը, որի համաձայն՝ եթե վկայի վախը պայմանավորված է մեղադրյալի կամ նրա անունից գործող անձանց հակաիրավական գործողություններով, ապա թույլատրելի է վկայի ցուցմունքները դատարանում հրապարակել՝ առանց վկայի կողմից կենդանի ցուցմունք տալու կամ ամբաստանյալի, նրա ներկայացուցիչների կողմից քննվելու անհրաժեշտության, եթե նույնիսկ վկայի ցուցմունքը ամբաստանյալի դեմ ներկայացված միակ և որոշիչ վկայությունն է:

կերպ ասած՝ առանց հակընդդեմ հարցման՝ ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու արգելքը բացարձակ բնույթ չի կրում:

ՀՀ վճռաբեկ դատարանը 31.05.2014թ. որոշման 27-րդ կետում նշել է, որ քրեական դատավարությունում արդար դատաքննության հիմնարար իրավական արժեքի բաղադրատարրերից է պաշտպանության կողմի իրավունքը հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) ենթարկել մեղադրական բովանդակությամբ ցուցմունք տված վկաներին: Ընդ որում՝ նշված իրավունքի իրացման համար անհրաժեշտ է, որ պաշտպանության կողմին տրվի մեղադրյալի դեմ հանդես եկած անձանց ցուցմունքները վարույթի որևէ փուլում վիճարկելու, նրան հարցաքննելու համարժեք և պատշաճ հնարավորություն:

3.4.7. *Դատական դեպոնացման ընթացակարգով հարցաքննության տևողությունը:* Մինչդատական վարույթում դեպոնացման ընթացակարգով իրականացվող հարցաքննությունն արդյոք ունի՞ ժամկետային սահմանափակումներ: Բանն այն է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 217-րդ հոդվածի 3-րդ մասը կարգավորում է մինչդատական վարույթում հարցաքննության՝ որպես քննչական գործողության տևողությունը: Նշված նորմի համաձայն.

«Հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ 4 ժամից ավելի, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիր կամ ծանր հիվանդություն ունեցող անձի հարցաքննությունը՝ 2 ժամից ավելի: Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 8, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիր կամ ծանր հիվանդություն ունեցող անձի համար՝ 6 ժամը»:

Հարցաքննության տևողության մասին սահմանափակումը վերաբերելի չէ դեպոնացման շրջանակում իրականացվող հարցաքննությանը: Ֆորմալ-իրավաբանական տեսանկյունից՝ դատական հարցաքննության ընդհանուր կարգը սահմանող նորմերում (ՀՀ քր. դատ. օր.-ի 326-րդ հոդված) նման սահմանափակող դրույթ նախատեսված չէ: Բացի այդ, մինչդատական վարույթում հարցաքննության տևողությունը սահմանափակելով՝ Օրենսդիրը ցանկացել է կանխել խոշտանգումների (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ֆիզիկական

կամ հոգեկան բռնության) դեպքերը, մինչդեռ դատարանի վերահսկողությամբ իրականացվող հարցաքննության պարագայում գրեթե հնարավոր չէ երկարատև հարցաքննությունն օգտագործել՝ որպես անձին խոշտանգելու միջոց:

3.5. Յուցմունքի դեպոնացման արձանագրությունը

3.5.1. Արձանագրություն կազմելու նորմատիվ-իրավական հիմքերը: Յուցմունքի դեպոնացման ընթացակարգը ներառում է նաև հարցաքննությունն արձանագրելու կարգը: Յուցմունքի դեպոնացման ընթացակարգով կատարվող հարցաքննության և դրա արձանագրման առանձնահատկությունները սահմանվում են ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածով (ՀՀ քր. դատ. օր.-ի 217-րդ հոդվածի 7-րդ մաս): Հիշեցնենք, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 217-րդ հոդվածը վերաբերում է հարցաքննության ընդհանուր պայմաններին և տեղակայված է ՀՀ քր. դատ. օր.-ի 29-րդ գլխում (քննչական գործողությունները):

Յուցմունքի դեպոնացման արդյունքով օրենսգրքի վերաբերելի պահանջների պահպանմամբ կազմվում է ցուցմունքի դեպոնացման արձանագրություն (ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 4-րդ մաս):

Թեև ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է, որ դռնփակ դատական նիստում ցուցմունքի դեպոնացումը կատարվում է ՀՀ քր. դատ. օր.-ի օրենսգրքի 8-րդ բաժնի (դատական վարույթի ընդհանուր պայմանները) պահանջների՝ վերաբերելի մասով (*mutatis mutandis*) պահպանմամբ, սակայն մեկնաբանվող նորմում նշվում է, որ ցուցմունքի դեպոնացման արձանագրությունը կազմվում է «սույն օրենսգրքի» վերաբերելի պահանջների պահպանմամբ, ուստի ցուցմունքի դեպոնացման արձանագրության նկատմամբ կարող են կիրառվել նաև քրեական վարույթի ամրագրման վերաբերյալ կանոնները (ՀՀ քր. դատ. օր.-ի 8-րդ հոդված), իսկ առանձին դեպքերում՝ նաև նախաքննության ընթացքում քննչական գործողությունների արձանագրման կարգը սահմանող ընդհանուր նորմերը (ՀՀ քր. դատ. օր.-ի 215-րդ հոդված):

Առանձին պետք է քննարկել, թե դատական նիստի արձանագրման ընդհանուր կանոններն ինչքանով են վերաբերելի ցուցմունքի դեպոնացման արձանագրությունը կազմելու գործընթացին (ՀՀ քր. դատ. օր.-ի 279-րդ հոդված):

3.5.2. ՀՀ քր. դատ. օր.-ի 279-րդ հոդվածի վերաբերելի կանոնները: Յուցմունքը դեպոնացնելու արձանագրությունը կազմելիս կիրառման ենթակա են ՀՀ քր. դատ. օր.-ի 279-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ դատարանում վարույթի ընթացքը ենթակա է պարտադիր արձա-

նագրման: Արձանագրությունը դատական նիստի ընթացքում վարում է դատական նիստի քարտուղարը:

Ցուցմունքի դեպոնացման արդյունքով արձանագրությունը կազմում է ոչ թե քննիչը, այլ դատական նիստի քարտուղարը: Դատական նիստի քարտուղարը պատասխանատվություն է կրում դատական նիստի արձանագրության լրիվության և ճշտության համար: Արձանագրությունը կազմելիս դատական նիստի քարտուղարը կաշկանդված չէ որևէ անձի ցուցումներով՝ կապված արձանագրության մեջ ընդգրկվող գրառումների բովանդակության հետ (ՀՀ քր. դատ. օր.-ի 63-րդ հոդվածի 4-րդ մաս):

ՀՀ քր. դատ. օր.-ի 279-րդ և 309-րդ հոդվածների կարգավորումներից բխում է, որ նրանց միջև առկա են տարբերություններ, որոնց պարագայում ՀՀ քր. դատ. օր.-ի 279-րդ հոդվածում նախատեսված մի շարք դրույթներ վերաբերելի չեն:

Առաջին՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 279-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ դատական նիստի դահլիճում արձանագրությունը վարվում է դատական նիստի **ձայնային արձանագրման միջոցով**, մինչդեռ ցուցմունքի դեպոնացման արդյունքով կազմվում է **թղթային** արձանագրություն: Թեև ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 4-րդ մասում ուղիղ չի նշվում թղթային արձանագրության մասին, սակայն դա պարզ է, քանի որ նույն հոդվածը սահմանում է արձանագրությունը ստորագրելու մասին պահանջ¹:

Երկրորդ՝ ցուցմունքի դեպոնացման դեպքում նիստը ոչ թե պարզապես ձայնագրվում է, այլ տեսաձայնագրվում է, որի էլեկտրոնային կրիչը կցվում է ցուցմունքի դեպոնացման արձանագրությանը:

Տեսաձայնագրմամբ կատարված գործողության ընթացքի և արդյունքների ամրագրման վերաբերյալ ՀՀ քր. դատ. օր.-ի 8-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասում նախատեսված են հատուկ նորմեր: Այսպես՝ մինչդատական վարույթում տեսաձայնագրմամբ կատարված գործողության հակիրճ բովանդակությունը և հիմնական արդյունքները նշվում են վարույթային այդ գործողության ընթացքում կազմված համառոտ արձանագրության մեջ: Տեսաձայնագրության կրիչը կցվում է արձանագրությանը: Դատական վարույթում տեսաձայնագրված գործողության հակիրճ բովանդակությունը և հիմնական արդյունքները նշվում են վարույթային այդ գործողության ընթացքում կազմված համառոտ արձանագրության մեջ: Տեսաձայնա-

¹Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող հարաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(106)2022

գրության կրիչը կցվում է արձանագրությանը (<< քր. դատ. օր-ի 8-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասեր): Այսպիսով՝ ցուցմունքի դատական դեպոնացման արդյունքով կազմվում է համառոտ արձանագրություն, որի մեջ նշվում է ցուցմունքի հակիրճ բովանդակությունը:

3.5.3. Ցուցմունքի դեպոնացման տեսաձայնագրման համակարգի բացակայությունը կամ անսարքությունը: Ինչպես նշվեց, օրենսդրությամբ իմպերատիվ պահանջվում է ցուցմունքի դեպոնացման դատական նիստը տեսաձայնագրել, սակայն օրենքով կարգավորված չէ, թե ինչպես պետք է վարվի դատավորը, եթե դատական նիստի դահլիճում տեսաձայնագրման համակարգը կամ ներդրված չէ, կամ անսարք է:

Այս իրավիճակում դատավորը պետք է անալոգիայի կարգով կիրառի << քր. դատ. օր-ի 279-րդ հոդվածի 3-րդ մասը, որը կարգավորում է տեսաձայնագրմանը նման մեկ այլ իրավիճակի՝ համակարգչային ձայնագրման համակարգի անսարքության դեպքում դատական նիստի արձանագրությունը վարելու եղանակը: Այսպես՝ նշված հոդվածի համաձայն՝ հատուկ համակարգչային ձայնագրման համակարգի անսարքության դեպքում արձանագրությունը վարվում է պարզ թղթային արձանագրման եղանակով: << քր. դատ. օր-ի 279-րդ հոդվածի 3-րդ մասն անալոգիայի կարգով կիրառելու դեպքում կստացվի հետևյալ իրավիճակը՝ եթե ցուցմունքը դեպոնացնելիս տեսաձայնագրման համակարգը օբյեկտիվ պատճառներով չի կարող գործադրվել, ապա պետք է նիստն արձանագրել պարզ թղթային եղանակով, իսկ ցուցմունքների բովանդակությունը՝ տրված հարցերը և դրանց պատասխանները արձանագրել բառացիորեն (<< քր. դատ. օր-ի 279-րդ հոդվածի 5-րդ մաս):

3.5.4. Ցուցմունքի դեպոնացման արձանագրությունը ստորագրելը և դատավորի կողմից հաստատելը: Ցուցմունքի դեպոնացման արձանագրությունն ստորագրում են դեպոնացման մասնակիցները (<< քր. դատ. օր-ի 309-րդ հոդվածի 4-րդ մաս):

<< քր. դատ. օր-ի 309-րդ հոդվածով կարգավորված չեն այն իրավիճակները, երբ դեպոնացման մասնակիցը հրաժարվում է ստորագրել ցուցմունքի դեպոնացման արձանագրությունը: Այս դեպքում կիրառելի են նախաքննության ընթացքում կատարվող քննչական գործողությունների արձանագրման համար նախատեսված կարգավորումները: Այսպես՝ արձանագրությունն ստորագրելուց քննչական գործողության որևէ մասնակցի հրաժարվելու դեպքում այդ անձին հնարավորություն է տրվում շարադրելու հրաժարման շարժառիթները: Եթե անձը հրաժարվում է արձանագրությունում շարադրել այն ստորագրելուց հրաժարվելու շարժառիթները, ապա քննիչը (դեպոնացման պարագայում՝ նիստերի քարտու-

ղարը Նախագահողի կարգադրությամբ) արձանագրությունում այդ մասին կատարում է համապատասխան գրառում, որը հավաստվում է քարտուղարի, ինչպես նաև դեպոնացմանը մասնակցող փաստաբանի ստորագրություններով (ՀՀ քր. դատ. օր-ի 215-րդ հոդվածի 6-րդ մաս): Նույն հոդվածի 7-րդ մասում սահմանված է. եթե հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունենալու պատճառով քննչական գործողության մասնակիցը զրկված է արձանագրությունն անձամբ ստորագրելու հնարավորությունից, ապա արձանագրությունը տվյալ անձին ծանոթացման է ներկայացվում կամ հայտարարվում է քննիչի կամ քննչական գործողությանը մասնակցող փաստաբանի կողմից, որոնք իրենց ստորագրությամբ հաստատում են արձանագրության բովանդակության իսկությունը և այն ստորագրելու անհնարինության հիմնավորումը:

Ցուցմունքի դեպոնացման արձանագրությունը նախագահող դատավորը հաստատում է իր կնիքով (ՀՀ քր. դատ. օր-ի 309-րդ հոդվածի 4-րդ մաս): Դատավորն այն չհաստատելու իրավունք չունի:

4. Դեպոնացված ցուցմունքի օգտագործումը և արձանագրությանը կցվող նյութերի ապացուցողական նշանակությունը

4.1. *Դեպոնացված ցուցմունքը հետազոտման ենթակա ապացույցների ծավալում ընդգրկելը:* Նախնական դատախոսների ընթացքում կողմերը դատարանի պահանջով ներկայացնում են հիմնական դատախոսներում հետազոտման ենթակա ապացույցների շրջանակի վերաբերյալ իրենց առաջարկները (ՀՀ քր. դատ. օր-ի 319-րդ հոդվածի 1-ին մաս): Նախատեսված բոլոր առաջարկները քննարկելուց և լուծելուց հետո դատարանը կայացնում է ապացույցների ծավալը սահմանելու մասին որոշում (ՀՀ քր. դատ. օր-ի 319-րդ հոդվածի 3-րդ մաս):

Ցուցմունքը, այդ թվում՝ դեպոնացված ցուցմունքը, ապացույցի ինքնուրույն տեսակ է, իսկ վերը նշված նորմերում խոսվում է հետազոտման ենթակա ապացույցների ծավալը որոշելու մասին: Այնուամենայնիվ՝ մինչդատական վարույթում տրված ցուցմունքը չի կարող ընդգրկվել հետազոտման ենթակա ապացույցների ծավալում, քանի որ ցուցմունքը, այդ թվում՝ դեպոնացված ցուցմունքը դատարանում օգտագործելու միակ եղանակը, ՀՀ քր. դատ. օր-ի 330-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում, ցուցմունքը հրապարակելն է:

4.2. *Դեպոնացված ցուցմունքը դատարանում հրապարակելը:* Եթե մինչդատական վարույթում ցուցմունքը դեպոնացվել է, ապա դա չի նշանակում, որ այդ ցուցմունքը դատարանում պետք է անվերապահորեն հրապարակվի:

Եթե մինչդատական վարույթում անձի ցուցմունքը, օրենսգրքի պահանջներին համապատասխան, դեպոնացվել է, ապա ցուցմունքը, ինչպես նաև դրան կցված հավելվածները (տեսաձայնագրությունները) կարող են հրապարակվել դատարանում (ՀՀ քր. դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 1-ին մաս):

Ինչպես նշվեց, դեպոնացված ցուցմունքը դատարանում հրապարակելուց առաջ պետք է պարզել, թե արդյոք հնարավոր է դատարանում կրկին հարցաքննել այն անձին, ում ցուցմունքը նախկինում դեպոնացվել է: Օրինակ՝ եթե ցուցմունքը դեպոնացվել է այն պատճառաբանությամբ, որ վկան կարող է մեկնել ՀՀ-ից, ապա հիմնական դատալսումների ժամանակ պետք է պարզել, թե վկան արդյոք վերադարձել է Հայաստանի Հանրապետություն, թե՛ ոչ: Բացի այդ, դատարանը պետք է քննարկի նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող վկային տեսակապի միջոցով հարցաքննելու հնարավորությունը (ՀՀ քր. դատ. օր.-ի 327-րդ հոդված): Ասվածն ունի ինչպես ֆորմալ-իրավաբանական, այնպես էլ էությունական հիմնավորումներ:

Նախ՝ Օրենսդիրը սահմանել է, որ անձի՝ նախկինում տված ցուցմունքը (այդ թվում՝ դեպոնացված՝ Ա.Ղ.) կարող է հրապարակվել միայն դատարանում նրա հարցաքննության անհնարիությունը հաստատելուց հետո (ՀՀ քր. դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 3-րդ մաս): Այս ֆորմալ հիմնավորման հիմքում Օրենսդիրը միգուցե դրել է էությունական պատճառաբանություններ:

Երկրորդ՝ եթե ելնում ենք այն ենթադրությունից, որ մինչդատական վարույթի ընթացքում ցուցմունքը դեպոնացրել է մի դատավոր, սակայն դատաքննությունն իրականացնում է մեկ այլ դատավոր, ապա դատական վարույթի անմիջականության պայմանի հետևողական իրականացումը պահանջում է, որ մեղադրանքը քննող դատավորը ձեռնարկի բոլոր միջոցները ցուցմունք տալու գործընթացը կազմակերպելու և ցուցմունքներն իր կողմից անմիջապես (թեկուզ՝ տեսակապի միջոցով) ընկալելու ուղղությամբ:

Երրորդ՝ ի տարբերություն մինչդատական վարույթում ցուցմունքի դեպոնացմանը, մեղադրանքի քննության (հիմնական դատալսումների) ընթացքում անձի հարցաքննությունը (անկախ ցուցմունքի դեպոնացված լինելու հանգամանքի) հնարավորություն կտա կողմերին առավել արդյունավետ իրականացնելու իրենց հակընդդեմ հարցման իրավունքը, քանի որ մինչդատական վարույթի ավարտին նրանք արդեն տիրապետում են գործի ամբողջ նյութերին:

Եթե հիմնական դատալսումների ընթացքում անձին, ում ցուցմունքները նախկինում դեպոնացվել են, հնարավոր է եղել հարցաքննել անմիջապես նիստերի դահլիճում կամ տեսակապի միջոցով, ապա վերանում է ՀՀ քր.

դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին հիմքով դեպոնացված ցուցմունքը հրապարակելու անհարժեշտությունը:

Մինչդատական վարույթում դեպոնացված ցուցմունքը կարող է դատարանում հրապարակվել, եթե առկա է էական հակասություն դատարանում և նախկինում տրված (այդ թվում՝ դեպոնացված՝ հեղ.) ցուցմունքների միջև (<< քր. դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):

4.3. Դեպոնացված ցուցմունքի վիճարկման հնարավորությունը: Դեպոնացումն ապացուցողական գործողություն չէ, այն տվյալներ հավաքելու ինքնուրույն միջոց չէ, դեպոնացման ընթացակարգով պարզապես կատարվում է հարցաքննություն, որի ժամանակ տրված գրավոր կամ բանավոր տվյալները համարվում են ցուցմունքներ, ուստի դրանք պետք է հետազոտվեն ցուցմունքին հատուկ ռեժիմով:

Եթե ցուցմունքը դեպոնացվել է, ապա դա ինքնին չի նշանակում, որ այն ձեռք է բերում «անձեռնմխելիություն» և չի կարող որևէ պարագայում վիճարկվել: Պատահական չէ, որ << քր. դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 1-ին մասում դեպոնացված ցուցմունքը դատարանում հրապարակելու համար սահմանել է «օրենսգրքի պահանջներին համապատասխան դեպոնացված լինելու» պայմանը:

Վարույթի հանրային մասնակիցը և արդարադատություն իրականացնող դատարանը պետք է գնահատեն դեպոնացված ցուցմունքի վերաբերելիությունը, թույլատրելիությունը և հավաստիությունը:

Դեպոնացված ցուցմունքի թույլատրելիությունը գնահատելիս պետք է տարբերակել բուն հարցաքննության կարգի խախտումը և դեպոնացման դատավարական կարգի խախտումը, որն անմիջապես չի առնչվում հարցաքննությանը: Դեպոնացման շրջանակներում հարցաքննության կարգի էական խախտման դեպքում ցուցմունքը ճանաչվում է անթույլատրելի, նույնիսկ եթե այն դեպոնացված է: Օրինակ՝ դատարանում հարցաքննությունը կատարվել է բացարկման ենթակա քննիչի էական մասնակցությամբ, եթե նա իմացել է կամ ողջամտորեն պետք է իմանար վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության մասին (<< քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ):

Դեպոնացման կարգին վերաբերող խախտումները, որոնք անմիջապես չեն առնչվում հարցաքննությանը, չեն ազդում ցուցմունքի թույլատրելիության վրա: Օրինակ՝ ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդություն ներկայացրել է ոչ իրավասու անձը, սակայն դատարանը բավարարել է միջնորդությունը և կայացրել է ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշում: Նման խախտումն անվավեր է դարձնում ոչ թե

ՍԱԿՄԱՆԱԿՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(106)2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆

բուն ցուցմունքը, այլ դրա դեպոնացման գործընթացը: Դա նշանակում է, որ այդ ցուցմունքը չի կարող համարվել որպես դեպոնացված ցուցմունք, հետևապես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա դատարանում չի կարող հրապարակվել:

4.4. Արձանագրությանը կցվող նյութերի ապացուցողական նշանակությունը: Ցուցմունքի դեպոնացման արձանագրությանը կցվում է դատական նիստի տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչը (ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 4-րդ մաս): Դեպոնացված ցուցմունքը չի կարող դրվել դատավճռի հիմքում, եթե դատարանում վերաբերելի մասով չի հետազոտվել դրա տեսաձայնագրությունը (ՀՀ քր. դատ. օր.-ի 22-րդ հոդվածի 8-րդ մաս):

Ցուցմունքի դեպոնացման դատական նիստի տեսաձայնագրության հիման վրա քննիչն անհրաժեշտության դեպքում կազմում և ստորագրում է դեպոնացված ցուցմունքի թղթային վերձանումը, որը կցվում է արձանագրությանը (ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 5-րդ մաս):

Դեպոնացված ցուցմունքի թղթային վերձանումն ապացուցման գործընթացում կարող է օգտագործվել այնքանով, որքանով համապատասխանում է տեսաձայնագրության բովանդակությանը:

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПРОЦЕССУАЛЬНОГО ПОРЯДКА ДЕПОНИРОВАНИЯ ПОКАЗАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Аннотация

Сущность судебного депонирования показаний в досудебном производстве состоит в том, что во время судебного заседания фактически осуществляется следственное действие – допрос, при котором порядок судебного депонирования может содержать как элементы досудебного следствия, так и элементы судебного производства. В части касательно процессуального порядка депонирования (*mutatis mutandis*) могут применяться также общие нормы, определяющие порядок следственных действий. Депонирование показания в закрытом судебном заседании осуществляется с обеспечением относящейся части (*mutatis mutandis*) требований главы 8 УПК РА (общие условия судебного производства).

В статье обсуждаются отдельные проблемы процессуального порядка депонирования показания: решение об осуществлении депонирования

показания, процессуальный порядок его обсуждения судом, порядок протоколирования, а также доказательственное значение депонированного показания. В результате обсуждения каждого подвопроса автор приходит к соответствующим выводам, представляя варианты решения проблемы.

Ключевые слова: депонирование, показание, допрос, процессуальный порядок, право перекрестного допроса.

MAIN ISSUES OF THE PROCEDURAL ORDER OF TESTIMONY DEPOSITION IN THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

The essence of the institution of judicial deposition of testimony in pre-trial proceedings is that an interrogation as an investigative action is actually performed at the court session, and in this case, it turns out that the procedural order of deposition may contain elements of both preliminary investigation and judicial proceedings. The general norms defining the order of investigative actions may also be applied (*mutatis mutandis*) to the procedural order of deposition. The deposition of testimony in a closed court session shall be carried out (*mutatis mutandis*) in accordance with the requirements of Article 8 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia of Article 8 of the law (general conditions of judicial proceedings).

The article discusses certain issues of the procedural order of testimony deposition, namely, the decision to perform testimony deposition, the procedure for discussing it by the judge, the recording procedure, as well as the evidentiary significance of the deposited testimony. As a result of the discussion of each sub-issue, the author presents options for solving the issue or makes relevant conclusions.

Keywords: deposition, testimony, interrogation, procedural order, right to cross- interrogation.



ԱԻՂԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի
իրավախորհրդատվական վարչության
փորձագիտական-վերլուծական բաժնի պետ,
Եվրոպական համալսարանի
Իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՀԱԿԸՆԴԴԵՄ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՈՐՈՇՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ
ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ամփոփագիր: Սույն հոդվածը նվիրված է հակընդդեմ ապահովում կիրառելու մասին դատարանի որոշման բողոքարկելիության հիմնախնդիրների հետազոտությանը: Քաղաքացիադատավարական օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը չի նախատեսել հակընդդեմ ապահովում պահանջելու մասին միջնորդությունը բավարարելու վերաբերյալ դատական ակտի բողոքարկման կառուցակարգեր, որպիսի պայմաններում, մեր դիտարկմամբ, սահմանափակվում է անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Հոդվածի շրջանակներում փորձ է արվել բացահայտել՝ արդյո՞ք հակընդդեմ ապահովում պահանջելու մասին միջնորդությունը բավարարելու վերաբերյալ դատարանի որոշումը բողոքարկելու իրավունք գործին մասնակցող համապատասխան անձի համար չնախատեսելը ոչ իրավաչափորեն սահմանափակում է անձի դատական պաշտպանության հիմնական իրավունքը:

Հիմնաբառեր. հակընդդեմ ապահովում, բողոքարկման իրավունք, հայցի ապահովում, դատական պաշտպանության իրավունք, քաղաքացիական դատավարություն:

Ա. Քաղաքացիադատավարական օրենսդրության համակողմանի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ օրենսդիրը քաղաքացիական վարույթի տարբեր փուլերում ամրագրել է մրցակցային դատավարության երաշխավորման մի շարք իրավական կառուցակարգեր, որոնց հիմնարար

2(106)2022
ՍԵՆԵԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
39

նպատակը դատավարության շրջանակներում հակընդդեմ շահեր հետապնդող յուրաքանչյուր սուբյեկտի համար իրավահավասար պայմանների, այդ թվում՝ հավասարազոր դատավարական «զինանոցի» տրամադրումն է:

Հայցի հարուցման, ապա հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) հնարավորություն է ընձեռում վարույթի հաջորդող փուլում ևս համապատասխան միջնորդություն ներկայացնել), ի թիվս այլնի, օրենսդիրը սահմանել է հայցի ապահովման ինստիտուտը, որը կայացվելիք դատական ակտի կատարմանն ուղղված գործուն և արդյունավետ կառուցակարգ է:

Հայցի ապահովման ինստիտուտն իր իրավական բնույթով ուղղված է այն անձի իրավունքների իրավաչափ սահմանափակմանը, որի նկատմամբ համապատասխան միջոցները կիրառվել են:

Ե. Վասկովսկին հայցի ապահովումը սահմանում է իբրև դատարանի կողմից միջոցների ձեռնարկում, ինչը երաշխավորում է հայցային պահանջների կատարման հնարավորությունը «գործը շահելու» դեպքում¹, իսկ Մ. Օլեգովի դիտարկմամբ՝ հայցի ապահովումը դատարանի կամ դատավորի դատավարական գործունեությունն է, երբ վարույթ ընդունած քաղաքացիական գործով անհրաժեշտություն է ծագում կիրարկել օրենքով նախատեսված ապահովման միջոցներ, երբ դրանք ձեռք չառնելը կարող է դժվարացնել կամ անհնարին դարձնել կայացվելիք դատական ակտի կատարումը²:

Այնուամենայնիվ, օրենսդիրը, հաշվի առնելով իրողությունն առ այն, որ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանի որոշմամբ դրա հասցեատերը կարող է կրել շոշափելի վնասներ՝ խնդրո առարկա դատավարական ինստիտուտի դեմ, իբրև «հավասար պայքարի միջոց», նախատեսել է մի շարք դատավարական միջոցներ, մասնավորապես՝ հայցի ապահովման մեկ միջոցի փոխարինումը մեկ այլ միջոցով, հայցի ապահովման միջոցի ձևափոխումը, հայցի ապահովման միջոցի վերացումը, **հակընդդեմ ապահովումը**, հայցի ապահովման և հայցի նախնական ապահովման հետ կապված վնասների հատուցումը, **ինչպես նաև հայցի ապահովման հետ կապված որոշ միջանկյալ դատական ակտերի բողոքարկումը**:

¹Васьковский Е.В. Учебник гражданского процесса. - Москва, 2005. - էջ 199:

²Олегов М.Д. Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации / Под. ред. Шакарян М.С. - М., 2004. - էջ 378:

Հակընդդեմ ապահովման ինստիտուտն ուղղված է գործին մասնակցող այն անձի շահերի պաշտպանությանը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց: Եթե հայցի ապահովման ինստիտուտը հանդես է գալիս որպես հայցվորի շահերի պաշտպանության դատավարական միջոց, ապա հակընդդեմ ապահովումը կոչված է հավասարակշռելու պատասխանողի՝ հայցի դեմ արդյունավետ պաշտպանվելու հնարավորությունը¹: Եվրոպական մի շարք երկրների քաղաքացիական դատավարության օրենսդրություններ հայցի ապահովման միջոցներ կիրառելու կարևոր նախապայման են համարում ոչ միայն հայցի ապահովման հիմքերի առկայությունը, այլ նաև այդպիսի միջնորդությամբ հանդես եկող անձի կողմից «երաշխիքային գրավի» տրամադրումը, որի հաշվին կարող են հատուցվել հայցի ապահովման արդյունքում պատասխանողին պատճառված հնարավոր վնասներն այն դեպքերում, երբ ներկայացված հայցը վերջնականապես մերժվում է²:

Հակընդդեմ ապահովման ինստիտուտը կոչված է հավասարակշռելու հայցի ապահովման միջոցների կիրառման արդյունքում քաղաքացիական վարույթի համապատասխան մասնակիցների շահերն այն հաշվառմամբ, որ գործին մասնակցող անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման համապատասխան միջոց, ունի իր հնարավոր վնասների հատուցման համար հայցի ապահովման միջնորդություն ներկայացրած գործին մասնակցող անձից ապահովում պահանջելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու դատավարական իրավունք:

Հակընդդեմ ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանների համար օրակարգային խնդիր է դառնում ներկայացված միջնորդության հիմնավորվածության ստուգումը հետևյալ հարցադրումների շրջանակում.

- արդյո՞ք միջնորդություն ներկայացրած անձը հիմնավորել է հայցի ապահովման տվյալ միջոցի կիրառման արդյունքում վնասներ կրելու հավանականությունը, եթե այո, ապա՝
- որքա՞ն է կազմում հնարավոր վնասի չափը:

Հարկ է արձանագրել, որ բավականին դժվար է գնահատել վնասի պատճառման հավանականությունը, և առավել ևս, որոշել դրա չափը, ուստի՝ միջնորդություն ներկայացրած անձը պետք է ապացուցողական նշանակություն ունեցող համապատասխան նյութերի ներկայացմամբ հիմ-

¹Մեդրյան Ա.Գ. Հայցի ապահովումը քաղաքացիական դատավարությունում (դասախոսություն): - Եր.: ԵՊՀ հրատ., 2020, էջ 27:

²Մեդրյան Ա.Գ. Հայցի ապահովումը քաղաքացիական դատավարությունում (դասախոսություն): - Եր., ԵՊՀ հրատ., 2020, էջ 27:

նավորի ներկայացված միջնորդությունը, իսկ դատարանը՝ գնահատի դրանց հավաստիությունը՝ այդպիսով որոշելով հակընդդեմ ապահովում տրամադրելու անհրաժեշտությունը:

Օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասի և 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ օրենսդիրը նախատեսել է սոսկ հակընդդեմ ապահովում պահանջելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի ակտի վերաքննիչ բողոքարկման իրավունք: Ստացվում է, որ առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից հակընդդեմ ապահովում պահանջելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու, ապա նաև՝ Օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում վերաքննիչ դատարանի կողմից հակընդդեմ ապահովում կիրառելու վերաբերյալ որոշումը համապատասխանաբար վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկելու իրավունքի օրենսդրական հիմքերը բացակայում են, որպիսի պայմաններում անհրաժեշտ ենք համարում բացահայտել օրենսդրի կողմից նախատեսված նման իրավակարգավորման իրավաչափությունն անձի դատարանի պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխավորման լույսի ներքո:

Բ. Սահմանադրության «Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը» վերադասարկման 75-րդ հոդվածի համաձայն՝

«Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»:

2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանը, բացահայտելով Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությանը, արձանագրել է, որ ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների

- (1) արդյունավետ իրականացման համար
- (2) անհրաժեշտ
- (3) կազմակերպական
- (4) կառուցակարգեր և
- (5) ընթացակարգեր:

Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 2(106)2022

իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը»:

Քաղաքացիադատավարական օրենսդրության համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ օրենսդիրը միջանկյալ դատական ակտերի բողոքարկման իրավական հնարավորություն տալու հարցում դրսևորել է տարբերակված մոտեցում:

Սահմանադրական դատարանը բազմից անդրադարձել է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հիմնահարցերին, մասնավորապես՝ ՍԴՈ-719, ՍԴՈ-918, ՍԴՈ-922, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1191, ՍԴՈ-1330, ՍԴՈ-1487, ՍԴՈ-1573 որոշումների շրջանակներում:

ՍԴՈ-719 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանը, վերլուծելով միջանկյալ դատական ակտերի բողոքարկմանն առնչվող իրավադրույթները, արձանագրել է, որ օրենսդիրը հիմնականում բողոքարկելի է համարում այն բոլոր ակտերը, որոնք կարող են **կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մարչելիության իրավունքի իրացման ընթացքը**:

Սահմանադրական դատարանը, զարգացնելով իր 28.09.2010 թվականի ՍԴՈ-918 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, 02.11.2010 թվականի ՍԴՈ-922 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանելով տվյալ միջանկյալ ակտի անմիջական բողոքարկման հնարավորություն, չի բացառում միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությունը գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման շրջանակներում: ... Օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ **«հետաձգված բողոքարկում»**, և միջանկյալ դատական ակտի **անմիջական բողոքարկում**: Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է և, ըստ այդմ, օրենսդիրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է:

ՍԴՈ-1573 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ Սահմանադրությունը չի պահանջում, որ քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի կայացրած բոլոր միջանկյալ դատական ակտերն անվերապահորեն ենթակա լինեն բողոքարկման վերաքննության կարգով,

այն չի ենթադրում նաև քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի կայացրած՝ բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացված բոլոր որոշումների բողոքարկման հնարավորություն վճարելության կարգով:

Խնդրո առարկա հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ միջանկյալ դատական ակտերն ինքին չեն կարող դիտվել որպես որոշիչ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առումով և, որպես կանոն, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով չեն պաշտպանվում, եթե, իհարկե, **միջանկյալ որոշման բացառիկությունը դա չի պահանջում** (*Markass Car Hire Ltd v. Cyprus*, (dec.), no. 51591/99, 23 October 2001):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 1995թ. փետրվարի 7-ին ընդունված «Քաղաքացիական և տնտեսական գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի գործադրման և գործունեության կատարելագործման մասին» R(95)5 հանձնարարականի 1-ին կետի a) ենթակետի համաձայն՝ սկզբունքորեն պետք է գոյություն ունենա վերադաս դատարանի («երկրորդ ատյանի դատարան») կողմից ստորադաս դատարանի («առաջին ատյանի դատարան») կողմից կայացված ցանկացած որոշման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորություն: Նույն հանձնարարականի 3-րդ հոդվածի d) կետի համաձայն՝ պետությունները կարող են հետաձգել որոշակի միջանկյալ հարցերի բողոքարկման իրավունքի իրականացումը՝ մինչև հիմնական գործով գլխավոր բողոքի ներկայացումը:

Օրենսդիրը քաղաքացիադատարական կարգով կայացվող միջանկյալ դատական ակտերը դիտարկել է իբրև դատավարության կոնկրետ փուլի առջև ծառայած խնդրի լուծման գործիք՝ դրանց իրավաչափության ստուգումը հնարավոր դարձնելով անմիջական կամ հետաձգված բողոքարկման ինստիտուտի շրջանակներում: Հետազոտության առարկա դարձնելով Օրենսգրքի 135-րդ հոդվածը՝ կարելի է հանգել եզրակացության, որ հակընդդեմ ապահովում տրամադրելու միջնորդությունը բավարարվելու դեպքում հայցի ապահովման միջնորդություն ներկայացրած գործին մասնակցող անձի վրա դրված է *իմպերատիվ դատարական պարտականություն* եռօրյա ժամկետում հակընդդեմ ապահովման գումարը փոխանցել դատարանի դեպոզիտ, հակառակ պարագայում՝ դատարանը հակընդդեմ ապահովում պահանջած անձի միջնորդությամբ առանց դատական նիստ հրավիրելու, եռօրյա ժամկետում որոշում է կայացնում հայցի ապահովման միջոցը վերացնելու

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(106)2022

մասին: Հետազոտության առարկա դարձնելով Օրենսգրքի վերաբերելի իրավադրույթները՝ փաստում ենք, որ *օրենդիրը չի նախատեսել խնդրո առարկա դարական ակտի անմիջական բողոքարկման իրավունք*: Ինչ վերաբերում է *հեղաձգված բողոքարկման հնարավորությանը*, ապա արձանագրում ենք, որ *խնդրո առարկա դարական ակտի գործողությունն ու նշանակությունն էպիզոդիկ է, այն է՝ տվյալ փուլում լուծում է հայցի ապահովման միջոցի վերացման կամ պահպանման հարցը՝ պայմանավորելով այն հայցի ապահովում պահանջած անձի հնարավոր վնասների փոխհատուցման գումար վճարելու վարքագծով, ուստի՝ առաջին արյանի ընդհանուր իրավասության դարարանի կողմից տվյալ որոշումը կայացվելու դեպքում գործն ըստ էության լուծող դարական ակտի շրջանակներում դրա բողոքարկումը դառնում է ժամանակավրեպ և առարկայազուրկ, իսկ վերաքննիչ դարարանի կողմից կայացվելու պայմաններում՝ անհնարին, ինչն ուղղակիորեն հակասում է Սահմանադրության 75-րդ հոդվածով երաշխավորված՝ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգերի սահմանման սահմանադրական չափանիշներին, քանզի այս առումով դարական ակտի հեղաձգված բողոքարկումը դառնում է ինքնանպատակ և մեխանիկական՝ չհանգեցնելով շահագրգիռ անձի համար համապատասխան իրավական հեղանակների:*

Վերոգրյալի համատեքստում հարկ ենք համարում շեշտադրել, որ օրենսդրական կարգավորումները պետք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական **գործուն, արդյունավետ և իրական** կառուցակարգեր ու ընթացակարգեր նախատեսեն, դրանք չպետք է կրեն **ձևական բնույթ**, լինեն **պատրանքային**, ենթադրեն **մեխանիկական կիրառում՝ առանց կոնկրետ հետևանքներ առաջացնելու**: Այս առումով **միջանկյալ դարական ակտերի հեղաձգված բողոքարկման շրջանակներում օրենսդրի խնդիրն է սահմանել այնպիսի իրավական մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն գործն ըստ էության լուծող դարական ակտի բողոքարկման շրջանակներում միջանկյալ դարական ակտի իրավաչափության վիճարկման և ստուգման պարզաճ ընթացակարգը՝ այդպիսով ապահովելով նաև դրանց իրավական վերահսկելիությունը**:

Խնդրո առարկա հարցի շրջանակներում փաստում ենք, որ *հակընդդեմ ապահովում պահանջելու վերաբերյալ միջնորդության շրջանակներում դարարանի քննության առարկան կազմում են ենթադրյալ վնասներ կրելու հավանականությունը, և ապա դրա հիմնավոր լինելու դեպքում՝ չափը*:

Հիշյալ փաստարկները, կրելով առավելապես գնահատողական բնույթ, առավել «խոցելի» են դարձնում կայացվելիք դատական ակտի հիմքերը՝ հավանական դարձնելով դատական սխալի առկայությունը, որպիսի պայմաններում Կրկյալ դատական ակտի իրավաչափության ստուգումը դառնում է առավել քան անհրաժեշտ՝ հաշվի առնելով նաև արդեն իսկ հիշատակված հետաձգված բողոքարկման շրջանակներում դրա իրավաչափության քննության սկզբունքային անհնարինությունը:

Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո կարելի է արձանագրել, որ օրենսդիրը չի նախատեսել հակընդդեմ ապահովում փրամադրող՝ անձի դատավարական իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ գործուն և իրական կառուցակարգեր, որպիսի պայմաններում առկա իրավակարգավորումը չի երաշխավորում Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված հիմնական իրավունքների իրականացման ապահովման սահմանադրական չափանիշները:

Գ. Սահմանադրության «Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը» վերաբերյալ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222, ՍԴՈ-1257, ՍԴՈ-1289) քննության առարկա է դարձրել դատարանի մատչելիության, արդար դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրաիրավական իրավաչափության խնդիրները՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ միաժամանակ դրանցում արտացոլելով նաև միջազգային իրավական փորձի համալիր ուսումնասիրության արդյունքները:

Սահմանադրական դատարանը, կարևորելով դատական պաշտպանության իրավունքի իրացման գործուն կառուցակարգերի և ընթացակարգերի ապահովումը, փաստել է.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(106)2022

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,
- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,
- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,
- դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմաններ, բողոքարկման ժամկետ սահմանելիս պետք է գերակայեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները,
- դատական ակտի պատճառաբանվածությունը, ըստ որի ընդունվում կամ մերժվում է անձի դիմումը, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման իրավունքը մատչելիության իրավունքի իրացման երաշխիքներ են,
- օրենսդրական կանոնակարգումը չի կարող սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն առաջացնել անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, արդյունքում չապահովելով դատարանի մատչելիության իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի գործնական և արդյունավետ իրագործմանը, գտնում է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածն ինքնին չի նախատեսում ստորին դատական ատյանի որոշումն ավելի բարձր ատյանում գանգատարկելու իրավունքը, սակայն երբ նման իրավունք նախատեսված է ներպետական օրենսդրությամբ, ապա 6-րդ հոդվածը կիրառելի է դատական իրավասություն ունեցող վերադաս ատյանների նկատմամբ (*Delcour v. Belgium*, §25, Application no. 2689/65, 17.01.1970): Արդար դատաքնության իրավունքը, երաշխավորված Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով, պետք է մեկնաբանվի օրենքի գերակայության լույսի ներքո, որով պահանջվում է, որ դատավարության մասնակիցներն ունենան դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք նրանց թույլ կտան պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները (*Běleš*-ը եւ այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության, § 49): Դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի «գործնական և արդյունավետ» (*Bellet*-ն ընդդեմ Ֆրանսիայի, § 38): Որպեսզի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անհատը պետք է «ունենա հստակ, գործնական հնարավորություն՝ վիճարկելու այն ակտը, որով միջամտություն է կատարվում իր իրավունքներին» (նույն տեղում, § 36, *Nunes Dias*-ն ընդդեմ Պորտուգալիայի):

Սույն հոդվածի շրջանակներում հետազոտության առարկա դարձած իրավադրույթի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ հակընդդեմ ապահովում տրամադրելու միջնորդությունը բավարարելու դեպքում հակընդդեմ ապահովում տրամադրող սուբյեկտն օժտված չէ հիշատակված որոշումն անմիջական բողոքարկման շրջանակներում դատական ակտը բողոքարկելու դատավարական իրավունքով, մինչդեռ տվյալ միջնորդությունն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից մերժվելու դեպքում օրենսդիրը նախատեսել է այն վերաքննության կարգով բողոքարկելու իրավական հնարավորություն: Ստացվում է, որ **առնվազն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում դատավարության հակընդդեմ շահեր հեղափոխող մասնակիցների համար խախտվում է մրցակցային վարույթի առանցքային տարր կազմող «զենքերի հավասարության» սկզբունքը՝ անհամաչափ սահմանափակելով անձի դատական պաշտպանության իրավունքը:**

Զենքերի հավասարության սկզբունքն արդար դատաքննության իրավունքի երաշխավորման առանցքային գործիք է, որն ապահովում է մրցակցության վրա խարսխված քաղաքացիական դատավարություն ունենալու անձի հիմնարար իրավունքը: Քաղաքացիական գործով մրցակցային դատավարության իրավունքը ենթադրում է, որ կողմերին պետք է ընձեռնվի հավասար դատավարական հնարավորություն ներկայացնել իրենց շահերը, այդ թվում՝ բողոքարկել իրենց համար ոչ բարենպաստ դատական ակտը: Օրենսդիրը պետք է համապատասխան իրավական եղանակներով երաշխավորի հիշատակված պահանջի բավարարումը, մինչդեռ **հակընդդեմ ապահովում տրամադրելու (կիրառելու) վերաբերյալ որոշման իրավաչափության վիճարկման անհնարինությունը համապատասխանաբար վերաքննության կամ վճռաբեկության կարգով, խաթարում է դատական պաշտպանության երաշխավորմանն ուղղված քաղաքացիադատավարական օրենսդրության տրամաբանությունը:** Վերոշարադրյալի համատեքստում եզրահանգում ենք, որ անձի դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման տեսանկյունից խնդրո առարկա դատական ակտի բողոքարկման իրավունքի օրենսդրական հիմքերի բացակայությունը խիստ խնդրահարույց է:

Սույն հետազոտության շրջանակներում կատարված վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ խնդրո առարկա դրույթն այնքանով, որքանով չի նախատեսում հակընդդեմ ապահովում կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու մասին որոշման անմիջական բողոքարկման հնարավորություն, համահունչ չէ Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ

միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի շրջանակներում ձևավորված արդար դատաքննության և դատական պաշտպանության չափանիշներին:

Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ եզրահանգում ենք, որ անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման տեսանկյունից *հակընդդեմ ապահովում տրամադրելու մասին միջնորդությունը բավարարելու որոշման իրավաչափությունը վիճարկելու իրավական հնարավորությունը* պետք է ապահովվի անհրաժեշտ, գործուն և իրական կազմակերպական կառուցակարգերի ու ընթացակարգերի օրենսդրական մեխանիզմների ամրագրմամբ, որոնք հնարավորություն կընձեռեն քաղաքացիական դատավարության համապատասխան մասնակիցներին մրցակցության և դատավարական հավասարության պայմաններում արդյունավետ կերպով իրացնել իրենց դատավարական կարգավիճակից բխող իրավունքները:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОБЖАЛОВАНИЯ РЕШЕНИЯ О ПРИМЕНЕНИИ ВСТРЕЧНОГО ОБЕСПЕЧЕНИЯ В КОНТЕКСТЕ ГАРАНТИИ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА НА СУДЕБНУЮ ЗАЩИТУ

Аннотация

Данная статья посвящена исследованию правовых вопросов обжалования решения о принятии встречного обеспечения в гражданском процессе в свете обеспечения конституционного права на судебную защиту.

Изучение гражданско-процессуального законодательства показывает, что законодатель не предусмотрел правовых механизмов обжалования судебного акта об удовлетворении ходатайства о принятии встречного обеспечения. В таких условиях, на наш взгляд, ограничивается конституционное право лица на судебную защиту.

В рамках статьи автор пытается выяснить, не является ли непредоставление права на обжалование решения суда об удовлетворении ходатайства о принятии встречного обеспечения неправомерным ограничением конституционного права на судебную защиту.

Ключевые слова: встречное обеспечение, право обжалования, обеспечение иска, право на судебную защиту, гражданский процесс.

SOME ISSUES OF APPEALABILITY OF THE DECISION OF COUNTERMEASURES IN THE CONTEXT OF GUARANTEE OF THE CONSTITUTIONAL RIGHT TO JUDICIAL PROTECTION

Annotation

This article is devoted to the research of legal issues of appeal of the decision of countermeasures in civil procedure in the light of guarantee of the constitutional right to judicial protection.

The study of the civil procedure legislation proves that the legislature did not provide legal mechanisms for the appeal of the judicial act regarding the satisfaction of the motion to request countermeasures, under such conditions, in our opinion, the constitutional right of a person to judicial protection is limited.

Within the framework of the article, the author attempts to find out whether the failure to provide the right to appeal the court's decision on the satisfaction of the motion to request countermeasures for the relevant person participating in the case unlawfully limits the person's constitutional right to judicial protection.

Keywords: countermeasures, right of appeal, provision of the claim, right to judicial protection, civil procedure.



ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ սահմանադրական դատարանի
նախագահի օգնական,
Իրավաբանական գիտությունների
թեկնածու*

**ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ, ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ,
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ
ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐԵԼՈՎ ՆԱԽԿԻՆ ԵՎ
ՆԵՐԿԱ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ)¹**

Ամփոփագիր: Քրեական դատավարության գիտության մեջ ընդ- դատության, ընդդատության կանոնների խախտման հարցերը տարբեր ժամանակներում քննարկման առարկա են եղել: Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը² ընդդատության դերի ու նշանակության, խախտման հարցերը քննարկվել են առավելապես հանրային-իրավական դիտանկյունից: Ներկա ժամանակներում, սակայն, ընդդատության կանոնները ձեռք են բերել նաև մասնավոր-իրավական կարևոր նշանակություն. դրանցով պետությունն ապահովում է անձի արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրերի արդյունավետ կենսագործումը: Հետևաբար, ժամանակի ընթացքում ընդդատության կանոնների դերի և նշանակության փոփոխությամբ պայմանավորված՝ ընդդատության կանոնների խախտման հետևանքների հանդեպ մոտեցումները որոշակի վերաիմաստավորման կարիք ունեն:

¹Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԳԴԿ ֆինանսական աջակցությամբ (Գիտական նախագիծ № 22YR-5E006):

²Հոդվածի տեքստում «նախահեղափոխական», «հետհեղափոխական» եզրույթներն օգտագործվում են հենց պատմական այդ ժամանակշրջանը ի ցույց դնելու համար:

Երկրորդ, որը սակայն պակաս կարևոր չէ, շատ հաճախ ընդդատության կանոնների խախտման հետևանքների մասին խոսելիս դատավարագիտության մեջ պատշաճ ուշադրություն չի դարձվել հենց ընդդատության կանոնների խախտման հատկանիշներին, այդ խախտումը թույլ տվող սուբյեկտների որոշակիացման հարցերին, ինչով էլ պայմանավորված շատ դեպքերում ընդդատության խախտում չհանդիսացող դեպքերի վրա (թերևս այդ դեպքերը սխալմամբ դիտարկելով իբրև խախտումներ) տարածվել են ընդդատության խախտման իրավական հետևանքները՝ առաջացնելով ներհամակարգային մի շարք խնդիրներ:

Երրորդ՝ մեր ժամանակներում ընդդատության կանոններով անձի արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրերի ապահովման դերով պայմանավորված, ընդհակառակը, անհրաժեշտություն է առաջանում այլ հայացքով դիտարկել կամ գուցե անգամ «վերակենդանացնել» ժամանակակից դատավարագիտության կողմից մոռացության մատնված նախահեղափոխական գիտնականների առարկայական ընդդատության որոշման չափանիշների մասին մոտեցումները՝ բացառելու համար դատավարական հակառակորդի (հանրային մեղադրողի) կողմից դատարանի «նշանակմամբ» ընդդատության հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից՝ սույն հոդվածում կվերլուծվեն ու քննարկվեն նշված հարցերը:

Հիմնաբառեր. ընդդատություն, արդար դատաքննության իրավունք, օրենքի հիման վրա ստեղծված դատարան, ապացույցների թույլատրելիություն:

1. Ընդդատության կանոնների խախտման հասկացությունը և հատկանիշները

1.1. Ընդդատության կանոնի խախտման հասկացությունը

Դատավարագիտության մեջ ընդդատության տարբեր բնորոշումներ են տրվել. մի դեպքում այն ընկալվել է առավելապես իբրև գործի իրավաբանական հատկանիշ, երկրորդ դեպքում՝ արարքի հատկանիշ, երրորդ դեպքում՝ դատարանի իրավասություն¹: Սակայն առավել հիմնավոր

¹Տե՛ս, օրինակ, **Розин Н.Н.** Уголовное судопроизводство: пособие к лекциям. 2-е изд., измененное и доп. - С.-Петербург, 1914. - էջ 198, **Познышев С.В.** Элементарный учебник русского уголовного процесса. - М., 1913. - էջ 159, Уголовно-процессуальное право РФ: Учебник для вузов / Под ред. Петрухина И. А., 2-е изд., перераб. и доп. - М., 2009. - էջ 105:

է այն մոտեցումը, որ օրենսդրության մեջ ամրագրված ընդդատությունը ոչ թե ինչ-որ բանի (արարքի կամ գործի) հատկանիշ է, այլև՝ դատարանի իրավասությունը (վարույթի ընդդատությունը) սահմանող կանոններ, որոնք օրենսդիրը սահմանում է՝ հիմք ընդունելով արարքի (դեպքի կամ մեղադրանքի) իրավաբանական հատկանիշները:

Ելնելով ընդդատության վերաբերյալ այդ մոտեցումից՝ «ընդդատության կանոնների խախտումը» կարելի է բնորոշել իբրև դատական վարույթի կոնկրետ փուլում վարույթի ընդդատության վերջնական որոշման ի պաշտոնե պարտականություն ունեցող մարմնի կողմից օրենսդրի կողմից սահմանված արարքի (դեպքի կամ մեղադրանքի) իրավաբանական հատկանիշների անտեսում, որի հետևանքով դատարանը դուրս է գալիս իրավասությունների շրջանակից:

1.2. Ընդդատության կանոնների խախտման հատկանիշները

Նշված բնորոշումը թույլ է տալիս առանձնացնել ընդդատության կանոնների խախտման ստորև նշված հատկանիշները.

- 1) ընդդատության կանոնների խախտում հնարավոր է, երբ այն թույլ է տրվում դատական վարույթի կոնկրետ փուլում, վարույթի ընդդատության վերջնական որոշման ի պաշտոնե պարտականություն ունեցող մարմնի կողմից (ընդդատության սուբյեկտի կողմից),
- 2) արարքի՝ օրենսդրի սահմանած իրավաբանական հատկանիշների առերևույթ առկայության պայմաններում,
- 3) արարքի իրավաբանական հատկանիշների անտեսման հետևանքով դատարանը դուրս է գալիս իրավասությունների շրջանակից:

1.2.1 Ընդդատության կանոնների խախտման սուբյեկտը

ա) Ընդհանուր պարզաբանումներ

Ընդդատության կանոնների խախտման համար առանցքային է ընդդատության կանոնների խախտման սուբյեկտի հարցի քննարկումը, քանի որ քրեական վարույթի ոչ բոլոր մասնակիցների կողմից ընդդատության կանոնների խախտման սխալ որոշման դեպքում է, որ կարող է խոսք գնալ ընդդատության կանոնների խախտման մասին:

Քրեական վարույթի (բողոքի, միջնորդության) ընդդատությունը որոշվում է վարույթի տարբեր մասնակիցների կողմից, որոնք կարող են արտահայտվել տարբեր ձևով և ձևակերպված լինել տարբեր

դատավարական փաստաթղթերում: Մի դեպքում, օրինակ՝ մինչդատական ակտերի իրավաչափության դատական երաշխիքների վարույթում այն որոշվում է վարույթի մասնավոր մասնակիցների կողմից՝ իրավասու դատարան բողոք ներկայացնելով: Երկրորդ դեպքում, օրինակ՝ ապացուցողական գործողությունների կատարման դատական երաշխիքների վարույթում՝ քննիչի կողմից ներկայացված միջնորդությամբ: Երրորդ դեպքում՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու կամ այն վերակազմելու դեպքում՝ դատախազի որոշմամբ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի¹ 206-րդ հոդվածի 1-ին մաս):

Սակայն, վերջիններիս կողմից վարույթի (միջնորդության, բողոքի) ընդդատությունը սխալ որոշելն ինքնին ընդդատության կանոնների խախտում չէ, քանի որ նրա(նց) կողմից վարույթի ընդդատությունը որոշելը վերջնական չէ, այն չի կաշկանդում դատարանին: Դատարանն ամեն դեպքում ի պաշտոնե կրում է ստացված վարույթի (բողոքի, միջնորդության) ընդդատությունը որոշելու պարտականություն: Հետևաբար դատավարության վերոնշյալ մյուս սուբյեկտները չպետք է դիտարկվեն իբրև վարույթի կոնկրետ փուլում ընդդատությունը վերջնական² որոշելու իրավասություն (լիազորություն) ունեցողներ, ըստ այդմ՝ նրանք չեն էլ հանդիսանում ընդդատության խախտման սուբյեկտներ:

Ընդդատությունը վերջնական որոշելու լիազորություն ունեցող մարմինները՝ հետևաբար և ընդդատության խախտման սուբյեկտները փարբեր են՝ կախված ընդդատության մասին վեճի առկայությունից, ինչպես նաև այն առարկայից (օբյեկտից), ինչի ընդդատությունը որոշվում է:

b) *Ընդդատության մասին վեճի բացակայության դեպքում ընդդատությունը վերջնական որոշելու լիազորություն ունեցող մարմինները*

¹Այսուհետ նաև՝ օրենսգիրք:
²Այս առումով անհրաժեշտ է հստակեցնել, որ վարույթի կոնկրետ փուլում «վերջնական որոշելու» իրավասություն (լիազորություն) ունեցող մարմիններ ասելով նկատի ունենք կոնկրետ փաստերի պայմաններում ընդդատությունը վերջնական որոշելու իրավասություն (լիազորություն), որպիսի պարագայում որևէ խոչընդոտ առկա չէ, դատարանի կողմից ստացված վարույթի ընդդատությունը վարույթային ակտով որոշելուց հետո, որոշակի նոր փաստերի ի հայտ գալու արդյունքում, հետագայում վարույթի նույն փուլում, սակայն արդեն այլ փաստերի առկայության պայմաններում կրկին պետք է որոշվի վարույթի ընդդատությունը, բերվող օրինակում՝ արդեն դատական ակտով՝ ըստ ընդդատության փոխանցելու որոշմամբ:

Ընդդադրության մասին վեճի բացակայության դեպքում կոնկրետ փուլում վարույթի (բողոքի, միջնորդության) ընդդատությունն ի պաշտոնե որոշում է դատարանը:

▪ Առաջին ատյանի դատարանն իբրև ընդդադրության խախտման սուբյեկտ

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանի (հակակոռուպցիոն դատարանի) ընդդատության կանոնների խախտման սուբյեկտ լինելու հարցը թեև ինքնին կասկած չի հարուցում, սակայն գործնականում հնարավոր է իրավիճակ, երբ վարույթն ըստ ընդդատության փոխանցելու և ստանալու դեպքում երկու դատարաններն էլ՝ և՛ «ուղարկող», և՛ «ստացող», անտեսելով ընդդատության կանոնները, սխալ որոշեն վարույթի ընդդատությունը: Նման դեպքում ստացվում է իրավիճակ, երբ բացակայում է ընդդադրության մասին վեճը և դատարաններից յուրաքանչյուրն սխալ է որոշած լինում վարույթի ընդդատությունը: Այս դեպքում առաջանում է ընդդատության կանոնների խախտում թույլ տված դատարանի (սուբյեկտի) որոշակիացման հարց՝ այն «ուղարկող», թե՞ «ստացող» դատարանն է:

Օրինակ՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանից ըստ ընդդատության փոխանցվելու որոշմամբ վարույթը հանձնվում է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, որն էլ, առարկություններ չունենալով, վարույթը շարունակելուն ուղղված դատարանի ի պաշտոնե կատարած գործողությամբ, իր հերթին տվյալ փուլում որոշում է քրեական վարույթի ընդդատությունը: Սակայն, ենթադրենք, որ կոնկրետ օրինակում երկու դատարանները հաշվի չեն առել այն, որ անձին մեղսագրվում է հանցանք, որը քրեական օրենսգրքի հավելվածով նախատեսված է իբրև հակակոռուպցիոն հանցանք:

Մեր գնահատմամբ նշված դեպքերում ընդդատության կանոնների խախտման սուբյեկտի որոշակիացման հարցը պետք է լուծվի՝ հիմք ընդունելով «վարույթի կոնկրետ փուլում ընդդատությունը վերջնական որոշելու» չափանիշը, հետևաբար և նման պայմաններում ընդդատության կանոնների խախտման սուբյեկտ պետք է դիտարկվել ոչ թե «ուղարկող», այլ «ստացող» դատարանին:

▪ Դատարանի կողմից ընդդատության որոշման ձևերը
Դատարանն ընդդատությունը որոշում է **տարբեր ձևերով**.

- 1) փաստացի գործողությամբ,
- 2) ըստ ընդդատության փոխանցելու որոշմամբ (դատական ակտով),

3) վարույթի հարուցումը մերժելու մասին որոշմամբ (դատական ակտով),

4) դատական ակտը բեկանելու որոշմամբ (դատական ակտով):

1. Դատարանի կողմից ընդդատության որոշումը փաստացի գործողությամբ

Այս դեպքում այն որոշվում է ոչ թե դատավարական փաստաթուղթ կազմելով (դատական ակտով), այլ փաստացի գործողություններ կատարելով, վարույթը շարունակելուն ուղղված դատարանի ի պաշտոնե կատարած գործողությամբ:

Խոսքն այն դեպքերի մասին է, երբ դատարանը եզրակացնում է, որ ստացված մեղադրական եզրակացությամբ ստացված գործի վարույթը ընդդատյա է իրեն, կամ, օրինակ, մինչդատական վարույթի դատական երաշխիքների վարույթում ստացված բողոքը, միջնորդությունը, ընդդատյա է իրեն:

2. Դատարանի կողմից ընդդատության որոշումը ընդդատության փոխանցելու որոշմամբ (դատական ակտով).

Դատական ակտի այս տեսակով դատարանի կողմից որոշվում է ամբողջ քրեական վարույթի ընդդատությունը և ոչ թե բողոքի կամ միջնորդության ընդդատությունը:

Այդպիսի որոշմամբ ընդդատությունը կարող է որոշվել և՛ նախնական, և՛ հիմնական դատախոսների փուլում:

Առաջին դեպքում՝ նախնական դատախոսների փուլում դատարանը վարույթն ըստ ընդդատության փոխանցելու որոշում է կայացնում, երբ պարզում է, որ ստացված քրեական վարույթը ենթակա չէ իրեն (օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մաս): Օրինակ՝ հակակոռուպցիոն դատարանն ստացել է մի հանցագործության վերաբերյալ վարույթ, որը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված չէ իբրև կոռուպցիոն հանցանք: Այս դեպքում հակակոռուպցիոն դատարանը կայացնում է վարույթն ըստ ընդդատության փոխանցելու վերաբերյալ որոշում:

Երկրորդ դեպքում՝ հիմնական դատախոսների ընթացքում դատարանն այդպիսի որոշում է կայացնում, երբ հիմնական դատախոսների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնք վկայում են, որ վարույթն այլ դատարանին է ընդդատյա և կողմերից մեկն առարկում է այդ դատարանի կողմից վարույթը շարունակելուն (օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մաս):

2(106)2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱՂՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Օրինակ, մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել հանցանքի կատարման վայրը և մեղադրանքն ըստ այդմ քննվել է մինչդատական վարույթ իրականացրած նախաքննության մարմնի նստավայրի դատական տարածքում (օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մաս), սակայն հիմնական դատալուծման ընթացքում պարզվում է, որ հանցանքը կատարվել է այլ դատարանի դատական տարածքում: Այն պարագայում, երբ կողմերը չեն գալիս համաձայնության, որ գործի վարույթը շարունակվի գործը քննող դատարանի կողմից, և կողմերից մեկն առարկում է վարույթի շարունակությանը, ապա դատարանը կայացնում է վարույթն ըստ ընդդատության փոխանցելու որոշում:

3. Դատարանի կողմից ընդդատության որոշումը վարույթի հարուցումը մերժելու մասին որոշմամբ (դատական ակտով).

Դատական ակտի այս տեսակով դատարանի կողմից որոշվում է մինչդատական վարույթի դատական երաշխիքների վարույթի ընդդատությունը:

Օրենսգրքով սահմանվում է, որ խափանման միջոց կիրառելու, ինչպես նաև կալանքի կամ տնային կալանքի ժամկետը երկարաձգելու, ապացուցողական գործողություն կատարելու կամ գաղտնի քննչական գործողության ժամկետը երկարաձգելու վարույթը հարուցելու, գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու քննիչի *միջնորդությունները պետք է պարունակեն իրավասու դատարանի անվանումը* (ՀՀ քր. դատ. օր.-ի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ, 292-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ, 295-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ):

Այս նորմերում առկա «իրավասու դատարանի անվանում» հասկացությունը պետք է մեկնաբանել *ոչ միայն ձևական* (դատարանի անվանումը գրված լինելու տեսանկյունից), այլ նաև այն պետք է *դիրտարկել ընդդատության կանոնների հետ համակցված*:

Նման մեկնաբանության արդյունքում, արդեն երբ, օրինակ, քննիչի կողմից միջնորդությամբ իրավասու դատարանը որոշելիս ՀՀ քր. դատ. օր.-ի 261-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները չպահպանվեն, ապա դատարանը, ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր.-ի 285-րդ հոդվածի 9-րդ մասով, 292-րդ հոդվածի 11-րդ մասով, 295-րդ հոդվածի 7-րդ մասով, պետք է որոշում կայացնի վարույթի հարուցումը մերժելու մասին:

Նույն կերպ նաև մինչդատական ակտի վերաբերյալ բողոքը սխալ ընդդատությամբ բերելու դեպքում դատարանը պետք է մերժի վարույթի հարուցումը ՀՀ քր. դատ. օր.-ի 302-րդ հոդվածի 2-րդ մասով:¹

4. Դատարանի կողմից ընդդատության որոշումը դատական ակտը բեկանելու որոշմամբ (դատական ակտով):

Դատական որոշման այս տեսակով ընդդատությունը որոշելու իրավասությունը վերապահված է վերադաս դատարանին: Այդպիսի իրավիճակ հնարավոր է և՛ հատուկ վերանայման, և՛ վերաքննության (վճռաբեկության) դեպքում²:

Հատուկ վերանայման դեպքում, օրինակ, առաջին ատյանի դատարանի՝ բողոքի կամ միջնորդության մինչդատական վարույթի դատական երաշխիքներով վարույթի հարուցումը մերժելու որոշման բողոքարկման պարագայում, Վերաքննիչ դատարանը, հայտնաբերելով, որ առաջին ատյանի դատական ակտով ընդդատությունը սխալ է որոշված եղել և տեղ է գտել ընդդատության կանոնների խախտում, պետք է իր հերթին որոշի բողոքի կամ միջնորդության ընդդատությունը՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելով և դրան փոխարինող դատական ակտ կայացնելով (օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):

Վերաքննության դեպքում (համանման դեպքում) Վերաքննիչ դատարանը պետք է բեկանի դատավճիռը՝ փոխանցելով վարույթն առաջին ատյանի դատարան՝ նոր քննության (371-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ

¹Այս առումով, կարծում ենք՝ առկա է օրենսդրական բաց կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու միջնորդության հիման վրա վարույթի հարուցումը մերժելու հիմքերում (օրենսգրքի 289-րդ հոդվածի 2-րդ մաս), ինչպես նաև արգելադրված գույքի սեփականատիրոջ կամ դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձի կամ նրանց ներկայացուցչի կողմից գույքի արգելադրումը վերացնելու մասին միջնորդությամբ վարույթի հարուցումը մերժելու հիմքերում (օրենսգրքի 298-րդ հոդվածի 2-րդ մաս): Նման պայմաններում, կարծում ենք՝ դատարանները պետք է անալոգիայիով կիրառեն օրենսգրքի 285-րդ հոդվածի 9-րդ մասը, 295-րդ հոդվածի 7-րդ մասը նաև նշված միջնորդությունների դեպքում՝ կայացնելով վարույթի հարուցումը մերժելու որոշումներ՝ թույլ չտալու համար ընդդատության կանոնների խախտում: Ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը մերժելու հիմքերի մեջ ևս բացակայում է միջնորդությունը ոչ իրավասու դատարան ներկայացված լինելու հիմքը, հետևաբար, կարծում ենք, այն դեպքերում, երբ միջնորդությունը ներկայացվել է դատարան՝ խախտելով օրենսգրքի 261-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը, ապա դատարանը պետք է մերժի միջնորդությունը, վերը նշված օրենքի դրույթներն անալոգիայով կիրառելու եղանակով:

²Վերադաս դատարանի և մասնավորապես վերաքննիչ դատարանի կողմից ընդդատության կանոնների խախտման մասին մանրամասն կիսուպի հոդվածի հաջորդ էջերում:

◆ 2(106)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

կետ, 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, 376-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ):

▪ *Դատարանի կողմից «կոնկրետ փուլում» վարույթի ընդդատության «վերջնական որոշելը» իբրև ընդդատության կանոնների խախտման հատկանիշ*

*Դատարանի կողմից ընդդատության որոշման վերը նշված ձևերից ոչ բոլորի դեպքում է, որ ընդդատության սխալ որոշումը հանգեցնում է **ընդդատության կանոնների խախտման:***

Ինչպես արդեն նշվել է վերևում, այդ խախտման համար անհրաժեշտ է, որ ընդդատությունը սխալ որոշվի վարույթի **կոնկրետ փուլում**¹ ընդդատությունը **վերջնական որոշելու** իրավասություն ունեցող մարմնի կողմից:

Իրենց հերթին՝ դատարանի կողմից ընդդատության որոշման վերը ներկայացված ձևերից *երկրորդի դեպքում՝ ըստ ընդդատության փոխանցելու որոշման դեպքում*, բացակայում է ընդդատության կանոնների խախտման կոնկրետ փուլում **վերջնական որոշելու** հատկանիշը:

Բանն այն է, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելու որոշման դեպքում վարույթի ընդդատությունը դեռ պետք է վերջնական որոշվի վարույթը «ստացող» դատարանի կողմից: Վարույթը «ստացող» դատարանը, եթե համաձայնի «ուղարկող» դատարանի վարույթի որոշած ընդդատությանը, **ապա կոնկրետ փուլում ընդդատությունը վերջնական որոշում է իր վարույթային ակտով՝ վարույթը շարունակելուն ուղղված ի պաշտոնե կատարած գործողությամբ:**

Այն դեպքում, երբ «ստացող» դատարանը չհամաձայնի «ուղարկող» դատարանի վարույթի որոշած ընդդատությանը, այդպիսով իսկ առաջացնելով ընդդատության մասին վեճը, ապա այդ պարագայում արդեն ընդդատության հարցի վերջնական լուծումը վարույթի նշված փուլում դուրս է գալիս դատարանի լիազորության շրջանակից:

Հետևաբար վարույթն ըստ ընդդատության փոխանցելու որոշմամբ դատարանի որոշած ընդդատությունը չի ունենա վարույթի կոնկրետ փուլում «վերջնական» լինելու հատկանիշը: Ուստի դատարանի կողմից ընդդատության որոշման միայն վերը ներկայացված առաջին, երրորդ և

¹Մինչդատական վարույթի դատական երաշխիքների մասով «վարույթի փուլ» եզրույթն օգտագործվում է պայմանականորեն՝ հաշվի առնելով նշված վարույթի շրջանակներում դատարանի՝ վարույթ իրականացնող մարմին լինելու հանգամանքը (օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):

չորրորդ ձևերով է լինում **վերջնական որոշել ընդդատությունը վարույթի կոնկրետ փուլում:**

Այսպեղից էլ ինքնաբերաբար բխում է մի եզրահանգում, այն է՝ դատարանի կողմից ընդդատության կանոնների խախտումը կարող է տեսականորեն տեղ գտնել փաստացի գործողությամբ, կա՛մ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշմամբ, կա՛մ դատական ակտը բեկանելու որոշմամբ ընդդատությունը սխալ որոշած լինելու դեպքում միայն:

▪ **Վերաքննիչ դատարանն իբրև ընդդատության խախտման սուբյեկտ**

Վերնում նշած դատական ակտը բեկանելու որոշմամբ ընդդատության կանոնների հնարավոր խախտման հարցն ուղիղ առնչվում է վերադաս դատարանի կողմից ընդդատության խախտման հնարավորության հարցին: Ընդ որում հարցը, թե արդյոք վերադաս դատարանը և մասնավորապես Վերաքննիչ դատարանը կարող է հանդես գալ իբրև ընդդատության խախտման սուբյեկտ, թե՞ այդպիսի խախտում կարող է կատարել միայն առաջին ատյանի դատարանը, դատավարագիտության մեջ ոչ միանշանակ ընկալում է ունեցել:

Այս առնչությամբ Ս.Մարաբյանը, հարելով դատավարագետների այն խմբին, ովքեր բացառում էին վերադաս դատարանի կողմից դատական վերանայման ընթացքում ընդդատության կանոնների խախտում թույլ տալու հնարավորությունը, հիմք ընդունելով նախկին օրենսդրական կարգավորումները, նշում էր, որ «ընդդատություն» հասկացությունը, վերաբերելի լինելով առաջին ատյանի կարգով գործի քննությանը, հայկական դատավարական համակարգի տեսանկյունից անհնար էր համարում վերադաս դատարանների կողմից անմիջականորեն ընդդատության կանոնների խախտում թույլ տալը: Հեղինակը նշում էր, որ «...ընդդատության խախտումը բացառապես առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճռի անվերապահ բեկանման հիմք է (ՀՀ քր.դատ.օր-ի 398-րդ հոդված, մաս 3-րդ, կետ 11-րդ), իսկ **Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից ընդդատությունը խախտելու մասին խոսք չկա և չի կարող լինել:** Գործող իրավակարգավորումների պայմաններում Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից անմիջականորեն չի կարող թույլ տրվել ընդդատության խախտում. դա հնարավոր է բացառապես այն դեպքում, երբ չեն ուղղում առաջին

ՍԱՀՄԱՆԱՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 2(106)2022

ատյանի դատարանի կողմից թույլ տրված ընդդատության խախտումը» (ընդգծումը մերն է)՝

Սակայն, նշված մոտեցման հետ դժվար է համաձայնել: Մեր կարծիքով՝ ինչպես նախկին, այնպես էլ գործող օրենսգրքով հնարավոր է, որ *վերադաս դատարանը, կոնկրետ դեպքում՝ վերաքննիչ դատարանը, հանդես գա իբրև ընդդատության խախտման սուբյեկտ*: Ընդ որում դրա համար ամենևին պարտադիր չէ, որ լինեն մի քանի «վերաքննիչ դատարաններ», որոնք ունենան կոնկրետ դատական տարածքներ, ինչպես պնդում է հեղինակը²: Ավելին՝ Վերաքննիչ դատարանի կողմից ընդդատության կանոնի խախտում հնարավոր է(ր), երբ օրինակ, վարույթի մասնակիցները բողոքարկում են կայացված ակտը դատական սխալի՝ քրեադատավարական օրենքի էական խախտման հիմքով վիճարկելով՝ ընդդատության կանոնների խախտումը: Ու եթե առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (կամ մասնագիտացված դատարանի) կողմից ընդդատությունը ճիշտ որոշված լինելու պարագայում վերաքննիչ դատարանը սխալ որոշի վարույթի (բողոքի, միջնորդության) ընդդատությունը՝ բեկանի դատական ակտը վարույթը փոխանցի այլ դատարան, որին այն ընդդատյա չէ, *սպա վերջինս այդպիսով անմիջականորեն թույլ կտա ընդդատության կանոնի խախտում*:

Ասվածն ինքնին վկայում է, որ հայկական դատավարական համակարգը, անկախ նրանից, որ բացառում է վերաքննիչ դատարանի կողմից գործն առաջին ատյանի կարգով քննության հնարավորություն (Սահմանադրության 172-րդ հոդված), միևնույն ժամանակ չի բացառում ընդդատության կանոնների խախտում (անմիջական խախտում) վերաքննիչի կողմից՝ դատական վերանայման շրջանակներում:

Ուստիև պետք է արձանագրել, որ վերաքննիչ դատարանը հանդես է գալիս իբրև ընդդատության խախտման սուբյեկտ:

с) Ընդդատության մասին վեճի առկայության դեպքում ընդդատությունը վերջնական որոշելու լիազորություն ունեցող մարմինները

Ընդդատության մասին վեճի առկայության դեպքում այդ հարցի վերջնական որոշումը՝ կախված նրանից վեճը տարածքային է, թե առարկայական, ընդդատության տեսակի վերաբերությամբ է ծագել: Ըստ այդմ՝ դրա վերջնական լուծումը համապատասխանաբար վերապահված է

¹Մարաբյան Ս. Ընդդատության ինստիտուտի ընդհանուր բնութագիրը և իրավական կարգավորման մեթոդաբանական հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում // Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, 2021, № 1 (34), էջ 64:

²Տե՛ս, նույն տեղում:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատի և Վճռաբեկ դատարանի նախագահին (Օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մաս):

Ընդ որում վերջիններիս է վերապահված միայն քրեական վարույթի ընդդատության մասին վեճի լուծումը, և նրանք չունեն, օրինակ, մինչդատական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում բողոքի, միջնորդության ընդդատությունը որոշելու լիազորություն:

Այսպիսով, ելնելով վերոշարադրյալից՝ պետք է եզրահանգել, որ իբրև ընդդատության կանոնների խախտման սուբյեկտ կարող են լինել դատարանը (ընդդատության մասին վեճի բացակայության պայմաններում) և վճռաբեկ դատարանի կամ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահները¹:

1.2.2 Արարքի՝ օրենսդրի սահմանած իրավաբանական հատկանիշների առերևույթ առկայությունը՝ իբրև ընդդատության խախտման հատկանիշ

Ընդդատության կանոնների խախտում կարող է տեղ գտնել, երբ արարքում (դեպքի, մեղադրանքի) օրենսդրի կողմից սահմանված ընդդատության հատկանիշներն *առերևույթ առկա են*, այսինքն երբ վարույթի նյութերից կարելի է (ամենայն հավանականությամբ) հետևության գալ, որ վարույթի ընդդատությունը որոշող օրենսդրի սահմանած այս կամ այն *հատկանիշները* (տարածքային, առարկայական և այլն) կոնկրետ դեպքում կան: Հեղևաբար՝ ընդդատության խախտման համար ընդդատության խախտման սուբյեկտը պետք է արարքում օրենսդրի կողմից սահմանված ընդդատության հատկանիշների առերևույթ առկայության պայմաններում (երբ վարույթի նյութերից ամենայն հավանականությամբ կարող է եզրահանգման գալ, որ գործն ընդդատոյա է մի դատարանին (օրինակ ընդհանուր իրավասության դատարանին)), սխալ որոշի վարույթի (բողոքի, միջնորդության)

¹Այս պարագայում, երբ ընդդատության կանոնների խախտում թույլ տված սուբյեկտը Վճռաբեկ դատարանի (քրեական պալատի) նախագահն է, ապա հետագայում արդեն՝ Վճռաբեկ դատարանի (կամ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի) նախագահի կողմից ընդդատության վեճի լուծումից հետո, *վարույթ իրականացնող դատարանն այլևս վերջնական որոշված ընդդատությունը կասկածի տակ դնելու իրավասություն չունենալու պարագայում*, գործում է այն *կանխավարկածով*, որ *հենց ինքն է տվյալ գործով իրավասու դատարանը*: Նման դեպքում ընդդատության կանոնների խախտում բացահայտվելու պարագայում, չի կարող խոսք գնալ, օրինակ, վարույթ իրականացրած դատավորին կարգահական պատասխանատվության ենթարկելու մասին, քանի որ այդ պարագայում կբացակայի ընդդատության կանոնների խախտման համար գործը քննած դատավորի մեղավորությունը:

2(106)2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱՐՈՎԿԱՆ ՂԱՏՎՈՐ

ընդդատությունը (օրինակ՝ բեկանի դատական ակտը՝ գործն ուղարկելով հակակոռուպցիոն դատարան):

Այստեղից էլ պետք է հստակ տարբերակել վարույթի (բողոքի, միջնորդության) ընդդատության սխալ որոշումը և ընդդատության կանոնների խախտումը: Եթե ընդդատության կանոնների խախտման դեպքում միշտ առկա է ընդդատության սխալ որոշում, ապա վարույթի (բողոքի, միջնորդության) ընդդատության սխալ որոշման ոչ բոլոր դեպքերում է, որ առկա է ընդդատության կանոնների խախտում: Վերջինիս համար անհրաժեշտ է, որ արարքում ընդդատության այս կամ այն հատկանիշների առերևույթ առկայության պայմաններում դրանք հաշվի չառնվեն (անտեսվեն) վարույթի կոնկրետ փուլում ընդդատությունը վերջնական որոշող սուբյեկտի կողմից:

Ընդդատությունը որոշող կոնկրետ հատկանիշների առերևույթ առկայության պայմաններում դրանք հաշվի չառնելը, դրանք անտեսելով ընդդատությունը որոշելն իբրև ընդդատության խախտման հատկանիշ առանձնացնելը մի կողմից թույլ է տալիս արձանագրել, որ ընդդատության կանոնների խախտում հնարավոր է միայն մեղավորությամբ¹ կատարել, մյուս կողմից՝ դրանով հնարավոր է դառնում նաև որոշել ընդդատության կանոնների խախտման հստակ պահը:

Խախտում հնարավոր է թույլ տալ միայն արարքի՝ օրենսդրի սահմանած իրավաբանական հատկանիշների առերևույթ ի հայտ գալու (առաջանալու, առկայության) պահից:

Հետաքար, ընդդատության կանոնների խախտումը կբացակայի այն դեպքում, երբ գործի վարույթն իրականացվի (բողոքը, միջնորդությունը քննվի) մի դատարանում, որին այն ընդդատյա չէր, սակայն, երբ նախնական դատալսումների (կամ համապատասխան միջնորդությունով,

¹Ընդդատության կանոնների խախտումը մեղավորությամբ կատարելու հանգամանքը գործնական կարևորություն է ստանում հատկապես այն դեպքերում, երբ լուծվում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Օրինակ, երբ դատարանը թույլ է տալիս ընդդատության կանոնների խախտումը և կայացնում դատական ակտ, դա հետագայում կարող հիմք է վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Դատական օրենսգրքը սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվում է, որ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Արձանագրելով, որ այն դեպքում, երբ ընդդատության խախտման սուբյեկտը դատարանն է, իսկ այդպիսի խախտում հնարավոր է մեղավորությամբ, ստացվում է, որ այդպիսի խախտում դատարանի կողմից թույլ տալու պարագայում առաջանում է նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:

բողոքով վարույթի հարուցման հարցի լուծման շրջանակներում) փուլում դատարանը չէր կարող եզրահանգում անել վարույթն այլ դատարանին ընդդատյա լինելու մասին, քանի որ տվյալ պահին ու տվյալ փուլում, ընդհակառակը, գործի նյութերից կարելի էր հետևություն արվել, որ վարույթն ամենայն հավանականությամբ ընդդատյա է հենց իրեն՝:

Իսկ այն դեպքում, երբ հետագայում ի հայտ գան փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա լինի փոխանցման ըստ ընդդատության, կձևավորվի ընդդատության կանոնի քննարկվող հատկանիշը, քանի որ **այդ պահից** սկսած միայն վարույթի նյութերից կարելի է (ամենայն հավանականությամբ) հետևություն անել վարույթի ընդդատությունը որոշող օրենսդրի սահմանած այս կամ այն հատկանիշների առկայության մասին (տարածքային, առարկայական և այլն): *Հետևաբար այդ պահից միայն կարող է խոսք գնալ ընդդատության կանոնների խախտման մասին*²:

Վերը քննարկվածի համատեքստում հատկանշական են օրենսդրի ներկա և նախկին մոտեցումների փոփոխությունները: ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի (այսուհետ նաև՝ 1998թ. օրենսգիրք) 49-րդ հոդվածի 2-րդ մասով դատական քննության ընթացքում գործի (վարույթի) ընդդատության փոփոխությանը հանգեցնող նոր փաստերի ի հայտ գալու պարագայում դրան նախորդող դատական քննությունը դիտարկվում էր իբրև «ընդդատության կարգի խախտմամբ իրականացված», հետևապես սահմանում էր, որ նման դեպքերում դատարանը կողմերի համաձայնությամբ կարող էր գործը թողնել իր վարույթում, իսկ կողմերից մեկի առարկության դեպքում *դատական քննությունը չեղյալ էր համարվում* և գործն ուղարկվում էր ըստ ընդդատության³ (1998թ. օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մաս):

¹Այս առնչությամբ անհրաժեշտ է հիշատակել Գերմանիայի դաշնային Սահմանադրական դատարանի որոշումներից մեկում տեղ գտած դիրքորոշումը, թե «այնուամենայնիվ դա չի նշանակում, որ Հիմնական օրենքի 101-րդ հոդվածի 1-ին պարբերության առաջին նախադասությամբ սահմանված կանոնները կխախտվեն ամեն դեպքում, երբ «օրինական դատավորի» փոխարեն» գործը քննում է մեկ այլ դատավոր: *Եթե դատավորի գործողությունը, որ առաջացնում է նման հետևանք, պայմանավորված է դատավարական մոլորությամբ (error in procedendo), ապա տեղի չի ունենում Հիմնական օրենքի 101-րդ հոդվածի 1-ին պարբերության առաջին նախադասությամբ սահմանված կանոնների խախտում* (BVerfGE 3, 359 [364]), տե՛ս Избранные решения Федерального Конституционного Суда Германии. - Москва: Инфотропик Медиа, 2018. - էջ 952:

²Դատարանի կողմից ընդդատության որոշման սահմանների մասին կմանրամասնվի հոդվածի հաջորդ էջերում:

³Ընդ որում՝ «դատական քննությունը չեղյալ համարվելը» գրականության մեջ մեկնաբանվում էր այնպես, որ. «...առաջին ատյանի դատարանում ձեռք բերված բոլոր

Նոր օրենսգրքի կարգավորումներով, արդեն, օրենսդիրը փոփոխել է իր այդ մոտեցումը՝ մեր վերը արտահայտած եզրահանգումներին համահունչ: Նոր օրենսգրքը, այլևս նման դեպքերը չդիտարկվելով իբրև *ընդդատության կանոնների խախտմամբ իրականացված դատաքննության դեպքեր*, չի էլ սահմանում նախկին կարգավորման «դատական քննությունը չեղարկելու» պահանջ (օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մաս):

1.2.3. Ընդդատության կանոնների խախտման հեղևանքով, դատարանի՝ իր իրավասությունների շրջանակից դուրս գալը

Ընդդատության կանոնների խախտման արդյունքում դատարանը, չլինելով «իրավասու», կատարում է գործողություններ կոնկրետ վարույթով՝ այդպիսով իսկ դուրս գալով իր իրավասության շրջանակներից:

Սակայն այդ առնչությամբ պետք է անել որոշ նկատառումներ, մասնավորապես այն մասին, որ ոչ բոլոր դեպքերում է, որ «ոչ իրավասու» դատարանի կողմից գործողությունների կատարումը հանգեցնում է այդ դատարանի իրավասությունների շրջանակից դուրս գալուն:

Այդպիսի իրավիճակ կարող է առաջանալ, երբ, օրինակ, հիմնական դատախոսների ընթացքում ի հայտ է գալիս վարույթի ընդդատությունը փոխելու հիմքը (դատարանը «ոչ իրավասու է»), սակայն, մինչև միևնույն ժամանակ, նախքան վարույթն ըստ ընդդատության փոխանցելու որոշում կայացնելը, դատարանն անհրաժեշտ է համարում կատարել անհետաձգելի ապացուցողական գործողություններ («ոչ իրավասու» դատարանը դուրս չի գալիս իր իրավասության շրջանակներից) (օրենսգրքի 263-րդ հոդվածի 3-րդ մաս):

Արդյունքում պետք է տարբերակել հետևյալ իրավիճակները. երբ ընդդատության *կանոնների խախտման* արդյունքում դատարանը, լինելով «ոչ իրավասու», դուրս է գալիս իր լիազորությունների շրջանակից, այն դեպքերից, երբ այդպիսի *խախտման բացակայության դեպքում* (քննարկվող օրինակում) լինելով «ոչ իրավասու»՝ դատարանը կատարում է վարույթային գործողություններ՝ շարունակելով, սակայն, մնալ իր իրավասությունների շրջանակում:

ապացույցները (...), ինչպես նաև նախաքննական ապացույցների *հեղազոտումը համարվում է չեղյալ*» իսկ գործը պատշաճ ընդդատության ուղարկելուց հետո «վարույթ ընդունած դատարանը պետք է *ամբողջ ծավալով իրականացնի ապացուցման գործընթացը*», տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (դատական և հատուկ վարույթներ): Հեղ. խումբ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան: Եր., Հրատ. «Տիգրան Մեծ», 2017թ., Մաս 3, էջ 25:

2. Դատարանի կողմից ընդդատությունը որոշելու սահմանները

Վերևում անդրադառնալով ընդդատության կանոնների խախտման հատկանիշներին՝ արարքի՝ օրենսդրի սահմանած իրավաբանական հատկանիշների առերևույթ առկայության պայմաններում կատարելուն, նշեցինք, որ ընդդատության կանոնների խախտման այդ հատկանիշով հնարավոր է լինում որոշել ընդդատության կանոնների խախտման պահը:

Սակայն դատական վարույթի մրցակցային բնույթն իր հերթին որոշակի ազդեցություն է թողնում գործը մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթով դատարանի կողմից ընդդատության որոշման հարցում, հետևաբար՝ *դատարանի կողմից ընդդատության կանոնների խախտում թույլ տալու հնարավորության վրա:*

Այս տեսանկյունից կարևոր նշանակություն է ձեռք բերում գործի ըստ էության քննության շրջանակներում *դատարանի սահմանափակվածությունը in rem* (մեղադրական եզրակացության մեջ նկարագրված արարքով (օրենսգրքի 276-րդ հոդված)), և հակառակը՝ *սահմանափակված չլինելն* այդ արարքին տրված *իրավական գնահատականով*: Հետևաբար, այս լույսի ներքո անհրաժեշտ է քննարկել մի քանի իրավիճակներ՝ հստակ որոշելով ընդդատության խախտման սուբյեկտ դատարանի կողմից վարույթի ընդդատության որոշման (հետևաբար և ընդդատության կանոնների հնարավոր խախտման) հնարավոր սահմանները:

2.1. Դատարանի՝ մեղադրական եզրակացության մեջ նկարագրված՝ իրեն ոչ ընդդատյա ընդգրկուն (հանցավոր) արարքով վարույթ ստանալու դեպք

Սա այն դեպքն է, երբ մի դատարան ստանա մի գործի վարույթ, որի մեղադրական եզրակացության մեջ նկարագրված փաստերի քննության առարկայական ընդդատությունը վերապահված է այլ դատարանի, սակայն այդ փաստերին մեղադրական եզրակացության մեջ տրված քրեաիրավական գնահատականն (որակում) այլ լինի, որով արդեն վարույթը ենթակա լինի հենց այդ դատարանին:

Այլ կերպ՝ առկա է *անհամապատասխանություն մեղադրական եզրակացության մեջ նկարագրված արարքի (փաստերի) և դրան տրված քրեաիրավական գնահատանի միջև, որով էլ պայմանավորված՝ վարույթն ընդդատյա է տարբեր դատարաններին. մեղադրական եզրակացության մեջ նկարագրված փաստերը հիմք ընդունելու դեպքում այն ընդդատյա կլինի մի դատարանին, իսկ մեղադրական եզրակացության մեջ*

նկարագրված փաստերին տրված իրավական գնահատականը հիմք ընդունելու դեպքում արդեն՝ մեկ այլ դատարանին:

Օրինակ, հակակոռուպցիոն դատարանն ստանա վարույթ, որի մեղադրական եզրակացության մեջ նկարագրված լինի մի խումբ անձանց կողմից խարդախություն կատարելու արարք ու դրանում բացակայի «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» արարքի նկարագրությունը, (*այսինքն՝ նկարագրվի (հանցավոր) արարք, որն ընդդատյա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին*), միևնույն ժամանակ, սակայն, նկարագրված արարքին տրված լինի այլ՝ դրան առերևույթ չհամապատասխանող քրեաիրավական գնահատական՝ արարքը որակված լինի ՀՀ քր. օր.-ի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (*այսինքն՝ հանցանք, որը համարվում է հակակոռուպցիոն հանցանք՝ և որի վերաբերյալ վարույթն ընդդատյա է հակակոռուպցիոն դատարանին*):

Նման պայմաններում հարց է առաջանում՝ ընդդատության կանոնների խախտման սուբյեկտ դատարանը այդպիսի խախտում թույլ չտալու համար ինչ կերպ պետք է վարվի:

Կարծում ենք, որ քննարկվող դեպքում հակակոռուպցիոն դատարանը պետք է կայացնի վարույթն ըստ ընդդատության փոխանցելու որոշում՝ այն փոխանցելով համապատասխան դատարան՝ կաշկանդված չլինելով նկարագրված արարքին տրված քրեաիրավական գնահատականով:

Նույն կերպ, երբ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մեղադրական եզրակացությամբ ստանա վարույթ, որում նկարագրված արարքն ընդդատյա լինի հակակոռուպցիոն դատարանին, **անկախ արարքին տրված իրավական գնահատականից**, գործը պետք է ուղարկի հակակոռուպցիոն դատարան: Եվ միայն հակառակ մոտեցման դեպքում թույլ կտրվի ընդդատության կանոնների խախտում. օրենսդրի կողմից նախատեսված հատկանիշների առերևույթ առկայության դեպքում դրանք կանտեսվեն:

Մեր այս մոտեցումը հիմնավորվում է ստորև նշված հանգամանքներով:

Նախ՝ մոտեցումը, որ քննարկվող դեպքում առարկայական ընդդատությունը պետք է որոշվի *մեղադրական եզրակացության մեջ նկարագրված արարքով (փաստերով) և չի կարող կախվածության մեջ դրվել այդ արարքին մեղադրական եզրակացության մեջ տրված քրեաի-*

¹ՀՀ քրեական օրենսգրքի հավելվածով 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքը դասվել է կոռուպցիոն հանցանքների շարքում:

րավական գնահատականից, հիմնավորվում է *iura novit curia* հայտնի կանոնով, ըստ որի դատարանը գիտի օրենքը, և կողմի՝ օրենքի մեկնաբանությունը (այս դեպքում դատախազի, քննիչի) չի կարող կաշկանդել դատարանին:

Երկրորդ՝ առարկայական ընդդատությունը քրեաիրավական որակմամբ և ոչ թե նկարագրված փաստերով որոշելու մոտեցումը, խիստ սահմանափակելով դատարանին, միևնույն ժամանակ փաստացիորեն քննիչին և/կամ դատախազին կվերապահի *de facto* վարույթի ընդդատությունը վերջնական որոշելու իրավասությունը: Նման դեպքում կստացվի, որ դատարանը զրկված կլինի ընդդատությունը վերջնական որոշելու իրավասությունից, այդպիսով իսկ անձի արդար դատաքննության իրավունքի կարևորագույն տարրերից մեկի՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» պահանջի ապահովման տեսանկյունից ունենալով զրոյական ազդեցություն՝ այդ հարցում ձեռք բերելով ձևական և երրորդային և արարքին քննիչի (կամ դատախազի) կողմից տրված քրեաիրավական գնահատականով որոշված քրեական օրենսգրքի հոդվածների կոռուպցիոն հանցագործությունների ցանկում ընդգրկված լինել-չլինելու քննիչի (դատախազի) «քվազիհսկիչի» դեր՝ չունենալով անգամ նկարագրված արարքի և դրան տրված իրավական գնահատականի միջև հակասության պարագայում (որոնք վճռորոշ կարող են լինել և հանգեցնել վարույթի ընդդատության փոփոխության) դրանց համապատասխանեցման համար միջոցներ ձեռնարկելու որևէ իրավական հնարավորություն¹:

◆ 2(106)2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱՂՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

¹ Ասվածի առնչությամբ, եթե իբրև հակափաստարկ բերվի այն, որ դատարանը նման պայմաններում կարող է օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա հետաձգել դատախազի և պարտադրել հանրային մեղադրողին «համապատասխանեցնել» մեղադրական եզրակացությունը օրենսգրքի 202-րդ հոդվածի պահանջներին՝ այդ կերպ համապատասխանեցնում պարտադրելով արարքի նկարագրության և դրան տրված քրեաիրավական գնահատականի միջև, ապա նման հակափաստարկն ինքնին խոցելի է և տրամազծորեն հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նշված հարցի վերաբերյալ ձևավորած կայուն նախադեպային պրակտիկային:

Բանն այն է, որ, օրինակ, մեղադրական եզրակացության մեջ իշխանական կամ ծառայողական լիազորություններն օգտագործելով խարդախություն նկարագրված լինելու, սակայն այդ արարքի նկարագրությունը քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածով որակված լինելու պարագայում, եթե դատարանը օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա դատախազի և հանրային մեղադրողին մեղադրական եզրակացությունն օրենսգրքի 202-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխանեցնել պարտադրի, ապա այդպիսի «համապատասխանեցնում պարտադրել» կնշանակի «պարտադրել հանրային մեղադրողին» խստացման առումով վերադարձել արարքը՝ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածից վերափոխել որակումը 255-րդ հոդվածի 2-րդ մասի

2-րդ կետի: Այդ դեպքում դատարանի կողմից դատախազին մեղադրանքի խստացում պարտադրելը պաշտպանության կողմի մոտ կձևավորի անփարատելի կասկած դատարանի անկողմնակալության մասով:

Քննարկվող հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը նախկին օրենսգրքի կարգավորումների համարեքստում համանման դիրքորոշում է որդեգրել՝ իր որոշումներից մեկում անդրադառնալով դատական քննության նախապատրաստության փուլում արարքի իրավաբանական որակման և արարքի նկարագրության անհամապատասխանության կամ արարքի նկարագրության՝ գործում առկա ապացույցներից չբխելու հիմքով դատարանի կողմից գործը մեղադրողին վերադարձնելու և մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու առաջարկի հարցին: Վճռաբեկ դատարանը 22.12.2011թ. թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշմամբ դիրքորոշում է արտահայտել, որ. (...)դատարանը, պարզելով, որ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից, իրավասու չէ որոշում կայացնել գործը մեղադրողին վերադարձնելու մասին՝ առաջարկելով վերջինիս փոփոխել կամ լրացնել առաջադրված մեղադրանքը: Վճռաբեկ դատարանի կարծիքով, գործը դատական քննության նախապատրաստելիս առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու առաջարկով գործը մեղադրողին վերադարձնելը ոչ այլ ինչ է, քան մինչև գործի ըստ էության լուծումը փվյալ վարույթի հանգուցային հարցերի վերաբերյալ դատարանի սուբյեկտիվ դիրքորոշման արտահայտում: Ուստի, եթե առաջադրված մեղադրանքը փոփոխվի այս ինստիտուտի կիրարկմամբ և արարքին դատարանի նախաձեռնությամբ տրված նոր որակմամբ մեղադրական դատավճիռ կայացվի, ապա դատապարտյալն օբյեկտիվ հիմքեր կունենա պնդելու, որ գործը մեղադրողին վերադարձնելու պահից (նախքան դատավճռի կայացումը) դատարանն իր նկատմամբ որոշակի նախատրամադրվածություն է ունեցել(...)մեղադրողին առաջարկելով փոփոխել կամ լրացնել առաջադրված մեղադրանքը՝ դատարանը դուրս է գալիս անկողմնակալության սկզբունքի շրջանակներից և ուղղորդում է մեղադրողին՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ:(...)Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանն ընդհանրապես, այդ թվում՝ դատական քննության նախապատրաստության փուլում, իրավասու չէ հանդես գալ առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու նախաձեռնությամբ: Նման նախաձեռնությունը կհանգեցնի մրցակցության և անմեղության կանխավարկածի սկզբունքների խախտման, ինչն էլ իր հերթին կբերի արդար դատական քննության հիմնարար արժեքի առարկայագրկման: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ և 296-րդ հոդվածներով սահմանված դատական քննության նախապատրաստության փուլում գործը մեղադրողին վերադարձնելու իրավական ինստիտուտին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի կողմից նման որոշման կայացումն արդարացված կլինի միայն մեկ դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը կազմված է քրեադատավարական օրենքի պահանջների խախտումներով, օրինակ՝ դատախազը չի հաստատել մեղադրական եզրակացությունը, այն ստորագրված չէ քննիչի կողմից, չունի նկարագրական-պատճառաբանական մաս, օրենքով սահմանված անհրաժեշտ հավելվածներ և այլն» (նշված որոշման 15-17-րդ կետեր):

Մեկ այլ գործով՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԴ/0002/01/13 որոշմամբ Վճռաբեկ դատարանը, որոշման շրջանակներում անդրադառնալով մեղադրյալին մեղազրկող արարքին տրված որակման սխալ կամ թերի լինելու հիմքով արագացված դատական քննության կարգ կիրառելու միջնորդությունը դատարանի կողմից մերժելու հիմքին, նկատել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3751-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ արագացված դատական քննության կարգ կիրառելու

միջնորդությունը մերժելու ընթացակարգը *չի բխում դատարանի անկախության սկզբունքից*: Վերոնշյալ ընթացակարգը կիրառելիս դատարանն ուղղորդում է մեղադրանքի կողմին կարարել մեղադրանքը խստացման առումով փոփոխելու համար անհրաժեշտ գործողություններ՝ այդպիսով խախտելով մրցակցության սկզբունքն ու անմեղության կանխավարկածը և արդյունքում իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամապեղելի գործողություններ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակման ոչ ճիշտ լինելը որպես դատական քննության արագացված կարգի կիրառումը բացառող նախապայման դիտելը ոչ այլ ինչ է, քան մինչև գործի ըստ էության լուծումը տվյալ վարույթի հանգուցային հարցերի վերաբերյալ դատարանի դիրքորոշման արտահայտում, ինչն օբյեկտիվ հիմքեր է տալիս պնդելու, որ դատարանը, ի սկզբանե, տվյալ գործով որոշակի նախադրամադրվածություն է ունեցել:

Դատական քննության փուլում դատարանի խնդիրը ոչ թե մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կամ դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազի կողմից՝ իրենց լիազորություններն իրականացնելու ընթացքում թույլ տրված թերացումներն ու բացթողումները շտկելն է, այլ քրեադատավարական օրենքի հիմնարար սկզբունքների պահպանմամբ՝ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունն ու ապացուցվածությունը ստուգելը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *դատարանն իրավասու չէ դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժել այն պատճառաբանությամբ, թե ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ կամ թերի է*»:

Ավելի ուշ՝ արդեն 2018թ. հունիսի 15-ին կայացրած թիվ ԵԿԴ/0074/01/17 որոշմամբ վճռաբեկ դատարանը անփոփոխ է թողել իր դիրքորոշումը: Այս գործով վերաքննիչ դատարանը արձանագրել էր. առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ, քանի որ չի մերժել արագացված դատաքննության կարգ կիրառելու միջնորդությունը, երբ առկա էր այդպիսի միջնորդությունը մերժելու հիմք: Ընդ որում Վերաքննիչ դատարանն իր հերթին առանձնացրել էր մերժման երկու հիմք երբ՝

ա) առկա է ակնհայտ անհամապատասխանություն մեղսագրված արարքին տրված իրավական գնահատականի և արարքի փաստական կողմի միջև, որն առերևույթ վկայում է ավելի մեղմ պատասխանատվություն սահմանող օրենքով իրավական գնահատական տալու հնարավորության մասին,

բ) ամբաստանյալին առաջադրված մեղադրանքն առերևույթ վիճահարույց է, այն է՝ երբ դատարանը ողջամիտ կասկածներ ունի, որ եթե գործի քննությունն իրականացվի ընդհանուր կարգով, հնարավոր է ամբաստանյալի նկատմամբ էլ ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեն, ընդ որում, վիճելի իրավիճակը կարող է պայմանավորված լինել մեղադրանքի փաստական կամ իրավական կողմով:

Նշված գործով վերաքննիչ դատարանը գնահատել էր, որ առկա է դրանցից երկրորդ հիմքը:

Վճռաբեկ դատարանը, սակայն, մեջբերվող որոշմամբ արձանագրել էր, որ «... որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցում **առաջին ատյանի դատարանի կողմից խախտում թույլ տրված լինելու մասին** Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները չեն բխում Արսեն Սերոբյանի և Էդվարդ Պետրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի ձևավորած և սույն որոշման 12-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներից»՝ այդպիսով իսկ վերահաստատելով իր նախկին դիրքորոշումը:

Բացի այդ, նման մտրեցման պարագայում և հաշվի առնելով արարքի և դրա քրեաիրավական գնահատականի՝ դատախազին «համապատասխանեցում պարտադրելու» հնարավորությունից դատարանի զրկված լինելու հանգամանքը, հնարավոր է դառնում իրավիճակ, որ առարկայական ընդդատությունը որոշվի քննիչի/դատախազի «նշանակմամբ» (արարքի վերջիններիս տրված որակմամբ), ինչը խնդրահարույց է անձի՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» իրավունքի կենսագործման տեսանկյունից:

Երրորդ՝ առարկայական ընդդատությունը չի կարող որոշվել վարույթի առարկայից անկախ (դրա մասին անգամ վկայում է այս տեսակի ընդդատության անվանումը՝ «առարկայական»): Վարույթի առարկան մեղադրական եզրակացության մեջ նկարագրված (հանցավոր) արարքը (in rem) և անձի կողմից (in personam) մեղադրական եզրակացության մեջ նկարագրված արարք կատարած լինելը, անձի մեղավորությունն է նշված արարքում:

Քննության արդյունքում հաստատված կամ հերքված համարելով մեղադրյալին ներկայացված մեղադրանքի հիմքում նկարագրված (օրենսդրի տերմինաբանությամբ՝ դրված) արարքը՝ դատարանն արդեն դատավճռով (արարքը հաստատված համարելու դեպքում, և օրենսգրքով նախատեսված այլ պայմանների պահպանմամբ) մեղադրյալի արարքին տալիս է *ինքնուրույն* քրեաիրավական գնահատական՝ որոշելով, թե քրեական օրենսգրքի որ հոդվածը, հոդվածի մասը կամ կետն է ենթակա կիրառման (Օրենսգրքի 348-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ):

Հետևաբար, ընդդատությունը պետք է ուղիղ կախված լինի վարույթի **առարկայից**¹, որն էլ իր հերթին պայմանավորվում է մեղադրանքի

¹Ընդ որում, այս ճշմարտությունները ժամանակին առանց որևէ տարակարծության ընդունվել են նախահեղափոխական գիտնականների կողմից:

Օրինակ Ս.Պոզնիշևը, խոսելով առարկայական ընդդատության մասին, նշում էր. «...Այդ ընդդատությունը պետք է որոշվի դատական հետապնդման առիթ **հանդիսացած մեղադրանքի փաստական բովանդակությամբ**, այսինքն՝ **մեղադրանքով նկարագրված հանցագործության փաստական կողմով**: Ընդ որում, մեղադրողը կարող է սխալ գնահատի փաստերը, դրանք սխալ այս կամ այն հանցագործությունների հասկացության տակ տեղավորի: Դատարանը պետք է հիմնվի ոչ թե մեղադրողի այդ սխալ որակումների վրա, այլ հենց մեղադրանքով մեղադրյալին վերագրվող փաստերի վրա...» տե՛ս **Познышев С.В.** Элементарный учебник русского уголовного процесса. - М., 1913. - էջ 163:

Վ. Սլուզևսկին գրում էր, որ «դատարանը կարող է սկսել գործը, եթե այն իրեն նախնական ընդդատյա է ճանաչել և, հետևաբար (...) նա հիմք է ընդունում (принимает на веру) նկարագրված հանգամանքները՝ դրանց արժանահավատությունը չհետազոտելով (...) մեղադրանքի սահմանները պետք է որոշվեն ներկայացված փաստերով և ոչ թե դրանց իրավաբանական որակմամբ: Եթե քաղաքացիական դատավարությունում կողմերի՝

փաստերին տրված իրավաբանական գնահատականը չունի դատարանի համար պարտադիր նշանակություն (jura novit curia), ապա այդ կանոնի կիրառումը քրեական դատարանում, որն ստեղծված է ոչ այնքան կողմերի շահերի բավարարման, որքան հանրային հատկություն ունեցող շահերի բավարարման համար, առավել անկասկած է: Դատարանն իրավունք չունի արարքին տուժողի բողոքում տրված կամայական որակման հիման վրա գործը ճանաչել իրեն ոչ ընդդատյա, եթե գործի հանգամանքներով այն ենթակա է իրեն», տե՛ս **Случевский В.** Учебник русского уголовного процесса. Судостроительство - судопроизводство. - 4-е изд., доп. и испр. - С.-Пб.: Тип. М. М. Стасюлевича, 1913. - էջ 258:

Իր հերթին, Ի. Ֆոյնիցկին նշում էր, որ ընդդատությունը որոշող հանգամանքներ պետք է համարել **արարքի այն հատկանիշները**, որոնք բացահայտվել են գործի դատական քննությանը նախորդող նախնական քննությամբ, տե՛ս **Фойницкий И.Я.** Курс уголовного судопроизводства. Том II (издание 3-е, пересмотренное и дополненное). - С.-Петербург: Сенатская типография, 1910. - էջ 88: Խորհրդային հեղինակներից դատավարագետ Մ.Չեյցովը շարունակում էր կիսել նախահեղափոխականների՝ առարկայական ընդդատության որոշման վերը նշված չափանիշները, տե՛ս, **М.А.Чельцов.** Уголовный процесс. - Москва: Изд-во министерства юстиции СССР, 1948. - էջ 441:

Հեղազայում, արդեն, խորհրդային և հեղիտորիդային գրականության մեջ նկատվեց առարկայական ընդդատության որոշման չափանիշի որոշակի փոփոխություն, որով սակայն, վարույթի առարկայի և առարկայական ընդդատության կապը շարունակում էր պահպանվել:

Այսպես, օրինակ, Մ. Ստրոգովիչը գրում էր. «Հիմնական հատկանիշը, որով որոշվում է առարկայական (սեռային) ընդդատությունը, *տվյալ գործի առարկա հանդիսացող հանցագործության սեռն է (կամ տեսակն է)*, որը որոշվում է քրեական օրենսգրքի այն հոդվածով, որով այդ հանցագործությունը որակվում է», տե՛ս **Строгович М.С.** Курс советского уголовного процесса. - М. Изд. Академии наук СССР, 1958. - էջ 146: Մեր ժամանակներում, օրինակ, Կ.Կալինովսկին և Ա.Սմիռնովը նշում են. «Ընդդատության առարկայական (սեռային) հատկանիշը որոշվում է *գործի քննության առարկայի յուրահատկություններով*, այսինքն՝ քննվող քրեական գործերի *սեռով և բնույթով*: Քրեական գործերի սեռը որոշվում է արարքի՝ քրեական օրենսգրքի հատուկ մասի որակումով, բնույթը՝ որոշակի այլ հատկանիշներով, օրինակ, գործի նյութերով պետական գաղտնիք հանդիսացող տվյալների առկայությամբ», տե՛ս **Смирнов А.В., Калиновский К.Б.** Уголовный процесс: учебник / Под общ. ред. проф. Смирнова А.В. — 4-е изд., перераб. и доп. — М.: КНОРУС, 2008. - էջ 499:

Ինչպես ակնհայտ խորհրդային և հեղիտորիդային հեղինակների մեջբերվող մտպեցումներում՝ նույնպես առարկայական ընդդատությունը որոշվում էր քրեական գործի (վարույթի) առարկայով՝ այն (հանցավոր) արարքով (նկարագրված արարքով), որը հանդիսանում էր քննության առարկա: Իր հերթին, սակայն, առարկայական ընդդատությունը որոշելու այդ մտպեցումներում տարբերակվում էր ընդդատությունը որոշելու երկու հարթություն՝ 1) վարույթի մասնակիցների կողմից ընդդատությունը որոշելու, և 2) օրենսդրի կողմից ընդդատությունը որոշելու հարթություններ:

Եվ միայն երկրորդի դեպքում էր, որ առանցքային չափանիշ էր դառնում քրեական օրենսգրքի այս կամ այն հոդվածը (հոդվածին հղում անելը):

Սակայն մեր ժամանակներում, որոշ հեղինակներ, չգիտակցելով առարկայական ընդդատության որոշման այս երկու հարթությունների տարբերությունները, երկրորդի

առարկայով՝ անձին մեղսագրվող, նրա մեղադրանքի հիմքում նկարագրված (դրված) փաստերով:

2.2 Դեպք, երբ ընդհանուր իրավասության դատարանն ստանում է մեղադրական եզրակացության մեջ նկարագրված (հանցավոր) արարքով վարույթը, սակայն հեղազայում ի հայտ են գալիս փաստեր, որոնք վկայում են, որ կատարվել է (ընդգրկուն) արարք, որն ընդդատյա է մասնագիտացված դատարանին

Եթե մեղադրական եզրակացության մեջ նկարագրված լինի (հանցավոր) արարք, որով վարույթն ընդդատյա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, բայց հետագայում դատաքննության ընթացքում ի հայտ են գալիս փաստեր, որոնք վկայում են, որ իրականում կատարվել է այլ արարք և կատարված այդ արարքով վարույթն ընդդատյա է արդեն հակակոռուպցիոն դատարանին, *սպա դատարանն այստեղ կաշկանդված է ինքնուրույն ընդդատյությունը փոխելու հարցում:*

Բանն այն է, որ դատարանը սահմանափակված է մեղադրական եզրակացության մեջ նկարագրված արարքով (փաստերով) (in rem), և այդ պարագայում առաջին ատյանի դատարանում վարույթի in rem շրջանակների փոփոխությունը՝ նոր փաստերով «ընդլայնելու» լիազորությունը վերապահված է *հանրային մեղադրողին* (օրենսգրքի 276-րդ հոդվածի 2-րդ մաս):

Քանի որ դատարանը կաշկանդված է մեղադրական եզրակացությունում նկարագրված արարքով (փաստերով) և իրավասու չէ վարույթի շրջանակները նոր փաստերով ընդլայնել (փոփոխել), հանրային մեղադրողի կողմից վարույթի շրջանակները նոր փաստերով (in rem) չփոփոխելու դեպքում, այդ «նոր փաստերը» դատարանի համար պետք է *իրավաբանորեն գոյություն չունենան, բացակա համարվեն, անգամ այն պարագայում, երբ այդ նոր փաստերի ի հայտ գալը կարող էր ուղիղ անդրադառնալ վարույթի առարկայական ընդդատյության որոշման վրա:*

Այս դեպքում, *հանրային մեղադրողի կողմից մեղադրանքը չփոփոխելու (չլրացնելու) դեպքում պետք է օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքը համարել չձևավորված, որպիսի պարագայում մեղադրական եզրակացության մեջ նկարագրված արարքով (փաստական հանգամանքների (in rem)) վարույթը կշարունակի նկարագրված օրինակում ընդդատյա մնալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության*

չափանիշը փարածեցին առաջինի վրա՝ թույլ տալով առարկայական ընդդատյության որոշման չափանիշների ձևախեղումներ:

դատարանին: Վերջինս պետք է քննի և լուծի գործը մեղադրական եզրակացության մեջ նկարագրված արարքի (փաստական հանգամանքների (in rem)) շրջանակներում:

Հակառակ մոտեցման դեպքում, եթե դատարանը, առանց հանրային մեղադրողի կողմից վարույթի in rem շրջանակների փոփոխության, իրավասու լինի «նոր փաստերի» ի հայտ գալու հիմքով վարույթն ըստ ընդդատության փոխանցելու, ապա կստացվի, որ վարույթը «ստացող» դատարանում քննվելու է մեղադրանք, որի փաստական առարկան և շրջանակները ուրվագծվել են ոչ թե մեղադրողի, այլ «ուղարկող» դատարանի կողմից, ինչը կհանգեցնի քրեական վարույթի ֆունկցիոնալ ողջ համակարգի խաթարման:

Հետևաբար, պետք է եզրահանգել, որ նկարագրված իրավիճակում դատարանի կողմից վարույթի ընդդատությունը որոշելու և, ըստ այդմ, նաև վարույթն ըստ ընդդատության փոխանցելու պայման է մեղադրող կողմի մեղադրանքի փաստական հանգամանքների փոփոխությունը (լրացումը):

Դատարանը՝ նոր փաստերի ի հայտ գալու հիմքով պայմանավորված, վարույթի ընդդատությունը որոշել և, ըստ այդմ, վարույթն ըստ ընդդատության փոխանցել կարող է միայն այն պարագայում, երբ օրենսգրքով նախատեսված բոլոր պայմանների և հիմքերի առկայության դեպքում այդ նոր փաստերը (որոնք ազդեցություն են ունենում վարույթի առարկայական ընդդատության վրա) հանրային մեղադրողի կողմից նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշմամբ լրացվեն (փոփոխվեն), որում արդեն նկարագրված արարքը (in rem) ընդդատյա կլինի ներկայացված այլ դատարանի (օրինակում՝ հակակոռուպցիոն դատարանի) քննությանը:

Այդ որոշումն ստանալուց հետո միայն դատարանի կողմից վարույթն ըստ ընդդատության չփոխանցելու պարագայում կարող է խոսք գնալ դատարանի կողմից օրենսդրի սահմանած արարքի (դեպքի կամ մեղադրանքի) իրավաբանական հարկանիշների անփեսման, **հետևապես՝ ընդդատության կանոնների խախտման մասին:**

2.3 Դեպք, երբ մասնագիտացված դատարանն ստանում է մեղադրական եզրակացության մեջ նկարագրված ընդգրկուն (հանցավոր) արարքով վարույթը, իսկ հետագա դատաքննությամբ չեն հաստատվում այն փաստերը, որոնց հիման վրա (հանցավոր) արարքով վարույթն ընդդատյա էր համարվել մասնագիտացված դատարանին

Այստեղ խոսքն այն դեպքերի մասին է, երբ մեղադրական եզրակացությունում նկարագրվի ընդգրկուն հանցանք, որով վարույթի առարկայական ընդդատությունն օրենքով վերապահված լինի հակակոռուպցիոն դատարանին, սակայն հետագայում՝ դատաքննության ընթացքում, *չեն հաստատվում* այն *փաստերը*, որոնք պայմանավորում են այդ արարքով վարույթի՝ մասնագիտացված դատարանին ընդդատյա լինելը:

Օրինակ՝ եթե մեղադրական եզրակացության մեջ նկարագրվի արարք, որը ենթակա է հակակոռուպցիոն դատարանին, նկարագրվի անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորություններն օգտագործելով, դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելով, կոնկրետ փաստերը ձևախեղելով ուրիշի գույքն ապօրինի, անհատույց այլ անձինը դարձնելու արարք, սակայն հետագայում դատաքննության ընթացքում չհաստատվի, որ անձն արարքը կատարել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները օգտագործելով, այսինքն՝ չհաստատվի իշխանական կամ ծառայողական լիազորություններն օգտագործելու փաստը:

Նկարագրված օրինակում հարց կարող է առաջանալ՝ հակակոռուպցիոն դատարանն ընդդատության կանոնների խախտում թույլ չտալու համար ի՞նչ կերպ պետք է վարվի՝ վարույթն ըստ ընդդատության փոխանցի՞, թե՞ կայացնի մեղադրական դատավճիռ:

Կարծում ենք, որ նման փաստերի չհաստատման դեպքում, հակակոռուպցիոն դատարանը ոչ թե պետք է վարույթը փոխանցի ըստ ընդդատության, այլ դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա հաստատված արարքին դատավճռով պետք է տա համապատասխան իրավական գնահատական (քննարկվող օրինակում՝ անձին դատապարտելով քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման համար): Այս դեպքում, թեև հակակոռուպցիոն դատարանն անձին դատապարտում է մի արարքի (հանցանքի) կատարման համար, որը *in abstracto* ընդդատյա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, սակայն նման պարագայում ընդդատության կանոնների խախտումը կբացակայի:

Դատարանը տվյալ իրավիճակում շարունակում է մնալ «իրավասու», քանի որ վերջինս, կաշկանդված լինելով մեղադրական եզրակացությամբ նկարագրված արարքով (*in rem*) (արարքով, որը *ընդգրկուն է և ներառում է* արարք, որը *ենթակա չէ հակակոռուպցիոն դատարանի քննությանը* (խարդախություն)), միևնույն ժամանակ պարտավոր է դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցների հիման վրա գնահատել

նկարագրված փաստական հանգամանքների հաստատված լինելը, ինչը հանդիսանում է արդարադատության գործառույթի բաղադրատարր:

Այսինքն՝ դատարանը, եթե կաշկանդված է մեղադրական եզրակացությունում նկարագրված արարքով (փաստական հանգամանքներում), ապա որևէ կերպ կաշկանդված չէ մեղադրական եզրակացությունում նկարագրված փաստական հանգամանքներն ամբողջությամբ կամ մասամբ հերքված համարելու հարցում:

Այն պարագայում, երբ դատարանը դատաքննության ընթացքում ապացուցույցների հեղուկության հիման վրա գա նկարագրված արարքի (փաստական հանգամանքների) այն մասը չհաստատվելու (հերքված լինելու) մասին եզրահանգման, որը վճռորոշ նշանակություն է ունենում առարկայական ընդդատության որոշման հարցի համար (օրինակ՝ քննարկվող օրինակում չի հաստատվել անձի կողմից խարդախությունը իշխանական կամ ծառայողական լիազորություններն օգտագործելով կատարելը), պետք է կայացնի դատավճիռ և անձին մեղավոր ճանաչի քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման համար (և ոչ թե, դատախոսներն ավարտելով՝ առանձին սենյակում վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշում կայացնի):

Մեր այս մոտեցումը նախ բխում է արդարադատության արդյունավետության պահանջից: Երկրորդ՝ նման մոտեցմամբ ապահովվում է անձի արդար դատաքննության սահմանադրական իրավունքի՝ իր գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքը: Երրորդ՝ օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարույթն ըստ ընդդատության փոխանցելու հիմքը դիտարկվում է հիմնական դատախոսների ընթացքում **փաստերի ի հայտ գալը** և ոչ թե **այդ փաստերի հերքվելը**, հետևաբար՝ նման պայմաններում կբացակայի նաև վարույթն ըստ ընդդատության փոխանցելու հիմքը: Չորրորդ՝ 263-րդ հոդվածի 2-րդ մասով տեղ գտած՝ «ի հայտ են գալիս այնպիսի փաստեր» ձևակերպմանը հակառակ մեկնաբանություն տալու և այն նկարագրված «փաստերի հերքման» վրա տարածելու պայմաններում չի բացառվում, որ վարույթն «ստացող» դատարանը չհամաձայնվի գործն «ուղարկող» դատարանի՝ ապացույցներին տրված գնահատականին և գա հակառակ եզրահանգման՝ թե (նկարագրված օրինակում) ապացույցներով հաստատվել է խարդախությունը իշխանական կամ ծառայողական լիազորություններն օգտագործելով կատարելու փաստը (այսինքն՝ փաստը չի հերքվել): Այդպիսի պայմաններում ընդդատության մասին վեճը կարող է ծագել երկու դատարանների միջև՝ *իրենց արդարադատության*

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԱՆ ՂԱՏՎՈՒՄ 2(106)2022

գործառույթի փարրը կազմող ապացույցների գնահատմամբ պայմանավորված (երկու դատարանների միջև միևնույն ապացույցների համակցությանը տրված փարբեր գնահատականներից), ինչը **նախ անթույլատրելի է, երկրորդ՝ անլուծելի:**

Քանի որ, ելնելով ընդդատության մասին ծագած վեճի բնույթից (կրկնենք, որ այն հնարավոր է ծագի արդարադատության բաղադրատարրը կազմող ապացույցների գնահատման կապակցությամբ)՝ այդ վեճը լուծող սուբյեկտը՝ Վճռաբեկ դատարանի նախագահը, եթե նման դեպքում առաջնորդվի օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթով, ապա կստացվի, որ վերջինս վեճի լուծմամբ միջամտում է դատարանի արդարադատության իրականացման գործառույթին:

3. Ընդդատության կանոնների խախտման հետևանքները

Ընդդատության կանոնների խախտման հատկանիշերի քննարկումը, ինչպես նաև դատարանի կողմից ընդդատության որոշման սահմանների հարցի հստակեցումները թույլ են տալիս արդեն անդրադառնալ ընդդատության կանոնների խախտման հետևանքների հարցին: Գրականության մեջ և հատկապես մինչհեղափոխական գրականության մեջ ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքները տարբերակվել են՝ (1) կախված ընդդատության տեսակից, (2) ինչպես նաև ընդդատության խախտման սուբյեկտից:

3.1 Ընդդատության կանոնների խախտման հետևանքների փարբերակումը՝ կախված ընդդատության տեսակից

Հեղինակների մի խումբ տարբերակում են ընդդատության կանոնների խախտման հետևանքները՝ կախված ընդդատության առարկայական և տարածքային տեսակներից: Այս մոտեցումը հիմնված էր ընդդատության տեսակներին տարբեր իրավական բնույթ հաղորդելու հանգամանքի վրա: Այսպես՝ Վ.Սլուզևսկին գրում է.

«Գործողությունները, որոնց կատարման համար լիազորված է դատարանը, չեն կարող անցնել օրենսդրի նշագծած սահմանը, և եթե անցնում են, ապա այդ գործողությունները դառնում են անօրինական ու երբևէ ձեռք չեն բերում օրինական ուժ: Հետևաբար դատավճիռները, որոնք կայացվել են առարկայական ընդդատության խախտմամբ (ընդգծումը՝ հեղ.), երբևէ ձեռք չեն

բերում դատական որոշման ուժ(...) Իսկ ահա այն դեպքերում, երբ պահպանելով առարկայական ընդդատության կանոնները՝ դատարանը «...խախտում է գործերի տեղի, այսինքն՝ տեղական (տարածքային՝ հեղ.) ընդդատության կանոնները, ապա կայացված դատավճիռը ձեռք է բերում դատական որոշման ուժ»¹:

Պատասխանելով հարցին, թե տարածքային ընդդատության կանոնների խախտումն ինչու չի հանգեցնում նույնպիսի հետևանքների, ինչպիսին հանգեցնում էր առարկայական ընդդատության կանոնների խախտման դեպքում՝ Վ.Սլուչևսկին գրում է.

«Այդ տեսակի յուրաքանչյուր դատարան ունի իր քննությանը ենթակա գործերով գործողությունների կատարման նույն միջոցները և նույն երաշխիքները: Առաջին տարածքի հաշտարար դատավորը, օրինակ, այնպես, ինչպես երկրորդ տարածքի հաշտարար դատավորը, հավասարապես իրավասու են լուծելու հաշտարար արդարադատությանը վերապահված գործերը, և եթե օրենսդիրը, առանց դրան ուշադրություն դարձնելու, հարկավոր է համարել ստեղծել մի խումբ կանոններ, որոնցով որոշվում է դրանց ընդդատությունը, ապա նա (օրենսդիրը՝ հեղ.) արել է դա ոչ թե միևնույն անվանման դատարանների տարբեր իրավագործության հանգամանքով պայմանավորված, այլ քրեական-քաղաքական շարժառիթներից ելնելով»²:

Իբրև այդպիսի քաղաքական շարժառիթներ հեղինակը նշում էր օրենսդրի կողմից դատարանների մեջ գործերի հավասարաչափ բաշխման անհրաժեշտությունը, ինչպես նաև գործին մասնակցող կողմերի հարմարավետությունը հաշվի առնելու հանգամանքները, որպեսզի մի կողմից՝ բացառվի մի դատարանի գերծանրաբեռնումը՝ ի հաշիվ այլ դատարանի թերծանրաբեռնվածության, մյուս կողմից՝ չանտեսվի նաև գործին մասնակցությամբ կողմերին ուղեկցող սահմանափակումները, ծախսերը, ապացույցներ ներկայացնելու բարդությունները: Հենց այս հանգամանքը հիմք ընդունելով՝ Վ.

¹Տե՛ս **Случевский В.** Учебник русского уголовного процесса. Судостроительство - судопроизводство. - 4-е изд., доп. и испр. - С.-Пб.: Тип. Стасюлевича М.М., 1913. - էջեր 254-255:

²Տե՛ս **Случевский В.** նշվ. աշխ., էջ 256:

Ալուչևսկին նշում է, որ տարածքային ընդդատության կանոնների պահպանումը չունի կայացված դատավճռի արդարադատ լինելը ճանաչելու համար բացարձակ պայմանի նշանակություն¹:

Նմանատիպ մոտեցում արտահայտել են նաև այլ դատավարագետներ: Օրինակ՝ Ն. Ռոզինը նշում էր, որ դատարանի իրավասության հասկացությանը թղթակցում է գործերի՝ դատարանին ընդդատության հասկացությունը², և արձանագրում, որ «օրենքով դատարանի իրավասության կամ իշխանության սահմաններն ուրվագծող կանոնների պահպանումը կամ խախտումը միևնույն ժամանակ հանդիսանում են դատարանին ենթակա գործերի ընդդատության կանոնների պահպանում կամ խախտում»³: Մյուս կողմից, սակայն, նույն հեղինակն արդեն մեջբերվող աշխատության հաջորդ էջերում, որոշակիորեն շեղվելով իր իսկ արտահայտած դիրքորոշումից, գրում է, որ «դատավճիռը, որը կայացվել է առարկայական ընդդատության կանոնների պահպանմամբ, սակայն տեղական (տարածքային՝ հեղ.) ընդդատության կանոնների խախտմամբ, շարունակում է համարվել իրավասու մարմնի կայացրած դատավճիռ և ձեռք է բերում իրավաբանական ուժ, եթե կողմը չի առարկում դրա դեմ»⁴:

Այսպիսով, ցարական Ռուսաստանի ժամանակաշրջանի մասնագիտական գրականությունում առարկայական ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքը դատական ակտի անվավերությունն էր, իսկ տարածքային ընդդատության կանոնների խախտման դեպքում՝ նման հետևանքներ նախատեսված չէին:

3.2 Առարկայական ընդդատության կանոնների խախտման հետևանքների տարբերակումը՝ կախված խախտման սուբյեկտից

Հաջորդ մոտեցումը, որի հիման վրա տարբերակվում էին առարկայական ընդդատության կանոնների խախտման հետևանքները, կախվածության մեջ էր դրվում նրանից, ընդդատության կանոնի խախտում թույլ տված դատարանի ատյանից:

Համապատասխանաբար, եթե առարկայական ընդդատության կանոնի խախտումը կատարել է ստորադաս դատարանը, ապա վերջինիս

¹Տե՛ս, նույն տեղում:

²Տե՛ս **Розин Н.Н.** Уголовное судопроизводство. Пособие к лекциям (2-е издание, измененное и дополненное). - С.-Петербург: Издание юридического книжного склада "Право", 1914. - էջ 198:

³Տե՛ս, նշվ.աշխ., էջ 199:

⁴Տե՛ս, նշվ.աշխ., էջ 207:

կայացրած դատավճիռը, ըստ այդ մոտեցման, չպիտի ստանար «դատական որոշման ուժ», մերօրյա տերմինաբանությամբ՝ մտներ օրինական ուժի մեջ, և հակառակը՝ եթե խախտումը կատարել է վերահաս դատարանը, ապա դատական ակտն ստանում է «դատական որոշման ուժ»¹:

Դա հիմնավորվում էր նրանով, որ բարձր դատարանը, իրավասու/ ձեռնհաս լինելով քննել իրենց բնույթով առավել բարդ գործեր, իրավասու/ձեռնհաս է քննել իրենց բնույթով ավելի պարզ և հեշտ գործեր, որոնք ենթակա են ավելի ցածր ատյանի դատարանին:

Ընդ որում, նշված մոտեցումն ուներ որոշակի օրենսդրական հիմքեր ևս: Այսպես, այդ ժամանակվա օրենսդրության համաձայն՝ շրջանային երդվյալ ատենակալների դատարանը հանդիսանում էր բարձր դատարան, ի համեմատ հաշտարար դատարանի, սակայն միևնույն ժամանակ ցարական Ռուսաստանի քրեական դատավարության կանոնադրության 203-րդ հոդվածը սահմանում էր, որ գործը, որը ներկայացվել է շրջանային դատարան երդվյալ ատենակալների քննությանը, չի կարող ուղարկվել ոչ նույն դատարանում առանց երդվյալների մասնակցության քննության, ոչ էլ հաշտարար դատարան քննության անգամ այն պարագայում, երբ դատական քննության ընթացքում պարզվի, որ ամբաստանյալին վերագրվող հանցավոր արարքն ընդդատյա չէր տվյալ շրջանային դատարանի երդվյալ ատենակալներով քննությանը²:

3.3. Ընդդատության կանոնների խախտման հետևանքների փարբերական անթույլարբելիությունը

Ընդդատության կանոնների խախտման հետևանքների վերը նշված տարբերակումները կարող էին գոյություն ունենալ այն ժամանակաշրջանում, երբ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» և «արդար դատաքննության իրավունքը» սահմանադրաիրավական արժեքներ չէին:

Թեև անգամ նախահեղափոխական շրջանի այդ գիտնականներն իրենք ընդգծում էին, որ ընդդատության կանոնների պահպանումն անձի՝ իր գործի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի առջև քննության իրավունքին է ծառայում³, այնուամենայնիվ այդ ժամանակաշրջանում անձի այդ իրավունքը չուներ ժամանակակից ընկալումներին համարժեք

¹Տե՛ս, օրինակ, **Познышев С.В.** Элементарный учебник русского уголовного процесса / [Соч.] Познышева С.В. проф. Имп. Моск. ун-та. - [Москва] : Г.А. Леман, 1913, էջ 166:

²Տե՛ս <https://constitution.garant.ru/history/act1600-1918/3137/>:

³Տե՛ս, օրինակ, **Познышев С.В.** Элементарный учебник русского уголовного процесса / [Соч.] Познышева С.В. проф. Имп. Моск. ун-та. - [Москва] : Г.А. Леман, 1913. էջ 164:

արժեք, ինչով էլ պայմանավորված՝ որոշ դեպքերում ընդդատության կանոնների խախտմամբ անձի՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» իրավունքի խախտումը էական նշանակություն չէր ստանում:

Ժամանակակից առումով նման մոտեցումն անընդունելի է և չի համապատասխանում արդար դատաքննության իրավունքի տարր՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» սահմանադրական կանոնին, խախտում կամ վտանգի տակ է դնում արդար դատաքննության իրավունքի՝ դատարանի անկախության և անկողմնակալության բաղադրիչը:

3.3.1 Ընդդատության կապն անձի արդար դատաքննության իրավունքի տարր՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի հետ:

Ներկայումս ընդդատության կանոններն ունեն ոչ միայն հանրային իրավական նշանակություն, այլ նաև դրանք հանդիսանում են անձի արդար դատաքննության իրավունքի ապահովման կարևոր երաշխիքներ¹: Պետությունը, կաշկանդված լինելով անձի արդար դատաքննության (Սահմանադրության 63-րդ հոդված) հիմնական իրավունքով, ունի պոզիտիվ պարտականություն ապահովելու անձի այդ իրավունքի արդյունավետ կենսագործումը, իսկ անձի՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքի ապահովման տեսանկյունից առանցքային է դառնում հենց վարույթ իրականացնող դատարանի՝ օրենքի հիման վրա ստեղծված լինելը և օրենքին համախափասիսան գործելը: Անձի արդար դատաքննության իրավունքի այդ բաղադրատարրի՝ գործի՝ «օրենքի

¹Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը 2011թ. կայացրած թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշմամբ նշել է. «Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարանի ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից... Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայակայությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար»:

հիման վրա ստեղծված դատարանի» կողմից քննության իրավունքը, ի թիվս այլոց, ապահովվում է օրենսդրի կողմից՝ ընդդատության կանոնների սահմանմամբ:

Ընդդատության կանոնների խախտման պարագայում վարույթը (բողոքը, միջնորդությունը) քննվում է մի դատարանի կողմից, որն օրենքով իրավասու չէր քննելու այն՝ որպես հետևանք *հանգեցնելով «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» պահանջի խախտման*: Նման մոտեցում է որդեգրել նաև ՄԻԵԴ-ն իր բազմաթիվ որոշումներում¹: Հենց ընդդատության կանոնների խախտման տեսանկյունից հատկանշական է *Coeme and Others v. Belgium* (գանգատ № 32492/96) գործով կայացրած վճիռը: Նշված գործով *Բելգիայի վճռաբեկ դատարանը*, ներպետական օրենսդրությամբ *ունենալով միայն նախարարների վերաբերյալ քրեական գործեր քննելու իրավասություն, և օրենքում «գործերի փոխկապվածության» ընդդատության կանոնի սահմանման բացակայության պայմաններում*, քննության էր առել քրեական գործ, որի շրջանակներում որպես մեղադրյալ էին ներգրավված եղել և՛ նախարար, և՛ այլ անձինք: ՄԻԵԴ-ը նշված վճռով եկել էր այն եզրահանգման, որ տեղի է ունեցել «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» պահանջի խախտում, քանի որ *Բելգիայի վճռաբեկ դատարանն իր ընդդատությունը որոշելիս կիրառել էր «գործերի փոխկապվածության» սկզբունքը*, որը օրենսդրի կողմից նախատեսված չէր: Արդյունքում ՄԻԵԴ-ն արձանագրել էր, որ այն դիմողների նկատմամբ, որոնք նախարարներ չէին, բելգիական վճռաբեկ դատարանը «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» չէր:

Ավելին՝ ներկա ժամանակներում «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» պահանջի գործունեության շրջանակը ՄԻԵԴ իրավաբանությամբ էլ ավելի է ընդլայնվել: Իր վճիռներում ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ «օրենքի հիման վրա ստեղծված» լինելու պահանջը «ոչ միայն ներառում է «դատարանի» գոյության իրավական հիմքերը, այլ նաև *դատարանի կամ փոխարինչի՝ իր գործունեությունը կանոնակարգող և յուրաքանչյուր դեպքում դատական կազմը սահմանող կոնկրետ նորմերի պահպանումը*»՝ դիրքորոշում արտահայտելով, որ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» պահանջի գործունեության շրջանակը բավականին լայն է, ու *չի տարածվում միայն այն դեպքերի վրա, երբ*

¹Տե՛ս, օրինակ, *Sokurenko and Strygun V. Ukraine* (գանգատ 29458/04 և 29465/04) վճիռ 20.07.2006:

ներպետական օրենսդրությամբ դատական մարմինն իրավաւո չէ գործել իբրև դատարան կամ տրիբունալ¹:

Հետևաբար այսօր արդեն, անձի՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանում» իր գործի քննության իրավունքի արժևորման, այն անձի արդար դատաքննության սահմանադրական իրավունքի տարր դիտարկվելու պայմաններում, ընդդատության կանոնների խախտման հետևանքների տարբերակված նախահեղափոխական մոտեցումները խիստ ժամանակավրեպ են և ոչ կիրառելի:

3.3.2. Ընդդատության կապն անձի արդար դատաքննության իրավունքի տարր՝ «անկախ և անկողմնակալ դատարանի» կողմից գործի քննության պահանջի հետք

Օրենսդրի կողմից ընդդատության կանոնների սահմանումն առանց-քային նշանակություն ունի նաև անձի արդար դատաքննության իրավունքի կարևորագույն այլ բաղադրիչի՝ «անկախ և անկողմնակալ դատարանի» կողմից գործի քննության իրավունքի ապահովման տեսանկյունից:

Նախ՝ օրենսդրի նախօրոք որոշված ընդդատության կանոնները ծառայում են դատարանի վրա «արտաքին» ազդեցության **չեզոքացմանը**¹՝ այդպիսով կարևոր երաշխիք հանդիսանալով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի (Սահմանադրության 4-րդ հոդված) կենսագործման համար:

Դրանցով էականորեն սահմանափակվում են գործադրի կողմից դատական իշխանության վրա ազդեցության հնարավորությունները, և ապահովվում, որ դատարանի իրավասության շրջանակներն ուրվագծվեն օրենսդիր իշխանության կողմից:

Այս առնչությամբ հարկանշական է Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի արտահայտած այն դիրքորոշումը, որ «այս սկզբունքը (գործն օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից քննվելու՝ հեղ.) կանխարգելում է արդարադատությանը ոչ իրավասու անձանց միջամտությունը և պաշտպանում է դիմողների ու հանրության դատարանների անկողմնակալության ու օբյեկտիվության հանդեպ ունեցած վստահությունը»²:

Բացի այդ, ներկա ժամանակներում, ընդդատության կանոնները ձեռք են բերում նաև դատարանների (դատավորների) վրա «ներքին» (դատական

¹Տե՛ս 2020թ. դեկտեմբերի 1-ի GUÐMUNDUR ANDRI ÁSTRÁÐSSON v. ICELAND վճիռը, Application no. 26374/18, կետ 223:

²Տե՛ս Избранные решения Федерального Конституционного Суда Германии. - М: Инфотропик Медиа, 2018. - էջ 951-952:

իշխանության ներսում) ազդեցության չեզոքացման միջոցի նշանակություն և զգալի դեր խաղում գործը քննող դատարանի (դատավորի) արդեն «ներքին» անկախության ապահովման տեսանկյունից:

Այս առնչությամբ, օրենսդրի կողմից հստակ սահմանված ընդդատության կանոնները զրկում են դատական իշխանության ներսում (օրինակ՝ դատարանների նախագահներին) որևէ կամայականությամբ վարույթը «ցանկալի» դատարան ուղարկելով արդարադատությանն այս կամ այն կերպ միջամտելու հնարավորություններից՝ *չեզոքացնելով այդկերպ դատարանների ներքին անկախությունը վրանգելու ռիսկերը:*

Հետևաբար, ընդդատության կանոնները, ծառայելով դատարանների թե՛ «արտաքին» և թե՛ «ներքին» անկախության ապահովմանը, հանդես են գալիս իբրև անձի արդար դատաքննության իրավունքի՝ *դատարանների անկախության և անկողմնակալության ապահովման երաշխիքներ:* Արդյունքում՝ ընդդատության կանոնների խախտումը կա՛մ կարող է հանգեցնել «անկախ և անկողմնակալ» դատարանի կողմից գործի քննության իրավունքի խաթարմանը, կա՛մ առնվազն առաջ է բերում դատարանի անկախության ու անկողմնակալության վերաբերյալ հիմնավոր ու անփարատելի կասկածներ¹, հետևաբար, այս լույսի ներքո ևս անթույլատրելի են ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքների տարբերակված մոտեցումները:

Վերոշարադյալի հիման վրա պետք է արձանագրել, որ մեր օրերում անթույլատրելի է ընդդատության տեսակով կամ ընդդատության կանոնները խախտող սուբյեկտով պայմանավորված՝ տարբերակված մոտեցում ցուցաբերել ընդդատության կանոնների խախտման հետևանքներին:

Ընդդատության կանոնների խախտումը բոլոր դեպքերում հանգեցնում է անձի արդար դատաքննության իրավունքի տարր՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» իրավունքի խախտման, խախտում կամ կասկածի տակ է դնում գործը քննող դատարանի «անախությունը կամ անկողմնակալությունը»:

Հետևաբար այդպիսի խախտումն էական է, լուրջ դատական սխալ է (օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ) և դատական ակտի անվերապահ բեկանման հիմք (376-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ):

¹Բացի այդ, ընդդատության կանոններով ապահովվում է իրավունքի գերակայության սկզբունքից բխող՝ Սահմանադրության 163-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ արտակարգ դատարանների ստեղծման արգելքը՝ դրանով իսկ ուղղված լինելով նաև դատարանների անկախության և անկողմնակալության հանրային վստահության ապահովմանը:

ՍԱԿՄԱՆԱՂՈՒՄԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(106)2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Վերը նշված մոտեցումը հավասարապես պետք է կիրառվի ինչպես մինչդատական վարույթի դատական երաշխիքներով վարույթի ընդդատության կանոնների խախտմամբ անցկացման, այնպես էլ գործն ըստ էության քննության ընթացքում դատարանի կայացրած՝ անձի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու, մասնավորապես նաև՝ անձին կալանավորելու որոշումների վրա, քանի որ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» պահանջը պետք է հավասարապես տարածելի լինի նաև այդ դեպքերի վրա¹:

Արդյունքում, ընդդատության կանոնների խախտմամբ կայացված որոշումները՝ որպես որոշումներ, որ կայացվել են ոչ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» կողմից, որոնցով նաև խախտվել կամ կասկածի տակ է դրվել դատարանի անկախությունը և անկողմնակալությունը, պետք է ճանաչվեն անօրինական:

3.4. Ընդդատության կանոնների խախտումը և ապացույցների թույլատրելիությունը:

Ընդդատության կանոնների խախտմամբ ստացված ապացույցների թույլատրելիության հարցը քննարկելիս անհրաժեշտ է այն դիտարկել ապացույցների թույլատրելիության «իրավասու (պատշաճ) սուբյեկտի» կանոնի և «հիմնական իրավունքների խախտմամբ կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող» ապացույցի օգտագործման անթույլատրելիության կանոնի ապահովման տեսանկյունից:

3.4.1. Ընդդատության կանոնների խախտումը և ապացույցների թույլատրելիության «իրավասու (պատշաճ) սուբյեկտ» կանոնը (ձևական խախտում)

¹Տե՛ս, mutatis mutandis, Yefimenko v. Russia (Application no. 152/04) 12 February 2013 վճիռը: Թեև այս որոշումը վերաբերում էր անձի՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» իրավունքի խախտմամբ վերջնական դատավճռով դատապարտման դեպքին (և ոչ թե անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը, ոչ իրավասու դատարանի կողմից կայացվելու հետևանքով ազատությունից ապօրինի զրկման դեպքին), այնուամենայնիվ, նշված որոշումը հատկանշական է այն առումով, որ դրանով փաստացիորեն «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» պահանջը տարածվեց նաև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի վրա: Նշված որոշմամբ ՄԻԵԴ-ն արձանագրել էր, որ դատարանի կազմի կողմից անձի դատապարտումը, որը ձևավորվել էր ոչ օրենքով նախատեսված կարգով, հանգեցրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտման:

Քրեադատավարագիտության մեջ իբրև ապացույցների թույլատրելիության կանոն առանձնացվում է ապացույցների ձեռքբերման (հավաքման) «պատշաճ» սուբյեկտի կանոնը:¹

Ապացույցների թույլատրելիության այս կանոնի էությունը հանգում է նրան, որ ապացույցը կարող է համարվել թույլատրելի, եթե այն ձեռք է բերվել (հավաքվել է) դրա համար լիազորված իրավասու սուբյեկտի կողմից:

Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ ապացույց ձեռք բերելու (հավաքելու) իրավասությունը, որպես կանոն, ծագում է վարույթ իրականացնելու լիազորության ծագմամբ: Օրինակ, քննչական գործողություն կատարելու իրավասու սուբյեկտ է քրեական վարույթ նախաձեռնած և այն իրականացնող քննիչը (օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 178-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ մասեր):

Մյուս կողմից, միշտ չէ, որ «ապացույց ձեռք բերելու իրավասու (պատշաճ) սուբյեկտ» և «վարույթ իրականացնող մարմին» սուբյեկտները նույնանում են: Հնարավոր է իրավիճակ, երբ ապացույց ձեռք բերելու իրավասու (պատշաճ) սուբյեկտ լինի նաև վարույթ իրականացնող մարմին չհանդիսացող վարույթի մասնակիցը, օրինակ՝ քննչական մարմնի ղեկավարից առանձին քննչական գործողություն կատարելու հանձնարարություն ստացած քննիչը (օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ) և այլն: Ամեն դեպքում, սակայն, որպեսզի ապացույցը համարվի թույլատրելի, այն պետք է ձեռք բերված (հավաքված) լինի դրա ստացման համար օրենքով լիազորված սուբյեկտի՝ վարույթի իրավասու (պատշաճ) սուբյեկտի կողմից² :

¹Տե՛ս, օրինակ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. հումբ: Գիտ. խմբ. **Ա.Ղամբարյան:** Եր., Տիգրան Մեծ, 2016թ., էջ 372, 376-383, **Рудин А.В.** Проверка доказательств в ходе досудебного производства в российском уголовном процессе, Дисс. ...канд. юрид. наук. - Краснодар, 2019. - էջ 129; **Соловьев А.Б.** Доказывание в досудебных стадиях уголовного процесса России. Научно-практическое пособие – М.: ООО Издательство «Юрлитинформ», 2002. - էջ 19:

Մինչդատական վարույթում քննչական գործողություններ կատարելու իրավասության ծագման մասով տե՛ս **Шейфер С.А.** Следственные действия. Система и процессуальная форма. - М.: ООО Издательство «Юрлитинформ», 2001. - էջ 104:

Տե՛ս նաև՝ Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/0252/01/13 որոշման 31.1 կետը:

²Ընդ որում, այստեղ առանցքային է նաև այն, որ ապացույցի հավաքման իրավասու (պատշաճ) սուբյեկտ համարվելու համար բավարար չէ միայն օրենքով ապացույցի հավաքման լիազորություն ունենալը, այլ նաև այն, որ կոնկրետ դեպքում ապացույցը ձեռք բերվի վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների բացակայության պայմաններում, եթե նա իմացել կամ ողջամտորեն պետք է իմանար այդ հանգամանքների մասին:

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ ապացույցը ձեռք բերվի (հավաքվի) մի սուբյեկտի կողմից, ով տվյալ քրեական վարույթն իրականացնելու կամ համապատասխան ապացուցողական կամ վարույթային այլ գործողություն կատարելու իրավասություն չի ունեցել, այն պետք է, հիմնվելով ապացույցի ձեռքբերման «իրավասու (պատշաճ) սուբյեկտի» կանոնի խախտման վրա, ճանաչվի իբրև անթույլատրելի (օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ):

Այս լույսի ներքո անդրադառնալով ընդդատության կանոնների խախտմամբ ձեռք բերված (հավաքված) ապացույցների թույլատրելիությանը, անկախ ընդդատության խախտման սուբյեկտից¹ դատարանը, չլինելով «իրավասու» և դուրս գալով իր լիազորությունների շրջանակից, ձեռք է բերում (հավաքում է) ապացույցներ, որոնք պետք է դիտարկվեն իբրև ապացույցների ձեռք բերման «իրավասու (պատշաճ) սուբյեկտի» կանոնի խախտմամբ հավաքված և հետևաբար՝ անթույլատրելի² (օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ)³:

3.4.2. Հիմնական իրավունքների խախտմամբ կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործման անթույլատրելիության կանոնը (նյութական խախտում)

¹Այս առնչությամբ անհրաժեշտ է հիշատակել Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի 11.05.2012 № 814-Օ որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, որ ապացույցներն անթույլատրելի են համարվում, որոնք ձեռք են բերվել քաղաքացիների սահմանադրական իրավունքների ապահովմանն ուղղված՝ ՌԴ քր.դատ.օր.-ի պահանջների խախտմամբ, *անկախ այն սուբյեկտից, թե ով է թույլ տվել տվյալ խախտումը և անգամ, եթե խախտումը թույլ է տրվել այլ անձի և ոչ թե վարույթ իրականացնող մարմնի կողմից:*

²Ընդդատության կանոնների խախտմամբ ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության մասին ժամանակին գրվել է նաև հայկական դատավարական գրականության մեջ, տե՛ս **Ղազինյան Գ., Մելիքյան Ռ.**, Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարան. Ստրասբուրգի դատարանի նախադեպային պրակտիկան և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը // Պետություն և իրավունք, թիվ 1-2 (39-40), 2008թ., էջ 9:

³Մեր կողմից «ապացույց ձեռք բերելու իրավասու (պատշաճ) սուբյեկտ» և «վարույթ իրականացնող մարմին» սուբյեկտների տարբերակումն ինքնանպատակ չէ: Դա հիմք է տալիս հստակ տարբերակել ընդդատության կանոնների *խախտմամբ* ապացույց ձեռք բերելու իրավիճակը, նրանից, երբ հիմնական դատախազների ընթացքում ի հայտ են գալիս փաստեր, որոնք վկայում են վարույթի՝ այլ դատարանին ընդդատյա լինելու մասին: Այս դեպքում, այդպիսի փաստերի ի հայտ գալու հիմքով (եթե առկա չէ կողմերի համաձայնությունը) դատարանը, այլևս չլինելով *վարույթ իրականացնելու տեսանկյունից «իրավասու»* սուբյեկտ, ունի անհետաձգելի դեպքում ապացույցներ ձեռք բերելու իրավասություն, այլ կերպ ասած՝ «ապացույց ձեռք բերելու իրավասու (պատշաճ) սուբյեկտ» է: Հետևաբար նման պարագայում դատարանի կողմից ապացույց ձեռք բերելու դեպքում չի խախտվի ապացույցի թույլատրելիության «իրավասու (պատշաճ) սուբյեկտի» կանոնը:

Ապացույցի անթույլատրելիության այս կանոնն ունի սահմանադրական հիմքեր, մասնավորապես այն ամրագրված է Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասով՝ սահմանելով հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործման արգելքը:

Սահմանադրական այս կանոնը, նպատակ ունենալով երաշխավորել ապացուցման գործընթացում մարդու հիմնական իրավունքների անխախտելիությունը¹, իր արտացոլումն է գտել նաև օրենսգրքի 97-րդ հոդվածի 4-րդ մասում, որում իբրև ապացույցներ ձեռք բերելիս էական խախտումներ նշվում են նաև այնպիսի խախտումները, որոնք դրսևորվել են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարմամբ կամ քրեական վարույթի սկզբունքների խախտմամբ:

Ընդդատության կանոնների յուրաքանչյուր խախտում, ինչպես արդեն նշվեց, հանգեցնում է անձի արդար դատաքննության իրավունքի խախտման: Հետևաբար արդեն այս կանոնի լույսի ներքո ապացույցի օգտագործման հարցը քննարկելիս պետք է ուղիղ արձանագրել, որ ընդդատության կանոնների խախտմամբ ձեռք բերված (հավաքված) ապացույցը ցանկացած դեպքում անթույլատրելի է օգտագործել:

Հետևաբար այս դիտանկյունից ևս ընդդատության կանոնների խախտմամբ ձեռք բերված ապացույցները պետք է ճանաչվեն անթույլատրելի (օրենսգրքի 97-րդ հոդվածի 4-րդ մաս), իսկ ընդդատության կանոնների խախտման հիմքով դատական ակտը բեկանվելուց և վարույթն ըստ ընդդատության փոխանցելուց հետո արդեն իրավասու դատարանի կողմից այդ ապացույցների օգտագործումը (այդ թվում հետագոտումը) պետք է բացառվի:

4. Եզրակացություններ

Հիմք ընդունելով սույն հոդվածում տեղ գտած դիրքորոշումները՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

- Ընդդատության կանոնների խախտում կարող են թույլ տալ քրեական վարույթի շրջանակներում վարույթի (բողոքի, միջնորդության) ընդդատությունը որոշելու իրավասություն ունեցող ոչ բոլոր մասնակիցները, այդպիսի խախտման սուբյեկտ են միայն դատարանները

¹Տե՛ս Մեղրյան Ս. Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում: Եր., Արդարադատության ակադեմիա, 2020թ., էջ 156:

և ՀՀ վճարել դատարանի և վճարել դատարանի քրեական պալատի նախագահները: Վերաքննիչ դատարանն անմիջականորեն ընդդատության խախտման սուբյեկտ է:

- Ընդդատության կանոնների խախտումը հնարավոր է կատարել միայն մեղավորությամբ, հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ վարույթի նյութերից տվյալ փուլում հնարավոր չէր եզրահանգել վարույթը կոնկրետ դատարանին ոչ ընդդատյա լինելու մասին, խոսք չի կարող գնալ ընդդատության կանոնների խախտման մասին: Օրենսդիրը հենց այս տրամաբանությունն է հիմք ընդունել՝ չպահպանելով նախկին օրենսգրքի «դատաքննությունը չեղյալ համարելու կանոնը», երբ ի հայտ են գալիս փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության այլ դատարան:

- Ընդդատության կանոններն ուղղակիորեն առնչվում են անձի արդար դատաքննության սահմանադրական իրավունքին՝ հանդիսանալով այդ իրավունքի բաղադրատարրեր՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» և «անկախ ու անկողմնակալ դատարանի» կողմից անձի՝ իր գործի քննության իրավունքների ապահովման կարևոր երաշխիքներ:

- Անկախ ընդդատության տեսակից, որը խախտվում է և անկախ ընդդատության կանոնը խախտող սուբյեկտից, ընդդատության կանոնների խախտումները հանգեցնում են անձի արդար դատաքննության իրավունքի խախտման:

- Ընդդատության կանոնների խախտմամբ ստացված ապացույցներն անթույլատրելի են: Անգամ գործը պատշաճ ընդդատության փոխանցվելուց հետո այդ ապացույցների օգտագործումը (հետազոտումը) արդեն իրավասու դատարանի կողմից պետք է բացառվի:

О ПОНЯТИИ, ОСОБЕННОСТЯХ, ПОСЛЕДСТВИЯХ НАРУШЕНИЯ ПРАВИЛ ПОДСУДНОСТИ (ПЕРЕОСМЫСЛЕНИЕ ПРЕЖНИХ И НЫНЕШНИХ ПОДХОДОВ В СВЕТЕ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА)

Аннотация

В статье дается понятие нарушения правил подсудности, выявляются признаки такого нарушения, в том числе уточняется субъект нарушения

правил подсудности. В этом контексте дается ответ на вопрос, может ли апелляционный суд напрямую допустить нарушение правил подсудности. Кроме того, анализируя признаки нарушения правил подсудности, автор приходит к выводу, что нарушение правил подсудности возможно только при наличии вины. В статье автор различает понятия “неправильное определение подсудности” и “нарушение правил подсудности” а также отдельно рассматривает научный подход к дифференциации последствий нарушения подсудности и подвергает его критическому анализу.

Ключевые слова: подсудность, право на справедливое судебное разбирательство, суд, созданный на основании закона, допустимость доказательств.

**ABOUT THE CONCEPT, FEATURES AND
CONSEQUENCES OF VIOLATION OF THE RULES OF
JURISDICTION
(RETHINKING OF PREVIOUS AND CURRENT
APPROACHES IN THE LIGHT OF THE CRIMINAL
PROCEDURE CODE)**

Annotation

The article gives the concept of violation of the rules of jurisdiction, identifies the features of violation, as well as reveals the subject of violation of the rules of jurisdiction. In this context, an answer is given to the question whether the Court of Appel may directly allow a violation of the rules of jurisdiction. In addition, analyzing the features of the violation of the rules of jurisdiction, the author comes to the conclusion that the violation of the rules of jurisdiction may be allowed only by guilt. The article also distinguishes between the concepts of "incorrect definition of jurisdiction" and "violation of the rules of jurisdiction". The author separately touches upon the scientific approach distinguishing the consequences of violation of the rules of jurisdiction and subjects it to a critical analysis:

Keywords: rules of jurisdiction, right to a fair trial, Court Established by Law, admissibility of evidence.



АРМЕН АРУТЮНЯН

*Советник Председателя
Конституционного Суда РА,
магистр права, к.п.н., доцент
докторант Института философии,
социологии и права НАН РА*

ОБЩИЕ ЗАКОНОМЕРНОСТИ ПРОВЕДЕНИЯ ГОСУДАРСТВООБРАЗУЮЩИХ РЕФЕРЕНДУМОВ В НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВАХ¹

Аннотация

Данная статья посвящена исследованию особенностей и проблем проведения государствообразующих референдумов в непризнанных государствах. Особое внимание уделяется тому факту, что практически во всех непризнанных государствах как референдумы о независимости, так и первые общегосударственные выборы проходили в условиях войны и агрессии. На основании сравнительного анализа выявлены общие закономерности проведения государствообразующих референдумов в непризнанных государствах.

Ключевые слова: демократия, непризнанные государства, выборы, референдумы, независимость.

Непризнанными и/или частично признанными государствами, которые на международно-правовой арене упоминаются также де-факто государствами, спорными государствами, неформальными государствами, считаются те территориальные единицы, которые обладают всеми признаками суверенного государства: территория, постоянное население, государственные символы, денежная единица, органы публичной власти и т.д., однако не являются членами Организации Объединённых Наций (далее – ООН). Более того, территории этих государств субъектами международного

¹Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА (Научный проект № 22YR-5E006).

права рассматриваются как собственность одного или нескольких государств-членов ООН, в исключительных случаях – считаются спорными территориями. А сами государственные образования на территориях этих государств государствами-членами ООН и международными организациями расцениваются, как правило, как сепаратистские образования или оккупированные территории. На сегодняшний день в мире насчитывается более двадцати непризнанных и частично признанных государств¹.

Проблемы признания мировым сообществом и международными структурами (в частности ООН и другими субъектами международного права) права на коллективную реализацию политических прав народа и, следовательно, независимости непризнанных государств, как результат коллективной реализации политических прав, являются актуальными и по сей день. Будучи весьма сложными и конфликтогенными и имея при этом очень глубокие политические, правовые и межэтнические корни, вопросы интегрирования новых (непризнанных) государств в международное сообщество несколько десятков лет находятся в эпицентре пересечения интересов мировых держав и региональных акторов. Следует отметить, что, исходя преимущественно из своих геополитических и геоэкономических интересов, в некоторых случаях непризнанные государства признаются единичными государствами или же международными организациями, получая тем самым статус частично признанного государства, а в остальных случаях акты волеизъявления народов на самоопределение, которые являются результатом реализации одного из основных принципов устава ООН², не признаются международным сообществом.

В частности, признанная исключительно Турцией Турецкая Республика Северного Кипра, провозглашённая во время турецкого военного вторжения 1974 года и объявившая о своей независимости 15 ноября 1983 года, поддерживает дипломатические отношения только с Турцией, а все остальные государства-члены ООН рассматривают территорию Северного Кипра как часть Республики Кипр, которую незаконно оккупировала Турция³.

¹Список непризнанных государств мира <https://nonews.co/directory/lists/countries/unrecognized-countries>

²См. Устав Организации Объединенных Наций. Официальный веб-сайт ООН. - <http://www.un.org/ru/documents/charter/chapter1.shtml>

³The CIA World Factbook 2010. — New York: Skyhorse Publishing, 2009. — P.181. — 904 p. — ISBN 978-1-60239-727-9. https://books.google.ru/books?id=pqanFyF6n10C&pg=PA181&redir_esc=y#v=onepage&q&f=false

Согласно Конституции Грузии территория Республики Южная Осетия, которая 21 декабря 1991 года провозгласила свою независимость, а также территория Республики Абхазия, которая со дня принятия Конституции 26 ноября 1994 года объявила себя суверенным государством и субъектом международного права, до сих пор являются частью Грузии. Более того, несмотря на то что оба государства в результате Пятидневной войны 2008 года были признаны пятью государствами-членами ООН, остальные государства отказались признать независимость Южной Осетии и Республики Абхазия, а Грузия расценивает факт независимости этих государств как оккупацию части своей территории со стороны России.

Китайская Республика (Тайвань), сформировавшаяся в конце 1940-х годов в результате гражданской войны в Китае, поддерживает дипломатические отношения только с 13 государствами-членами ООН и Ватиканом, но до 1970-х годов признавалась большинством государств, а до 1971 года входила в Совет Безопасности Организации Объединённых Наций, занимая место Китая,¹ и только 25 октября 1971 года Резолюцией 2758 Генеральной Ассамблеи ООН² место в ООН было передано Китайской Народной Республике.

Несколько другим примером является Сахарская Арабская Демократическая Республика (САДР), признанная более 80 государствами-членами ООН. САДР провозгласила свою независимость в 1976 году в результате партизанской войны против марокканских войск. Несмотря на тот факт, что по предложению Генеральной Ассамблеи ООН Международный Суд в Гааге 16 октября 1975 года принял консультативное заключение³, по которому земли САДР были признаны ничьими в доколониальные времена, что согласно Декларации о предоставлении независимости колониальным странам и народам⁴ дает право на независимость, ООН до сих пор не приняла САДР в свой состав.

¹ Китайская Республика (Тайвань) <https://Gtmarket.Ru/Countries/Taiwan>

²Документы Генеральной Ассамблеи ООН на заметку <https://www.un.org/ru/ga/documents/gakey.shtml>

³Краткое изложение решений, консультативных заключений и постановлений Международного Суда. - С. 125, <https://www.icj-cij.org/public/files/summaries/summaries-1948-1991-ru.pdf>

⁴Декларация о предоставлении независимости колониальным странам и народам. Принята Резолюцией 1514(XV) Генеральной Ассамблеи ООН от 14 декабря 1960 г. http://www.businesspravo.ru/Docum/DocumShow_DocumID_36490.html

Независимость Государства Палестина, провозглашенного в 1988 году Организацией освобождения Палестины (ООП), признается 138 государствами-членами ООН, а также Ватиканом и САДР. С 29 ноября 2012 года Государство Палестина по итогам голосования в Генеральной Ассамблее ООН получило статус государства-наблюдателя при Организации Объединённых Наций, однако до сих пор не является членом ООН. Более того, несмотря на результаты Соглашений в Осло между Израилем и ООП от 13 сентября 1993 года¹ и создание Палестинской национальной администрации (ПНА), Палестина со дня провозглашения и по сей день не контролирует территорию, на которую претендует. Де-факто Государство Палестина не обладает реальным суверенитетом, а государственные структуры сформированы только частично. Функционируют институт президента, правительство, парламент, однако Палестина до сих пор не имеет собственной армии. Значительная часть палестинских территорий, за исключением границы сектора Газа с Египтом, контролируется израильской армией, что со стороны Палестины расценивается как агрессия.

Республика Косово, провозгласившая независимость в 2008 году² и признанная 98 государствами-членами ООН, а также Тайванем, островами Кука, Ниуэ и Мальтийским орденом, согласно Резолюции 1244 Совета Безопасности ООН до сих пор находится под международным управлением. Более того, Косово фактически не контролирует часть территорий, на которые претендует, а в соответствии с Конституцией Сербии входит в состав Сербии как Автономный край Косово и Метохия.

Приднестровская Молдавская Республика (Приднестровье, ПМР), провозгласившая независимость на основании Декларации об образовании Приднестровской Молдавской Советской Социалистической Республики (ПМССР)³ в составе СССР, принятой на II-ом Чрезвычайном съезде народных депутатов всех уровней Приднестровья 2 сентября 1990 года, согласно административно-территориальному делению Молдавии, является частью Республики Молдова как автономное территориальное образование и муниципий. Несмотря на то что большая часть заявленной территории Приднестровья находится под контролем Республики

¹Israel-Palestinian Peace Process: Declaration of Principles On Interim Self-Government Arrangements (“Oslo Accords”) (September 13, 1993) <https://www.jewishvirtuallibrary.org/declaration-of-principles>

²Парламент Косово объявил о независимости края <https://www.vesti.ru/article/2213446>

³Декларация о независимости ПМССР от 25 августа 1991 года. Справка <https://ria.ru/20110825/418351931.html>

Молдова, которая не признает отделение ПМР, 5 ноября 1991 года Верховный Совет ПМССР своим Постановлением утвердил новое название ПМССР, а именно «Приднестровская Молдавская Республика» (ПМР), а уже после вооружённого конфликта в 1992 году ПМР полностью отделилась от Молдавии.

Республика Сомалиленд, провозглашенная в одностороннем порядке представителями Сомалийского национального движения (СНД) 18 мая 1991 года, отделилась от Сомали в результате войны за независимость Сомалиленда, которая переросла в гражданскую войну в Сомали. Несмотря на это, Республика Сомалиленд контролирует большую часть заявленной территории, а юридически ее территория до сих пор считается провинциальной частью Сомали. В силу непризнанности ни одним государством-членом ООН Правительство Республики Сомалиленд поддерживает неформальные международные отношения с некоторыми государствами, является членом образованной 11 февраля 1991 года в Гааге Организации наций и народов, не имеющих представительства (UNPO)¹, целью которой является защита интересов наций и коренных народов, не имеющих собственного государства и/или живущих на оккупированных или же спорных территориях.

Независимость Нагорно-Карабахской Республики (Республика Арцах) была провозглашена 2 сентября 1991 года на совместной сессии Нагорно-Карабахского областного и Шаумяновского районного Советов народных депутатов Азербайджанской ССР в границах Нагорно-Карабахской автономной области (НКАО) и прилегающего к ней Шаумяновского района Азербайджанской ССР. В силу непризнанности ни одним государством-членом ООН Правительство Нагорно-Карабахской Республики поддерживает формальные международные отношения с некоторыми государствами посредством своих представительств в Армении, России, США, Франции, Австралии, Германии и Ливане. После провозглашения со стороны Азербайджана начались военные действия, которые переросли в крупномасштабную войну. В результате первой арцахской войны под контроль Правительства Нагорно-Карабахской Республики перешли не только территории, на которые претендует Республика, но и значительная часть Азербайджана, которая служила в качестве буферной зоны. Однако после второй арцахской войны Нагорно-Карабахская Республика контролирует лишь часть своей территории. Более того, транспортная

¹Организация наций и народов, не имеющих представительства <https://www.unpo.org/>

связь между Нагорно-Карабахской Республикой и Республикой Армения находится под охраной российских миротворческих сил. Несмотря на тот факт, что НКР в течение тридцати лет сформировала все государственные структуры, периодически проводит политические выборы и соответствует критериям признанных государств, независимость Нагорно-Карабахской Республики признана лишь Республикой Абхазия, Республикой Южная Осетия и Приднестровской Молдавской Республикой.

Из информации о вышеперечисленных непризнанных государствах становится очевидно, что среди непризнанных государств только Приднестровская Молдавская Республика, Республика Сомалиленд и Нагорно-Карабахская Республика не признаны ни одним государством-членом ООН, все остальные непризнанные государства признаны хотя бы одним или несколькими государствами-членами ООН.

Несмотря на факт частичного признания некоторых непризнанных государств, который скорее всего имеет более политический чем правовой характер, все непризнанные государства обладают общими чертами, свойствами и закономерностью формирования. В своей основной массе почти во всех непризнанных государствах процессу независимости (до провозглашения или сразу после провозглашения независимости) сопутствовали агрессия и жесткие вооруженные действия со стороны государств, из состава которых последние пытались выйти. Более того, в случае практически всех непризнанных государств акты провозглашения независимости были приняты в одностороннем порядке, однако касательно Декларации о провозглашении независимости Косово Международный Суд ООН принял прецедентное консультативное заключение, согласно которому одностороннее провозглашение независимости временными институтами самоуправления не противоречит нормам международного права¹.

Среди непризнанных государств есть государства, процессы самоопределения которых, независимо от факта их непризнанности, строго соответствуют принятым международным процедурам, в частности согласованным критериям ЕС для признания новых государств в Восточной Европе и на территории Советского Союза, согласно которым для официального признания новых государств обязательны:

¹Международный Суд ООН решил, что Декларация о провозглашении независимости Косово не противоречит международному праву <https://news.un.org/ru/story/2010/07/1167021>

“- соблюдение положений Устава ООН и обязательств, принятых по Хельсинкскому Заключительному акту и Парижской хартии, особенно в том, что касается верховенства закона, демократии и прав человека;

- гарантии прав этнических и национальных групп и меньшинств в соответствии с обязательствами, принятыми в рамках СБСЕ;

- уважение нерушимости всех границ, которые не могут быть изменены иначе, как мирными средствами и с общего согласия;

- принятие всех соответствующих обязательств, касающихся разоружения и нераспространения ядерного оружия, а также безопасности и региональной стабильности;

- обязательство разрешать по соглашению, в том числе предусматривая в случае необходимости обращение в арбитраж, все вопросы, касающиеся правопреемства государства и региональных споров¹⁰”.

В большинстве случаев после принятия акта о провозглашении независимости во многих непризнанных государствах не проводились общегосударственные референдумы о независимости, что в свою очередь способствовало бы процессу демонстрации формирования демократических институтов и процедур. С другой стороны, есть непризнанные государства, которые несмотря на организационные трудности и боевые действия со стороны государств, от которых они отделились, в кратчайшие сроки после принятия акта о провозглашении независимости в соответствии с принятыми нормами и принципами международного права провели общегосударственные референдумы о независимости, однако в силу непризнанности результаты референдума и по сей день не реализованы.

Удачным примером проведения общегосударственного референдума о независимости и реализации результатов референдума является Восточный Тимор. Несмотря на длительные и кровавые стычки между сторонниками и противниками самоопределения Восточного Тимора, 30 августа 1999 года при посредничестве специальной миссии ООН и под усиленной охраной полицейских сил ООН и Индонезии в Восточном Тиморе прошёл референдум о независимости. Из общего числа участвующих 78,5% избирателей проголосовали за независимость от Индонезии. Результаты референдума были приняты Индонезией и в дальнейшем она вывела свои войска из Тимора. В Восточный Тимор был введён миротворческий контингент ООН, а Советом Безопасности ООН

¹⁰О критериях ЕС для признания новых государств в Восточной Европе и на территории Советского Союза <http://zaki.ru/pagesnew.php?id=1202&page=1>

была принята Резолюция о создании временной администрации ООН, которая руководила страной до 2002 года. Суверенитет Восточного Тимора официально был провозглашён 20 мая 2002 года, вследствие чего Восточный Тимор стал первым новым суверенным государством XXI века¹.

В остальных случаях, в частности в случае непризнанных государств постсоветского пространства и стран Восточной Европы, результаты общегосударственных референдумов о независимости до сих пор полноценно не реализованы.

Референдум о независимости Республики Косово от 30 сентября 1991 года был проведен на территории Автономного края Косово и Метохия сразу после провозглашения независимости. Несмотря на то что из общего числа проголосовавших (87 % населения) более 99% проголосовали “За” независимость Косово², факт проведения референдума был бойкотирован косовскими сербами, а Сербия не признала результаты референдума. Более того, среди государств-участников ООН только Албания признала референдум, а парламент Косово признал Акт о независимости лишь в 2008 году.

Референдум о независимости Нагорно-Карабахской Республики от 10 декабря 1991 года в соответствии с “Временным регламентом проведения референдума в НКР” был проведен на территории бывшей Нагорно-Карабахской автономной области и прилегающего Шаумяновского района спустя три месяца после провозглашения независимости в условиях агрессии и военных действий со стороны Азербайджана, в результате чего погибло 10 и было ранено 11 мирных жителей. Из общего числа граждан, имевших право голоса, в голосовании приняло участие 108 736 человек (82, 2%), из которых “За” независимость проголосовало более 99 %³. Азербайджанская часть населения НКР бойкотировала референдум, поддержав развязанные Азербайджаном боевые действия против Арцаха и приняв в них активное участие.

Кардинально иными были способы проведения референдумов в Южной Осетии и Абхазии. До проведения референдумов о независимости Южная Осетия и Абхазия, в отличие от Грузии, на Всесоюзном референдуме о

¹Восточный Тимор: долгий путь к независимости <https://www.socionauki.ru/journal/articles/147234/>

²Kosovo (Jugoslawien), 30. September 1991: Unabhängigkeit <https://www.sudd.ch/event.php?lang=en&id=ks011991>

³Референдум о независимости Нагорно-Карабахской Республики <http://www.nkr.am/ru/independence-referendum-in-karabakh>

сохранении СССР проголосовали за сохранение СССР, чему последовали обстрелы со стороны грузинских вооружённых сил. А на общенародный референдум в Южной Осетии 19 января 1992 года, который проходил в очень напряженной обстановке, было вынесено два вопроса:

1. Согласны ли вы, чтобы Республика Южная Осетия была независимой?

2. Согласны ли вы с решением Верховного Совета Республики Южная Осетия от 1 сентября 1991 года о воссоединении с Россией?¹

При явке в 98,2 % в Южной Осетии “За” независимость и воссоединение с Россией проголосовало 99,7 % граждан. А в случае Республики Абхазия “Акт о государственной независимости Абхазии” был принят 12 октября 1999 года на основании референдума от 3 октября 1999 года об отношении граждан к действующей с 26 ноября 1994 года Конституции².

Как и в случае Южной Осетии и Республики Абхазия Приднестровская Молдавская Республика, еще до референдума о независимости, на Всесоюзном референдуме о сохранении СССР от 17 марта 1991 года проголосовала “За” сохранение СССР. Референдум о независимости Приднестровской Молдавской Республики был проведён 1 декабря 1991 года одновременно с президентскими выборами в стране. Из общего числа участвующих в референдуме избирателей “За” независимость Приднестровской Молдавской Республики проголосовало 97,75%.

Однако сам факт организации и проведения референдумов о независимости не означает, что результаты референдумов будут “За” выход из состава того или иного государства. В тех случаях, когда основополагающие права и свободы граждан на протяжении длительного времени не ущемляются, референдумы о независимости не только проходят в обстановке мира и согласия, но и результаты зачастую являются совершенно другими. То есть референдумы о независимости носят не экзистенциальный, а сугубо политический характер. Классическим примером такого референдума о независимости является референдум Шотландии о независимости 2014 года, когда из беспрецедентного количества участвующих избирателей (84,6% граждан, имеющих право

¹Референдум 1992 года стал решающим фактором в определении будущего Южной Осетии <https://cominf.org/node/1166514609>

²12 октября 1999 года был принят Акт о государственной независимости Республики Абхазия <http://mfaapsny.org/ru/allnews/news/othernews/12-oktyabrya-1999-goda-byt-prinyat-akt-o-gosudarstvennoy-nezavisimosti-respubliki-abkhaziya/>

голоса) 55,3 % проголосовали против независимости и выхода Шотландии из состава Соединенного Королевства Великобритании¹.

Из вышеизложенного следует, что в тех случаях, когда в отношении отделяющегося народа на протяжении длительного времени проявляются агрессивные действия, ущемляются основополагающие права и свободы человека и гражданина, референдумы о независимости носят экзистенциальный характер и, следовательно, результаты референдумов практически всегда являются “За” выход из состава того или иного государства. Более того, как правило, в таких случаях в силу непризнания факта проведения референдумов и, как следствие, результатов референдумов о независимости проявляется второй этап агрессии, которая, как правило, перерастает в крупномасштабные стычки и боевые действия, а в подавляющих случаях процесс проведения референдумов о независимости проходит параллельно военным действиям.

Наряду с перечисленными примерами, примером проведения референдумов о независимости во время войны и активных боевых действий являются также референдумы о самоопределении Луганской Народной Республики (ЛНР) и Донецкой Народной Республики, проведенные, соответственно, 27 апреля 2014 года и 11 мая 2014 года. Надо отметить, что оба государства после объявления о суверенитете выразили желание войти в состав России². В результате обострения ситуации на территории Донбасса и Украины и продолжения военных действий с 23 по 27 сентября 2022 года в ДНР, ЛНР, Херсонской и Запорожской областях были проведены референдумы о вхождении в состав России³, в результате чего 30 сентября 2022 года были подписаны договора о вхождении последних в состав России в качестве новых субъектов Российской Федерации⁴.

¹Scottish referendum: Scotland votes 'No' to independence <https://www.bbc.com/news/uk-scotland-29270441>

²ДНР и ЛНР выразили желание войти в состав России https://www.gazeta.ru/politics/news/2015/06/10/n_7275741.shtml

³Референдумы в ДНР, ЛНР, Херсонской и Запорожской областях о вхождении в состав РФ. День первый <https://www.gazeta.ru/politics/2022/09/23/15503845.shtml>

⁴Подписание договоров о принятии ДНР, ЛНР, Запорожской и Херсонской областей в состав России <http://kremlin.ru/events/president/news/69465>

ՉՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂԾ ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամփոփագիր

Ներկայացված հոդվածը նվիրված է չճանաչված պետություններում պետականաստեղծ հանրաքվեների անցկացման առանձնահատկությունների եւ հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Հատուկ ուշադրություն է դարձվում այն փաստին, որ գրեթե բոլոր չճանաչված պետությունների դեպքում, որպես կանոն, անկախության հանրաքվեները և առաջին համապետական ընտրությունները տեղի են ունեցել պատերազմի և ագրեսիայի պայմաններում: Համեմատական վերլուծության հիման վրա բացահայտվել են չճանաչված պետություններում պետական հանրաքվեների անցկացման ընդհանուր օրինաչափությունները:

Հիմնաբառեր. Ժողովրդավարություն, չճանաչված պետություններ, ընտրություններ, հանրաքվեներ, անկախություն:

GENERAL REGULARITIES OF HOLDING STATE-FORMING REFERENDUMS IN UNRECOGNIZED STATES

Annotation

This article is devoted to the study of the features and issues of holding state-forming referendums in unrecognized states. Special attention is paid to the fact that in almost all unrecognized states, such as referendums on independence, the first national elections were held in conditions of war and aggression. On the basis of a comparative analysis, the general patterns of holding state-forming referendums in unrecognized states are revealed.

Keywords: democracy, unrecognized states, elections, referendums, independence.

ՎԻՐԱԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՄԵՂՔԻ ՍԿՋԲՈՒՆՔԻ ԵՎ ՊԱՏԺԻ ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅԱՆ
ՍԿՋԲՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ
ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Ամփոփագիր: Հոդվածում փորձ է արվել վեր հանել մեղքի սկզբունքի և պատժի համաչափության սկզբունքի սահմանադրաիրավական ամրագրման հնարավոր պատճառները, հիմքերը և նախադրյալները: Փորձ է արվել բացահայտել առհասարակ իրավունքի սկզբունքի էությունը և ՀՀ սահմանադրությամբ քննարկվող երկու սկզբունքների սահմանադրական մեկ հոդվածում ամրագրման անհրաժեշտությունը: Ուսումնասիրվել է երկու սահմանադրական սկզբունքների փոխադարձ կապը:

Հիմնաբառեր. իրավական սկզբունք, մեղքի սկզբունք, պատժի համաչափության սկզբունք, սահմանադրական սկզբունք, սահմանադրական երաշխիք:

Մեղքի սկզբունքի և պատժի համաչափության սկզբունքի սահմանադրաիրավական ամրագրման նախապայմանները բացահայտելու համար անհրաժեշտ է, նախևառաջ, բացահայտել թե ինչ է իրավական սկզբունքը, ինչ են իրենցից ենթադրում մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքն առհասարակ:

Ընդհանուր առմամբ իրավունքը կառուցվում և գործում է որոշակի սկզբունքների հիման վրա, որոնք արտացոլում են դրա էությունը և սոցիալական նշանակությունը: Դրանցում դրսևորվում են իրավունքի գլխավոր հատկանիշներն ու առանձնահատկությունները՝ հասարակական հարաբերություններում դրան հաղորդելով ազատության և արդարության միջոցների պետական կարգավորիչի հատկություն:

Իրավունքի սկզբունքները հանդիսանում են հիմնարար գաղափարներ, որոնց միջոցով արտահայտվում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները: Իրավունքի սկզբունքները համարվում են իրավական համակարգի հենասյունը, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են տարբեր իրավական նորմերում, ուղղակի կամ անուղղակի կարգավորում են տարատեսակ հասարակական հարաբերություններ, օժտված են համապարտադիրության հատկանիշով:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(106)2022

Իրավունքի սկզբունքները հիմնական ելակետային դրույթներն են, որոնք իրավաբանորեն ամրապնդում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները: Դրանք իրենց մեջ կուտակում են իրավունքի առավել բնորոշ հատկանիշները, սահմանում են դրա իրավական բնույթը: Իրավունքի սկզբունքներն ընկած են իրավական պետության, պետական իշխանության բոլոր մարմինների գործունեության հիմքում: Ղեկավարվելով դրանցով՝ պետությունն ապահովում է իր քաղաքացիների սոցիալ-տնտեսական, քաղաքական և անձնական իրավունքներն ու ազատությունները, երաշխավորում է նրանց կողմից իրավական պարտականությունների կատարումը¹:

Վերջին հաշվով, սկզբունքներից յուրաքանչյուրն ունի սոցիալական ծագում, նրանց աղբյուրը հանդիսանում է հասարակությունը, իր քաղաքակրթության որոշակի փուլում²:

Իրավունքի սկզբունքները համեմատաբար ինքնուրույն իրավական երևույթներ են, և դրանք կարող են ունենալ սեփական ազդեցությունը իրավունքի զարգացման վրա: Իրավական երևույթների օրինաչափ փոխհարաբերությունների բազմազանությունը չի սպառվում նրանց հիմնական կառուցվածքային կապով, հատկապես երբ խոսքը գնում է կառուցվածքային առումով այնպիսի բարդ երևույթների մասին, ինչպիսիք են իրավունքի ճյուղը, իրավունքի համակարգը, իրավական երևույթների արտաքին կապերն այլ սոցիալական երևույթների հետ: Իրավական սկզբունքներն օժտված են անհրաժեշտությամբ: Համապատասխան պայմանների առկայության դեպքում դրանք անխուսափելիորեն հայտնվում են հասարակական և իրավական հարաբերությունների համակարգում՝ անկախ դրանց գիտակցումից և գործող օրենսդրությամբ ամրագրումից: Այնուամենայնիվ, օրենսդրության մեջ իրավունքի գործող նորմերի համակարգում, իրավական սկզբունքները ձեռք են բերում համապարտադիր նշանակություն այնքանով, որքանով դրանք ամրագրված են օրենսդիր մարմնի կողմից³:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ իրավունքի սկզբունքները համապարտադիր նշանակություն են ձեռք բերում միայն այն ժամանակ, երբ ամրագրվում են օրենսդիր մարմնի կողմից, այսինքն՝ օրենքներում: Սակայն չէ՞ որ բազմաթիվ սկզբունքներ ամրագրվում են Սահմանադրությամբ, և, հետևաբար, կոչվում են սահմանադրական սկզբունքներ:

¹Хропанюк В.Н. Теория государства и права. - М., 2011. - С. 206.

²Радько Т.Н. Теория государства и права: учеб. 2-е изд. - М., 2010. - С. 312.

³Сырых В.М. Логические основания общей теории права: том 1. - М: Юридический Дом «Юстицинформ», 2000. - С. 63-64.

Մեղքի և պատժի համաչափության սկզբունքները, ամրագրված լինելով Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, ունեն առավել քան համապարտադիր նշանակություն հենց Հայաստանի Հանրապետության ամենաբարձր իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթում ամրագրված լինելու արդյունքում: Իսկ, ինչպես գիտենք, մեր երկրում Սահմանադրությունն ընդունվում է միայն հանրաքվեի միջոցով, այլ ոչ թե օրենսդիր մարմնի կողմից: Հետևաբար իրավունքի սկզբունքների համապարտադիրությունը կապել միայն օրենսդիր մարմնի կողմից դրանց ամրագրման հետ, այնքան էլ ճիշտ չէ:

ՀՀ սահմանադրության 71-րդ հոդվածի համաձայն՝

1. Հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է:
2. Օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին:

Սակայն, պետք է նշել, որ տարբեր երկրներում քննարկվող սկզբունքներն իրենց ամրագրումն են ստացել տարբեր փաստաթղթերում:

Մեղքի սկզբունքն ամրագրված է տարբեր երկրների նորմատիվ իրավական ակտերում, ինչպես օրենսդրական, այնպես էլ սահմանադրական մակարդակով: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն այն հանրորեն վտանգավոր գործողությունների (անգործության) համար, ինչպես նաև վրա հասնող հանրորեն վտանգավոր հետևանքների համար, որի համար հաստատված է նրա մեղքը:

Օբյեկտիվ մեղսագրումը, այսինքն առանց մեղքի պատճառված վնասի համար քրեական պատասխանատվությունն անթույլատրելի է:

Մեղքը (նպատակի և շարժառիթի հետ միասին) կազմում է հանցագործության սուբյեկտիվ կողմը: Այն անձի ներքին հոգեբանական վերաբերմունքն է, նրա կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքի (գործողության կամ անգործության) և դրա հետեանքների նկատմամբ՝ դիտավորության և անզուշության տեսքով (այս հասկացությունների համար տես 24-27-րդ հոդվածների մեկնաբանությունները): Մեղքը հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է: Առանց մեղքի չկա և չի կարող լինել հանցակազմ և, հետևաբար, քրեական պատասխանատվություն: Այն սուբյեկտիվ կողմի հիմնական հատկանիշն է, որը սահմանազատում է հանցավոր գործունեությունը ոչ հանցավորից:

Ռուսական քրեական իրավունքը կանգնած է սուբյեկտիվ մեղսագրման դիրքում: Վերջինը նշանակում է, որ օրենքը քրեորեն պատժելի կճանաչի

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(106)2022

միայն այնպիսի հանրորեն վտանգավոր արարքը, որը կատարված է մեղավորությամբ: Օբյեկտիվ մեղսագրումը, այսինքն, առանց մեղքի վնասի պատճառման համար քրեական պատասխանատվությունը չի թույլատրվում: Ոչ մի արարք, կատարված առանց մեղքի, ինչպիսի ծանր հետևանքներ էլ պատճառի, չի կարող դիտարկվել որպես հանցագործություն: Մեղսագրումն արարքի մեղքում, հանրային վտանգավորությունը, որը անձը չի կանխատեսել և չէր կարող կանխատեսել, կլիներ զուրկ արդարությունից և որևէ նախագգուշական նշանակությունից, ուստի մերժվում է արդարադատության կողմից: Ռուսաստանի Դաշնության Բարձրագույն դատարանի նախագահությունը չէր յայլ է հայտարարել Տ.-ի գործով դատավճիռը և դադարեցրել է գործի վարույթը՝ հանցագործության կատարման մեջ անձի մեղքի վերաբերյալ ապացույցների բացակայության պատճառով (БВС РФСР. 1990. № 8. ст. 6-8): Մեղքի սկզբունքը ենթադրում է միայն անձնական պատասխանատվություն: Քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն այն անձը, ով անձամբ է կատարել հանցագործությունը որպես կատարող կամ հանդիսացել է դրա կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը: Այլ անձանց վրա (օրինակ, ծնողներ, խնամակալներ) քրեական պատասխանատվությունը տարածվել չի կարող¹:

Սակայն ՀՀ-ում մեղքի սկզբունքն իր ամրագրումն է ստացել 2015 թվականի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ: Մասնավորապես ՀՀ սահմանադրության 71-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է հետևյալը. «Հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է»: Պատահական չէ մեղքի սկզբունքի սահմանադրական ամրագրումը, քանի որ այն հաճախ ստանձնում է կենտրոնական դեր որոշ հասարակական հարաբերությունների կարգավորման և դրանց համար օրենսդրական բազայի ստեղծման ընթացքում:

Մեղքի սկզբունքը Սահմանադրությամբ համադրված է պատժի համաչափության սկզբունքի հետ:

Առհասարակ, համաչափության գաղափարը, որպես արդարության անբաժանելի մաս, առաջ է քաշվել դեռևս հնագույն հույների եւ հռոմեացիների կողմից: Արիստոտելը կարծում էր, որ արդարը համաչափն է, իսկ անարդարը՝ այն, ինչ խախտում է համաչափությունը: Ա. Յու. Միգաչևը նշում է, որ ժամանակակից իրավունքում արդարության կատեգորիայի նշանակությունն իմաստով մոտ է "aequitas" հռոմեական հասկացությանը,

¹Комментарий к уголовному кодексу РФ. - М: Юрайт, 2006. - С. 31.

որը նշանակում է հավասարաչափություն, համաչափություն, հավասարություն, և, հետևաբար, համաչափությունը կարելի է հասկանալ որպես հավասարակշռություն, սոցիալական փոխազդեցության գործընթացում տրամադրվածի և ստացվածի միջև համապատասխանություն:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) հոդված 74-ի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ նշված է, որ չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին: Այսինքն, սրանով փորձ է արվում պահպանել պատժի առնվազն այն համաչափությունը, որը եղել է մեղավորությամբ կատարված հանցավոր արարքի պահին: Փաստորեն Կոնվենցիայի սույն կարգավորումից բխում է, որ այնուամենայնիվ պատժի համաչափությունը կարող է փոփոխվել, սակայն միայն այն ուղղությամբ, որը չի վատթարացնի անձի վիճակը:

Կարող ենք պնդել, որ պատժի համաչափության սկզբունքը որոշակի առումով բխում է արդարության սկզբունքից:

Մեր կարծիքով՝ պատժի համաչափության սկզբունքի և արդարության սկզբունքի կապը պայմանավորված է նրանով, որ պատժի տեսակը և պատժաչափը համապատասխանեն պատժի նպատակներին: Սա նշանակում է, որ դրանք պետք է լինեն բավարար պատժի նպատակներին հասնելու համար, սակայն չպետք է լինեն ավելի: Իհարկե, այդ սահմանը շատ նուրբ է, սակայն պատժի հենց այդ անհրաժեշտ տեսակը և չափը՝ ոչ ավել, ոչ պակաս, իրենից ենթադրում է արդարություն:

Իսկ այդ սահմանը ճիշտ գտնելու ճանապարհին առաջ է գալիս մեղքի սկզբունքը. նախ՝ դրա առկայությունն առհասարակ, մեղքի էության և ծավալի բացահայտումը, դրա համար օրենսդիր մարմնի կողմից սահմանված պատիժը և մի շարք այլ հանգամանքներ:

Պատահական չէ, որ ՌԴ քրեական օրենսգրքի «Արդարության սկզբունքը վերտառությամբ 6-րդ հոդվածի 1-ին մասով շարադրված է հետևյալը.

«Հանցագործություն կատարած անձի նկատմամբ կիրառելի պատիժը և քրեաիրավական բնույթի այլ միջոցները պետք է արդար լինեն, այսինքն, համապատասխանեն հանցագործության հանրային վտանգավորության բնույթին և աստիճանին, դրա կատարման հանգամանքներին և մեղավորի ինքնությանը:

Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրաիրավական ամրագրման հարցի ավելի համալիր քննարկման համար անհրաժեշտ է առաջ քաշել հետևյալ հարցադրումները.

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(106)2022

1. Ինչո՞ւ են որոշ իրավունքի սկզբունքներ ամրագրված սահմանադրական մակարդակում, իսկ որոշ սկզբունքներ էլ՝ օրենսդրական.

2. Ինչո՞վ է պայմանավորված այդ տարբերակումը.

3. Ինչո՞վ է պայմանավորված քննարկվող երկու սկզբունքները մեկ հոդվածով ամրագրելու անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է առաջին երկու հարցադրմանը, պետք է նշել, որ դրանք հանդիսանում են միմյանց շարունակությունը:

Իրավունքի սկզբունքները կարող են հատուկ ամրագրվել ընդհանուր իրավական նորմերի (նորմերի-սկզբունքների) մեջ (սահմանադրություններում, օրենքների նախագծերում, օրենսգրքերում) կամ հանդիսանալ հենց իրավունքի հիմքը՝ ներթափանցելով իրավունքի նորմերի ներքին բովանդակության մեջ: Իրավունքի սկզբունքներն օբյեկտիվորեն հարմարեցված են հասարակական հարաբերությունների բնույթով, որոնց վրա հիմնվում է որոշակի իրավական համակարգ: Սա նշանակում է, որ հասարակական հարաբերությունների յուրաքանչյուր համակարգ չի կարգավորվում կամայականորեն, այլ՝ օբյեկտիվ պահանջներին համապատասխան, որոնք արտացոլվում են իրավական համակարգում և կազմում են դրա էությունը: Այս կամ այն իրավական համակարգի սկզբունքների բնույթը չի կարող սահմանվել մեկուսացած սոցիալ-տնտեսական պայմաններից, պետական իշխանության կառուցվածքից և բովանդակությունից, հասարակության ամբողջ քաղաքական համակարգի կառուցման և գործունեության սկզբունքներից:¹

Վերոգրյալից կարելի է անել հետևություն, որ իրավունքի սկզբունքների ամրագրման եղանակները կախված են կոնկրետ պետության իրավական համակարգից, առկա օբյեկտիվ պահանջներից: Իսկ այդ օբյեկտիվ պահանջների վրա կարող են ազդել մի շարք գործոններ, ինչպիսիք են վերը թվարկված սոցիալ-տնտեսական պայմանները, պետական կառուցվածքն առհասարակ, և, իհարկե, հասարակական, իրավական, քաղաքական համընդհանուր այլ սկզբունքները: Դրանցից յուրաքանչյուրը յուրովի է ազդում իրավունքի տարբեր սկզբունքների ձևավորման և դրանց ամրագրման եղանակների վրա: Հետևաբար, տարբեր երկրների իրավական համակարգերում տարբեր իրավունքի սկզբունքներ դառնում են ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենսդրական ամրագրման առարկա:

¹Хропанюк В.Н. Теория государства и права. - М., 2011. - С. 207.

Դա նախևառաջ պայմանավորված է տվյալ պետության իրավական համակարգում իրավունքի կոնկրետ սկզբունքների դերից և նշանակությունից:

Ինչ վերաբերում է երրորդ հարցադրմանը, ապա վերջինիս պատասխանը գտնելու համար նախևառաջ պետք է բացահայտել քննարկվող երկու սկզբունքների կապը:

Որոշակի առումով պատիժը կարելի է համարել մեղքի հետևանքը, որը վրա է հասնում օրենքով սահմանված ընթացակարգերով՝ արդարադատություն իրականացնող մարմնի որոշմամբ: Իսկ պատժատեսակը և պատժաչափը կարելի է համարել պատժին որոշակիություն հաղորդող կոմպոնենտներ, որոնք, սակայն, մեծ դեր են ունենում պատժի համաչափության ապահովման, այսինքն՝ մեղքի և պատժի ներդաշնակությանը հասնելու գործում: Այս ամենն իհարկե հանդիսանում է օրենսդրական կարգավորման առարկա, սակայն պետք է արձանագրել, որ քննարկվող սկզբունքները մեկ սահմանադրական հոդվածում ամրագրելն ինքնանպատակ չէ և ունի իր իրավական նշանակությունը:

Մասնավորապես կարծում ենք, որ երկու սկզբունքների՝ սահմանադրական մակարդակով մեկ հոդվածում ամրագրելու նպատակը վերջիններիս կապը և միմյանցով մշտապես փոխկապակցված լինելու հանգամանքը հնարավորինս շեշտադրելն է, քանի որ օրենսդրական մակարդակում քննարկվող սկզբունքներին վերաբերող նյութական և դատավարական նորմեր սահմանելիս դրանց հիմքում ընկած երկու սկզբունքները կարող են հեռանալ միմյանցից, իսկ մայր օրենքի մեկ հոդվածում դրանց ամրագրումն այդ երևույթը բացառող սահմանադրական երաշխիք է:

Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է փաստել նաև, որ քննարկվող սահմանադրական սկզբունքներն այնուամենայնիվ ունեն քրեաիրավական արմատներ: Այդ իսկ պատճառով երբեմն որոշ գործընթացներ էլ ավելի պատկերավոր են արտացոլվում հենց քրեական իրավունքի առանձին դրսևորումներում: Այս առումով անհրաժեշտ է պարզել, թե սահմանադիրն ինչ նպատակ է ունեցել կամ ինչ խնդիր է փորձել լուծել քննարկվող սկզբունքներն ամրագրելով սահմանադրական մակարդակում:

Այս գործընթացը նմանվում է գերմանական իրավունքի զարգացման ճանապարհին նկատվող միտումներին, ինչի կապակցությամբ ավելի հանգամանալից խոսել ենք այլ գիտական աշխատություններում¹:

¹Վարդանյան Վ.Ա., Մեղքի և պատժի համաչափության սկզբունքները սահմանադրական կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների համայնապատկերում: Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021, էջ 120-124:

Այս առումով կարծում ենք, որ սահմանադիրը փորձել է մեղքը վեր հանել հանցակազմի (իրավախախտման) առանձին հատկանիշներից: Հենց Գերմանիայի իրավական համակարգում բացակայում է իրավախախտման քառակողմ ձևը՝ օբյեկտ, սուբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտիվ կողմ: Այսինքն չկա հանցակազմի (իրավախախտման) «քարացած» կառուցվածք, ինչը թույլ է տալիս իրավախախտման մեջ դիտարկել նաև այլ ինքնուրույն տարրեր՝ բացահայտելով առանձին իրավախախտումների էլ ավելի ամբողջական պատկերները:

Հավանական է, որ սահմանադիրը, ՀՀ սահմանադրությամբ առաջ քաշելով քննարկվող երկու սկզբունքները, փորձ է արել մեղքը հանել, առանձնացնել իրավախախտման առանձին տարրերից՝ մասնավորապես իրավախախտման սուբյեկտիվ կողմից: Սա կարող է նպաստել հանցագործությունների (իրավախախտումների) ավելի ճիշտ որակմանը:

Արարքը վերոհիշյալ դեպքում հանցագործությունների համակցությամբ որակելը սկզբունքային մոտեցում է ըստ մեղքի պատասխանատվության տեսանկյունից: Հանցավորի կողմից գիտակցաբար և իր կամքով կատարված բոլոր գործողությունները պետք է համապատասխան կարգով գնահատվեն հանցակազմի սուբյեկտիվ կողմի դիրքերից: Ընդ որում՝ առաջին գործողությունը և դրա հետևանքները կարող են ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգույշ լինել: Գործողությունը կարող է ավարտված կամ չավարտված լինել: Հանցավորի երկրորդ գործողությունները, առնվազն, պետք է ընդգրկված լինեն մեղքի անզգույշ ձևով: Հակառակ դեպքում դրանք չեն կարող մեղսագրվել անձին (առկա կլինի պատահար)¹:

Վերոգրյալից ևս երևում է, որ մեղքը հանցագործությունների որակման առանցքային տարրերից է:

Այս ամենը կարելի է դիտարկել նաև որպես ՀՀ իրավական համակարգի էվոլյուցիայի որոշակի մաս:

Կարծում ենք, որ իրավունքն անընդմեջ է ապրում էվոլյուցիա, ինչն էլ իր հերթին բերում է, բառի լայն իմաստով, օրենքի զարգացմանը: Այսինքն սա ևս որոշակի իմաստով կարելի է համարել նաև իրավունքի և օրենքի զարգացման դրսևորում:

Գերմանիայի դաշնային դատարանի դատավոր, դոկտոր պրոֆեսոր Հենինգ Ռադթեյն Հայաստանի Հանրապետության սահմանադրության նախագծի 71-րդ հոդվածի վերաբերյալ, ի թիվս այլնի, ասել է, որ

¹Գրիգորյան Մ.Վ., Հանցագործությունների որակման գիտական հիմունքները: Ուսումնական ձեռնարկ: Երկրորդ լրացված վերահրատարակություն: Եր., ՀՌՀ հրատ., 2009, էջ 216-217:

ուղղակիորեն ներառելով քրեաիրավական մեղքի սկզբունքը՝ Նախագիծը Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի և քրեական իրավունքի համար նոր ճանապարհով է գնում: Մեղքի սկզբունքն առաջարկված իմաստով ունի սահմանադրաիրավական ու քրեաիրավական բաղադրիչներ:

Ռադաքեն նշել է նաև, որ մեղքի՝ պատիժը սահմանափակող գործառույթի մակարդակում մեղքի սկզբունքը բացառում է կոնկրետ պատժի ակտի համար այնպիսի պատժի սահմանում, որի չափը գերազանցում է մեղավորությամբ հանցանքի կատարման միջոցով անձի կողմից կոնկրետ արարքի համար իրականացված մեղքի ծավալը: Հանցանք կատարած անձի նկատմամբ սահմանված պատիժը պետք է արդար հարաբերակցության մեջ լինի ինչպես կատարված արարքի ծանրության, այնպես էլ հանցանք կատարած անձի մեղավորության աստիճանի հետ: Կոնկրետ արարքի անարդարության և մեղքի բաղադրիչների համեմատ անհամաչափ պատժի սահմանումը բացառվում է սահմանադրորեն:

Վերոշարադրյալից երևում է, որ Ռադաքեն ևս քննարկվող սկզբունքները կապում է արդարության սկզբունքի հետ, սակայն այդ հարցին մոտենալով մեղքի և պատժի հարաբերակցության տեսանկյունից:

Երբեմն տեղի են ունենում իրադարձություններ, որոնք բեկումնային են դառնում կոնկրետ իրավական համակարգի զարգացման համար: Այդպիսի իրադարձությունների շարքին է դասվում ՀՀ-ում 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունները, որի արդյունքում, ի թիվս այլնի, ՀՀ սահմանադրությամբ ամրագրվեցին մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը: Առհասարակ յուրաքանչյուր իրավունքի նորմ ևս բխում է իրավունքի որոշակի սկզբունքներից, հետևաբար, իրավունքի սկզբունքներն ունենում են արարիչ դեր իրավական ամբողջ համակարգի ձևավորման համար: Որքան բարձր է այն ընդունված փաստաթղթի իրավաբանական ուժը, որում ամրագրված է իրավունքի սկզբունքը, այնքան բարձր է դրա դերն ու կարևորությունը տվյալ պետության իրավական համակարգի ձևավորման գործում:

Կարելի է հանգել այն հետևության, որ առկա է եղել անհրաժեշտություն մեղքի և պատժի համաչափության սկզբունքները բարձրացնել սահմանադրական մակարդակի: Այդ անհրաժեշտությունը պայմանավորված է եղել ՀՀ իրավական համակարգում դրանց տեղի, դերի և նշանակության կարևորությամբ և բխել է ՀՀ իրավական համակարգի զարգացման տրամաբանությունից:

Բացի այդ, գուցե փորձ է արվել ընթացք տալ իրավախախտման կառուցվածքի հնարավոր փոփոխությունների սկզբին:

ՍԱՀՄԱՆԱՐԿՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 2(106)2022

ПРЕДПОСЫЛКИ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОГО ЗАКРЕПЛЕНИЯ ПРИНЦИПА ВИНЫ И ПРИНЦИПА ПРОПОРЦИОНАЛЬНОСТИ НАКАЗАНИЯ

Аннотация

В статье предпринята попытка выявить возможные причины, основания и предпосылки конституционно-правового закрепления принципов вины и пропорциональности наказания. Была предпринята попытка раскрыть в общем сущность принципа права и необходимость закрепления обсуждаемых двух принципов в одной конституционной статье. Была изучена связь между двумя принципами.

Ключевые слова: правовой принцип, принцип вины, принцип пропорциональности наказания, конституционный принцип, конституционная гарантия.

THE PRECONDITIONS OF CONSTITUTIONAL-LEGAL ENTRENCHMENT OF THE PRINCIPLE OF GUILT AND THE PRINCIPLE OF PROPORTIONALITY OF PUNISHMENT

Annotation

The aim of this article is to reveal all the possible reasons of the constitutional-legal entrenchment of the principles of guilt and proportionality of punishment, as well as the grounds and preconditions thereof. This article attempts to reveal the essence of the principle of Law and the necessity to establish the two principles in one article of the Constitution. The article also studies the relation of the two principles.

Keywords: legal principle, principle of guilt, principle of proportionality of punishment, constitutional principle, constitutional guarantee.

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ



ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի
դատավորի օգնական,
Եվրոպական համալսարանի
իրավագիտության ամբիոնի հայցորդ

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ամփոփոգիր: Սույն հոդվածը նվիրված է անմեղության կանխավարկածի տեղին և դերին սահմանադրական իրավունքի համակարգում: Հոդվածում փորձ է արվել ուսումնասիրել իրավագիտության մեջ առկա անմեղության կանխավարկածի տեղի վերաբերյալ մոտեցումները, վեր հանել ընդհանուր սկզբունքների շարքում դրա տեղն ու դերը, բացահայտել անմեղության կանխավարկածի տեղը սահմանադրական իրավունքի համակարգում:

Հիմնաբառեր. անմեղության կանխավարկած, անմեղության կանխավարկածը որպես սահմանադրաիրավական սկզբունք, անմեղության կանխավարկածի տեղը իրավունքի համակարգում, անմեղության կանխավարկածի սկզբունք, համաիրավական սկզբունք, միջճյուղային սկզբունք, ճյուղային սկզբունք:

Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը ճանաչում և երաշխավորում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատություններն միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան: Վերոգրյալ իրավունքներն ու ազատությունները Սահմանադրությամբ սահմանված են առանձին (2-րդ) գլխով: Դրանց շարքին է պատկանում նաև անձի անմեղ համարվելու իրավունքը, այսինքն՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը: Մասնավորապես՝ Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանվում է՝ «Հանցագործության համար մեղադրվողը

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 2(106)2022

համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»։ Սույն հոդվածում ամրագրված է ժողովրդավարական իրավական պետության կարևորագույն սկզբունքներից մեկը, որն իր արտացոլումն է գտել մի շարք միջազգային նորմատիվ իրավական ակտերում, ինչպիսիք են ՄԻԵԿ-ը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և այլն։

Ըստ էության անմեղության կանխավարկածի սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ ոչ ոք կասկածների, ենթադրությունների, կարծիքների, ՁԼՄ-ների հայտնած տեղեկությունների, անձանց կողմից կատարված հայտարարությունների և այլ ոչ հավաստի տեղեկությունների վրա չի կարող մեղավոր ճանաչվել հանցագործության կատարման մեջ։ Եվ անձին հանցագործության կատարման համար մեղավոր կարելի է ճանաչել բացառապես դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով։

Անմեղության կանխավարկածի սկզբունքը սահմանում է մի կողմից հանցագործության մեջ մեղադրվող անձի և, մյուս կողմից, պետության, պետական մարմինների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների միջև հարաբերությունների բնույթը։

Արձանագրենք նաև, որ ի տարբերություն Սահմանադրության գործող խմբագրության, 1995 և 2005 թվականների խմբագրություններում անմեղության կանխավարկածն ավելի լայն էր մեկնաբանվում՝ իր մեջ ներառելով նաև դրա տարրերը։ Այդպիսիք են՝ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի, որոնք այժմ տեղ են գտած քրեական դատավարության օրենսգրքում։

Անմեղության կանխավարկածի սկզբունքն իր կիրառումն է ստացել ճյուղային, մասնավորապես՝ քրեադատավարական օրենսդրությամբ։ Այսպես՝ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածով սահմանվում է.

«1. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով։

2. Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը։ Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա։ Մեղադրանքի ապացուցման

և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարապվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

5. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր»:

Քրեադատավարական իրավունքի համատեքստում անմեղության կանխավարկածի սկզբունքը ապահովում է մեղադրյալի պաշտպանության իրավունքը և պաշտպանում նրան անհիմն մեղադրանքներից:

Չնայած այն հանգամանքին, որ տվյալ սկզբունքը ձևակերպված է որպես քրեադատավարական, նրա գործողությունը չի սահմանափակվում միայն քրեական դատավարության շրջանակներում և անձին անմեղ համարելու պահանջը վերաբերում է ոչ միայն քրեական դատավարությունն իրականացնող մարմիններին (քննիչ, դատախազ, դատարան), այլև յուրաքանչյուր անձի:

Հարկ է նշել, որ անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանքի պահանջն առաջին հերթին վերաբերում է դատարանին՝ որպես գործն ըստ էության լուծող անկողմնակալ մարմնի:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գրականության մեջ անմեղության կանխավարկածի տեղի վերաբերյալ կան հստակ ձևավորված երկու իրարամերժ մոտեցումներ: Այսպես՝ որոշ հեղինակներ գտնում են, որ չի կարելի անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառել միայն քրեադատավարական իրավունքի համատեքստում, քանի որ այն համաիրավական սկզբունք է: Իսկ մյուս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ անմեղության կանխավարկածը միայն ճյուղային՝ քրեադատավարական սկզբունք է:

Այսպես՝ առաջին մոտեցման կողմնակիցներից է Տ.Ն. Ռադկոն, որն իր գրքում նշել է. «(...) չի կարելի անմեղության կանխավարկածի սկզբունքի նշանակությունը նվազեցնել միայն ճյուղային ըմբռնման, կիրառման, իրավունքի և գործընթացի նկատմամբ, ինչպես դա անում են առանձին

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԿԱՆ ՂԱՏՎՈՒՄ 2(106)2022

հեղինակներ, քանի որ տվյալ դրույթի կիրառման ոլորտը շատ մեծ է, հատկապես եթե հենվենք դրա սկզբնական և բազային իմաստի վրա¹»:

Վ.Ն. Կուդրյավցևը ևս գտնում է, որ անմեղության կանխավարկածը ոչ միայն պետք է կիրառվի քրեադատավարական իրավունքի համատեքստում, այլև՝ կարգապահական կամ վարչական իրավախախտումների համար պատասխանատվության բոլոր ձևերի: Ըստ հեղինակի՝ «(...) անմեղության կանխավարկածն իրենից ենթադրում է, որ իրավախախտման համար որևէ տույժ կիրառելուց առաջ պետք է ապացուցել, որ այն կատարվել է հենց այդ անձի կողմից: Դժվար չէ տեսնել, որ անմեղության կանխավարկածի մեջ իրենց արտացոլումն են գտնում ոչ միայն իրավական, այլև բարոյական, հումանիստական սկզբունքները (...)»²:

Նմանատիպ մոտեցում է ցուցաբերված նաև Վ. Մալախովի և Վ. Կոզակովի աշխատությունում: Մասնավորապես՝ հեղինակները գտնում են, որ «Անմեղության կանխավարկածը համաիրավական սկզբունք է, այսինքն՝ հատուկ է ոչ միայն քրեական իրավունքին և քրեական դատավարությանը»: Շարունակելով՝ հեղինակները նշում են. «(...) անմեղության կանխավարկածը պետք է դիտել որպես իրավունքի գրեթե յուրաքանչյուր ճյուղի ելակետային դրույթ³»:

Ռ.Խ. Յակուպովը ևս նշել է. «(...) անմեղության կանխավարկածն ունի ոչ թե ճյուղային, քրեադատավարական, այլ՝ համընդհանուր իրավական սկզբունքի նշանակություն, գործում է իրավունքի բոլոր ճյուղերում: Սահմանադրությունը հիմք է իրավունքի ոչ թե մեկ, այլ՝ բոլոր ճյուղերի զարգացման համար, և Սահմանադրության նորմերը պետք է ձևակերպվեն ընդհանուրի մակարդակում⁴»:

Մյուս մոտեցման կողմնակիցները, ընդհակառակը, անմեղության կանխավարկածի սկզբունքը դիտարկում են որպես միայն քրեական դատավարության, այսինքն՝ ճյուղային սկզբունք: Այդպիսի հեղինակ է օրինակ՝ Ա.Վ. Սմիրնովը, որը նշում է, որ անմեղության կանխավարկածը գործում է միայն քրեական դատավարությունում⁵:

¹Տե՛ս **Радько Т.Н.** Теория государства и права: Учеб. для вузов. - М., 2004:

²Տե՛ս **Кудрявцев В.Н.** Правовое поведение: норма и патология. - М.: Издательство «Наука», 1982. - էջ 250:

³Տե՛ս **Малахов В., Козаков В.** Теория государства и права: Учебное пособие для вузов. - М., 2002. - էջ 270:

⁴Տե՛ս **Якупов Р.Х.** Уголовный процесс: Учебник для вузов / Под ред. Галузо В.Н. - М.: Издательство "Зерцало", 1998. - էջ 70-71:

⁵Տե՛ս **Смирнов А.В.** Модели уголовного процесса. - СПб.: «Наука», ООО «Издательство «Альфа», 2000. - էջ 61:

Կարծում ենք, որ անմեղության կանխավարկածի սկզբունքն առաջին հերթին սահմանադրաիրավական սկզբունք է, քանի որ ամրագրված է Սահմանադրությամբ, երաշխավորվում/պաշտպանվում է դրանով, և անմեղության կանխավարկածի ցանկացած խախտում հանգեցնում է անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով սահմանված իրավունքի խախտման: Սակայն վերոգրյալը հիմք չէ այն համընդհանուր իրավական սկզբունքների շարքին դասելու համար, քանի որ համընդհանուր իրավական սկզբունքները գործում են իրավունքի բոլոր ճյուղերում, ինչպես օրինակ՝ օրենքի իմացության կանխավարկածը: Իսկ ինչ վերաբերում է անմեղության կանխավարկածին, ապա, մեր կարծիքով, այն պետք է դասվի միջճյուղային սկզբունքների դասին, քանի որ առավելապես կիրառվում է քրեական դատավարության ոլորտում, սակայն կարող է կիրառվել իրավաբանական պատասխանատվության այլ տեսակներում ևս՝ **հաշվի առնելով պատասխանատվության կոնկրետ տեսակի առանձնահատկությունները**: Ինչպես իրավագիտորեն նշել է Ա. Ղամբարյանը՝ անմեղության կանխավարկածն առավելապես կիրառելի է հանրային իրավական պատասխանատվությունների դեպքում՝ տվյալ ոլորտի առանձնահատկությունները հաշվի առնելով¹: Այսինքն՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է կիրառվի ոչ միայն քրեական դատավարության ոլորտում, այլև, օրինակ՝ վարչադատավարական օրենսդրությամբ, հարկային օրենսդրությամբ և այլն: Եթե որևէ սկզբունք կիրառվում է ոչ թե իրավունքի բոլոր ճյուղերում, այլ դրանցից մի քանիսում (տվյալ պարագայում հանրային իրավական պատասխանատվություն նախատեսող իրավունքի ճյուղերում), ապա այն դասվում է միջճյուղային սկզբունքների շարքին: Ստացվում է, որ անմեղության կանխավարկածը կարող է կիրառվել անձին ոչ միայն քրեական պատասխանատվության ենթարկելիս, այլև իրավաբանական պատասխանատվության այլ տեսակների դեպքում, օրինակ՝ վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելիս:

Ասվածը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ կան ոլորտներ, որտեղ ոչ միայն չի կարող կիրառվել անմեղության կանխավարկածը, այլև դրան հակառակ՝ կիրառվում է մեղավորության կանխավարկածը, օրինակ՝ քաղաքացիական իրավունքում: Արձանագրենք նաև, որ մեղավորության կանխավարկածը կիրառվում է այլ ոլորտներում ևս, և նույնիսկ որոշակի դեպքերում նաև քրեական դատավարությունում: Այսպես,

¹Տե՛ս **Ղամբարյան Ա.** Անմեղության կանխավարկածը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Երևան, 2005, էջ 10:

օրինակ, «Սալաբյակուն ընդդեմ Ֆրանսիայի» գործով դիմողը պահատուփի առաքում էր իրականացրել, որը բեռնավորված էր թմրամիջոցներով¹: Վերոգրյալ գործով առաջ էր քաշվել անմեղության կանխավարկածի հարց, սակայն ՄԻԵԴ-ը հանգել է այն եզրակացության, որ քանի որ ազգային դատարանն իրավիճակի գնահատման հարցում ազատ է եղել, հաշվի է առել գործի փաստերը և վերացրել է ավելի վաղ ընդունված դատավճիռներից մեկը, ապա 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի խախտվել:

Մեկ այլ՝ «Փամ Հոանգն /Pham Hoang/ ընդդեմ Ֆրանսիայի» գործով կասկածյալը ձերբակալվել էր Ֆրանսիայի սահմանին՝ թմրամիջոց տեղափոխելիս: Եվրոպական դատարանը, քննելով տվյալ գործը, արձանագրել է, որ անթույլատրելի ոչինչ չկա այն ենթադրությունում, թե անձը, որը տիրապետում է ընդհանուր առմամբ արգելված որևէ բանի, պարտավոր է բավարար չափով բացատրել այդ փաստը, հակառակ դեպքում նա կճանաչվի մեղավոր²:

Ստացվում է, որ ի հակադրություն անմեղության կանխավարկածի, իրավագիտությանը հայտնի է նաև մեղավորության կանխավարկածը: Վերջինս առավելապես կիրառվում է քաղաքացիաիրավական հարաբերություններում և կարող է կիրառվել նաև այլ իրավահարաբերություններում:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը կարևոր նշանակություն ունի անձի պատվի, արժանապատվության, իրավունքների և ազատությունների ապահովման համար:

Վերոգրյալի հիման վրա առաջարկվում է անմեղության կանխավարկածի սկզբունքի նեղ մեկնաբանությունից դուրս գալ՝ դրա կիրառման ոլորտը տարածելով հանրային իրավական պատասխանատվության այլ ոլորտների վրա ևս: Օրինակ՝ ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի³ 1.5 հոդվածով ամրագրված է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ իր մեջ ներառելով նաև դրա տարրերը: Համաձայն վերոգրյալ հոդվածի 2-րդ կետի՝ «այն անձը, որի նկատմամբ վարվում է վարչական իրավախախտման գործով վարույթը, համարվում է

¹Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Սալաբյակուն ընդդեմ Ֆրանսիայի գործ. 1988 թ. հոկտեմբերի 7:

²Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Փամ Հոանգն ընդդեմ Ֆրանսիայի գործը // Pham Hoang v. France. //Ser.A. N 243. 25. 09. 1992:

³Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսգրքը, ընդունվել է Պետական դումայի կողմից՝ 20.12.2001// <https://docs.cntd.ru/document/901807667> :

անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենսգրքով նախատեսված կարգով՝ գործը քննած դատավորի, մարմնի, պաշտոնատար անձի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ»։ Իսկ 3-րդ և 4-րդ կետերով սահմանված են անմեղության կանխավարկածի տարրերը, մասնավորապես՝ վարչական պատասխանատվության ենթակա անձը չպետք է ապացուցի իր անմեղությունը (որոշակի բացառություններով) և չփարատված կասկածները լուծվում են իրավաբանական վարչական իրավախախտում կատարած անձի։ Կարծում ենք, որ անմեղության կանխավարկածի վերաբերյալ դրույթ պետք է սահմանել նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով։ Սակայն չպետք է սահմանափակվել միայն ՎԻՎՕ-ով և անհրաժեշտ է նմանատիպ դրույթներ սահմանել հանրային իրավական պատասխանատվություն նախատեսող իրավունքի այլ ճյուղերում ևս, օրինակ՝ հարկային օրենսդրությամբ։ Նշենք, որ ՌԴ օրենսդիրը հարկային օրենսդրությամբ ևս սահմանել է անմեղության կանխավարկածի սկզբունքը։ Մասնավորապես՝ ՌԴ հարկային օրենսգրքի 108-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանվում է. «Անձը համարվում է անմեղ հարկային իրավախախտման համար, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել դաշնային օրենքով նախատեսված կարգով։ Պատասխանատվության ենթարկվող անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը հարկային իրավախախտման կատարման մեջ։ Հարկային իրավախախտման փաստը և դրա կատարման մեջ անձի մեղավորությունը վկայող հանգամանքների ապացուցման պարտականությունը դրվում է հարկային մարմինների վրա։ Պատասխանատվության ենթարկվող անձի մեղավորության կասկածները մեկնաբանվում են իրավաբանական առումով ևս»¹։

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ կարծում ենք՝ Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված «հանցագործության համար մեղադրվողը» բառակապակցությունն էականորեն նեղացնում է այդ հոդվածի կիրառման ոլորտը՝ սահմանափակվելով միայն քրեաիրավական և քրեադատավարական ոլորտներով։ Առաջարկվում է այդ սկզբունքի կիրառման ոլորտի լայնացումն առաջին հերթին սահմանել հենց ՀՀ սահմանադրությամբ։ Այսպես՝ առաջարկվում է Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված «հանցագործության համար մեղադրվողը» բառակապակցությունը փոխարինել «հանրային իրավական պատասխանատվության ենթակա անձը» բառակապակցությամբ։

¹Տե՛ս Ռուսաստանի Դաշնության հարկային օրենսգիրք, ընդունվել է Պետական դումայի կողմից՝ 16.07.1988 թվականին // http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_19671/ :

МЕСТО И РОЛЬ ПРЕЗУМПЦИИ НЕВИНОВНОСТИ В СИСТЕМЕ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА

Аннотация

Данная статья посвящена месту и роли презумпции невиновности в системе конституционного права. В статье была предпринята попытка изучить подходы к месту презумпции невиновности в юриспруденции, выявить ее место и роль среди общих принципов, выявить место презумпции невиновности в системе конституционного права.

Ключевые слова: презумпция невиновности, презумпция невиновности как конституционно-правовой принцип, место презумпции невиновности в системе права, принцип презумпции невиновности, общеправовой принцип, межотраслевой принцип, отраслевой принцип.

THE PLACE AND ROLE OF THE PRESUMPTION OF INNOCENCE IN THE SYSTEM OF CONSTITUTIONAL LAW

Annotation

This article is devoted to the place and role of the presumption of innocence in the system of constitutional law. The article attempts to study the approaches regarding the place of the presumption of innocence in jurisprudence, to identify its place and role among general principles, as well as to identify the place of the presumption of innocence in the system of constitutional law.

Keywords: presumption of innocence, presumption of innocence as a constitutional and legal principle, the place of presumption of innocence in the legal system, the principle of presumption of innocence, general legal principle, intersectoral principle, sectoral principle.



ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և հասարակագիտության ֆակուլտետի հասարակագիտության բաժնի մագիստրոս

**ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ
ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԿԱՅԱՑՄԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է պառլամենտարիզմի ձևավորման և զարգացման հիմնախնդիրներին: Ուսումնասիրությունների շրջանակում ներկայացվել է պառլամենտարիզմի էությունը, ինչպես նաև շեշտադրվել են պառլամենտական կառավարման ձևի առանձնահատկությունները: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ժողովրդավարական, իրավական պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում արդի գլոբալացման համատեքստում, անհրաժեշտ են խորքային գիտահետազոտական աշխատանքներ՝ նվիրված պառլամենտարիզմի զարգացման հիմնախնդիրներին:

Հիմնաբառեր. պառլամենտ, կառավարություն, Սահմանադրություն, Ազգային ժողով, Աշտիշատ, կառավարման համակարգ, Գերագույն խորհուրդ, Աղվանաց ժողով, օրենքի գերակայություն, օրենսդիր մարմին:

Հասարակության ներսում հասարակական ինքնագիտակցության աստիճանական ձևավորումն ու հարաբերությունների զարգացումներն անհրաժեշտաբար պահանջ առաջադրեցին, որ կանոնակարգվեն այդ հարաբերությունները, դրվեն որոշակի սահմանափակումների մեջ և հասարակության մեջ առաջացող հակասությունները լուծելու համար ճիշտ ուղղորդեն հասարակական հարաբերությունները, այլ ոչ թե բռնի ուժով լուծեն առաջացած հակասությունները: Նման ինստիտուտները

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 2(106)2022

պատմության որոշակի փուլում անվանվեցին պառլամենտներ, որոնք դարձան երկրի օրենսդիր մարմինները:

Պառլամենտի նախատիպերը ձևավորվել են դեռևս Հին Հունաստանում և Հռոմում, որոնք հանդես էին գալիս որպես օրենքներ մշակող մարմիններ, որոնք իրավագիտության պատմության մեջ հայտնի են «400-ի խորհուրդ» (ըստ հունական կառավարիչ Սոլոնի): Հետագայում այն վերափոխվեց և ստացավ «500-ի խորհուրդ» անվանումը: Դասական պառլամենտի և պառլամենտարիզմի վառ դրսևորում է անգլիական պառլամենտը (1265թ.), որն առաջին պետական առանձնացված մարմինն է: Այնուհետև պառլամենտը դրսևորվեց Եվրոպայում 17-18-րդ դարերում, որի հիման վրա կազմավորվեցին (Ֆրանսիայի, Իսպանիայի, Շվեյցարիայի) օրենսդրական մարմինները: Միջնադարում այդ մարմիններն ընդհանուր ձևով անվանվում էին պառլամենտ (պառլամենտ բառն ունի լատինական ծագում): Պառլամենտ բառը սկզբնական շրջանում օգտագործվում էր վանականների հետճաշյա զրույց անունով: Վեստմինստերյան ստատուսն առաջին անգամ օգտագործեց ֆրանսերեն Parleament բառը՝ Անգլիայի «Մեծ խորհուրդը» անվանելու համար: Պառլամենտ բառը բառացի թարգմանությամբ նշանակում է «խոսարան», իսկ մենք՝ հայերս, այն կոչել ենք խոսելատեղ կամ խորհրդարան: Պառլամենտարիզմը տեսություն է, որի հետազոտման առանցքում խորհրդարանի և օրենսդիր իշխանության ուսումնասիրումն է իշխանությունների տարանջատման սկզբունքի, սոցիալական տարբեր շերտերի և խմբերի շահերի պաշտպանվածության, քաղաքական բազմակարծության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանության պայմաններում¹:

Եվրոպայում, երբ թևածեց «բուրժուական հեղափոխությունների ժամանակաշրջան», երբ ակնհայտ էր իշխող կարգերի կործանման փաստը, այդ ժամանակ անհրաժեշտություն ստեղծվեց փնտրել պետական կառավարման ավելի նոր ժողովրդավարական ձևեր: Հենց այդ ժամանակաշրջանում էլ մշակվեց պառլամենտարիզմի հայեցակարգը՝ որպես հասարակության ղեկավարման հատուկ համակարգ: Համաձայն մշակված հայեցակարգի՝ պետության կառուցակարգում կարևորագույն տեղը հատկացվում է պառլամենտին, որպես համապետական ներկայացուցչական մարմին, որի գլխավոր գործառույթը օրենսդիր իշխանության իրականացումն է:

Պառլամենտարիզմի վերաբերյալ շատ հետաքրքրական սահմանում է տալիս Ա.Դ. Կերիմովը՝ շեշտը դնելով դրա գաղափարական

¹Տե՛ս **Титов С.А.** История парламентаризма в России. - М., 2015. - С. 88:

աշխարհայացքային տեսանկյան վրա: Ըստ նրա՝ պառլամենտարիզմը պետական մեխանիզմների գործառության վերաբերյալ համոզմունքների, մոտեցումների, արժեքային կողմնորոշումների համակարգ է¹: Կարծում ենք, որ առավել նպատակահարմար է շեշտը դնել «պառլամենտարիզմ» ֆենոմենի համալիր բնույթի վրա՝ այն դիտարկելով գործող քաղաքական համակարգի ամբողջության լույսի ներքո, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների փոխկապվածության ու փոխկախվածության համատեքստում: Նման չափավոր դիրքորոշում է արտահայտում ֆրանսիացի քաղաքագետ Գ. Բյուրդոն: Ըստ նրա՝ պառլամենտարիզմը հիմնված է 3 սկզբունքների վրա՝ իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի հավասարության, դրանց միջև համագործակցության և միմյանց փոխվերահսկելու մեխանիզմների առկայության վրա: «Ո՛չ կառավարությունը, ո՛չ խորհրդարանը չպետք է օգտվեն անսահմանափակ լիազորություններից, դրանց հավասարակշռությունը պետք է երաշխավորվի հասարակական կարծիքի վերահսկողությամբ»², - գրում է նա:

Այսօր գրականության մեջ պառլամենտարիզմի երկու հիմնական ընկալում է առանձնացվում՝ լայն և նեղ: Լայն իմաստով պառլամենտարիզմը դիտվում է որպես տեսություն՝ յուրաքանչյուր քաղաքական համակարգի մասին, որում կենտրոնական դիրք է գրավում խորհրդարանը: Նեղ իմաստով այն շատ հաճախ նույնացվում է և կապվում ժողովրդավարության հետ: Նման մոտեցման կողմնակիցներ են նաև ավստրիացի իրավագետ Հ. Քելզենը և ռուս իրավագետ Խուբները:

Ըստ առաջինի՝ ժողովրդավարության գաղափարը կարող է իրականություն դառնալ միայն պառլամենտարիզմի պայմաններում: Երկրորդի համաձայն՝ պառլամենտարիզմի մասին կարելի է խոսել միայն դեմոկրատական կառավարման համատեքստում³:

Պատմական վավերագրերը վկայում են, որ Հայաստանում պառլամենտական տարրերն ի հայտ են եկել դեռևս սկսած 4-5-րդ դարերից: Այդ փաստի վառ ապացույցն են Աշտիշատի, Աղվանաց ժողովները, որոնց ընթացքում որոշումները կայացվել են մեծամասնության ձայների հիման վրա: Պառլամենտական կառավարման համակարգը մի շարք ծրագրեր է մշակել, որոնցից հատկանշական է Հնդկաստանում մշակված ծրագիրը,

¹Տե՛ս **Керимов А.Д.** Понимание парламентаризма и перспективы его развития в России // “Гражданин и право”, 2002, № 7-8:

²Տե՛ս **Керимов А.А.** Современный парламентаризм: особенности и проблемы развития // Сер. “Политология. Религиоведение”, “Изд. Иркутск. гос. ун-та”. 2015, Т. 11. - С. 35:

³Տե՛ս **Хубнер Е.** Парламентаризм и представительная система. - Полис, 1992, №3. - С. 40-44:

որտեղ մանրամասնորեն նկարագրված է կառավարման համակարգ, իսկ օրենսդիր մարմինը կրում էր «Հայոց տուն» անունը: Այնուհետև պառլամենտական կառավարման ձևը դրսևորվեց 1918-1920թթ. Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարման մեջ: Հայաստանի Հանրապետությունը 2015թ. սահմանադրությամբ անցավ նոր կառավարման համակարգի: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը կառավարման ձևով դասվում է պառլամենտական երկրների դասին:

Տարբեր երկրներում և տարբեր ժողովուրդների մեջ պատմական նույն ժամանակաշրջանում հասարակության կառավարման կազմակերպման ձևը տարբեր է եղել: Սակայն, դրանով հանդերձ՝ գոյություն ունեն նաև զարգացման ընդհանուր օրինաչափություններ, որոնք բնորոշ են տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունեցող երկու տարբեր պետություններին: Պետությունների դասակարգման առաջին փորձերը կատարվել են դեռևս հին Հունաստանում (Պլատոն, Արիստոտել, Պոլիբյոս, Կիկերոն և այլոք)¹: Հայկական պետականության պատմաիրավական անցյալի ուսումնասիրությունն ակնբերն է դարձնում, որ Հայաստանը նույնպես անմասն չի մնացել պետության կառավարման ձևերի փնտրտուքներից և կրառումից: Հայկական իրականության մեջ ազգային ժողովներ կամ աշխարհաժողովներ գումարվել են դեռևս վաղնջական ժամանակներից:

Այսպես՝ 449թ. Արտաշատում գումարված հայ ավագանու՝ նախարարների և բարձրաստիճան հոգևորականների ժողովը մերժողական պատասխան տվեց Հազկերտ 2-րդի՝ զրադաշտականություն պարտադրող հրովարտակին: Հայկական վաղնջական օրենքները հիմնականում ներկայացված են եղել եկեղեցական կանոնակարգերի միջոցով: «Կանոնագիրք Հայոց»-ը միջնադարյան իրավաբանական փաստաթղթերի պաշտոնական ժողովածու էր, որ բաղկացած էր տարբեր բաժիններից:

Իհարկե այս ամենը հեռու է բուն պառլամենտարիզմից, որը ենթադրում է ժողովրդի կողմից ազատ ընտրությունների միջոցով ընտրված և մշտապես գործող ներկայացուցչական օրենսդիր մարմին, սակայն գումարված նմանատիպ ժողովներն իրենց մեջ ներառում են պառլամենտարիզմին բնորոշ որոշակի տարրեր: Գումարված ժողովների ժամանակ քննարկվում էին պետականության առջև ծառայած հարցեր, որոնք բախտորոշ նշանակություն ունեին պետության համար: Պառլամենտական կառավարման համակարգ գաղափարը հայ իրականության մեջ սկզբնա-

¹Տե՛ս Շահվերդյան Վ., Եսայան Ա. Գլխ. Խմբ. №114. Հայկական պառլամենտարիզմի զարգացման պատմաիրավական ընթացքը, «Օրինականություն» ՀՀ Դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես: Եր., «Աստղիկ Գրատուն», 2019:

վորվեց դեռ 18-րդ դարում: Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունում առաջին անգամ հեղինակը ձևակերպեց սահմանադրական հանրապետության և խորհրդարանական կառավարման համակարգի մասին առաջին դրույթները: Վերջինիս մեջ ներկայացված էր ապագա անկախ Հայաստանի հասարակական-պետական կառուցվածքը, կառավարման մարմինների ստեղծման կարգը և իրավասությունները, քաղաքացիների իրավունքները և պարտականությունները, զինված ուժերի ձևավորման կարգը:

«Որոգայթ փառաց»-ը ստեղծվելիք հայկական պետության սահմանադրության նախագիծ էր և պետք է միս ու արյուն ստանար պետականության հատատման պայմաններում: Այստեղ հեղինակը ներկայացնում է այնպիսի առաջադեմ գաղափարներ, ինչպիսիք են ժողովրդաիշխանությունը, պառլամենտարիզմը, օրենքի գերակայությունը, համընդհանուր ընտրական իրավունքը, մարդու բնական իրավունքների ճանաչումը, պետության և եկեղեցու տարանջատումը, դավանանքի ազատությունը, ազատ տեղաշարժի իրավունքը, բնակարանի անձեռնմխելիությունը և այլն¹:

Շուրջ 1500 տարի առաջ հայ իրականության մեջ ասպարեզ եկավ ուշագրավ մի փաստաթուղթ, որն անվանվել է «Սահմանադրություն կանոնական»։ այն ընդունվել է և հաստատվել Մեծ Հայքի Ուտիք նահանգի Աղվեն բնակավայրում տեղի ունեցած ժողովում²:

Վաչագան բարեպաշտի նախաձեռնությամբ ընդունվեց «Սահմանադրություն կանոնականը», որն իր նախապատրաստման և ընդունման եղանակով, հետապնդած նպատակներով և հասարակական հարաբերությունների կարգավորման առանձնահատկություններով զգալի ընդհանրություններ ունի սահմանադրության վերաբերյալ ժամանակակից պատկերացումների հետ: Այս սահմանադրության առանձնահատկությունն այն է, որ դա ոչ թե մի հզոր իշխանավորի, թագավորի հեղինակած օրենքների ժողովածու է, այլ ժողովրդի բոլոր կարող ուժերի մասնակցությամբ ստեղծված բոլոր խավերի ներկայացուցիչների կողմից քննարկված և հավանության արժանացած հիմնավորապես նոր բնույթի իրավական մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ:

¹Տե՛ս **Թորոսյան Վ.Ա.** Իրավաքաղաքական մտքի պատմություն, Ոստմնական ձեռնարկ, Եր., Ոսկան Երևանցի, 2021թ., էջ 233:

²Տե՛ս **Գրիգորյան Հ.** Լրաբեր հասարակական գիտություններ, Հայ Սահմանադրականության պատմական զարգացման հիմնական ուղեհիշները, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Եր., 2019թ. էջ 68:

Պատմական իրողություն է, որ այդ սահմանադրության վրա կատարված աշխատանքն իրականացվել է այն բոլոր փուլերով, որոնք հատուկ են ժամանակակից սահմանադրություններին ու օրենքներին՝ ընդհանրապես՝

- նախապատրաստման կամ նախագծի մշակման,
- քննարկման,
- ընդունման փուլեր¹:

Նախապատրաստական փուլում Վաչագանը դիմում է Հայոց աշխարհի նշանավոր անձանց, խորհուրդ հարցնում նրանցից, ստանում իրեն հուզող հարցերի վերաբերյալ դրական պատասխաններ: Երկրորդ փուլի իրականացումը կազմակերպվել էր այնպես, որ միայն դարեր անց արմատավորվեցին քաղաքակիրթ աշխարհի տարբեր երկրների սահմանադրությունների ընդունման գործընթացում:

Ժողովրդավարական համակարգերի կատարյալ կայացման համար առաջնային դերակատարում ունի պառլամենտարիզմը: Հարկ է նշել, որ պառլամենտարիզմը պետության ժողովրդավարության և իրավական պետություն կայացման համար հիմնական ուղենիշերից մեկն է: Ոմանք ուղղակիորեն հայտարարում են, որ պառլամենտարիզմը ոչ այլ ինչ է, քան «պետականորեն կազմակերպված հասարակության համաժողովրդավարական, համաքաղաքակրթական արժեքների մասին պատկերացումների համակարգ²»:

Պառլամենտի ինստիտուտը պետականաշինության այնպիսի համակարգ է, որը բնութագրվում է օրենսդիր և գործադիր գործառույթների հստակ տարբերակումով՝ օրենսդիր մարմնի՝ ի դեմ պառլամենտի, մյուս պետական մարմինների նկատմամբ առաջնահերթության սկզբունքով: Ընդհանուր առմամբ, այս ինստիտուտը ներկայանում է երեք հիմնարար սկզբունքներով.

➤ Ներկայացուցչական մարմնի՝ պառլամենտի կենտրոնական դիրքն արտահայտվում է պետության ներքին և արտաքին քաղաքականության ուղենշման մեջ:

➤ Կառավարությունը ձևավորվում է ղեկավարող քաղաքական կուսակցության կամ կոալիցիայի միջոցով, որը պառլամենտում կազմում է մեծամասնություն:

¹Տե՛ս նույն տեղում, էջ 68:

²Տե՛ս **Тихомиров Д.В.** Становление и развитие российского парламентаризма (исторический аспект). Автореферат дисс. канд. ист. наук – М., 1997. – С. 9.

➤ Կառավարությունը պատասխանատվություն է կրում պառլամենտի առջև:

➤ Կառավարության անբավարար գործունեության պարագայում՝ պառլամենտը կարող է անվստահություն հայտնել ամբողջ կառավարությանը կամ որևէ նախարարի և պահանջել նրա հրաժարականը: Պառլամենտն իր գործառույթների իրականացման նպատակով լիազորված է անհրաժեշտ իրավասություններով: Ըստ այդմ՝ պառլամենտները կարելի է բաժանել երեք խմբի.

➤ բացարձակ որոշակի իրավասություն ունեցող պառլամենտներ.

➤ բացարձակ անորոշ իրավասություն ունեցող պառլամենտներ,

➤ համեմատաբար որոշակի իրավասություն ունեցող պառլամենտներ:

Սակայն ժամանակակից պառլամենտը, տարիների ընթացքում զարգանալով, ձեռք է բերել մի շարք բնորոշ գծեր, որոնց շնորհիվ կազմում է հասարակության կառավարման կարևորագույն և յուրահատուկ համակարգ:

Պառլամենտական կառավարման համակարգն ունի մի շարք հատկանիշներ, որոնցով տարբերվում է գոյություն ունեցող կառավարման այլ մոդելներից: Օրինակ՝ նախագահական և պառլամենտական կառավարման ձևերն ունեն տարբերիչ մի քանի հատկանիշներ, բայց դրանց միջև գլխավոր տարբերությունն այն է, թե Կառավարությունն ում առջև է քաղաքական պատասխանատվություն կրում: Մյուս կողմից՝ կարևոր է Կառավարության կազմավորման կարգը, էական է այստեղ, թե այն ում կողմից է ձևավորվում: Իրավական տեսակետից, պառլամենտական հանրապետությունում ևս կառավարությունը կազմավորվում է նախագահի ակտով: Այն երկրներում, որտեղ նախագահը և՛ իրավաբանորեն, և՛ փաստացի ինքնուրույն է որոշում վարչապետի և նախարարների նշանակման հարցերը, պառլամենտի ստորին պալատն իրավունք չունի արձակելու Կառավարությանը կամ անվստահության քվե տալու նրա նախարարներին, այս դեպքում խոսքը գնում է նախագահական հանրապետությունների մասին: Իսկ եթե Կառավարությունը ձևավորվում է պառլամենտի կողմից, ապա պատասխանատվություն է կրում պառլամենտի և ոչ թե նախագահի առաջ: Հետևաբար, այդ երկիրը պառլամենտական հանրապետություն է¹:

ՍԱԿՄԱՆԱՐԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(106)2022

¹Տե՛ս Հակոբյան Հ.Հ. Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում: Երևան, Տիգրան Մեծ, 2007, էջ 36:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ պառլամենտական կառավարման համակարգի ծիլերը գոյություն են ունեցել մեր հասարակության մեջ դեռևս վաղ ժամանակներից և զարգանալով հիմք են դարձել ներկայիս պառլամենտական կառավարման համակարգի համար: Պառլամենտարիզմը՝ որպես կառավարման համակարգ, անցել է պատմական բարդ ուղի և ներկայումս եվրոպական մի շարք երկրների սահմանադրությունների հիմքում ընկած է պառլամենտարիզմը: Պառլամենտական կառավարման համակարգը այլ կառավարման համակարգերից տարբերվում է իր առավելություններով: Պառլամենտական կառավարման համակարգի առավելությունը կայանում է նրա՝ օրենսդրական համակարգում պառլամենտին տրվող լայն լիազորությունների մեջ: Սակայն ժամանակակից պառլամենտը, տարիների ընթացքում զարգանալով, ձեռք է բերել մի շարք բնորոշ գծեր, որոնց շնորհիվ կազմում է հասարակության կառավարման կարևորագույն և յուրահատուկ համակարգ:

ЭТАПЫ РАЗВИТИЯ ПАРЛАМЕНТА И КОНСТИТУЦИОННЫЕ ПРЕДПОСЫЛКИ СТАНОВЛЕНИЯ ПАРЛАМЕНТАРИЗМА В АРМЕНИИ

Аннотация

Институт парламента представляет собой систему государственного строительства, для которой характерно четкое разграничение законодательной и исполнительной функций, при этом законодательная власть отдает приоритет парламенту над другими государственными органами. Статья посвящена вопросам становления и развития парламентаризма. В рамках исследований была представлена сущность парламентаризма, а также подчеркнуты особенности парламентского правления. Исследования показали, что в демократических, правовых государствах, в том числе в Республике Армения, в условиях современной глобализации необходима глубокая исследовательская работа по вопросам развития парламентаризма. Таким образом, обобщая тему, можно сделать вывод, что ростки парламентской системы правления существовали в нашем обществе с древних времен, эволюционируя и становясь основой для нынешней парламентской

системы правления. Парламентаризм как система правления прошел сложный исторический путь, в настоящее время конституции ряда европейских стран основаны на парламентаризме.

Ключевые слова: Парламент, Правительство, Конституция, Национальное собрание, Аштишат, система правления, Верховный совет, Агванское собрание, верховенство закона, законодательный орган.

STAGES OF PARLIAMENT DEVELOPMENT AND CONSTITUTIONAL AND LEGISLATIVE PRECONDITIONS FOR ESTABLISHMENT OF PARLIAMENTARISM IN ARMENIA

Annotation

The institution of parliament is a system of state-building that is characterized by a clear distinction between legislative and executive functions, with the legislature prioritizing parliament over other state bodies. The article is dedicated to the issues of formation and development of parliamentarism. The essence of parliamentarism was presented in the framework of the studies, as well as the peculiarities of the parliamentary government were emphasized. Studies have shown that in democratic and legal states, including the Republic of Armenia, in the context of modern globalization, in-depth research work is needed on the issues of the development of parliamentarism. Thus, summarizing the topic, we can conclude that the sprouts of the parliamentary system of government have existed in our society since ancient times, evolving and becoming the basis for the current parliamentary system of government. Parliamentarism, as a system of government has gone through a difficult historical path; currently the constitutions of a number of European countries are based on parliamentarism.

Keywords: Parliament, Government, Constitution, National Assembly, Ashtishat, system of government, Supreme Council, Aghvanats Assembly, rule of law, legislature.



ԿԱՌԼՈՍ ԱԴԱՄՅԱՆ

*Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի և քաղաքականության
ինստիտուտի «Իրավագիտություն»
ուղղվածության 3-րդ կուրսի ուսանող*

**ՏԱՐԱԾԱԿԱՆ ՄԵԿՆԱՔԱՆՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԵՎ ԴՐԱ
ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ՕՐԵՆՔԻ ԱՆԱԼՈԳԻԱՅԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԵՏ**

Ամփոփագիր: Սույն հոդվածում ներկայացվում է տարածական մեկնաբանման ինստիտուտը, մասնավորապես քրեաիրավական հարաբերություններում՝ ելնելով այդ ոլորտում տարածական մեկնաբանման գործածության առավել խնդրահարույց լինելուց: Հեղինակն անդրադառնում է նշված ինստիտուտի կարևորությանն ու անհրաժեշտությանը ներկայիս հասարակական հարաբերություններում: Դիտարկվում են օրենքի «տառ» և օրենքի «ոգի» հասկացությունները: Քննարկվում են հարցեր՝ կապված տարածական մեկնաբանման և օրենքի անալոգիայի սահմանազատման հետ: Վերջիններս ըստ Հեղինակի ինքնուրույն ինստիտուտներ են և չպետք է նույնականացվեն:

Հիմնաբառեր. տարածական մեկնաբանում, օրենքի անալոգիա, ինստիտուտ, օրենքի «տառ», օրենքի «ոգի»:

Ներածություն. Հասարակական հարաբերությունների անդադար զարգացումը պահանջում է օրենսդրից համապատասխան իրավական կարգավորում, որը տարբեր՝ օբյեկտիվ կամ/և սուբյեկտիվ պատճառներով տեղի է ունենում ոչ պատշաճ կերպով: Օրենսդրական տեխնիկայի կանոնների խախտման արդյունքում ընդունվում են նորմեր, որոնց տառացի մեկնաբանումը թույլ չի տալիս հասնել օրենսդրի կամքը հետապնդող նպատակներին: Իրավական նորմերի մեկնաբանումը ճիշտ իրացման

2(106)2022
 ◆ ՍԵՆԵԿՆԱՆ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 129

համար իրավակիրառողի ամենաբարդ գործողություններից մեկն է և, ինչպես իրավագիտորեն նշել է Պ.Ի. Լյուբլինսկին, «մեկնաբանումը պետք է համարել իրավաբանի հիմնական խնդիրը»¹: Բացի հասարակական հարաբերությունների բազմազանությունից, օրենսդրական տեխնիկայի կանոնների խախտումից, օրենսդրական բացերից և տարբեր լեզվաբանական խնդիրներից կան նաև բլանկետային նորմեր, գնահատողական հասկացություններ, պատմական (օրինակ՝ նախկին հասարակական հարաբերությունների փոխարինումը այլ հասարակական հարաբերություններով) և այլ բնույթի հանգամանքներ, որոնց համակցությամբ հաճախ բավականին բարդ է լինում պարզել օրենքի «ոգին»²: Շատ դեպքերում օրենսդրի կողմից ձևավորված տեքստն ամբողջովին չի արտահայտում այն միտքը, որը վերջինս ցանկանում էր զետեղել նորմի բովանդակությունում՝ արտահայտելով այդ միտքն առանց դրա ծավալը ամբողջովին սպառելու: Այլ կերպ ասած՝ օրենքի «տառը» չի համապատասխանում օրենքի «ոգուն»³, որի դեպքում առաջանում է անհրաժեշտություն օրենքում տեղ գտած տեքստը համապատասխանեցնել օրենսդրի կամքին՝ մեկնաբանելով այն տարածական:

1. *Տարածական մեկնաբանման ինստիտուտը*. Ներկայումս չեն ավարտվում վեճերն այն մասին, թե մեկնաբանման արդյունքում ինչն է առավել կարևոր՝ պարզել օրենքի «տառը», թե՛ «ոգին»:

Օրենքի «ոգի» ընդունված է համարել օրենսդրի կամքը, որը նա ցանկանում էր արտահայտել օրենքի ընդունման ժամանակ, իսկ օրենքի «տառը» օրենսդրի կամքի այն մասնիկն է, որը նա անմիջականորեն նյութականացրել է օրենքում⁴: Օրենքի «ոգին» փնտրելու անհրաժեշտության կողմնակիցները (Պ.Ս. Յանի, Մ.Ա. Կաուիման, Ի. Վ. Միխայիլովսկի և այլոք) կարծում են, որ մեկնաբանողը տեքստի մեկնաբանման ժամանակ պետք է գտնի իրավաստեղծի միտքը և, չնայած գրվածին, շարժվի նրա կամքին համապատասխան:

Այս ամենի հիման վրա և ի նպաստ, իրավագիտության պատմության ընթացքում մշակվել են մեկնաբանման տարբեր տեսակներ և կանոններ,

¹Люблинский П.И. Техника, толкование и казуалистика уголовного кодекса. - Пг., 1917. - С. 139.

²Яни П.С. Вопросы толкования уголовного закона // Вестн. Моск. УН-ТА. СЕР. 11. ПРАВО. 2012. N 4. - С. 56.

³Яни П.С. Вопросы толкования уголовного закона // Вестн. Моск. УН-ТА. СЕР. 11. ПРАВО. 2012. N 4. - С. 56.

⁴Тихонова С.С. К вопросу о направлениях толкования уголовного закона // Вектор науки ТГУ. N 2(2) 2010. - С. 157.

որոնցից առանձնակի հետաքրքրություն է առաջացնում տարածական մեկնաբանման ինստիտուտը:

Տարածական մեկնաբանումը հայտնի է իրավագիտությանը դեռ վաղ ժամանակներից, մեկնաբանման այս տեսակը կիրառել են դեռևս հռոմեական իրավաբանները¹: Այս ինստիտուտի մասին դիպուկ պարզաբանում է տալիս Վ. Մ. Իվլոստովը՝ ասելով. «Եթե պարզվի, որ նորմի հեղինակը խմբագրել է իր միտքը սահմանափակ, ապա նորմի կիրառման շրջանակները անհրաժեշտ է տարածել իր տեքստուալ խմբագրությունից դուրս, որպեսզի իրացնել այն կամքն, որն օրենսդրիչը ցանկանում էր այդտեղ արտահայտել»²:

Որոշ իրավագետներ ենթադրում էին, որ նորմի իրական իմաստը, այսինքն օրենքի «ոգին», պետք է պարզել ոչ միայն սույն նորմի մեկնաբանման միջոցով, այլ նաև՝ նորմի հետ կապված այլ նյութերի համակցությամբ: Ըստ Ե.Վ. Վասկովսկիի գոյություն ունեն «արտաքին աղբյուրներ», որոնց ուսումնասիրության արդյունքում կարելի է պարզել օրենսդրի իրական կամքը³: Նրանց շարքին են դասվում օրենքի կամ նորմի հիմնավորումները, օրենքն ընդունողների քննարկումները, մեմուարները և այլ պատմաիրավական նշանակություն ունեցող փաստաթղթերը⁴: Հայաստանի իրականությունում Վասկովսկիի նշած «արտաքին աղբյուրներից» ամենավառ օրինակը ՀՀ Ազգային ժողովի ինտերնետային կայքում գետեղված նիստերի սղագրություններն են, որոնց ուսումնասիրության արդյունքում կարելի է հնարավորինս ճշգրիտ պարզել օրենսդրի կամքը:

Ռուսաստանի և Հայաստանի պոզիտիվ իրավունքը նախատեսում է մեկնաբանման որոշակի տեսակներ և կանոններ, սակայն տարածական մեկնաբանման ինստիտուտն ուղղակիորեն երկու տեղում էլ բացակայում է, այսինքն չկա որևէ իրավանորմ, որը կնախատեսեր մեկնաբանման այս տեսակը և դրա կիրառումը: Հատկանշական է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին»⁵ ՀՀ օրենքը սահմանում է, որ «նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով

¹Тихонравов Е.Ю. Понятие расширительного и ограничительного толкования права // Вестник ВГУ. Серия: Право. 13.09.2015 г. – С. 7.

²Хвостов В.М. Опыт характеристики понятий aequitas и aequum jus в римской классической юриспруденции. – М., 1895. – С. 15.

³Васьковский Е. В. Указ. Соч. – С. 57.

⁴Նույն տեղում:

⁵ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի» մասին. ՀՕ-180-Ն:

դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանած չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունները կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»¹: Վերոնշյալ դրույթը վերլուծելիս պարզ է դառնում, որ ներկայիս պոզիտիվ իրավունքով սահմանված մեկնաբանման կանոնների որոշ էլեմենտներ հատուկ են տարածական մեկնաբանման ինստիտուտին, այսինքն օրենսդիրը թույլ է տալիս դուրս գալ նորմի տեքստի սահմաններից՝ օրինակ, նշելով, որ նորմը մեկնաբանվում է ըստ այն ընդունող մարմնի նպատակի կամ մեկնաբանման հնարավորություն տալով իրավունքի սկզբունքների հիման վրա: ՀՀ պոզիտիվ իրավունքն այս հարցում կատարել է «մեկ քայլ առաջ»՝ համեմատած 2002թ.-ի ապրիլի 3-ին ընդունված «Իրավական ակտերի մասին» օրենքի, որը չէր նախատեսում այս տեսակ կարգավորումներ և եթե ոչ ձևական առումով, ապա ըստ էության, օրենսդրական մակարդակով թույլատրելի է դարձնում նորմը մեկնաբանել տարածական՝ օրենսդրի կամքն իրացնելու համար:

Իհարկե, այսպիսի «հնարավորությունը» կիրառելի է ոչ բոլոր իրավունքի ճյուղերում, մասնավորապես.

«Անալոգիայի կիրառման արգելքին Վճռաբեկ դատարանը (այսուհետ նան՝ ՎԴ) անդրադարձել է իր մի շարք նախադեպային որոշումներում՝ սահմանելով, որ քրեական օրենքը չի կարող **տարածական** (մգեցված է հեղինակի կողմից) մեկնաբանվել և կիրառվել անալոգիայով (օրինակաՆության սկզբունքի և քրեական օրենքն անալոգիայով կիրառելու արգելքի մասին mutatis mutandis տե՛ս Վարուժան Գազիկի Ավետիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20–ի թիվ ՍԴ3/0013/01/11 և Երվանդ Ռաֆիկի Մելքոնյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի թվականի մայիսի 11–ի թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշումները)»²: Ինչպես նշել է ՎԴ–ն՝ այս ամենը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտած այն դիրքորոշմանը, ըստ որի՝ «քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի **տարածական** (մգեցված է հեղինակի կողմից) մեկնաբանության ենթարկվի, այսինքն՝ կիրառվի անալոգիայով»³: Վերլուծելով այս մոտեցումը՝ կարելի է գալ

¹Կարեն Զարիկյան, Իրավական նորմերի մեկնաբանում. Տեքստ vs Իրավունք. Ysu.am. 25.05.2020, էջ 11:

²ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը քրեական գործ թիվ ՏԴ/0071/01/13 մասին:

³Kokkinakis v. Greece ՄԻԵԴ վճիռ. Գանգատ թիվ 14307/88, (կետ 52):

եզրակացության, որ ՎԴ-ն, կիսելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) տվյալ գործով ամրագրված մոտեցումը, արգելում է տարածական մեկնաբանման և օրենքի անալոգիայի կիրառումը արարքը որակելիս և նույնականացնում է դրանք: Վերջինս, մեր համոզմամբ, ճիշտ մոտեցում չէ (այս խնդիրը դիտարկում ենք սույն աշխատության 2-րդ մասում):

Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված վերոնշյալ նախադեպային իրավունքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի (05.05.2021թ.) ուժի մեջ մտնելու հետ, որոշակի մասով կորցրել է իր ուժը, քանի որ արդեն նոր օրենսդրական կարգավորումներով օրենքն անձի վիճակը բարելավելու դեպքում թույլ է տալիս ընդհանուր մասի անալոգիայի կիրառում¹, և եթե շարժվենք ՎԴ-ի տրամաբանությամբ, հետևաբար տարածական մեկնաբանումը նույնպես անձի կարգավիճակը բարելավելու դեպքում կհամարվի թույլատրելի:

ՌԴ իրավակիրառ պրակտիկայում կան դեպքեր, երբ դատարանները դիմում են տարածական մեկնաբանմանը արարքը որակելիս: Օրինակ՝ ՌԴ Գերագույն դատարանի պլենումն իր որոշումներից մեկում ՌԴ Քրեական օրենսգրքի 174-174.1 հոդվածը (այլ անձանց կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցների կամ այլ գույքի հետ ֆինանսական գործառնություններ (մզեցված է հեղինակի կողմից) և այլ գործարքներ (մզեցված է հեղինակի կողմից) կատարելը՝ նշված դրամական միջոցների կամ այլ գույքի տիրապետմանը, օգտագործմանը և տնօրինմանը իրավաչափ տեսք տալու համար) մեկնաբանել է տարածական² նշելով, որ «օրենքի իմաստով պատասխանատվությունը սույն հոդվածով վրա է հասնում նաև այն դեպքերում, երբ մեղավոր անձի կողմից կատարվել է ընդամենը մեկ դրամային գործարք կամ մեկ գործարք՝ հանցավոր ճանապարհով ստացված գումարների կամ սեփականության միջոցով»³: Ինչքան էլ որ վերոնշյալ պրակտիկան վիճելի է (չեն կարող տարածական մեկնաբանման ենթարկվել այն նորմերը, որոնք նախատեսում են պատասխանատվություն⁴), կարծում ենք, որ

¹ՀՀ Քրեական օրենսգրք. 05.05.2021. ՀՕ-199-Ն. 4-րդ հոդված, մաս 3-րդ:

²Постановление ВС РФ от 18 ноября 2004 г. N 23 “О судебной практике по делам о незаконном предпринимательстве и легализации (отмывании) денежных средств или иного имущества, приобретенных преступным путем”.

³Նույն տեղում:

⁴Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Հեղ. Խումբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, 3-րդ լրամշակված հրատ., Եր., «Լուսաբաց հրատարակչատուն», 2018թ., էջ 533:

Դատարանը դիմել է մեկնաբանման այս մեթոդին, որպեսզի չխաթարի իրավակիրառ գործընթացը և պայքարը հանցավորության դեմ՝ համապատասխանեցնելով օրենքի «տառը» օրենսդրի՝ այս ոլորտում հանցավորության դեմ պայքարի կամքին: Վերոնշյալ պրակտիկան պայմանավորված է նաև Ռուսաստանի Դաշնության պատմաիրավական անցյալով: Ռուսական մինչհեղափոխական քրեական օրենսդրությունը ոչ միայն չէր արգելում տարածական մեկնաբանումը և անալոգիայի կիրառումը, այլ նաև խրախուսում և պահանջում էր դա դատական մարմիններից, իսկ հետհեղափոխական օրենսդրությունը այդպիսի պրակտիկան համարում էր թույլատրելի¹:

Տարածական մեկնաբանման ինստիտուտի համատեքստում իրենց տեղն են գրավում գնահատողական հասկացությունները, իրավաբանական, տնտեսական, բժշկական և այլ ոլորտների հասկացությունները, որոնց քրեական օրենքում օգտագործելու ժամանակ օրենսդիրը որոշ դեպքերում նկատի է ունեցել ավելին, քան նախատեսված է այդ բառերի՝ բացատրական բառարաններում տեղ գտած կամ հասարակության կողմից դրանց ընկալման ծավալով և իմաստով: Օրինակ՝ ՌԴ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածը² գողությունը բացատրում է որպես ուրիշի սեփականության գաղտնի հափշտակություն: Սակայն այստեղ «գաղտնի» բառը չի գործածվել ուղիղ իմաստով, քանի որ գողությունը՝ կատարված այն անձի մոտ, ով չէր կարող գիտակցել կատարվածը, նույնպես կհամարվի գաղտնի: Նորմատիվ իրավական ակտերում կան նաև այս տեսակ ձևակերպումներ. «այլ ծանր հետևանքներ, և այլն...», որոնց դեպքում իրավակիրառողը նորից կարող է առերեսվել այնպիսի իրավիճակի, երբ պետք է դիմել տարածական մեկնաբանմանը:

Ներկայումս գործող ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսվում է. «սպանությունը մի խումբ անձանց կողմից (մզեցված է հեղինակի կողմից) պատժվում է ազատազրկմամբ...»³: Սպանության նորմի դիսպոզիցիան չի նախատեսում որպես հանցանքը ծանրացնող հանգամանք սպանությունը կատարելը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, որի հանրային վտանգավորությունն ավելի բարձր է, քան մի խումբ անձանց կողմից կատարվածը: Տառացի մեկնաբանմամբ ստացվում է, որ նույն արարքը, ունենալով հանրային վտանգավորության ավելի բարձր դրսևորում, պետք

¹Сабитов Т.Р. Применение уголовного закона по аналогии: история и современность // Вестник НГУ. Серия: Право. 2006. Т. 2. Вып. 1. - С. 142-149.

²Уголовный кодекс РФ (Ред. от 28.06.2022).

³ՀՀ Քրեական օրենսգիրք. 05.05.2021. ՀՕ-199-Ն:

է մնա, ծանրացնող հանգամանքի մասով, անպատիժ: Չնայած ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի. «Եթե սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելը՝ առանց կոնկրետացնելու դրա ձևը, և մյուս ձևերը նախատեսված չեն որպես առավել ծանրացնող հանգամանք, ապա արարքը որակվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով նախատեսված ծանրացնող հանգամանքով...»¹ կարգավորումներին, ըստ որի պետք է որակել այնպես, ինչպես «գրված է» հանցանքը նախատեսող նորմում, կարծում ենք՝ 105-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում նշված «մի խումբ անձանց կողմից» հասկացությունը հարկավոր է մեկնաբանել տարածական (հասկանալով վերջինիս տակ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցակցության ձևը նույնպես)՝ ոչ միայն ելնելով «քրեական օրենքի ոգին» և այն նպատակը, որին վերջինս ծառայում է ապահովելու պահանջից, այլ նաև բնական տրամաբանությունից:

Ինչպես տեսնում ենք, Մ.Մ. Սպերանսկիի մոտեցումը քրեական օրենքի բացառապես տառացի մեկնաբանման վերաբերյալ² ամբողջովին չի կարող «բավարարել» ներկայիս հասարակական հարաբերությունները: Ակնհայտ է տարածական մեկնաբանման ինստիտուտի անհրաժեշտությունը, ոչ միայն քրեաիրավական ոլորտում (ներառյալ՝ քրեական դատավարության և քրեակատարողական իրավունքները), այլ նաև ամբողջ իրավական համակարգում:

2. Տարածական մեկնաբանման և օրենքի անալոգիայի սահմանազատման հարցերը. Սահմանազատման խնդիրը հաճախ է հանդիսանում գիտական վեճերի առարկա, հատկապես, երբ սահմանազատման օբյեկտները (տարածական մեկնաբանման ինստիտուտը և օրենքի անալոգիայի ինստիտուտը) նախնական ուսումնասիրության ընթացքում թվում են միանման:

Հատկանշական է, որ վերոնշյալ ինստիտուտների նույնականացման մոտեցումը հատուկ է ոչ միայն դատարաններին (տե՛ս վերևում ՎԴ-ի և ՄԻԵԴ-ի մոտեցումը), այլ նաև շատ իրավագետների և իրավակիրառների (օր.՝ Ա. Էսթրինի, Մ.Դ. Շարգորոդսկի և այլոք³), ինչը, հեղինակիս խորին

¹Նույն տեղից:

²Фойницкий И. Я. Курс уголовного судопроизводства. Т.1. - СПб, 1912. - С. 170, 173.

³Эстрин А. Аналогия (ст. 10 Уголовного кодекса) // Ежеднев. сов. юстиции. 1922. N 28.

համոզմամբ, չի արտահայտում այդ ինստիտուտների էությունը և երկու իրարից տարբեր երևույթները դնում է մեկ հարթության վրա:

Տվյալ ինստիտուտների նույնականացմամբ ի հայտ են գալիս հետևյալ խնդիրները.

Ա. մեկնաբանման մեթոդն ընկալվում է որպես օրենսդրական բացի լրացման միջոց, այսինքն օրենսդրի կամքն իրացնելուն ուղղված «գործիքը» (տարածական մեկնաբանման ինստիտուտը) հավասարվում է օրենքի բացթողումը շտկելու «գործիքի» հետ,

Բ. տարածական մեկնաբանման ինստիտուտի վրա ինքնաբերաբար տարածվում են օրենքի անալոգիայի նկատմամբ գործող արգելքներ¹,

Գ. կորչում է գիտական հետաքրքրությունը և այս՝ առանձին ուղղություններով գիտական հետազոտություններ կատարելու պոտենցիալը:

Այս ամենի համատեքստում առաջանում են հարցեր: Օրինակ՝ ինչպե՞ս են հարաբերակցվում հետևյալ ինստիտուտները, ինչպե՞ս տարանջատել դրանք և որտե՞ղ է այն սահմանը, երբ տարածական մեկնաբանումը վերածում է օրենքի անալոգիայի:

Չնայած այն բանին, որ տարածական մեկնաբանման և օրենքի անալոգիայի ինստիտուտների նպատակը մեկն է՝ լրացնել օրենքի տեքստը, սակայն յուրաքանչյուրը դա անում է յուրովի: Մենք առանձնացնում ենք վերջիններիս հարաբերակցության երկու իրավիճակ: Առաջին դեպքում առկա չէ նորմ, որը կկարգավորեր հասարակական հարաբերությունները և իրավակիրառողի առջև դրված է խնդիր՝ կարգավորել դրանք: Այս դեպքում կիրառելի է օրենքի անալոգիան, այլ ոչ թե տարածական մեկնաբանումը, քանի որ բացակայում է այն նորմը, որն անհրաժեշտ կլիներ մեկնաբանել: Մեկնաբանման օբյեկտի բացակայությունը բացառում է տարածական մեկնաբանման հնարավորությունը: Այս իրավիճակում սահմանազատման և կիրառելիության հարցը չի առաջացնում լուրջ խնդիրներ: Երկրորդ դեպքում առկա է հասարակական հարաբերությունները կարգավորող նորմը, սակայն վերջինս դա կատարում է թերի՝ չկարգավորելով իրավակիրառողի և նորմի գործողությունը կրողի միջև հարաբերությունները: Այստեղ առաջանում է հարց՝ կիրառել տարածական մեկնաբանումը, թե՞ օրենքի անալոգիան: Հարցի պատասխանը կախված է այն բանից, թե օրենսդիրը օրենքի տեքստը կազմելիս ցանկացե՞լ է արդյոք ընդգրկել որոշակի հասարակական հարաբերություններ, սակայն դա օրենսդրի մոտ չի ստացվել նյութականացնել, թե՞ օրենսդիրը օբյեկտիվ կամ/և սուբյեկտիվ

ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(106)2022

¹ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը քրեական գործ թիվ ՏԳ/0071/01/13 մասին:

պատճառներով թույլ է տվել նախնական օրենսդրական բաց կամ այն ծագել է հետագա օրենսդրական բացի տեսքով: Լուծումը հետևյալն է. եթե օրենսդիրն իր կամքն ամբողջովին չի նյութականացրել, ապա պետք է կիրառել տարածական մեկնաբանումը՝ օրենքի «տառը» օրենքի «ոգուս» համապատասխանեցնելու համար: Եթե օրենսդիրը թույլ է տվել օրենսդրական բաց, ապա այստեղ կիրառելի է օրենքի անալոգիան (իրավական բացը լրացնելու տեսքով), քանի որ օրենսդրական բացի առկայությունը պայմանավորված չէ օրենսդրի կամքի նյութականացման խնդրով, այն պայմանավորված է օրենսդրի սխալի կամ հասարակական հարաբերությունների զարգացման հետ:

Ելնելով վերոնշյալից՝ կարող ենք ամրագրել հետևյալը. տարածական մեկնաբանման և օրենքի անալոգիայի կիրառման սահմանազատման հիմքը պայմանավորված է օրենքում առկա խնդիրներով՝ օրենսդրի կամքի ոչ լրիվ նյութականացմամբ կամ օրենսդրական բացի տեսքով:

Նորմը տարածական մեկնաբանելիս պետք է դրսևորել զգուշավորություն: Օրենքի տեքստն օրենսդրի կամքին համապատասխանեցնելիս պետք է դուրս չգալ օրենսդրի կամքի սահմաններից, հակառակ դեպքում տարածական մեկնաբանումը կվերաժվի օրենքի անալոգիայի: Օրինակ՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասում թվարկվում են դատախազական ակտերը. **«դատախազական ակտ՝** որոշում, հրաման, կարգադրություն, միջնորդագիր, հանձնարարական, հանձնարարություն.»։ Սույն հոդվածի «դատախազական ակտ» ձևակերպումը պետք է մեկնաբանել տարածական՝ դրա տակ հասկանալով նաև դատախազական ակտերի այլ տեսակները, քանի որ դատախազական ակտերի տեսակները քանակական առումով մի քանի անգամ գերազանցում են սույն հոդվածում թվարկվածներին¹: Այս նորմից դուրս գոյություն ունեցող դատախազական ակտերը Հեղինակները դուրս են բերել այլ՝ միաժամանակ (մոտավոր) կամ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ընդունված, դատավարական օրենսգրքերից, ինչը վկայում է օրենսդրի կամքի (դատախազական ակտերի բազմատեսակ լինելու, բացի «Դատախազության մասին» ՀՀ օրենքում թվարկվածներից) առկայության մասին: Եթե բացակայեին օրենսդրի կամքի առկայության մասին վկայող այլ իրավական ակտերը, ապա

¹Աղամյան Կ., Յուզբաշյան Ս., Դատախազական ակտերը. Նրանց նշանակությունը և զարգացման հեռանկարը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, էջ 3-5:

դատախազական ակտերի տեսակների ընդլայնումը կհամարվեր օրենքի անալոգիա:

Եզրակացություններ.

Ա. Տարածական մեկնաբանման ինստիտուտն այն գործիքն է, որի միջոցով հնարավոր է օրենքի «տառը» համապատասխանեցնել օրենքի «ոգուն»:

Բ. Ներկայիս հասարակական հարաբերություններում ակնհայտ է տարածական մեկնաբանման անհրաժեշտությունն ու արդիականությունը:

Գ. Տարածական մեկնաբանումը և օրենքի անալոգիան տարբեր ինստիտուտներ են:

ИНСТИТУТ РАСШИРИТЕЛЬНОГО ТОЛКОВАНИЯ И ВОПРОСЫ ЕГО РАЗГРАНИЧЕНИЯ С ИНСТИТУТОМ АНАЛОГИИ ЗАКОНА

Аннотация

В данной работе представлен институт расширительного толкования, в частности, в уголовно-правовых отношениях, исходя из наиболее проблематичного характера использования расширительного толкования в этой области. Автор показывает важность и необходимость этого института в нынешних общественных отношениях. Рассматриваются понятия «буква» и «дух» закона. Обсуждаются вопросы, связанные с разграничением расширительного толкования и аналогии закона. Последние, по мнению автора, являются самостоятельными институтами и не должны быть отождествлены.

Ключевые слова: расширительное толкование, аналогия закона, институт, “буква” закона, “дух” закона.

INSTITUTION OF EXPANSIVE INTERPRETATION. ISSUES OF DIFFERENTIATION WITH THE INSTITUTION OF ANALOGY OF LAW

Annotation

This paper presents the institution of broad interpretation, in particular, in criminal law relations, based on the most problematic nature of the use of broad interpretation in this area. The Author shows the importance and necessity of this institution in the current public relations. The concepts of "letter" and "spirit" of the law are considered. The issues related to the differentiation of the broad interpretation and analogy of law are also discussed. The latter, according to the author, are independent institutions and should not be identified.

Keywords: broad interpretation, analogy of law, institution, "letter" of the law, "spirit" of the law.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ
2-Ի ԱԺՈ-Օ1-Ա ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

2(106)2022



Քաղ. Երևան

29 ապրիլի 2022թ.

ՏԵՂԵԿՎՈՐ



Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Վարդևանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի ԱԺՈ-01-Ա որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ալեն Սիմոնյանին Ազգային ժողովի նախագահ ընտրելու մասին ԱԺՈ-01-Ա որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2021 թվականի օգոստոսի 2-ին:

Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2021 թվականի օգոստոսի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի (այսուհետ՝ նաև ԱԺ) 2021 թվականի օգոստոսի 2-ին ընդունած ԱԺՈ-01-Ա որոշումը հակասում է Սահմանադրության 6, 49, 94, 96 և 104-րդ հոդվածներին:

Դիմողը գտնում է, որ ԱԺ նախագահի երեք թեկնածուներից երկուսի՝ իրենց կամքից անկախ բացակայության պայմաններում անցկացված ԱԺ նախագահի ընտրությունները չեն համապատասխանում Սահմանադրության 104-րդ հոդվածով նախատեսված կարգավորումներին: Սահմանադրության նշված հոդվածում «ընտրում է» եզրույթի օգտագործվելուց դիմողը եզրակացնում է, որ սահմանադիրն օգտագործել է «ընտրել» եզրույթը, որի սահմանադրաիրավական բովանդակությունն առնվազն փոխկապակցվում է որոշակիորեն Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական սկզբունքների հետ, քանի որ այլ սահմանադրաիրավական բովանդակություն «ընտրել» եզրույթի հետ չի կարող ողջամտորեն փոխկապակցվել և եզրահանգում է, որ ընտրական իրավունքի սկզբունքները տարածելի են նաև ԱԺ նախագահի ընտրությունների վրա, նշելով մասնավորապես, որ՝ «Նման պայմաններում պետք է պահպանվեն նվազագույն չափանիշներ այն է՝ ընդհանուր, հավասար, ազատ վավերապայմանները»: Ելնելով այն հանգամանքից, որ ԱԺ նախագահի երեք թեկնածուներից երկուսը ներկա չեն եղել ընտրություններին, և այդպիսով միայն մեկ թեկնածուն է ունեցել ելույթներ ունենալու, հարցերին պատասխանելու հնարավորություն, դիմողը եզրահանգում է, որ այդպիսով թեկնածուներից մեկն ունեցել է ակնհայտ

անհավասար պայմաններ մյուս երկու թեկնածուների նկատմամբ, և փաստացի չեն պահպանվել նաև ընդհանուր մոտեցումները փաստացի տեղի ունեցած ընտրությունների մասով: Արդյունքում դիմողը եզրահանգում է, որ ԱԺ նախագահի ընտրություններն իրականացվել են «ընտրվելուն» ներկայացվող սահմանադրական պահանջների ակնհայտ խախտմամբ՝ առանց հավասարության սկզբունքի որևէ ձևով պահպանման:

Դիմողը, նշելով, որ որևէ առնչություն չունի այն փաստը, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից ԱԺ-ում ներկայացվածությունը մեծամասնությունն է, և որ ցանկացած ընտրության պարագայում քաղաքական պատկանելիությունը որևէ իրավական նշանակություն, առավել ևս կաշկանդվածություն չի ներկայացնում, քանի որ պատգամավորն առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով, նկատում է, որ Արթուր Սարգսյանի և Մխիթար Զաքարյանի ելույթներ ունենալու հնարավորության և իրենց ծրագրային մոտեցումները ներկայացնելու դեպքում օբյեկտիվորեն հնարավոր էր, որ հենց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների կողմից ձայները կտրվեին երկու թեկնածուներից որևէ մեկին: Արդյունքում դիմողը գտնում է, որ կոնկրետ դեպքում պատգամավորները զրկված են եղել իրենց խղճով և համոզմունքներով առաջնորդվելու սահմանադրական երաշխիքներն իրացնելու հնարավորությունից:

Դիմողը նկատում է, որ ԱԺ նախագահի պաշտոնը և կարգավիճակը, դրա նկատմամբ հավակնությունը ենթադրում է նաև Սահմանադրության 49-րդ հոդվածի կարգավորման տիրույթ, ըստ այդմ՝ դիմողը գտնում է, որ ԱԺ նախագահի անցկացված ընտրությունները՝ թեկնածուներից երկուսի բացակայությամբ, խախտել են հավասարությունը՝ հանգեցնելով խտրականության: Արդյունքում դիմողը գտնում է, որ վիճարկվող որոշումն ընդունվել է Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված երաշխիքի խախտման պայմաններում:

Դիմողը, վերլուծելով Սահմանադրության 96-րդ հոդվածը, արձանագրում է, որ ԱԺ նախագահի թեկնածուների չներկայանալը և հավասար մրցակցություն չպահպանելը պայմանավորված էին նաև Սահմանադրության 96-րդ հոդվածով նախատեսված պատգամավորի անձեռնմխելիության խախտմամբ: Ըստ այդմ՝ դիմողը, նկատելով, որ վիճարկվող որոշումը բոլոր դեպքերում ուղղակիորեն առնչվել է հենց սահմանադրական նշյալ երաշխիքին և դրա խախտման պայմաններում է ընդունվել՝ ի թիվս այլ հիմնավորումների՝ խախտելով նաև սահմա-

նադրական նշված նորմը, եզրահանգում է, որ վիճարկվող որոշումը հակասում է Սահմանադրության 96-րդ հոդվածին:

Դիմողն անդրադառնում է նաև ԱԺ նախագահի ընտրություններին քվեաթերթիկում վրիպակի արդյունքում թեկնածուներից մեկի ազգանունը սխալ գրված լինելու պայմաններում ԱԺ նախագահի ընտրությունների քվեարկությունն ընդհատելու, այնուհետև վրիպակը շտկելուց հետո այն վերսկսելու հնարավորության հարցին՝ պնդելով, որ ընտրությունները չեն կարող պարզապես ընդհատվել և քվեաթերթիկ փոխվել, նորից քվեարկություն կազմակերպվել, որպիսի պայմաններում, ըստ դիմողի, խախտվել է Սահմանադրության 104-րդ հոդվածը:

Դիմողը նաև նկատում է, որ վերը նշված պայմաններում ԱԺ հաշվիչ հանձնախումբը չուներ ընտրությունների քվեարկությունն ընդհատելու և, հետո խնդիրը շտկելով, քվեարկությունը վերսկսելու լիազորություն, քանի որ առկա չէ, որևէ իրավական կառուցակարգ առ այն, որ հաշվիչ հանձնախումբը որոշի «նոր քվեարկություն», ըստ այդմ՝ դիմողը եզրակացրել է, որ վիճարկվող որոշումը հակասում է Սահմանադրության 6-րդ հոդվածին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը Սահմանադրության 104-րդ հոդվածի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Կանոնակարգ) մի շարք դրույթների վերլուծության հիման վրա արձանագրում է, որ ԱԺ նախագահի ընտրությունն անցկացվել է Սահմանադրության և Կանոնակարգի պահանջներին համապատասխան:

Պատասխանողը, անդրադառնալով ԱԺ նախագահի թեկնածուի բացակայությամբ ընտրություն անցկացնելու հարցին, նկատում է, որ ԱԺ նիստից թեկնածուի բացակայությունը կարող է պայմանավորված լինել մի շարք պատճառներով՝ ինչպես օրենքով սահմանված կարգով դատարանի որոշմամբ կալանավորված լինելով, այնպես, օրինակ, ծանր հիվանդության, վիրահատության, երկրից բացակայության: Միևնույն ժամանակ պատասխանողն արձանագրում է, որ թեկնածուի բացակայությունը հիմք չէ ընտրություն չանցկացնելու համար:

Պատասխանողը, անդրադառնալով Սահմանադրության 104-րդ հոդվածում տեղ գտած «ընտրվել» եզրույթի՝ Սահմանադրության 7-րդ հոդվածով նախատեսված ընտրական իրավունքի սկզբունքների հետ փոխկապակցվածության դիմողի դիտարկումներին, նկատում է, որ դրանք անհիմն են, քանի որ Սահմանադրության 7-րդ հոդվածը վերաբերում է ժողովրդի կողմից իր՝ անմիջական ժողովրդավարության իրավունքի

իրացմանը, այն է՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրություններին, ինչպես նաև հանրաքվեների անցկացմանը, իսկ Սահմանադրության 104-րդ հոդվածը վերաբերում է Ազգային ժողովի մարմինների, մասնավորապես՝ ԱԺ նախագահի, ԱԺ նախագահի տեղակալների և ԱԺ խորհրդի ձևավորմանը:

Պատասխանողը գտնում է, որ դիմումով պատգամավորի անձեռնմխելիության հարցն արհեստականորեն է փոխկապակցվել վիճարկվող Որոշման հետ, քանի որ դիմողը Որոշումը վիճարկում է ԱԺ նախագահի թեկնածուներին հավասար հնարավորություն չընձեռելու տեսանկյունից, մինչդեռ պատգամավորի անձեռնմխելիությունն ունի ընդհանուր բնույթ և վերաբերում է բոլոր պատգամավորներին, այլ ոչ թե միայն նրանց, ովքեր առաջադրվում են ԱԺ նախագահի պաշտոնում: Ավելին, պատասխանողն արձանագրում է, որ նման մոտեցման պարագայում դիմողի կողմից կարող է նույն հիմնավորումներով վիճարկվել ութերորդ գումարման ԱԺ ընդունած ցանկացած որոշում կամ օրենք՝ այն արհեստականորեն փոխկապակցելով պատգամավորի անձեռնմխելիության հետ և նշելով, որ պատգամավորները, որոնց նկատմամբ դատարանի որոշմամբ կիրառված է կալանավորումը որպես խափանման միջոց, զրկված են եղել հարցի քննարկմանը և քվեարկության մասնակցելու հնարավորությունից:

Ավելին, պատասխանողը, հիմք ընդունելով Կանոնակարգի 33-րդ հոդվածի 6-րդ մասը, նկատում է, որ Ազգային ժողովն առաջին նստաշրջանում չի կարող քննարկել այլ հարց, քան նախատեսված է Կանոնակարգով, այդ թվում՝ անձեռնմխելիության հետ կապված հարցերը:

Անդրադառնալով ընտրության նոր քվեարկություն կազմակերպելու հարցին՝ պատասխանողն արձանագրում է, որ այդ նոր քվեարկության կազմակերպումը կրել է տեխնիկական բնույթ, և որ քվեարկության գործընթացն ընդհատվել է թեկնածուներից մեկի ազգանվան մեջ տեղ գտած տառասխալի պատճառով: Ավելին, պատասխանողը գտնում է, որ հենց տեխնիկական վրիպակի հայտնաբերումից հետո քվեարկությունը չդադարեցնելը կարող էր հանգեցնել սահմանադրաիրավական խնդիրների: Պատասխանողը, անդրադառնալով վիճարկվող Որոշման՝ Սահմանադրության 6-րդ հոդվածի հետ հակասություն առաջացնելու հարցին, նկատում է, որ Սահմանադրությամբ ԱԺ նախագահի ընտրության ընթացակարգային կանոն նախատեսված չլինելու, օրենսդրի իրական կամքն անհնար դարձնող խախտումների բացակայության պայմաններում օրենսդրի կողմից ներկայացվող՝ «Ճ ժողովրդի կամքն արտահայտվել է պատգամավորների մեծամասնության կողմից՝ ԱԺ նախագահ ընտրելով»:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

Բացի դրանից, պատասխանողը նկատում է, որ դիմողը Որոշման սահմանադրականությունը վիճարկում է ոչ թե Որոշման և Սահմանադրության միջև ենթադրյալ հակասության համատեքստում, ինչը Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների համար պարտադիր պայման է, այլ դիմողի կողմից ներկայացված պնդումները հիմնականում ուղղված են Որոշման և Կանոնակարգի միջև առկա ենթադրյալ հակասությանը, ինչը թույլ է տալիս պատասխանողին եզրահանգելու, որ դիմումում առաջադրված հարցերը Սահմանադրական դատարանին ենթակա չեն:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ պատասխանողը խնդրում է վիճարկվող որոշումը ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

3. Սահմանադրաիրավական վեճի շրջանակները

Սույն գործով վիճարկվող Որոշման սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք Ազգային ժողովի նախագահի ընտրությունն Ազգային ժողովի նախագահի թեկնածուներից մեկի (մի քանիսի) ֆիզիկական բացակայության պայմաններում անցկացնելը համահունչ է Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասին և 104-րդ հոդվածի 1-ին մասին:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 2-րդ հոդվածն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Սահմանադրության 7-րդ հոդվածով սահմանված է, որ Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը:

Սահմանադրությունը, ամրագրելով կուսակցությունների սահմանադրական գործառույթը՝ ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելը (Սահմանադրության 8-րդ հոդվածի 3-րդ

2(106)2022
 ՍԵՆԵԿԱԿԻ
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 145

մաս) և սահմանելով Ազգային ժողովի ընտրությունների համամասնական ընտրակարգ (Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մաս), ստեղծում է այն սահմանադրական հիմքը, որի հիման վրա Ազգային ժողովի՝ ժողովրդի ներկայացուցչական մարմնի ընտրություններում ժողովուրդն իր ընտրությունը կատարի՝ հիմնվելով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դաշինքների) գաղափարախոսական կողմնորոշումների, ներկայացրած ծրագրային մոտեցումների, պետության զարգացման քաղաքական ուղենիշների վրա:

Ըստ այդմ՝ կոնկրետ կուսակցության (դաշինքի) օգտին քվեարկելիս ընտրողի նպատակն ու կամքն է կոնկրետ ուղղվածություն ունեցող քաղաքականության կենսագործումը՝ դրա իրագործումը հոչակած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի կողմից առաջարկված ցուցակում ներգրավված անձանց միջոցով: Հետևաբար՝ ընտրությունների արդյունքներով կանխորոշվում են խորհրդարանում այն քաղաքական ուժի (ուժերի) առկայությունն ու դրանց դասավորվածությունը, որի (որոնց) ծրագրային-գաղափարախոսական կողմնորոշումներին, մոտեցումներին և պատգամավորների թեկնածուներին ժողովուրդն իր քաղաքական նախապատվությունն է տվել:

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի հունիսի 30-ի ՍԴՈ-810 որոշմամբ նշել է, որ ժողովուրդը, ընտրությունների միջոցով որոշելով, թե խորհրդարանը քաղաքական ուժերի ինչպիսի հարաբերակցությամբ պետք է աշխատի, դրանով իսկ օրենսդիր մարմնին պատվիրակում է իրականացնել օրենսդրական գործունեություն՝ իր իսկ նախընտրած քաղաքական կողմնորոշումներին համապատասխան:

Այս դիտանկյունից Սահմանադրական դատարանը փաստում է, որ ժողովրդի՝ ազատ ընտրությունների արդյունքում արտահայտած կամքին և քաղաքական նախապատվությանը համահունչ ձևավորված մեծամասնությունն առանցքային ազդեցություն է ունենում օրենսդիր իշխանության իրականացման և Ազգային ժողովի՝ Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացման հարցում՝ կրելով դրա համար նաև քաղաքական պատասխանատվություն:

Ասվածը հավասարապես վերաբերելի է նաև Ազգային ժողովի մարմինների և, մասնավորապես, **Ազգային ժողովի նախագահի՝ Ազգային ժողովի բնականոն գործունեությունն ապահովողի և Ազգային ժողովը ներկայացնողի (Սահմանադրության 104-րդ հոդվածի 2-րդ մաս), ընտրության հարցում մեծամասնության ունեցած որոշիչ ազդեցությանը՝** որպես արդյունք հանգեցնելով Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցում որոշիչ ազդեցության հնարավորությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

Սակայն դա ամենևին չի նշանակում և ենթադրում Ազգային ժողովի փոքրամասնության իրավունքների անտեսում ընդհանրապես, որը պետք է բացառվի՝ այդ թվում նաև Ազգային ժողովի գործունեության ընդհանուր սկզբունքներից ելնելով (հարցերի ազատ քննարկման, դրանց կոլեկտիվ լուծման, քաղաքական բազմակարծության և այլն): Մեծամասնությունը պետական իշխանություն իրականացնելիս որոշումների կայացման գործընթացում պետք է ելնի նաև որոշակիացված մնայուն (անփոփոխ) հանրային շահից (բարիքից), հարգի փոքրամասնության իրավունքները՝ հաշվի առնելով նաև նրա շահերը՝ մասնավորապես՝ չնվազեցնելով և չզրկելով ապագայում փոքրամասնությանը մեծամասնություն դառնալու իրավունքից, որպիսի պայմաններում մեծամասնության որոշումը կարող է դիտարկվել իբրև ժողովրդի կամքն արտացոլող:

Թեև Ազգային ժողովի մարմինների ձևավորման հարցում փոքրամասնության իրավունքները հստակորեն երաշխավորված են նաև Սահմանադրության մակարդակում (օրինակ՝ Սահմանադրության մեջ ուղիղ ամրագրվել է Ազգային ժողովի մարմիններից Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկի ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից ընտրությունը (Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մաս), սակայն չի բացառվում նաև, որ Ազգային ժողովի մեծամասնությունը, ելնելով հանրային բարձր շահից, օրինակ, բևեռացված հասարակության համերաշխության ապահովման, հասարակության պառակտվածության վերացման, հասարակական հանդուրժողականության ապահովման անհրաժեշտությունից, որոշի **Ազգային ժողովի փոքրամասնության ներկայացուցչին ընտրել Ազգային ժողովի նախագահ, որպիսի պայմաններում մեծամասնության կայացրած այդպիսի որոշումը կունենա հստակ հասարակական-քաղաքական և ոչ թե պահի ազդեցությամբ ձևավորված հիմնավորումներ:**

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ նաև այս նկատառումները հաշվի առնելով է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 136-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել խմբակցությունների՝ Ազգային ժողովի նախագահի մեկական թեկնածու առաջադրելու իրավունքը: Ընդ որում՝ ելնելով նաև այն հանգամանքից, որ Ազգային ժողովի նախագահն ընտրվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մաս) և հաշվի առնելով, որ ընտրությունը կատարվում է գաղտնի քվեարկությամբ («Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 136-րդ հոդվածի 6-րդ մաս), ինչպես նաև Սահմանադրության 94-րդ հոդվածով երաշխավորված՝ պատգամավորի՝ ողջ ժողովրդին ներկայաց-

ներու, իր խղճով և համոզմունքներով առաջնորդվելու և հրամայական մանդատով կաշկանդված չլինելու սկզբունքը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Ազգային ժողովի նախագահի ընտրություններին վերը նկարագրված հասարակական-քաղաքական նախադրյալների, շարժառիթների, հիմքերի առկայության գնահատումն իրականացնում է յուրաքանչյուր պատգամավոր՝ այն արտացոլելով իր քվեարկությամբ:

4.2. Ազգային ժողովի նախագահի թեկնածուի ընտրության ընթացակարգային մանրամասները կանոնակարգող «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 135 և 136-րդ հոդվածներում տեղ գտած կարգավորումներից (մասնավորապես, որ Ազգային ժողովի նախագահի թեկնածուները հանդես են գալիս ելույթներով, իսկ ելույթներից հետո կարող են թեկնածուին հարցեր տրվել) թեև ենթադրելի է ներկայացված թեկնածուների, Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացին, որպես կանոն, ֆիզիկական մասնակցությունը, սակայն միևնույն ժամանակ **հիշատակված կարգավորումներից չի բխում և չի կարող բխեցվել, որ Ազգային ժողովի նախագահի ընտրությունը հնարավոր է միայն Ազգային ժողովի նախագահի բոլոր թեկնածուների ներկայության պայմաններում:** «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի կարգավորումներով ընդհանուր առմամբ չի բացառվում Ազգային ժողովի նախագահի ընտրությունը՝ թեկնածուի բացակայության պայմաններում: Այլ կերպ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը, սահմանելով Ազգային ժողովի նախագահի ընտրության ընթացակարգային մանրամասներ, առաջադրված թեկնածուի (թեկնածուների) ներկայությունն Ազգային ժողովի նախագահի ընտրությանը որպես պարտադիր պահանջ չի նախատեսում:

Ընդ որում՝ օրենսդրի այսպիսի մոտեցումն ունի հստակ տրամաբանություն և պայմանավորված է **նորընտիր Ազգային ժողովի անխաթար գործունեությունն ապահովելու բարձր հանրային շահով:** Մասնավորապես՝ նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանում, ի թիվս այլնի, լուծվում են Ազգային ժողովի մարմինների կազմավորման հարցերը («Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մաս, 7-րդ հոդվածի 1-ին մաս)՝ առանց որոնց ձևավորման կվտանգվեր նորընտիր Ազգային ժողովի կողմից իր գործառույթների և լիազորությունների իրականացումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից Ազգային ժողովի նախագահի թեկնածուի ֆիզիկական բացակայությունը (օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառներով) որպես Ազգային ժողովի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 2(106)2022

Նախագահի ընտրության պարտադիր ընթացակարգային պայման դիտարկելը կարող էր հանգեցնել Ազգային ժողովի նախագահի թեկնածուի բացակայության (օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառներով) պատճառով Ազգային ժողովի մարմինների ձևավորման գործընթացի արգելակմանը՝ որպես հետևանք հանգեցնելով ամբողջ Ազգային ժողովի գործունեության խաթարմանը: Այդ առնչությամբ պնդումը, թե պատգամավորի՝ իր կամքից անկախ բացակայության պայմաններում Ազգային ժողովի ընդունած ակտը (օրենք, որոշում և այլն) կարող էր և չընդունվել, եթե հիմք ընդունվեր, որ պատգամավորը, նիստերին մասնակցելով, ելույթներ ունենալով, էականորեն կարող էր ազդել համապատասխան որոշման ընդունման վրա, խիստ վերացական է և ոչ հիմնավոր: Ավելին, նշված մոտեցումը հնարավոր է վտանգի իրավական անվտանգությունն ընդհանրապես, քանզի դրա տրամաբանական շարունակությունը հանգեցնելու է թեկուզ մեկ պատգամավորի՝ իր կամքից անկախ (օրինակ՝ հիվանդության պատճառով նիստերին մասնակցելու անկարողությունը) **ԱԺ նիստերին բացակայության պայմաններում Ազգային ժողովի ընդունած ցանկացած ակտի լեգիտիմությունը կասկածի տակ դնելուն՝ ըստ էության նույնպես հանգեցնելով Ազգային ժողովի գործունեության կազմալուծմանը:**

Սահմանադրական դատարանը փաստում է, որ հենց այդպիսի մոտեցման բացառման և որպես հետևանք՝ նաև Ազգային ժողովի բնականոն գործունեությունն ապահովելու նկատառումներից ելնելով է, որ սահմանադիրն ուղղակիորեն ամրագրել է Ազգային ժողովի նիստերի իրավագործության (Սահմանադրության 102-րդ հոդված) և Ազգային ժողովի կողմից օրենքներ, որոշումներ, հայտարարություններ և ուղերձներ ընդունելու (Սահմանադրության 103-րդ հոդված), մասնավորապես՝ Ազգային ժողովի նախագահ ընտրելու համար պատգամավորների ձայների անհրաժեշտ/նվազագույն շեմ (Սահմանադրության 104-րդ հոդված)՝ համապատասխան որոշման ընդունման (Ազգային ժողովի նախագահի ընտրության) համար որպես այդպիսին սահմանելով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Նաև այս նկատառումներից ելնելով է, որ Ազգային ժողովի նախագահի թեկնածուների՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացին ֆիզիկական մասնակցությունը (ներկայությունը) և որպես արդյունք՝ նաև ելույթով հանդես գալը չի նախատեսվել որպես սահմանադրական պահանջ, որպիսի պայմաններում նշված դեպքում բացակայում է դիմողի կողմից վիճարկվող իրավական ակտի և Սահմանադրությամբ պահպանվող արժեքի/իրավունքի հնարավոր խախտման միջև պատճառահետևանքային կապը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 2(106)2022

Այդ առումով, Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի ապրիլի 19-ի ՍԴՈ-1454 որոշմամբ, վերահաստատելով իր նախկին դիրքորոշումը, արձանագրել է. «... ներկայում, ի թիվս այլնի, որևէ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման կամ գործողության մեջ դնելու՝ միայն Սահմանադրությամբ նախատեսված կարգն է սահմանադրականության գնահատման մասշտաբը, ինչպես նաև Ազգային ժողովի (Սահմանադրությամբ սպառիչ ամրագրված) լիազորությունների թույլատրելի սահմանները: Ուստի ակնհայտ է նաև, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէ գնահատել սահմանադրական կամ սովորական օրենքների և իր ընդդատությանը վերապահված այլ իրավական ակտերի ցանկացած խախտումներ կամ դրանց համապատասխանությունը ոչ թե Սահմանադրությանը, այլ դրանց նկատմամբ գերակայող այլ իրավական ակտերին: (...) Հակառակ դեպքում՝ Սահմանադրական դատարանը կարող է ծանրաբեռնվել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի ցանկացած խախտումով կամ, օրինակ՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ այլ նորմատիվ իրավական ակտերի՝ իրենց հանդեպ գերակայող նորմատիվ իրավական ակտին համապատասխանությունը որոշելու վերաբերյալ վեճերով, որոնք դուրս են Սահմանադրական դատարանի սահմանադրական գործառույթի շրջանակներից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի՝ իր կանոնակարգի համաձայն գործելու սահմանադրական պահանջի խախտումները կարող են Սահմանադրական դատարանում վեճի առարկա դառնալ միայն այդ խախտումների արդյունքում Սահմանադրության որևէ պահանջ խախտվելու դեպքերում:

Սահմանադրական դատարանը 2015 թվականի հուլիսի 7-ի՝ իր ՍԴՈ-1224 որոշմամբ արձանագրել է. «... օրենքների ընդունման խորհրդարանական կամ ինչպես հանրային քննարկումներ կազմակերպելու պահանջի տեսանկյունից՝ արտախորհրդարանական ընթացակարգերի ցանկացած խախտում անթույլատրելի է օրենսդրական գործընթացի շրջանակներում, անհամատեղելի է օրենսդրական գործունեության կանոնների հետ, սակայն այդ խախտումներից ոչ բոլորն են, որ սահմանադրականության տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունեն: Վերջիններիս թվին են դասվում միայն այն կանոնների խախտումները, որոնք ուղղակիորեն հիմնված են Սահմանադրության պահանջների վրա, օրենքի ընդունման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար որոշիչ նշանակություն ունեն և/կամ այնքան էական են, որ առանց այդ կանոնների պահպանման անհնար է

արժանահավատորեն որոշել օրենսդրի իրական կամքը, հետևաբար՝ նաև օրենսդրի կողմից ներկայացվող ՀՀ ժողովրդի կամքը»:

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա չեն վիճարկվող որոշումն ընդունելու՝ Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի այնպիսի խախտումներ, որոնք նշանակություն ունեն կամ կարող են ունենալ Ազգային ժողովի վիճարկվող որոշման ընդունման սահմանադրականության առումով:

4.3. Վերոնշյալի լույսի ներքո գնահատելով դիմողի պնդումները, թե Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի ԱԺՈ-01-Ա որոշումն ուղղակիորեն հակասում է Սահմանադրության 104-րդ հոդվածին այնքանով, որ չեն պահպանվել սահմանադրի կողմից երաշխավորված «ընտրելու» պահանջները, քանի որ Ազգային ժողովի նախագահի ընտրություններն անցկացվել են թեկնածուներից երկուսի՝ իրենց կամքից անկախ բացակայության պայմաններում, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնավոր չեն:

Մասնավորապես, Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» և «Հայաստան» խմբակցությունները որպես Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ առաջադրել են տվյալ պահին փաստացի անազատության մեջ գտնվող «Հայաստան» խմբակցության պատգամավորներին:

Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի նիստի սղագրության (<http://parliament.am/transcript.php?AgendaID=4215&day=02&month=08&year=2021&lang=arm#02.08.2021>) ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ **չեն ներկայացվել այն հնարավոր հասարակական-քաղաքական հիմքերը, շարժառիթները, որոնցով Ազգային ժողովի մեծամասնությունը, առաջնորդվելով հանրային բարձր շահով, խորհրդարանական փոքրամասնության ներկայացուցչին պետք է ընտրեր Ազգային ժողովի նախագահ:** Ավելին, սղագրությունից պարզ է դառնում, որ փաստացի անազատության մեջ գտնվող պատգամավորին Ազգային ժողովի նախագահի թեկնածու առաջադրելու պատճառ է նշվում «պատգամավորի ապօրինի անազատության մեջ» գտնվելու հանգամանքը, և որ խմբակցության կողմից փաստացի անազատության մեջ գտնվող պատգամավորի առաջադրումը կատարվել է նաև տվյալ «պատգամավորի ազատության համար պայքարելու» նկատառումներից ելնելով:

Վերոգրյալն ինքնին վկայում է, որ փաստացի անազատության մեջ գտնվող պատգամավորների առաջադրումը որպես Ազգային ժողովի նախագահի թեկնածու՝ հաշվի առնելով տվյալ պահին քրեական հետապնդման մարմինների, վարույթն իրականացնող մարմինների՝ մինչ

պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելն ազատությունից զրկված անձի՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելուց հետո նրա ազատությունից զրկելը պահպանելու (շարունակելու) համար Ազգային ժողովի համաձայնությունն ստանալը բացառող մեկնաբանությունը, Ազգային ժողովի նախագահի երկու թեկնածուների դատարանի որոշմամբ կալանավորված լինելու փաստը, ինչպես Ազգային ժողովի մեծամասնության, այնպես էլ ընդհանրապես Ազգային ժողովի կողմից դատարանի որոշմամբ անազատության մեջ գտնվող թեկնածուների՝ Ազգային ժողովի համապատասխան նիստին մասնակցությունն ապահովելուն ուղղված գործիքակազմի բացակայությունը, Ազգային ժողովի նախագահի ընտրության հնարավորությունը թեկնածուների բացակայության պայմաններում, կատարվել է այդ անձանց՝ Ազգային ժողովի նախագահի ընտրություններին ֆիզիկական մասնակցության անհնարինության գիտակցումով:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ **նշված պայմաններում փաստացի անազատության մեջ գտնվող պատգամավորներին որպես Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ առաջադրելն Ազգային ժողովի խմբակցությունների քաղաքական որոշումն էր/որոշումներն էին՝ Ազգային ժողովի նախագահի ընտրություններին մասնակցել թեկնածուների իրավունքների փաստացի սահմանափակվածության պայմաններում՝ այդպիսով իսկ ընդունելով նման մոտեցմամբ իրենց առաջադրած թեկնածուների Ազգային ժողովի նախագահի ընտրություններում հնարավոր բացասական արդյունքներ գրանցելու (Ազգային ժողովի նախագահ չընտրվելու) ռիսկերը:**

Այդպիսի պայմաններում անցկացված ընտրությունների արդյունքում՝ Ազգային ժողովի հաշվիչ հանձնախումբը քվեարկության արդյունքների ամփոփմամբ արձանագրել է պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնության (71 կողմ)՝ Ա. Սիմոնյանի օգտին քվեարկությունը, որի հիման վրա Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Ալեն Սիմոնյանին Ազգային ժողովի նախագահ ընտրելու մասին» թիվ ԱԺՈ-01-Ա որոշումը:

4.4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի այն փաստարկը, համաձայն որի՝ Սահմանադրության 104-րդ հոդվածում տեղ գտած «ընտրել» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը փոխկապակցվում է Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքների հետ, և որ դրանք, ըստ էության, պետք է տարածվեն նաև Ազգային ժողովի նախագահի ընտրությունների վրա, հիմնավոր չէ: Մասնավորապես՝ Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքները **եզրագծում են հանրաքվեների, Ազգային ժողովի, համայնքների**

ավագանիների ընտրությունների ընտրական իրավահարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման կառուցակարգերը և քննարկվող իրավահարաբերությանը վերաբերելի չեն:

Անդրադառնալով դիմողի այն դիտարկմանը, թե Ազգային ժողովի նախագահի պաշտոնը և կարգավիճակը, դրա նկատմամբ հավակնությունը ենթադրում է նաև Սահմանադրության 49-րդ հոդվածի կարգավորման տիրույթ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նկատել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով պետական պաշտոնները դասակարգված են հետևյալ տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական: Նույն օրենքի 5-րդ հոդվածով թվարկված են պետական քաղաքական պաշտոնները, դրանք են՝ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, փոխվարչապետների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, նախարարների և նրանց տեղակալների պաշտոնները: Ազգային ժողովի նախագահի թեկնածուն, լինելով պատգամավոր, իրացրել է ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իր իրավունքը, իսկ Ազգային ժողովի մարմինների, մասնավորապես՝ Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, հանձնաժողովների նախագահների պաշտոնները չեն տեղավորվում այդ տիրույթում, հետևաբար՝ դիմողի դիտարկումն այս մասով ևս հիմնավոր չէ:

4.5. Դիմողի այն փաստարկների առնչությամբ, որոնց համաձայն՝ վիճարկվող որոշումն ընդունվել է Սահմանադրության 96-րդ հոդվածով նախատեսված պատգամավորի անձեռնմխելիության երաշխիքի խախտման պայմաններում, Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է նշված հարցերին՝ մեկնաբանելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, և նույն օրենսգրքի 295-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելով: Նշված որոշման մեջ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, նշել է, որ պատգամավորը, բացի Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ նախատեսված բացառիկ դեպքերից, չի կարող զրկվել ազատությունից, եթե Ազգային ժողովը տվյալ հարցով չի տվել իր համաձայնությունը: Ազգային ժողովից բացի որևէ այլ մարմին իրավասու չէ հարթահարել պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող այդ պաշտպանությունը:

Սահմանադրական դատարանը, չնայած այն հանգամանքին, որ սույն որոշման 4.1-4.3. կետերի պատճառաբանություններով ինքնին հերքվում է

դիմողի նաև այս փաստարկը, այդուհանդերձ, վերահաստատելով իր՝ 2009 թվականի հոկտեմբերի 13-ի ՍԴՈ-833 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասի ուժով՝ Սահմանադրական դատարանի որոշումները, որպես կանոն, չունեն հետադարձ ուժ (բացառությամբ նույն հոդվածի 13-րդ և 15-րդ մասերով նախատեսված դեպքերի) և չեն տարածվում մինչև Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների, տվյալ դեպքում՝ վիճարկվող որոշման ընդունման հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ՝ ազդելով ԱժՈ-01-Ա որոշման իրավաչափության վրա:

4.6. Անդրադառնալով դիմումի շրջանակներում բարձրացված այն հարցին, թե արդյոք Ազգային ժողովի նախագահի ընտրություններին քվեաթերթիկում վրիպակի արդյունքում թեկնածուներից մեկի ազգանունը սխալ գրված լինելու պայմաններում Ազգային ժողովի նախագահի ընտրությունների քվեարկությունն ընդհատելու, այնուհետև վրիպակը շտկելուց հետո այն վերսկսելու հետևանքով խախտվում է Սահմանադրության 104-րդ հոդվածի պահանջը, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև դիմողը նշում է, որ այդ պայմաններում խախտվել է Սահմանադրության 104-րդ հոդվածը, սակայն, իր գնահատմամբ, այդպիսի խախտումը հիմնավորում է միայն պնդումով, թե ընտրությունները չեն կարող պարզապես ընդհատվել և քվեաթերթիկ փոխվել, նորից քվեարկություն կազմակերպվել: Դիմողը, նշյալ պնդումից զատ, չի հիմնավորում, թե քվեաթերթիկում վրիպակի արդյունքում քվեարկության ընդհատումը և որոշ ժամանակ անց այն վերսկսելն ինչ կերպ են խախտում Սահմանադրության 104-րդ հոդվածը, ուստի՝ դիմողն այս մասով պատշաճ չի հիմնավորել վիճարկվող որոշման և Սահմանադրության 104-րդ հոդվածի խախտման միջև պատճառահետևանքային կապը:

Դիմողի կողմից վիճարկվող որոշման և Սահմանադրության 6-րդ հոդվածի ենթադրյալ հակասության հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումում այդ հակասությունն, ըստ էության, հիմնավորվում է նրանով, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածով հաշվիչ հանձնախմբի՝ Ազգային ժողովի նիստում քվեարկության արդյունքները ներկայացնելուց հետո, դրա հիման վրա նախագահողն ընտրության դեպքում պետք է հայտարարեր թեկնածուի ընտրվելու կամ չընտրվելու մասին: Դիմողի դիրքորոշմամբ՝ վրիպակի առկայությամբ քվեաթերթիկների պայման-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 2(106)2022

ներում հաշվիչ հանձնախումբը չուներ քվեարկությունն ընդհատելու և այնուհետև, խնդիրը շտկելով, քվեարկությունը վերսկսելու լիազորություն. ըստ այդմ՝ հաշվիչ հանձնախմբի կատարած գործողությունները դուրս են նրա լիազորությունների շրջանակից:

Ակնհայտ է, որ դիմողի՝ ընդունված իրավական ակտի ենթադրյալ հակասահմանադրականության հիմնավորումներն, ըստ էության, հանգում են հաշվիչ հանձնախմբի կատարած գործողությունների օրինականության հարց բարձրացնելուն, որի քննությունը, հաշվի առնելով վերոհիշյալ դիրքորոշումը, դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի ԱԺՈ-01-Ա որոշումը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

29 ապրիլի 2022 թվականի
ՍԴՈ-1647

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի ԱԺՈ-01-Ա ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի ՍԴՈ-1647 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի ԱԺՈ-01-Ա որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1647 որոշմամբ (հրապարակվել է 2022 թվականի մայիսի 2-ին) որոշել է.

«1. ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի ԱԺՈ-01-Ա որոշումը համապատասխանում է Սահմանադրությանը (...):»:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1647 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Նախ, հարկ են համարում նշել, որ Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 2-ի ՍԴԱՈ-183 աշխատակարգային որոշմամբ նշանակվել են սույն գործով զեկուցող դատավոր: Այնուհետև, Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի աշխատակարգի 49-րդ և 50-րդ կետերի պահանջները, 2022 թվականի ապրիլի 5-ի ՍԴԱՈ-70 աշխատակարգային որոշմամբ որոշել է գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանին փոխարինել և գործով նշականակել այլ զեկուցող:

2(106)2022

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Սույն գործով զեկուցող լինելու ժամանակահատվածում իմ կողմից «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 42-րդ հոդվածի հիմքով պահանջվել և Սահմանադրական դատարանում ստացվել են հետևյալ տեղեկությունները, որոնք, իմ գնահատմամբ էական նշանակություն ունեին սույն գործի լուծման համար, սակայն Սահմանադրական դատարանի կողմից դրանք հաշվի չեն առնվել.

1) Ազգային ժողովի նախագահի՝ 2021 թվականի օգոստոսի 2-ի ընտրությանն առաջադրվել է երեք թեկնածու. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն առաջադրել է Ալեն Սիմոնյանի թեկնածությունը, իսկ «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունները՝ համապատասխանաբար Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի թեկնածությունները: Թեկնածուներից ելույթով հանդես է եկել Ալեն Սիմոնյանը, իսկ Մխիթար Զաքարյանը և Արթուր Սարգսյանն ինչպես ելույթով, այնպես էլ եզրափակիչ ելույթով հանդես չեն եկել, քանի որ Ազգային ժողովի համապատասխան նիստին չեն մասնակցել (*հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՍԴԴ-96 գրության՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետի՝ 13.11.2021թ. Սահմանադրական դատարան մուտքագրված թիվ 1.13/5777-2021 գրությունը, ինչպես նաև Ազգային ժողովի 02.08.2021թ. նիստի սղագրությունը*).

2) Հիմք ընդունելով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ պարբերություններով ամրագրված կարգավորումները՝ Մխիթար Զաքարյանը և Արթուր Սարգսյանը պատգամավորի թեկնածուի կարգավիճակ են ձեռք բերել Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 31-ի թիվ 57-Ա որոշմամբ «Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցման պահից, որում որպես պատգամավորի թեկնածուներ ընդգրկված են եղել նաև Մխիթար Զաքարյանը (17-րդ համար) և Արթուր Սարգսյանը (28-րդ համար): «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված իրավունքները և պարտականությունները վերջիններիս՝ որպես պատգամավորի թեկնածուների վրա տարածվել են մինչև Ազգային ժողով ընտրվելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման վերաբերյալ 2021 թվականի հուլիսի 17-ին Սահմանադրական դատարանի կողմից որոշում ընդունելը (*հիմք՝ ի պատասխան Սահմանադրական*

դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՄԴԴ-97 գրության՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 13.12.2021թ. թիվ 01-1215 գրությունը)։

3) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի հուլիսի 11-ի թիվ 186-Ա և թիվ 187-Ա որոշումներով բավարարել է դատախազի միջնորդությունները՝ համաձայնություն տալով պատգամավորի թեկնածու Մխիթար Զաքարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ։ 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ 191-Ա և թիվ 192-Ա որոշումներով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը համաձայնություն է տվել պատգամավորի թեկնածու Արթուր Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ (հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՄԴԴ-95 գրության՝ ՀՀ գլխավոր դատախազի՝ 08.12.2021թ. Սահմանադրական դատարան մուտքագրված գրությունը, ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՄԴԴ-97 գրության՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 13.12.2021թ. թիվ 01-1215 գրությունը և դրան կից ներկայացված նյութերը, ինչպես նաև ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 16.12.2021թ. թիվ ՄԴԴ-101 գրության՝ Սյունիքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի 21.12.2021թ. թիվ ԴԴ-31/Ե-25627 գրությանը կից ներկայացված նյութերը)։

4) 2021 թվականի հուլիսի 12-ին որոշում է կայացվել Մխիթար Զաքարյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, և վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով։ 2021 թվականի հուլիսի 15-ին որոշում է կայացվել Արթուր Սարգսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, և վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով (հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՄԴԴ-95 գրության՝ ՀՀ գլխավոր դատախազի՝ 08.12.2021թ. Սահմանադրական դատարան մուտքագրված գրությունը, ինչպես նաև ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 16.12.2021թ. թիվ ՄԴԴ-101 գրության՝ Սյունիքի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏՈՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 2(106)2022

մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի 21.12.2021թ. թիվ ԴԴ-31/Ե-25627 գրությանը կից ներկայացված նյութերը)։

5) Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի հուլիսի 13-ի և 2021 թվականի հուլիսի 17-ի որոշումներով համապատասխանաբար Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով (*հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՍԴԴ-95 գրության՝ ՀՀ գլխավոր դատախազի՝ 08.12.2021թ. Սահմանադրական դատարան մուտքագրված գրությունը, ինչպես նաև ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 16.12.2021թ. թիվ ՍԴԴ-101 գրության՝ Սյունիքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի 21.12.2021թ. թիվ ԴԴ-31/Ե-25627 գրությանը կից ներկայացված նյութերը*)։

6) Ղեկավարվելով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի հուլիսի 22-ին կազմել է «Ազգային ժողովի պատգամավորներ գրանցելու և մանդատներ տրամադրելու մասին» թիվ 1 արձանագրությունը, որի 1-ին կետում «Հայաստան» կուսակցությունների դաշինքի համապետական ցուցակի առաջին մասից ընտրված պատգամավորների թվում 16-րդ համարի ներքո նշված է Մխիթար Զաքարյանը, իսկ 25-րդ համարի ներքո՝ Արթուր Սարգսյանը։ Միաժամանակ Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի կողմից ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու մասին դիմումներ չեն ներկայացվել։ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում չի ստացվել Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի վերաբերյալ պատգամավորի լիազորությունները վաղաժամկետ դադարած համարելու մասին արձանագրություն (*հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՍԴԴ-97 գրության՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 13.12.2021թ. թիվ 01-1215 գրությունը*)։

7) Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելուց հետո Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու և նրանց անազատության մեջ պահելու վերաբերյալ Ազգային ժողովի համաձայնություն առկա չէ (*հիմք՝ ի*

պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՍԴԴ-95 գրության՝ ՀՀ գլխավոր դատախազի՝ 08.12.2021թ. Սահմանադրական դատարան մուտքագրված գրությունը, ինչպես նաև ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 16.12.2021թ. թիվ ՍԴԴ-101 գրության՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի 21.12.2021թ. թիվ ԴԴ-31/Ե-25627 գրությանը կից ներկայացված նյութերը):

Անդրադառնալով սույն գործի շրջանակում Սահմանադրական դատարանի առջև բարձրացված հարցերին՝ հարկ եմ համարում քննարկման առարկա դարձնել և իմ դիրքորոշումը ներկայացնել հետևյալ հարցադրումների վերաբերյալ.

1) արդյո՞ք Ազգային ժողովի նախագահի ընտրությունը թեկնածուի (թեկնածուների) բացակայության պայմաններում անցկացնելը համահունչ է Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

2) արդյո՞ք Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացը համապատասխան է Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի, 96-րդ հոդվածի 2-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին այն դեպքում, երբ թեկնածուն (թեկնածուները) չի մասնակցել այդ ընտրության գործընթացին՝ առանց Ազգային ժողովի համաձայնության կալանքի տակ գտնվելու պատճառով:

2(106)2022

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՏԵՂԵԿՎՈՐ

1.1. Սահմանադրությամբ նախատեսված տարբեր մարմինների և պաշտոնատար անձանց ընտրությանն առնչվող սահմանադրական կարգավորումներից հետևում է, որ ընտրությունը գործընթաց է, որի շրջանակում քվեարկության միջոցով որոշվում է, թե ովքեր պետք է ստանձնեն որոշակի պաշտոններ: Սահմանադրությամբ մի շարք պաշտոնատար անձանց ընտրությունը վերապահված է Ազգային ժողովի՝ որպես ժողովրդի կողմից անմիջականորեն ձևավորված ներկայացուցչական մարմնի իրավասությանը (օրինակ՝ Հանրապետության նախագահի (Սահմանադրության 125-րդ հոդված), Վարչապետի (Սահմանադրության 149-րդ հոդված), Սահմանադրական դատարանի դատավորների, Վճռաբեկ դատարանի նախագահի և դատավորների (Սահմանադրության 166-րդ հոդված) ընտրությունը): Միաժամանակ, բացի այլ պետական մարմինների կազմավորմանը և պաշտոնատար անձանց ընտրությանը մասնակցելուց,

սահմանադիրն Ազգային ժողովին է լիազորել իրականացնել ընտրություն նաև իր որոշակի պաշտոններում: Մասնավորապես՝ այդպիսի պաշտոնների թվին դասելով նաև Ազգային ժողովի նախագահի պաշտոնը՝ սահմանադիրն ամրագրել է, որ Ազգային ժողովն իր կազմից ընտրում է Ազգային ժողովի նախագահ, որն ընտրվում և հետ է կանչվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մաս):

Նշված դրույթի վերլուծությունից բխում է, որ սահմանադիրն ուղղակիորեն կարգավորել է Ազգային ժողովի նախագահի ընտրությանն առնչվող միայն կարևորագույն հարցերը¹: Մասնավորապես՝ Սահմանադրության վերը նշված դրույթից հետևում է, որ Ազգային ժողովի նախագահին ընտրում է Ազգային ժողովը, ընդ որում, այդ ընտրությունը պետք է կատարվի Ազգային ժողովի կազմից, իսկ նշված պաշտոնում ընտրվելու համար անհրաժեշտ է, որ Ազգային ժողովի նախագահի թեկնածուն ստանա պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

Հարկ են համարում նշել, որ Սահմանադրությունն անմիջականորեն չի ամրագրում Ազգային ժողովի նախագահի ընտրության ընթացակարգին վերաբերող մանրամասն կարգավորումներ, սակայն միաժամանակ Ազգային ժողովին ներկայացնում է իր կանոնակարգին համապատասխան գործելու պահանջ (Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մաս): Ընդ որում, Ազգային ժողովի կանոնակարգի ընդունման առավել բարդ կարգը (ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մաս) վկայում է Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի աստիճանակարգությունում դրա տեղի և դերի մասին:

Այսպիսով, սահմանադրի ուղղակի պահանջն է Ազգային ժողովի կողմից իր կանոնակարգով ամրագրված դրույթների պահպանումը, որոնք էլ կանոնակարգում են, ի թիվս այլնի, Ազգային ժողովի նախագահի ընտրության ընթացակարգին առնչվող հարցերը: Միաժամանակ գտնում են, որ նշված իրավական ակտով սահմանված՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացին վերաբերող կարգավորումների ոչ բոլոր խախտումներն են հանգեցնում այդ գործընթացի արդյունքում

¹Հարկ է նշել, որ Սահմանադրությունում տեղ են գտել նաև որոշակի ընդհանուր բնույթի կարգավորումներ, որոնք վերաբերում են ընդհանրապես Ազգային ժողովի գործունեությանը (օրինակ՝ Սահմանադրության 101-103-րդ հոդվածներ):

2(106)2022
 ◆ ՍԵՆԵԿԱՆԻ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 161

ընդունված իրավական ակտի հակասահմանադրականության: Ընդ որում, Ազգային ժողովի կանոնակարգով նախատեսված՝ Ազգային ժողովի նախագահի ընտրությանը վերաբերող նորմերի այնպիսի խախտումները, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ կարող էին ունենալ նշված հարցի վերաբերյալ կայացված վերջնական որոշման վրա, արդեն իսկ հանգեցնում են այդ գործընթացի արդյունքում ընդունված իրավական ակտի՝ Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասին և 104-րդ հոդվածի 1-ին մասին հակասության:

1.2. Անդրադառնալով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով ամրագրված՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացին վերաբերող կարգավորումներին՝ հարկ եմ համարում նշել հետևյալը.

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտոնում ընտրելու կամ նշանակելու մասին հարցերն Ազգային ժողովի նիստում քննարկվում են հետևյալ ընդհանուր կարգով.

1) մինչև տասական թուղթ տևողությամբ ելույթներով՝ ըստ թեկնածուների ազգանվան այբբենական հաջորդականության հանդես են գալիս թեկնածուներին ներկայացնելու իրավասություն ունեցող անձինք.

2) մինչև քսանական թուղթ տևողությամբ ելույթներով հանդես են գալիս թեկնածուները.

3) թեկնածուին ներկայացնող անձը և թեկնածուն ելույթ են ունենում հաջորդաբար.

4) ելույթից հետո թեկնածուին ներկայացնող անձին և թեկնածուին կարող են հարցեր տրվել.

5) մտքերի փոխանակություն.

6) մինչև տասական թուղթ տևողությամբ եզրափակիչ ելույթներով նույն հաջորդականությամբ հանդես են գալիս թեկնածուները:

Նույն օրենքի 136-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 135-րդ հոդվածով սահմանված կարգով հետևյալ տարբերությամբ.

1) թեկնածուներին ներկայացնելու համար հատկացվում է մինչև տասական թուղթ.

2) թեկնածուների ելույթների համար հատկացվում է մինչև 30 թուղթ.

ՍԱԴՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 2(106)2022

3) թեկնածուների եզրափակիչ ելույթների համար հատկացվում է մինչև տասնհինգական րոպե:

Փաստորեն, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված ընթացակարգի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցը քվեարկության դրվելուց առաջ Ազգային ժողովի նախագահի թեկնածուներին հնարավորություն է տրվում պատասխանել պատգամավորների հարցերին, հանդես գալ ելույթներով և եզրափակիչ ելույթներով: Ընդ որում, Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացում առաջադրված թեկնածուների համար մասնակցային հավասար հնարավորություններ ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Ազգային ժողովի նախագահի՝ մեկից ավելի թեկնածուների առաջադրման դեպքում վերը նշված հնարավորությունը բոլոր թեկնածուների համար պետք է ապահովվի հավասարապես:

Անհրաժեշտ են համարում ընդգծել, որ քննարկվող կարգավորումն անմիջականորեն առնչվում է Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցում պատգամավորների կարծիքի ձևավորմանը: Ազգային ժողովի նախագահի պաշտոնում առաջադրված թեկնածուները պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու միջոցով նպաստում են պատգամավորների կողմից այն համոզմունքի ձևավորմանը, թե առաջադրված թեկնածուներից ով առավել արդյունավետորեն կարող է իրականացնել Ազգային ժողովը ներկայացնելու և նրա բնականոն գործունեությունն ապահովելու՝ Ազգային ժողովի նախագահի սահմանադրական գործառույթները (Սահմանադրության 104-րդ հոդվածի 2-րդ մաս): Այս տեսանկյունից կարևորվում է նաև Ազգային ժողովի նախագահի պաշտոնում առաջադրված թեկնածուների համար հավասար հնարավորությունների ապահովումը, այդ թվում՝ պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու մասով, քանի որ միայն հավասար պայմաններ երաշխավորող միջավայրում անցկացված՝ Ազգային ժողովի նախագահի ընտրությունը կարող է համահունչ լինել այդ գործընթացին վերաբերող սահմանադրական կարգավորումներին:

Այսպիսով, թեև Սահմանադրությունն ուղղակիորեն չի ամրագրում նաև Ազգային ժողովի նախագահի թեկնածուի կամ թեկնածուների՝ պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու հնարավորություն ապահովելու

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԿԻ ԿԻ 2(106)2022

պահանջ, սակայն հաշվի առնելով Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, Ազգային ժողովի կանոնակարգն Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցի քննարկման շրջանակում նման հնարավորություն նախատեսված լինելու պայմաններում այն պետք է հավասարապես ապահովվի բոլոր թեկնածուների համար:

Միաժամանակ գործնականում չեն բացառվում այնպիսի իրավիճակները, երբ Ազգային ժողովի նախագահի թեկնածուն (թեկնածուները) պատգամավորների հարցերին չպատասխանի, հանդես չգա ելույթով կամ եզրափակիչ ելույթով՝ բացակայության կամ նիստին ներկա թեկնածուի կողմից այդ հնարավորությունից չօգտվելու հետևանքով: Նշված հանգամանքն Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացը Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի տեսանկյունից ինքնին խնդրահարույց չի դարձնում, քանի որ Ազգային ժողովի նախագահի ընտրության շրջանակում առաջադրված թեկնածուի (թեկնածուների) ներկայությունն Ազգային ժողովի նախագահի ընտրության ընթացակարգային պարտադիր պահանջ չէ: Նման իրավիճակում սահմանադրական վերը նշված պահանջների պահպանված լինելու հարցը պարզելու համար անհրաժեշտ է քննարկել Ազգային ժողովի նախագահի կոնկրետ թեկնածուի (թեկնածուների)՝ պատգամավորների հարցերին չպատասխանելու, ելույթով կամ եզրափակիչ ելույթով հանդես չգալու պատճառները և հիմքերը:

Ըստ այդմ, եթե Ազգային ժողովի նախագահի թեկնածուն (թեկնածուները) պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքները չի (չեն) իրացրել նման հնարավորության ապահովված չլինելու հետևանքով, ապա դա կհանգեցնի ոչ միայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի դրույթների, այլև Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի խախտման, քանի որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի՝ վերը նշված ընթացակարգային կանոնները սերտորեն կապված են Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցում պատգամավորների կարծիքի ձևավորման հետ, ավելին, Ազգային ժողովի նախագահի՝ մեկից ավելի թեկնածուների առաջադրման պայմաններում թեկնածուների մի մասի համար վերը նշված իրավունքներն իրացնելու հնարավորություն չապահովելը հանգեցնում է անհավասար մրցակցային դաշտի ստեղծման: Այսինքն՝ նշված խախտումն իր բնույթով այնպիսին է, որ կարող է էական ազդեցություն

ունենալ Ազգային ժողովի նախագահի ընտրության վերաբերյալ կայացված վերջնական որոշման վրա:

Ի հակադրումն վերոնշյալի, նման խախտում առկա չի լինի, եթե Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացը կազմակերպվել է այնպես, որ Ազգային ժողովի նախագահի բոլոր թեկնածուներին տրվել է պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու հավասար հնարավորություն, սակայն վերջիններս (նրանց մի մասը) այդ իրավունքներից չեն օգտվել իրենց կամքով կամ դրանցից օգտվելը եղել է անհնար՝ օրենքով սահմանված հիմքով Ազգային ժողովի նիստից բացակայության հետևանքով:

Այսպիսով, գտնում եմ, որ Ազգային ժողովի նախագահի ընտրության շրջանակում առաջադրված թեկնածուի (թեկնածուների) բացակայության հետևանքով պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքները չիրացնելու յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել դրա պատճառները և հիմքերը:

1.3. Սահմանադրական դատարանը սույն գործով կայացված ՍԴՈ-1647 որոշմամբ արձանագրել է, որ «օրենսդրի կողմից Ազգային ժողովի նախագահի թեկնածուի ֆիզիկական բացակայությունը (օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառներով) որպես Ազգային ժողովի նախագահի ընտրության պարտադիր ընթացակարգային պայման դիտարկելը կարող էր հանգեցնել Ազգային ժողովի նախագահի թեկնածուի բացակայության (օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառներով) պատճառով Ազգային ժողովի մարմինների ձևավորման գործընթացի արգելակմանը՝ որպես հետևանք հանգեցնելով ամբողջ Ազգային ժողովի գործունեության խաթարմանը: Այդ առնչությամբ պնդումը, թե պատգամավորի՝ իր կամքից անկախ բացակայության պայմաններում Ազգային ժողովի ընդունած ակտը (օրենք, որոշում և այլն) կարող էր և չընդունվել, եթե հիմք ընդունվեր, որ պատգամավորը, նիստերին մասնակցելով, ելույթներ ունենալով, էականորեն կարող էր ազդել համապատասխան որոշման ընդունման վրա, խիստ վերացական է և ոչ հիմնավոր: Ավելին, նշված մոտեցումը հնարավոր է վտանգի իրավական անվտանգությունն ընդհանրապես, քանզի դրա տրամաբանական շարունակությունը հանգեցնելու է թեկուզ մեկ պատգամավորի՝ իր կամքից անկախ (օրինակ՝ հիվանդության պատճառով նիստերին մասնակցելու անկարողությունը) ԱԺ նիստերին

բացակայության պայմաններում Ազգային ժողովի ընդունած ցանկացած ակտի լեգիտիմությունը կասկածի տակ դնելուն՝ ըստ էության նույնպես հանգեցնելով Ազգային ժողովի գործունեության կազմալուծմանը»:

Չհամաձայնելով Սահմանադրական դատարանի վերը նշված դիրքորոշմանը՝ գտնում եմ, որ Սահմանադրական դատարանը հաշվի չի առել, որ իրականում խնդիրը ոչ թե համապատասխան նիստին Ազգային ժողովի նախագահի թեկնածուի փաստացի ներկայությունը կամ բացակայությունն է, այլ գործնականում դրան մասնակցելու հնարավորության ապահովումը: Օրինակ՝ եթե Ազգային ժողովի նախագահի թեկնածուն համապատասխան նիստին մասնակցելու հնարավորություն չի ունենում սահմանադրական դրույթների խախտման պայմաններում ազատությունից զրկված լինելու հետևանքով, նման ընտրության արդյունքում ընդունված իրավական ակտը չի կարող համահունչ լինել սահմանադրական կարգավորումներին: Այսինքն՝ անհրաժեշտ է տարբերություն դնել համապատասխան նիստին Ազգային ժողովի նախագահի թեկնածուի չմասնակցելու հիմքերի միջև: Մինչդեռ Սահմանադրական դատարանը, չտարբերակելով համապատասխան նիստին Ազգային ժողովի նախագահի թեկնածուի չմասնակցելու հիմքերը և պատճառները, Ազգային ժողովի նախագահի ընտրության արդյունքում ընդունված որոշումը ինձ համար անհասկանալի տրամաբանությամբ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ ըստ էության միայն նորընտիր Ազգային ժողովի անխաթար գործունեությունն ապահովելու պատճառաբանությամբ: Ավելին, իմ գնահատմամբ, Սահմանադրական դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե Ազգային ժողովի նիստերին որևէ պատգամավորի բացակայության պայմաններում ընդունված ցանկացած ակտի ընդունմանը, այլ Ազգային ժողովի նախագահի թեկնածուի բացակայության պայմաններում իր իսկ ընտրության հարցի քննարկմանը և որոշման կայացմանը: Նշված իրավիճակների անհամադրելիությունը հաշվի չառնելու հետևանքով Սահմանադրական դատարանը, շեղվելով կոնկրետ գործով ներկայացված իրավիճակի և հարցի տրամաբանությունից, իր որոշմամբ վկայակոչել է Ազգային ժողովի նիստերի իրավազորության, որոշման ընդունման համար անհրաժեշտ ձայների նվազագույն շեմի վերաբերյալ կարգավորումներ, որոնք, իմ գնահատմամբ, որևէ կերպ չեն վկայում համապատասխան նիստին Ազգային ժողովի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

նախագահի թեկնածուի մասնակցելու հնարավորությունն ապահովելու պահանջի բացակայության մասին:

Փաստորեն, Սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանադրական կարգավորումներին և դրանց լույսի ներքո օրենսդրական դրույթներին տրված մեկնաբանության առանցքում մեկ գաղափար է, համաձայն որի՝ անհրաժեշտ է ապահովել նորընտիր Ազգային ժողովի անխաթար գործունեությունը, ինչը Սահմանադրական դատարանի համար բավարար է սահմանադրական դրույթների խախտումներն անտեսելու համար:

2.1. Սույն հատուկ կարծիքում ներկայացված երկրորդ հարցադրման կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ տվյալ դեպքում Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի նիստից Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի բացակայությունը պայմանավորված է եղել նրանց՝ կալանավորված լինելու հանգամանքով (ինչի մասին են վկայում սույն հատուկ կարծիքում ներկայացված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 42-րդ հոդվածի հիմքով (զեկուցող դատավոր Ե. Խունդկարյանի պահանջով) Սահմանադրական դատարանում ստացված տեղեկությունները): Ուստի սույն հատուկ կարծիքի շրջանակում անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ պատգամավորի կալանավորման հարցին՝ պատգամավորի անձեռնմխելիության համատեքստում:

1995 թվականի Սահմանադրության ընդունումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մակարդակում երաշխավորվում է պատգամավորի անձեռնմխելիությունը, սակայն պատգամավորի կարգավիճակով պայմանավորված նրա «պաշտպանության» ոլորտը որոշակիորեն փոփոխվել է սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Այսպես՝ 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ պարբերությունն ամրագրում էր, որ պատգամավորին չի կարելի կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել առանց Ազգային ժողովի համաձայնության: Նշված դրույթով քրեական վարույթի շրջանակում պատգամավորին որոշակի պաշտպանություն տրամադրվում էր կալանավորումից (և ոչ թե անձնական ազատության սահմանափակման բոլոր դրսևորումներից) և դատական կարգով քրեական պատասխանատվու-

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)/2022 ՍԵՆԵԿԱՆԵ

թյան ենթարկվելուց, որոնց համար պահանջվում էր Ազգային ժողովի համաձայնությունը:

2005 թվականին կատարված սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ ամրագրված՝ պատգամավորի անձեռնմխելիությունը սահմանող դրույթի ձևակերպումը փոփոխվեց, և ամրագրվեց, որ պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության: Միաժամանակ նշված հոդվածը լրացվեց 4-րդ մասով, որը սահմանեց, որ պատգամավորին չի կարելի ձերբակալել առանց Ազգային ժողովի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալությունն իրագործվում է հանցագործության կատարման պահին: Այս դեպքում անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

Փաստորեն, 2005 թվականին կատարված սահմանադրական փոփոխությունները քրեական վարույթի շրջանակում պատգամավորի անձեռնմխելիությունը կապում էին երեք տեսակի գործողության հետ՝ պատգամավորին պաշտպանություն տրամադրելով որպես մեղադրյալ ներգրավվելուց, կալանավորվելուց և ձերբակալվելուց (բացառությամբ Սահմանադրությամբ ուղղակիորեն նշված որոշակի դեպքերի)՝ նշված գործողությունների կատարումը պայմանավորելով Ազգային ժողովի համաձայնության առկայությամբ:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում պատգամավորի անձեռնմխելիությունն ամրագրում ստացավ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

Սահմանադրական վերը նշված կարգավորումների համեմատական վերլուծությունից հետևում է, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով սահմանադիրն էապես ընդլայնել է պատգամավորի պաշտպանության ոլորտը: Եթե 2005 թվականի խմբագրությամբ Սահմա-

նադրությամբ պատգամավորը քրեական վարույթի շրջանակում պաշտպանված էր որպես մեղադրյալ ներգրավվելուց, կալանավորվելուց և ձերբակալվելուց, ապա ներկայումս պատգամավորի անձեռնմխելիությունը տարածվում է քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև պատգամավորին ազատությունից զրկելու ցանկացած ձևի վրա՝ արգելելով այդ գործողությունների կատարումն առանց Ազգային ժողովի համաձայնության:

Սահմանադրության 96-րդ հոդվածով ամրագրված կարգավորումներին Սահմանադրական դատարանն անդրադարձել է 2021 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1619 որոշմամբ՝ արձանագրելով, որ «(...) չնայած հիշատակված հոդվածի «Պատգամավորի անձեռնմխելիությունը» վերտառությանը, դրանով սահմանվում են պատգամավորի սահմանադրական կարգավիճակը պայմանավորող և դրանից բխող երաշխիքներ՝ պատգամավորի ինդեմնիտետը (անպատասխանատվությունը (non-liability) (Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մաս) և պատգամավորի անձեռնմխելիությունը (inviolability) (Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ընդ որում՝ ինդեմնիտետը երաշխավորում է պատգամավորի՝ իր պատգամավորական գործունեության արդյունավետ իրականացումը՝ բացառելով պատգամավորի գործունեությունից բխող հայտնած կարծիքի կամ Ազգային ժողովում քվեարկության համար քրեական պատասխանատվությունն ընդհանրապես, հետևաբար նաև քրեական հետապնդումը: Սակայն պատգամավորի՝ իր գործունեության շրջանակներում, իր գործունեությունից բխող կարծիքի համար «արտաքին» պատասխանատվության բացառումն ամենևին չի ենթադրում պատասխանատվության բացառում ընդհանրապես, և հատկապես՝ չի բացառում «ներքին» պատասխանատվությունը՝ կարգապահական պատասխանատվությունը տարատեսակ սանկցիաների տեսքով:

Ինչ վերաբերում է պատգամավորի անձեռնմխելիությանը, ապա վերջինիս տրամադրվում է որոշակի պաշտպանություն իր գործառույթների հետ չկապված արարքների համար քրեական հետապնդման հարուցումից: Միաժամանակ, դրանով տրվում է պաշտպանություն՝ պատգամավորին ազատությունից զրկելու դեպքերի համար»:

Հարկ եմ համարում նշել, որ պատգամավորներին տրամադրվող վերը նշված երաշխիքներին անդրադարձել են նաև Մարդու իրավունքների

Եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) և «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով): Խորհրդարանականի «անպատասխանատվությունը», ըստ Եվրոպական դատարանի, կոչված է ապահովելու խորհրդարանականի՝ իր պարտականությունների իրականացման ընթացքում քվեարկության կամ կարծիք հայտնելու համար դատական կարգով «անպատասխանատվությունը» (Kart v. Turkey [GC], application no. 8917/05, 03/12/2009, §44): Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ «անպատասխանատվությունը» սերտորեն կապված է պատգամավորական մանդատի հետ և պաշտպանում է պատգամավորներին իրենց պաշտոնական կարգավիճակով հանդես գալիս՝ քաղաքական հարցեր քննարկելիս և որոշումներ կայացնելիս¹:

Ինչ վերաբերում է խորհրդարանականների անձեռնմխելիությանը, ապա ըստ Եվրոպական դատարանի՝ այս տեսակի իմունիտետը կոչված է պաշտպանելու խորհրդարանականներին իրենց պատգամավորական պարտականությունների հետ չկապված գործողությունների, այդ թվում՝ հանցագործությունների համար ձերբակալումից, կալանավորումից կամ քրեական հետապնդումից՝ առանց այն խորհրդարանի համաձայնության, որի անդամն են իրենք (Kart v. Turkey [GC], application no. 8917/05, 03/12/2009, §44): Պատգամավորի իմունիտետի երկու տեսակներն էլ ծառայում են միևնույն նպատակին՝ ապահովելու խորհրդարանի անկախությունն իր առջև դրված խնդիրների կատարման ժամանակ (Kart v. Turkey [GC], application no. 8917/05, 03/12/2009, §90): Խորհրդարանի անդամների դեմ վարույթի հարուցումը կարող է ազդել այն խորհրդարանի գործունեության վրա, որի անդամ են նրանք, և խաթարել խորհրդարանի աշխատանքը: Հետևաբար իմունիտետի այս համակարգը կարող է համարվել իրավաչափ նպատակ հետապնդող (Kart v. Turkey [GC], application no. 8917/05, 03/12/2009, §91): Եվրոպական դատարանն արդեն իսկ ընդունել է, որ պետությունների կողմից, ընդհանուր առմամբ, պատգամավորներին տարբեր աստիճանի իմունիտետ շնորհելու վաղեմի պրակտիկան հետապնդում է խորհրդարանում խոսքի ազատության պաշտպանության և օրենսդիր ու դատական իշխանության միջև իշխանությունների տարանջատման օրինական նպատակներ (De Jorio v. Italy, application no. 73936/01, 03/06/2004, §49; Selahattin Demirtaş v. Turkey

¹Վենետիկի հանձնաժողովի «Խորհրդարանական իմունիտետի շրջանակը և դրանից զրկումը» վերտառությամբ զեկույց, CDL-AD(2014)011, 14/05/2014, §12.

(no. 2) [GC], application no. 14305/17, 22/12/2020, §256): Անձեռնմխելիությունը (inviolability) օգնում է հասնել խորհրդարանի լիակատար անկախությանը՝ կանխելով քաղաքական դրդապատճառներով քրեական դատավարության ցանկացած հնարավորություն (fumus persecutionis) և դրանով իսկ պաշտպանելով ընդդիմությանը մեծամասնության ճնշումներից կամ չարաշահումներից (Karácsony and Others v. Hungary [GC], application nos. 42461/13 and 44357/13, 17/05/2016, §138):

2.2. Հաշվի առնելով, որ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի նիստից Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանը և Արթուր Սարգսյանը բացակայել են կալանավորված լինելու պատճառով, անհրաժեշտ եմ համարում պատգամավորի անձեռնմխելիության երաշխիքի առկայության պայմաններում վերջիններիս կալանքի տակ պահելու համար Ազգային ժողովի համաձայնության անհրաժեշտության հարցի կապակցությամբ վկայակոչել Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1619 որոշումը՝ կարևորելով սահմանադրական նորմերի մեկնաբանման և կիրառման կայունության ապահովումը: Ընդ որում, հաշվի առնելով Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի նիստից Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի բացակայության պատճառը՝ գտնում եմ, որ Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակում կաշկանդված էր իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1619 որոշմամբ բացառապես պատգամավորին կալանքի տակ պահելու մասով արտահայտած դիրքորոշումներով: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ Սահմանադրական դատարանի որոշումը բոլոր պետական մարմինների համար պարտադիր լինելու պայմաններում առաջին հերթին Սահմանադրական դատարանն իր վարքագծով պետք է անվերապահորեն հարգի իր իսկ որոշումները և կաշկանդվի դրանցում արտահայտված իր դիրքորոշումներով:

Այսպես՝ Սահմանադրական դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1619 որոշմամբ մասնավորապես անդրադարձ է կատարել այն իրավիճակներին, երբ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուց և նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելուց հետո վերջինս ձեռք է բերում պատգամավորի կարգավիճակ: Սահմանադրական դատարանը նշված որոշմամբ ձևավորել է այն դիրքորոշումը, որ «(...) այն պարագայում, երբ նույնիսկ անձը

պատգամավորի կարգավիճակ ձեռք է բերել քրեական հետապնդման հարուցումից հետո, և մինչ այդ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդման շարունակության համար անհրաժեշտ չէ Ազգային ժողովի համաձայնությունը, ապա բոլորովին այլ է հարցի լուծումն արդեն անձի՝ պատգամավորի կարգավիճակ ստանալուց հետո նրան ազատությունից զրկելու պարագայում. տվյալ դեպքում Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառիկ դեպքերից բացի, մնացած բոլոր դեպքերում անձի՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելն անհրաժեշտաբար պայմանավորում է, որ վերջինիս ազատությունից զրկելու (իսկ մինչ այդ կարգավիճակի ձեռք բերելը ազատությունից զրկված լինելու դեպքում՝ ազատությունից զրկելը շարունակելու, այն պահպանելու) համար անվերապահորեն պետք է Ազգային ժողովի համաձայնությունը, որի բացակայությունը բացառում է պատգամավորի կարգավիճակ ունեցող անձին ազատությունից զրկելու հնարավորությունը:

Ներկայացվածի հակառակ մոտեցման պարագայում կարող է վտանգվել Ազգային ժողովի բնականոն գործունեությունը և Ազգային ժողովի անկախությունը, ինչն ուղղակիորեն կհակասի Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով պատգամավորին տրված պաշտպանությանը՝ պատգամավորի կարգավիճակում գտնվող անձին ազատությունից զրկելը դարձնելով ոչ իրավաչափ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ պատգամավորը, բացի Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ նախատեսված բացառիկ դեպքերից, չի կարող զրկվել ազատությունից (իսկ մինչ կարգավիճակի ձեռքբերումը ազատությունից զրկված լինելու դեպքում՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելուց հետո շարունակել ազատությունից զրկված մնալ), եթե Ազգային ժողովը տվյալ հարցով չի տվել իր համաձայնությունը. Ազգային ժողովից բացի որևէ այլ մարմին իրավասու չէ հաղթահարել պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող այդ պաշտպանությունը»:

Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանը և Արթուր Սարգսյանը, կալանավորված լինելով նախքան Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելը, 2021 թվականի օգոստոսի 2-ին՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցի քննարկման օրը, շարունակել են գտնվել անազատության մեջ՝ առանց Ազգային ժողովի համաձայնության: Մինչդեռ, ինչպես նշվեց, Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1619 որոշմամբ

արձանագրել է նման իրավիճակում Ազգային ժողովի համաձայնությունն ստանալու անհրաժեշտությունը՝ ի կատարումն Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասից բխող պահանջի: Ավելին, նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն ուղղակիորեն վկայակոչել է նաև Մխիթար Զաքարյանին և Արթուր Սարգսյանին վերաբերող քրեական գործերը՝ ընդգծելով, որ «(...) իրավակիրառական պրակտիկան (մասնավորապես՝ ՍԴ/0066/01/21, ՍԴ1/0060/01/21, ԵԴ/0886/01/21 քրեական գործերով) զարգացել է սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումներին հակառակ տրամաբանությամբ, ըստ որի՝ անձի՝ մինչ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելը ազատությունից զրկված լինելու պարագայում պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելուց հետո նրան հետագա ազատությունից զրկելը պահպանելու, ազատությունից զրկելը շարունակելու համար Ազգային ժողովի համաձայնություն ստանալը անհրաժեշտություն չի համարվել: Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակիրառական պրակտիկան չի բխում Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների բովանդակությունից»:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում են, որ Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանը և Արթուր Սարգսյանը 2021 թվականի օգոստոսի 2-ին Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցի քննարկմանը չեն մասնակցել և պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթներով ու եզրափակիչ ելույթներով հանդես գալու հնարավորություն չեն ունեցել իրենց կամքից անկախ և առանց օրենքով սահմանված հիմքի առկայության՝ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված երաշխիքի խախտմամբ անազատության մեջ գտնվելու պատճառով: Այսինքն՝ պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու հնարավորությունը փաստացիորեն չի ապահովվել Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի համար, ինչի հետևանքով վերջիններս զրկված են եղել վերը նշված իրավունքների իրացման միջոցով Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցում պատգամավորների կարծիքի ձևավորման վրա ազդելու հնարավորությունից՝ ի խախտումն Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի, որի արդյունքում նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 135-րդ և 136-րդ հոդվածների: Ավելին, պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և

2(106)/2022
 ◆ ՍԵՆԵԿԱՆԵ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎՈՐՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆ
 173

եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու հնարավորությունն ապահովվել է թեկնածուներից միայն մեկի՝ Ալեն Սիմոնյանի համար՝ ստեղծելով անհավասար մրցակցային պայմաններ Ազգային ժողովի նախագահի երեք թեկնածուների համար: Հաշվի առնելով, որ նշված խախտումն իր բնույթով էական է (անկախ Ազգային ժողովում խմբակցությունների պատգամավորների ներկայացվածության աստիճանի), գտնում եմ, որ նման պայմաններում անցկացված ընտրական գործընթացը չի համապատասխանում Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասին, 96-րդ հոդվածի 2-րդ մասին և 104-րդ հոդվածի 1-ին մասին:

2.3. Սահմանադրական դատարանը, սույն գործով կայացված ՍԴՈ-1647 որոշմամբ անդրադառնալով դիմողի այն փաստարկին, որի համաձայն՝ վիճարկվող որոշումն ընդունվել է Սահմանադրության 96-րդ հոդվածով նախատեսված պատգամավորի անձեռնմխելիության երաշխիքի խախտման պայմաններում, միայն նշել է, որ «որոշման 4.1-4.3. կետերի պատճառաբանություններով ինքնին հերքվում է դիմողի նաև այս փաստարկը», ապա նշել, որ իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշումը չունի հետադարձ ուժ և չի տարածվում մինչև Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների, տվյալ դեպքում՝ վիճարկվող որոշման ընդունման հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ՝ ազդելով ԱԺՈ-01-Ա որոշման իրավաչափության վրա:

Վերոնշյալի առնչությամբ հարկ եմ համարում նշել, որ Սահմանադրական դատարանի այն դատողությունը, թե որոշմամբ ներկայացված պատճառաբանություններով հերքվում է Սահմանադրության 96-րդ հոդվածով ամրագրված դրույթի խախտման վերաբերյալ փաստարկը, բխում է Սահմանադրական դատարանի այն մոտեցումից, որ Ազգային ժողովի նախագահի թեկնածուի բացակայությունը որևէ դեպքում (այսինքն՝ անկախ այդ բացակայության հիմքերից) չի կարող ազդել այդ գործընթացի շրջանակում կազմակերպված քվեարկության արդյունքում ընդունված որոշման սահմանադրականության վրա: Սահմանադրական դատարանի այս դիրքորոշմանն իմ անհամաձայնությունն արդեն իսկ ներկայացվել է սույն հատուկ կարծիքում: Ուստի ստորև հարկ եմ համարում միայն անդրադառնալ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-

ՍԱԳՄԱՆԱՐԿՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
 ◆ 2(106)2022

1619 որոշմամբ արտահայտած դիրքորոշումների՝ սույն գործով կիրառելիության հարցին:

Նախ տվյալ դեպքում իմ գնահատմամբ Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշման հետադարձ ուժ ունենալու վերաբերյալ խնդիր առկա չէ, քանի որ հետադարձ ուժի վերաբերյալ կանոններն առնչվում են ժամանակի մեջ Սահմանադրական դատարանի որոշման գործողությանը, այնինչ տվյալ դեպքում հարցը վերաբերում է Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական նորմը մինևույն ձևով մեկնաբանելուն: Մասնավորապես՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշմամբ Սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելիս մեկնաբանել է, թե որն է սահմանադրի իրական կամքն այն պատգամավորի անձեռնմխելիության առկայության հարցի վերաբերյալ, որը ազատությունից զրկվել է նախքան պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելը: Իսկ սույն գործով պետք է պատասխան տրվեր այն հարցին, թե Ազգային ժողովի նախագահի ընտրությունը և դրա արդյունքում ընդունված որոշումն արդյոք համապատասխանում են սահմանադրաիրավական կարգավորումներին, թե՛ ոչ:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշմամբ արձանագրել է, որ անազատության մեջ գտնվող պատգամավորի կարգավիճակ չունեցող անձը պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից, բացառությամբ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, չի կարող պահվել անազատության մեջ:

Արդյունքում, ստացվում է հետևյալ իրավիճակը. Սահմանադրական դատարանը, վերը նշված որոշմամբ ուղղակիորեն վկայակոչելով նաև Մխիթար Զարարյանին և Արթուր Սարգսյանին վերաբերող քրեական գործերը, նշել է, որ իրավակիրառական պրակտիկան չի բխում Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների բովանդակությունից, մինչդեռ նույն անձանց նկատմամբ հակասահմանադրական վարքագիծ դրսևորվելու արդյունքում Ազգային ժողովի նախագահի ընտրությանն իրական մասնակցություն ունենալու հնարավորությունից այդ անձանց (Ազգային ժողովի նախագահի թեկնածուների) զրկված լինելու պայմաններում ընտրության անցկացումը նույն Սահմանադրական դատարանը սույն գործով կայացրած որոշմամբ

ՍԱԳՄԱՍԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 2(106)/2022 ◆ ՍԵՂՈՒԿԻ

որակել է սահմանադրական, որպիսի դիրքորոշումն ինձ համար խիստ անընդունելի է:

Իմ գնահատմամբ որպեսզի Սահմանադրական դատարանի որոշումները կատարվեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, առաջին հերթին Սահմանադրական դատարանն ինքը պետք է առաջնորդվի իր իսկ որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներով և սահմանադրական նորմերը մեկնաբանի ու կիրառի կայուն և միատեսակ կերպով: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը պատգամավորի անձեռնմխելիության հարցի վերաբերյալ սույն գործով պետք է արտահայտեր այն նույն իրավական դիրքորոշումը, որն արտահայտել էր 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշմամբ, ինչի արդյունքում պետք է արձանագրեր, որ վիճարկվող որոշումն ընդունվել է Սահմանադրության 96-րդ հոդվածով նախատեսված պատգամավորի անձեռնմխելիության խախտման պայմաններում: Մինչդեռ Սահմանադրական դատարանն ըստ էության շեղվել է 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշման տրամաբանությունից՝ անտեսելով նաև այն հանգամանքը, որ Մխիթար Զաքարյանին և Արթուր Սարգսյանին վերաբերող քրեական գործերի շրջանակում դրսևորվող պրակտիկան իր 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշման պատճառաբանական մասում համարել էր Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների բովանդակությունից չբխող:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Վերոգրյալի հիման վրա գտնում եմ, որ 2021 թվականի օգոստոսի 2-ին տեղի ունեցած՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացում փաստացիորեն չի ապահովվել Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի խախտմամբ կալանքի տակ գտնվող՝ Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի՝ պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու հնարավորությունը, բացի այդ, Ազգային ժողովի նախագահի թեկնածուների համար ապահովվել են անհավասար պայմաններ, ինչը հանգեցրել է Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի, 96-րդ հոդվածի 2-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի խախտման:

3. Ինչ վերաբերում է սույն գործով ներկայացված դիմումի՝ Ազգային ժողովի նախագահի ընտրությունն ընդհատելուն և քվեարկությունը վերստին սկսելուն վերաբերող հիմքին, հարկ եմ համարում նշել, որ

Ազգային ժողովի հաշվիչ հանձնախմբի նախագահին Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի նիստի ընթացքում՝ մինչև քվեարկությունը սկսելը, ներկայացրել է քվեարկության կարգը, այդ թվում՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության համար նախատեսված քվեաթերթիկը, որում նշված են Ազգային ժողովի նախագահի թեկնածուների անունները՝ Զաքարյան Մխիթար, Սահակյան Արթուր, Սիմոնյան Ալեն: Հայտարարվել է նաև, որ քվեարկությունն սկսվելու է 16:30-ին և տևելու է 45 րոպե՝ մինչև 17:15-ը: Նույն օրը՝ ժամը 17:10-ին, Ազգային ժողովի նիստում հաշվիչ հանձնախմբի նախագահը հայտարարել է, որ քվեարկությունն ընդհատվել է, քանի որ քվեաթերթիկներում ընդդիմադիր պատգամավորներից մեկի ազգանվան մեջ տեղի է ունեցել տառախալ, ուստի կսկսվի նոր քվեարկություն (հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՍԴԴ-96 գրության՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետի՝ 13.11.2021թ. Սահմանադրական դատարան մուտքագրված թիվ 1.13/5777-2021 գրությանը կից ներկայացված՝ Ազգային ժողովի 02.08.2021թ. նիստի սղագրությունը, Ազգային ժողովի հաշվիչ հանձնախմբի 02.08.2021թ. թիվ 2, թիվ 2 Ա, թիվ 4 արձանագրությունները, ինչպես նաև Ազգային ժողովի հաշվիչ հանձնախմբի թիվ 3 արձանագրությունը):

Վերոգրյալի կապակցությամբ հարկ են համարում նշել, որ 2021 թվականի սեպտեմբերի 2-ի ՍԴԱՌ-183 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը որոշել էր գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով (հիմք՝ նաև 2021 թվականի սեպտեմբերի 2-ի աշխատակարգային նիստի թիվ 28 արձանագրություն):

Սահմանադրական դատարանը, քննության առնելով սույն գործով դիմող կողմի ներկայացուցչի՝ սույն գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը, 2022 թվականի հունվարի 18-ի ՍԴԱՌ-13 աշխատակարգային որոշմամբ որոշել էր այն բավարարել և սույն գործի դատաքննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով (հիմք՝ նաև 2022 թվականի հունվարի 18-ի աշխատակարգային նիստի թիվ 3 արձանագրություն):

Այնուհետև, Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով սույն գործի դատաքննության բանավոր ընթացակարգից գրավոր ընթացակարգի անցնելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորի առաջարկությունը և հաշվի առնելով, որ նշված գործի դատաքննությունը

բանավոր ընթացակարգով անցկացնելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքերը վերացել են, 2022 թվականի մարտի 22-ի ՍԴԱՌ-61 աշխատակարգային որոշմամբ որոշել էր սույն գործով դատաքննության բանավոր ընթացակարգից անցնել գրավոր ընթացակարգի (հիմք՝ նաև 2022 թվականի մարտի 22-ի աշխատակարգային նիստի թիվ 12 արձանագրություն):

Բացի այդ, Սահմանադրական դատարանը, քննության առնելով սույն գործով պատասխանող կողմի՝ սույն գործի դատաքննությունը երկու շաբաթ ժամկետով հետաձգելու վերաբերյալ 2022 թվականի հունվարի 19-ի միջնորդությունը, 2022 թվականի հունվարի 20-ի ՍԴԱՌ-15 աշխատակարգային որոշմամբ որոշել էր սույն գործի քննության ժամկետը երկարաձգել, գործի բանավոր ընթացակարգով դատաքննությունը հետաձգել և նշանակել 2022 թվականի ապրիլի 5-ին (հիմք՝ նաև 2022 թվականի հունվարի 20-ի աշխատակարգային նիստի թիվ 4 արձանագրություն):

Փաստորեն, Սահմանադրական դատարանի վերը թվարկված գործողությունների արդյունքում հնարավորություն չեմ ունեցել գործի դատաքննության բանավոր ընթացակարգի շրջանակում հարցեր տալ կողմերին, անհրաժեշտության դեպքում հանդես գալ դատական նիստին վկաներ (օրինակ՝ Ազգային ժողովի հաշվիչ հանձնախմբի նախագահին և անդամներին) հրավիրելու և լսելու առաջարկությամբ (որպիսի անձանց հարցաքննությունն իմ կարծիքով անհրաժեշտ էր), ինչն ինձ հնարավորություն կտար դիրքորոշում ձևավորել և արտահայտել դիմումի՝ Ազգային ժողովի նախագահի ընտրությունն ընդհատելուն և քվեարկությունը վերստին սկսելուն վերաբերող հիմքին առնչվող հանգամանքների՝ քննարկվող գործընթացի ընդունված որոշման սահմանադրականության վրա ազդեցության վերաբերյալ: Հետևաբար գործի դատաքննության բանավոր ընթացակարգից գրավոր ընթացակարգի անցնելու պայմաններում զրկված լինելով այդ հնարավորությունից՝ հնարավոր չեմ համարում որևէ դիրքորոշում արտահայտել դիմումի նշված հիմքի վերաբերյալ:

Այդուհանդերձ, հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքում ներկայացված պատճառաբանություններով, իմ գնահատմամբ, արդեն իսկ հիմնավորվում է 2021 թվականի օգոստոսի 2-ին տեղի ունեցած՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացն այնպիսի էական խախտումներով անցկացնելը, որոնք հանգեցնում են


Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի, 96-րդ հոդվածի 2-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի խախտման: Ուստի Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացում քվեարկությունն ընդհատելուն և վերստին սկսելուն առնչվող հարցի քննարկումը չի կարող ազդել այդ գործընթացի արդյունքում ընդունված իրավական ակտի սահմանադրականության հարցի վերաբերյալ վերջնական եզրահանգման վրա, քանի որ այդ իրավական ակտը սույն հատուկ կարծիքի 1.1-2.2 կետերում ներկայացված խախտումների առկայության հետևանքով, իմ գնահատմամբ, արդեն իսկ չի համապատասխանում Սահմանադրությանը:

4. Ամփոփելով սույն հափուկ կարծիքում ներկայացված դիրքորոշումները՝ կարծում եմ, որ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի ԱԺՈ-01-Ա որոշումն անհրաժեշտ էր ճանաչել Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասին, 96-րդ հոդվածի 2-րդ մասին և 104-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

6 մայիսի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ
(ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ
ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

2(106)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

3 մայիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման
և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության
պետ Ա. Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2022 թվականի փետրվարի 10-ի N 132-Ա որոշմամբ «2021 թվականի հոկտեմբերի 29-ին Վարշավայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2022 թվականի փետրվարի 14-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի փետրվարի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բյուսելում կնքված համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կիրարկման արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2021 թվականի հոկտեմբերի 29-ին Վարշավայում՝ Եվրոպական միության երկրներում առանց թույլտվության գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձի, այդ թվում՝ հետընդունման (ռեադմիսիայի) համաձայնագրերի կիրարկման գործընթացն արդյունավետ իրականացնելու նպատակով:

2(106)2022
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ՍԵՆԵԿԱՆԻ

2. Արձանագրությունը նախատեսում է Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի Հանրապետության միջև (այսուհետ՝ նաև Կողմեր) Համաձայնագրի կիրարկման վերաբերյալ մանրամասն կանոնակարգումներ:

3. Արձանագրությամբ սահմանվում է, որ օդային ճանապարհով կատարվող հետընդունումը և տարանցումը իրականացվելու է Հայաստանի Հանրապետությունում՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում, Լեհաստանի Հանրապետությունում՝ նրա տարածքում գտնվող բոլոր միջազգային օդանավակայանների սահմանային անցակետերում, իսկ սահմանային այլ անցակետեր օգտագործելը կհամաձայնեցվի իրավասու մարմինների միջև՝ փոխադարձ համաձայնությամբ:

Արձանագրության կատարման համար Հայաստանի Հանրապետության պատասխանատու մարմինն է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

1) ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը հետընդունման և տարանցման դիմումների ներկայացման, ինչպես նաև նման դիմումներին պատասխանելու և Համաձայնագրի կիրարկման հետ կապված այլ նամակագրության համար, ուղիղ համագործակցության ապահովման նպատակով, նշանակի կոնտակտային անձանց (հոդված 2, կետ 2),

2) ապահովել, որ հետընդունման և տարանցման դիմումները, պատասխանները և այլ հարակից հաղորդագրությունները ուղարկվեն Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով (հոդված 3, կետեր 1 և 2),

3) երաշխավորել, որ Հայցվող լեհական Կողմի իրավասու մարմնի ճանաչած բոլոր այլ փաստաթղթերը կհամարվեն լրացուցիչ միջոցներ և փաստաթղթեր, որոնք անուղղակի ապացուցում են, որ երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման պայմանները բավարարված են (հոդված 5, կետ 1),

4) ապահովել, որ Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո՝ 14 օրացուցային օրվա ընթացքում, ՀՀ իրավասու մարմինը լեհական Կողմի իրավասու մարմնին գրավոր տրամադրի Համաձայնագրի 1-ին Հավելվածում նշված անձնագրերի և նույնականացման փաստաթղթերի ձևանմուշները (հոդված 5, կետ 3),

5) որպես Հայցող Կողմ՝ սխալմամբ կատարված հետընդունման դեպքում հետ ընդունել Հայցվող լեհական Կողմից հետ ընդունված անձին՝ Համաձայնագրով սահմանված ժամկետում և պայմաններով (հոդված 7, կետ 1),

6) Հայցվող Հայաստանի Հանրապետությանը ներկայացված բոլոր փաստաթղթերը վերադարձնել Հայցող լեհական Կողմին, իսկ եթե տվյալների և փաստաթղթերի փոխանցումը կատարվել է էլեկտրոնային եղանակով, ապա դրանք անմիջապես ջնջել (հոդված 7, կետ 2),

7) ապահովել, որ անձանց հետընդունումը և ուղեկցմամբ տարանցումը իրականացվի Արձանագրությամբ սահմանված կանոններով (հոդված 8),

8) ապահովել, որ Համաձայնագրի համաձայն՝ Հայցվող ՀՀ դիվանագիտական առաքելության կամ հյուպատոսական հիմնարկի լիազորված ներկայացուցիչն անցկացնի հարցազրույց Հայցող լեհական Կողմի իրավասու մարմնի հետ դեպք առ դեպք հիմքով՝ անհատականապես համաձայնեցված վայրում, ինչպես նաև երաշխավորել, որ ՀՀ ներկայացուցիչը հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույց վարելիս թույլ կտա, որ լեհական Կողմի իրավասու մարմնի ներկայացուցիչը ներկա լինի հարցազրույցին և հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան հարցազրույցից հետո 3 օրացուցային օրվա ընթացքում, Համաձայնագրով նախատեսված կարգով գրավոր տեղեկացնի Հայցող լեհական Կողմի և Հայցվող հայկական Կողմի իրավասու մարմիններին հարցազրույցի արդյունքների մասին՝ անձի քաղաքացիությունը հաստատելն անհնար լինելու դեպքում՝ նշելով նման անհնարինության պատճառը (հոդված 9, կետեր 1, 2 և 3),

9) որպես Հայցող Կողմ՝ եվրոյով փոխհատուցել Հայցվող լեհական Կողմի Համաձայնագրի համաձայն հետընդունման կամ տարանցման հետ կապված կատարած ծախսերը՝ Հայցվող լեհական Կողմի ներպետական օրենսդրության համաձայն կազմված՝ տվյալ ծախսերը մանրամասնող հաշիվ-ապրանքագիրն ստանալուց հետո՝ 30 օրացուցային օրվա ընթացքում (հոդված 10, կետ 1),

10) որպես Հայցվող Կողմ՝ ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը, ներկայացնելով Արձանագրությունում նշված համապատասխան հաշվապահական փաստաթղթերը, տրամադրի տեղեկատվություն բանկային հաշվի վերաբերյալ և ցանկացած հավելյալ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է ծախսերի կարգավորման համար (հոդված 10, կետ 2):

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները

2(106)2022
 ՍԵՆԵԿԱՆԵ
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

3 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1648

2(106)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՄԴՈ-1648 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մայիսի 3-ի ՄԴՈ-1648 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 3-ի ՄԴՈ-1648 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՍԵՆԵԿԱԼ ◆ 2(106)2022

վոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1648 որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

րանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանի դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով**

¹Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԵԿՏԱԿՈՐ ◆ 2(106)2022

կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող

անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմա-

նադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակ-

վում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նու ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների,

որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավոր

րությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական

դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատարանի կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«3» մայիսի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՊԻ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԱԳԱ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

2(106)2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

3 մայիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ռազմական նշանակության արքանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագրում ամրա-

գրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի փետրվարի 23-ի N 222-Ա որոշմամբ հավանություն է տվել 2018 թվականի հունիսի 6-ին ստորագրված՝ «Ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի փետրվարի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի հունիսի 6-ին Ռուսաստանի Դաշնության Կզըլ քաղաքում՝ Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի կառավարման հուսալիության բարձրացման և դրանց միջև փոխգործակցության կապերի կազմակերպման նպատակով:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 1-ին և Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ցանկացած մասնակից պետության միանալու համար բաց է՝ միանալու մասին փաստաթուղթը ավանդապահին փոխանցելու միջոցով:

2. Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից Համաձայնագրի Կողմերի համար դադարեցվում է 1993 թվականի մարտի 12-ի «Ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագրի գործողությունը:

3. Կառավարության 2022 թվականի փետրվարի 23-ի N 222-Ա որոշման Հավելվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը միանում է

Համաձայնագրին վերապահումով՝ պայմանով, որ Հայաստանի Հանրապետությունն առանձին որոշում կկայացնի «Ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագրի դրույթների տարածման վերաբերյալ այն պետությունների նկատմամբ, որոնք կմիանան Համաձայնագրին:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

4.1. ապահովել Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ռազմական նշանակության արբանյակային կապի ինտեգրված համակարգի ստեղծումը՝ Հայաստանի Հանրապետության սեզմենտի ծավալման միջոցով (հոդված 4, պարբերություն 1),

4.2. Համաձայնագրի Կողմերին փոխադարձ օժանդակություն ցուցաբերել ռազմական նշանակության արբանյակային հաճախականային տիրույթում գործող և ծավալման համար նախատեսվող ռադիոէլեկտրոնային միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիության և միջազգային իրավական պաշտպանության համաձայնեցման հարցերում (հոդված 5),

4.3. տիեզերական համալիրների և ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի ու դրանց տարրերի կատարելագործմանն ուղղված գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքները զատել հատուկ կարևոր կարգի մեջ և ապահովել դրանց կատարումը գիտահետազոտական կազմակերպություններում և արդյունաբերական ձեռնարկություններում՝ ձևավորված համագործակցության հիման վրա, ինչպես նաև միասնական տեխնիկական քաղաքականության վարման համար մյուս Կողմերին ժամանակին փոխադարձ տեղեկացնել ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի կազմտեխնիկական կառուցվածքում պլանավորվող փոփոխությունների մասին և միջոցներ ձեռնարկել դրանց կատարելագործման ու զարգացման համար (հոդված 6),

4.4. Համաձայնագրի իրագործման ուղղությամբ մյուս Կողմերի հետ համագործակցել Համաձայնագրի մասնակից պետությունների պաշտպանության նախարարությունների միջոցով (հոդված 8, պարբերություն 1),

4.5. տեղեկության փոխանցումը և դրա պաշտպանությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (հոդված 9, պարբերություն 1),

4.6. միջպետական գաղտնիքների հետ առնչվելու կարգը և դրանց պաշտպանությունն իրականացնել Անկախ պետությունների համագոր-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(106)2022

ծակցության շրջանակներում գործող գաղտնի տեղեկության պաշտպանության մասին միջազգային պայմանագրերին համապատասխան և գաղտնի տեղեկության (պետական գաղտնիքների) փոխադարձ պաշտպանության (պահպանման) մասին երկկողմ պայմանագրերով (հոդված 9, պարբերություն 2),

4.7. չփոխանցել երրորդ կողմին Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկությունն առանց այդ տեղեկությունը տրամադրած Կողմի գրավոր համաձայնության (հոդված 9, պարբերություն 3),

4.8. Համաձայնագրի իրագործման ընթացքում հայկական Կողմին տրված տեղեկությունը չօգտագործել ի վնաս այլ Կողմերի շահերի (հոդված 9, պարբերություն 4):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ռեզմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

3 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1649

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՌԱԶՄԱԿԱՆ ԼՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՊԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԱԳԱ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1649 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մայիսի 3-ի ՍԴՈՒ-1649 որոշմամբ որոշել է, որ «Ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 3-ի ՍԴՈՒ-1649 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով

2(106)2022

ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1649 որոշմամբ «Ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին

օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

¹Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ՍԱԳՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(106)2022

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկա-

յացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային

փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպություն-

ների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակեր-

2(106)2022
 ◆ ՍԵՆԵԿԻԱԿԻ
 ◆ ՍՏԵՂԵԿԱԿԻ
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 207

պոլիտեխնիկական համալսարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահ-

մանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 2(106)/2022 ◆ ՍԵՆԵԿԱՆԿԻ

առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատարանի կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«3» մայիսի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 80-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 մայիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Վարդևանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսիսյանի,

2(106)2022
ՍԵՂԵԿԿԵԿԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասի և 86-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 10-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Օրենսգրքի՝ «**Բարձրագույն դատական խորհրդի անդամներին ներկայացվող պահանջները**» վերտառությամբ 80-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է.

«9. Ազգային ժողովի կողմից որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ չի կարող ընտրվել այն անձը, որն ունի սույն օրենսգրքով դատավոր նշանակվելու համար սահմանված որևէ սահմանափակում»:

Ընդունվելուց հետո Օրենսգրքի վիճարկվող հոդվածում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

Օրենսգրքի՝ «**Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարումը, դադարեցումը և կասեցումը**» վերտառությամբ 86-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարում են սույն օրենսգրքի 20-րդ գլխով սահմանված կանոններով»:

Օրենսգրքի 86-րդ հոդվածը լրացվել է 25.03.20 ՀՕ-197-Ն օրենքով: (25.03.20 ՀՕ-197-Ն օրենքն ունի անցումային դրույթ):

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2021 թվականի սեպտեմբերի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով վիճարկվող և վերաբերելի իրավադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը (այսուհետ՝ նաև Դիմող) նշում է, որ Սահմանադրության 166-րդ հոդվածի 8-րդ մասը դատավորների պաշտոնավարման վերին շեմ է նախատեսում մինչև 65 տարին լրանալը, մինչդեռ Բարձրագույն դատական խորհրդի որևէ անդամի տարիքային շեմի վերաբերյալ կարգավորում առկա չէ: Ըստ Դիմողի՝ հիշյալ մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ չնայած Բարձրագույն դատական խորհուրդը բաղկացած է դատավոր և իրավաբան գիտնական անդամներից, սակայն առանցքայինն այն է, որ Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանադիրն արձանագրել է. «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան»:

Դիմողը գտնում է, որ որպես դատարան հանդես գալու վավերապայմանները ենթադրում են նաև հենց Սահմանադրությամբ նախատեսված դատավորին ներկայացվող պահանջները: Ըստ Դիմողի՝ առնվազն պատահական չէ, որ հենց իբրև դատարան հանդես գալու համար է սահմանադիրը նախատեսել տարիքային շեմ, որն իր մեջ ունեցել է «կոնկրետ համաչափ և իրավաչափ նպատակ»:

Վերլուծելով սահմանադրական և օրենսդրական կարգավորումները՝ Դիմողը նշում է, որ Օրենսգրքի 160-րդ հոդվածը (սահմանում է տարիքային շեմի հետ կապված լիազորությունների դադարում) կիրառելի է

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՍՏԱՐՎԱԿ ԸՆԴՈՒՄ 2(106)/2022

ինչպես Դատավորների ընդհանուր ժողովի, այնպես էլ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամների նկատմամբ:

Օրենսգրքի 80-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ Դիմողը նշում է, որ Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամ կարող է ընտրվել այն իրավաբան գիտնականը կամ հեղինակավոր իրավաբանը, որն ունի միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, ընտրական իրավունք, օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառություն: Միաժամանակ, ըստ Դիմողի, ի լրումն նշված չափանիշների՝ նույն հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ Ազգային ժողովի կողմից որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ չի կարող ընտրվել այն անձը, որն ունի սույն օրենսգրքով դատավոր նշանակվելու համար սահմանված որևէ սահմանափակում:

Դիմողի պնդմամբ դատավոր նշանակվելու համար սահմանափակումները սահմանված են Օրենսգրքի 97 և 112-րդ հոդվածներում, և պահանջներից յուրաքանչյուրի բացակայությունը, ըստ էության, անհնարին է դարձնում դատավորի պաշտոնավարումը:

Դիմողի կարծիքով Օրենսգրքի 80-րդ հոդվածի 9-րդ մասը հղում է կատարում ընդհանուր առմամբ դատավորի համար սահմանված սահմանափակումներին, հետևաբար՝ դատավոր նշանակվելու, ներառյալ դատավորի թեկնածու համարվելու համար սահմանված սահմանափակումները հավասարապես կիրառելի են նաև տվյալ դեպքում:

Դիմողը գտնում է, որ նշված նորմի հետ համակարգորեն կապված է Օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, որը սահմանում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարման դեպքերը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարում են Օրենսգրքի 20-րդ գլխով սահմանված կանոններով: Դիմողի պնդմամբ այս հոդվածում չկա որևէ տարբերակում դատավոր հանդիսացող անդամների և իրավաբան գիտնական (հեղինակավոր իրավաբան) անդամների մասով, հետևաբար՝ լիազորությունների դադարման հիմքերը, կանոնները, ընթացակարգերը կիրառելի են նրանց նկատմամբ, և

համաձայն Օրենսգրքի 20-րդ գլխում ներառված 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ դատավորի լիազորությունները, ի թիվս այլնի, դադարում են նաև, եթե լրացել է նրա 65 տարին:

Ըստ Դիմողի՝ նշված հոդվածների համակարգային վերլուծությունից և համադրումից հետևում է, որ Օրենսգրքի 160-րդ հոդվածը (որը սահմանում է տարիքային շեմի հետ կապված լիազորությունների դադարում) կիրառելի է ինչպես դատավորների ընդհանուր ժողովի, այնպես էլ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամների նկատմամբ:

Դիմողը նշում է, որ իրավական որոշակիության սկզբունքը, լինելով նաև իրավական կայունության երաշխիքներից մեկը, ուղղակիորեն փոխկապակցված է Սահմանադրության իրավական պետության սկզբունքի հետ և գործնականում, երբ ուղղակի անտեսվում է վիճարկվող «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասը, այն առաջացնում է անհամապատասխանություն Սահմանադրության պահանջներին:

Ըստ Դիմողի՝ վիճարկվող նորմը *prima facie* որոշակիության խնդիր չի առաջացնում, սակայն բոլոր դեպքերում գործնականում դրա տարբերակված մեկնաբանումն արդեն իսկ փաստում է դրա հստակեցման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով, որ այն սահմանադրի կողմից պատվիրակված դրույթ է և բխում է Սահմանադրության 174-րդ հոդվածից:

Դիմողը, վկայակոչելով իրավական որոշակիության վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված մի շարք դիրքորոշումներ, գտնում է, որ պետք է բացահայտվի՝ արդյոք վիճարկվող նորմը բավարար հստակությամբ և այնպիսի ձևակերպմամբ է ամրագրված, որ բացառում է տարբերակված մեկնաբանման հնարավորությունը և առաջացնում է անհրաժեշտություն նաև բացահայտելու առհասարակ դրա բովանդակությունը:

Դիմողը նշում է նաև, որ դատավոր անդամի և իրավաբան գիտնական անդամի միջև տարիքային շեմի առկայությունը մի դեպքում, իսկ մյուս դեպքում՝ դրա բացակայությունն առաջացնում է նաև խտրականության արգելքի ռիսկեր:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԿԻ ◆ 2(106)/2022

Դիմողի գնահատմամբ՝ Օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթը՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարման մասով, վերաբերում է բոլոր անդամներին՝ դատավոր կամ ոչ դատավոր: Դիմողը գտնում է, որ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների տեսանկյունից և հենց դրա երաշխավորման նպատակով է նման կարգավորում նախատեսվել օրգանիկ օրենքում, և դրա ձևակերպումը թեև առերևույթ հստակ է, սակայն կրկին մեկնաբանվել է այնպես, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամներից մեկի տարիքի անհամապատասխանության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդն օբյեկտիվորեն ի վիճակի չլինի հանդես գալ որպես դատարան:

Դիմողը եզրահանգում է, որ սահմանադիրը Բարձրագույն դատական խորհրդի դատավոր հանդիսացող անդամների և ոչ դատավոր անդամների համար Սահմանադրության 174-րդ հոդվածում տարիքային շեմ չի նախատեսում, քանի որ Սահմանադրությունն ինքնաբավ փաստաթուղթ է և կարող է մեկնաբանվել ոչ թե մեկուսի, այլ ամբողջության մեջ, իսկ տարիքային շեմի հարցն արդեն իսկ կարգավորված է Սահմանադրության 166-րդ հոդվածով:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող նորմերն այնքանով, որքանով թույլատրում են որպես դատարան հանդես գալու սահմանադրական լիազորության շրջանակներում դատավորի տարիքային շեմին չհամապատասխանող անդամի մասնակցությունը, չեն համապատասխանում Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին, ինչպես նաև 174 և 175-րդ հոդվածներին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև Պատասխանող) վկայակոչելով Սահմանադրության և Օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումները, արձանագրում է, որ դատավոր նշանակվելու սահմանափակումների սպառիչ ցանկը թվարկված է Օրենսգրքի 112-րդ հոդվածում, որոնք տարածվում են նաև Ազգային ժողովի կողմից որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրվող անձի նկատմամբ, և նկատի

ունենալով այն, որ տվյալ սահմանափակումների մեջ տարիքային շեմը նախատեսված չէ, ուստի, Պատասխանողի գնահատմամբ, նման սահմանափակում չի կարող կիրառվել խնդրո առարկա կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ: Ավելին, Օրենսգրքի 97-րդ հոդվածը վերաբերում է դատավորի թեկնածուի հավակնորդին ներկայացվող պահանջներին, որոնք որևէ կերպ չեն կարող տարածվել Ազգային ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ:

Վերլուծելով Օրենսգրքի 86-րդ հոդվածի իրավակարգավորումները՝ Պատասխանողը նշում է, որ հիշյալ հոդվածի 2-րդ մասը հղում է կատարում Օրենսգրքի 20-րդ գլխով սահմանված կանոններին, ընդ որում՝ նույն հոդվածի 1-ին մասում տարիքային շեմը՝ որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարման հիմք նախատեսված չէ, իսկ Օրենսգրքի 160-րդ հոդվածում թվարկված են դատավորի լիազորությունների դադարման դեպքերը, որոնք վերաբերելի չեն Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամին:

Պատճառաբանելով, որ օրենսդիրը հստակորեն տարանջատել է «խորհրդի անդամ և դատավոր կատեգորիաները, ինչպես նաև լիազորությունների դադարման դեպքերը», Պատասխանողն այս մասով անհիմն է համարել դիմողի պնդումները:

Վկայակոչելով Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշումը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առանձին վճիռներ՝ Պատասխանողը պնդում է. «... Սահմանադրությամբ և այլ օրենքներով, այդ թվում՝ Սահմանադրական օրենքով Բարձրագույն դատական խորհրդի համար նախատեսված են դատարաններին բնորոշ բավարար դատավարական երաշխիքներ: Որպես դատարան հանդես գալիս կարևորվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների նշանակման կարգը, նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին ճնշումների դեմ երաշխիքների առկայությունը, այն հարցը, թե այն ընկալվում է որպես անկախ, ուստի Բարձրագույն դատական խորհրդի իրավաբան գիտնականի համար տարիքային վերին

շեմը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես դատարան հանդես գալու Բարձրագույն դատական խորհրդին ներկայացվող պահանջ»:

3. Գործի համար էական նշանակություն ունեցող հարցադրումները

Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի լուծման համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ նաև ԲԴԽ) անդամի նշանակման և լիազորությունների դադարման հետ կապված իրավակարգավորումները համահունչ են ԲԴԽ կազմավորմանն ու գործունեությանը վերաբերող սահմանադրաիրավական դրույթներին և համապատասխանում են արդյո՞ք որոշակիության սահմանադրաիրավական պահանջներին.

2. արդյո՞ք այն հանգամանքը, որ ԲԴԽ-ն որոշակի դեպքերում հանդես է գալիս որպես դատարան, դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների արդյունավետ պաշտպանության անհրաժեշտությունից արդեն իսկ հետևում է, որ դատավորների համար Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնավարման առավելագույն տարիքը կիրառելի է նաև Ազգային ժողովի կողմից ընտրված ԲԴԽ անդամների նկատմամբ.

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Սահմանադրության 174-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից, որոնցից հինգին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից, իսկ մյուս հինգին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Ընդ որում, վերջիններս ընտրվում են

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից:

Միևնույն ժամանակ Սահմանադրության վերոնշյալ դրույթը հստակ նշում է, որ Ազգային ժողովի կողմից ընտրված ԲԴԽ անդամը չի կարող լինել դատավոր: Այսինքն՝ սահմանադրական մակարդակում ԲԴԽ անդամների կարգավիճակները տարանջատվում են՝ դատավոր անդամների և դատավոր չհանդիսացող՝ իրավաբան գիտնական կամ այլ հեղինակավոր իրավաբան հանդիսացող անդամների:

ԲԴԽ անդամների վերաբերյալ տարբերակված մոտեցումն արտացոլվում է նաև նրանում, որ Սահմանադրության 174-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ԲԴԽ-ն իր կազմից Դատական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից:

Հարկ է նշել նաև, որ Սահմանադրության 174-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան՝ ԲԴԽ կազմավորման մանրամասները սահմանվում են Դատական օրենսգրքով, ընդ որում, նույն հոդվածի 5-րդ մասն Ազգային ժողովի կողմից ընտրված ԲԴԽ անդամների համար անհամատեղելիության պահանջների սահմանման հայեցողությունը վերապահել է Ազգային ժողովին՝ լիազորելով վերջինիս որոշելու նախ անհամատեղելիության պահանջներ սահմանելու կամ չսահմանելու նպատակահարմարությունը, իսկ նման պայմաններ սահմանելու դեպքում՝ որոշելու դրանց ծավալը և բովանդակությունը: Այսինքն, սահմանադիրը չի բացառել իրավիճակներ, երբ Դատական օրենսգրքով չնախատեսվի որևէ անհամատեղելիության պահանջ Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամների համար, իսկ սահմանելու դեպքում պարտադիր չէ, որ այդ պահանջները լինեն նույնական դատավորների համար սահմանված սահմանափակումների հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ Սահմանադրության 173-րդ հոդվածի 3-րդ մասով ուղղակի շեշտվում է, որ Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամը չի կարող լինել դատավոր, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Բարձրագույն դատական խորհրդի կազմը և կազմավորման կարգը» վերտառությամբ հոդվածով Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի համար սահմանված են բացառապես հետևյալ պահանջները.

- հանդիսանալ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի,
- ունենալ ընտրական իրավունք,
- լինել իրավաբան գիտնական կամ այլ հեղինակավոր իրավաբան,
- օժտված լինել բարձր մասնագիտական որակներով,
- ունենալ մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառություն:

Սահմանադրաիրավական վերաբերելի կարգավորումները հիմք ընդունելով՝ օրենսդիրը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի «Բարձրագույն դատական խորհրդի անդամներին ներկայացվող պահանջները» վերտառությամբ 80-րդ հոդվածում Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի համար նախատեսել է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամ չի կարող ընտրվել այն անձը, որն ունի «սույն օրենսգրքով դատավոր նշանակվելու համար սահմանված որևէ սահմանափակում»:

Վերոգրյալ հանգամանքը հաշվի առնելով՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատավոր նշանակվելու համար Օրենսգրքով նախատեսված սահմանափակումներին:

Համաձայն Օրենսգրքի 112-րդ հոդվածի՝ դատավոր չի կարող նշանակվել այն անձը՝

- 1) որը դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը մարված կամ հանված չէ,
- 2) որը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ է կրել՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից,

3) որն ունի դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն,

4) որը չի անցել պարտադիր զինվորական ծառայություն կամ այլընտրանքային ծառայություն կամ օրենքով նախատեսված կարգով չի ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից (եթե անձն արական սեռի է),

5) որը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ սնանկ, և սնանկության վարույթը չի ավարտվել,

6) որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում:

Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 1.1-ին մասով Հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար սահմանված են լրացուցիչ պահանջներ, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն դատարանի դատավոր չի կարող նշանակվել այն անձը՝

- որը, լինելով դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննիչ, օպերիւիազոր, փաստաբան կամ նախկին դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննիչ, օպերիւիազոր, փաստաբան վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից:

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամների նկատմամբ ևս կիրառելի են դատավորի թեկնածուի հավակնորդների համար նախատեսված պահանջները, ապա Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել նաև այդ պահանջներին:

Այսպես՝ Օրենսգրքի 97-րդ հոդվածը նախատեսում է դատավորի թեկնածուի հավակնորդին ներկայացվող պահանջներ, համաձայն որոնց՝ «... Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար որակավորման ստուգմանը կարող են մասնակցել **25-ից 60 տարեկան**, ընտրական իրավունք ունեցող անձինք, եթե՝

1) ունեն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԿԻ ◆ 2(106)2022
221

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 2(106)2022

2) Հայաստանի Հանրապետությունում ստացել են իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

3) տիրապետում են հայերենին.

4) ունեն անզլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկ՝ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակի իմացություն:

5) միայն իրավագիտության բակալավրի աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, իսկ իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան ունենալու կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն.

6) առկա չեն դատավոր նշանակվելու՝ սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները»:

Նախ՝ անհրաժեշտ է նշել, որ վերոհիշյալ հոդվածի 6-րդ կետը հղում է կատարում դատավոր նշանակելու համար Օրենսգրքով նախատեսված սահմանափակումներին, մասնավորապես՝ Օրենսգրքի՝ «Դատավոր նշանակվելու սահմանափակումները» վերտառությամբ 112-րդ հոդվածին: Այսինքն՝ Օրենսգրքը հստակ տարանջատել է դատավորի թեկնածուների հավակնորդների նկատմամբ պահանջները և դատավոր նշանակվելու համար նախատեսված սահմանափակումները՝ դատավոր նշանակվելու համար նախատեսված սահմանափակումները ներառելով դատավորի թեկնածուների հավակնորդների համար սահմանված պահանջներում:

Երկրորդ՝ Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի և դատավորի թեկնածուի հավակնորդի համար նախատեսված որոշ պահանջներ համընկնում են, մասնավորապես՝ ընտրական իրավունք ունենալը, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալը, իրավաբանի որակավորում ունենալը:

Երրորդ՝ դատավորի թեկնածուի հավակնորդի համար սահմանված են առավել նվազ պահանջներ, քան Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի նկատմամբ: Մասնավորապես, մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառություն ունենալու պահանջ՝ Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի համար՝ ի տարբերություն դատավորի թեկնածուի հավակնորդի համար նախատեսված պահանջների, այն է՝ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն՝ միայն իրավագիտության բակալավրի աստիճան կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ունեցող հավակնորդների, ինչպես նաև առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն՝ իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ունեցող հավակնորդների համար:

Չորրորդ՝ դատավորի թեկնածուների հավակնորդների համար սահմանված են պահանջներ, որոնք նախատեսված չեն Օրենսգրքի 112-րդ հոդվածով դատավորների համար նախատեսված սահմանափակումների շարքում: Մասնավորապես, 25-ից 60 տարեկան հանդիսանալը, անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկին՝ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակի իմացությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ եթե Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամների նկատմամբ կիրառվեն Օրենսգրքի 97-րդ հոդվածով նախատեսված տարիքային սահմանափակումները, ապա 60 տարին

լրացած անձինք հնարավորություն չեն ունենա ընտրվել ՀՀ ԲԴԽ անդամ: Մինչդեռ նման սահմանափակումներ գոյություն չունեն դատավորի կարգավիճակ ունեցող ԲԴԽ անդամների նկատմամբ, որոնք կարող են ընտրվել ԲԴԽ անդամ նաև 60 տարին լրանալուց հետո: Նման տարբերակված մոտեցումը չի կարող ունենալ որևէ իրավաչափ նպատակ:

Վերոգրյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավորի թեկնածուի հավակնորդի համար նախատեսված պահանջներն Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի նկատմամբ կիրառելի են միայն դատավոր նշանակվելու համար Օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների մասով:

4.2. Օրենսգրքի 86-րդ հոդվածը, որի՝ սույն գործով վիճարկվող 2-րդ մասի համաձայն՝ «Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարում են սույն օրենսգրքի 20-րդ գլխով սահմանված կանոններով», կարգավորում է ԲԴԽ անդամների լիազորությունների դադարման, դադարեցման և կասեցման հարաբերությունները:

Ակներև է, որ օրենսդրի կողմից հստակ տարանջատվել են ԲԴԽ անդամի լիազորությունների դադարման և դադարեցման **դեպքերը** և **կարգը**: Մասնավորապես, ԲԴԽ անդամի լիազորությունների դադարման դեպքերն սպառիչ կերպով ներկայացված են վերոհիշյալ հոդվածի 1-ին մասում: Դրանք են՝

- 1) լիազորությունների ժամկետն ավարտվելը.
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը.
- 3) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելը.
- 4) նրան անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը.
- 5) նրա հրաժարականը.
- 6) նրա մահը.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022 ՏԵՂԵԿՎՈՐ

7) դատավոր հանդիսանալու դեպքում՝ նրա լիազորությունների դադարեցումը կամ դադարումը:

Նույն հոդվածի 3-րդ մասում ևս սպառիչ կերպով նախատեսված են ԲԴԽ անդամների լիազորությունների դադարեցման դեպքերը:

Ընդ որում, եթե լիազորությունների **դադարեցման կարգի** վերաբերյալ իրավակարգավորումները նախատեսված են նույն հոդվածում, ապա լիազորությունների **դադարումը տեղի է ունենում Օրենսգրքի 20-րդ գլխով նախատեսված կանոններով**, այն է՝ դատավորի լիազորությունների դադարման իրավակարգավորումներով, որոնց հղում է կատարվում 86-րդ հոդվածի 2-րդ մասում:

Համաձայն Օրենսգրքի 20-րդ գլխում ներառված 160-րդ հոդվածի՝ դատավորի լիազորությունները դադարում են, եթե՝

1) նա հրաժարական է ներկայացնում.

2) լրացել է նրա 65 տարին.

3) նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ.

4) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով.

5) կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

6) նա մահացել է:

Վերոնշյալ հոդվածների իրավահամեմատական վերլուծության արդյունքում հարկ է նկատել, որ ԲԴԽ անդամի լիազորությունների դադարման 7 հիմքերից 5-ը նույնաբովանդակ են դատավորի լիազորությունների դադարման հիմքերի հետ: ԲԴԽ անդամի լիազորությունների դադարման մյուս երկու հիմքերը վերաբերում են մի դեպքում՝ լիազորությունների ժամկետի ավարտին, այսինքն՝ պաշտոնավարման հինգ տարին լրանալուն, մյուս դեպքում՝ որպես դատավոր լիազորությունների դադարեցմանը կամ դադարմանը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ 65 տարին լրանալը որպես դատավորի լիազորությունների դադարման հիմք վերաբերելի է միայն

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԿԻ ◆ 2(106)/2022

ԲԴԽ դատավոր անդամին, քանի որ Օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը վերաբերում է միայն ԲԴԽ դատավոր անդամներին, իսկ 160-րդ հոդվածի 1-ին մասով՝ բացի 65 տարին լրանալու հանգամանքից դատավորի լիազորությունների դադարման որևէ նոր հիմք չի նախատեսվում: Այսինքն՝ Օրենսգրքի 160-րդ հոդվածին հղում կատարելն արդարացված է միայն ԲԴԽ դատավոր անդամների համար:

Այդ առումով՝ վիճարկվող դրույթում Օրենսգրքի 20-րդ գլխի կանոններին հղում կատարելով՝ Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամների լիազորությունների դադարման համար որևէ նոր հիմք չի սահմանվում: Համապատասխան գլխի կանոններով կարգավորվում են ԲԴԽ անդամի **լիազորությունների դադարման ընթացակարգային** հարցերը:

Հաշվի առնելով իրավական որոշակիության վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած մի շարք դիրքորոշումները՝ մասնավորապես այն, որ՝

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (13.05.2008թ. ՍԴՈ-753),

- « ... իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (02.12.2014թ. ՍԴՈ-1176):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող դրույթները կանխատեսելի են, բավականաչափ հստակ ձևակերպված և չեն առաջացնում իրավական անորոշություն:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

4.3. Հաշվի առնելով դիմողի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ որպես դատարան հանդես գալու հանգամանքն արդեն իսկ ենթադրում է, որ Ազգային ժողովի կողմից ընտրված ԲԴԽ անդամներին վերաբերելի են դատավորների համար Սահմանադրությամբ նախատեսված պահանջները, Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ Բարձրագույն դատական խորհրդի իրավական կարգավիճակին և վերջինիս կողմից որպես դատարան հանդես գալու հիմնախնդիրներին:

Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը սահմանված է Սահմանադրության՝ «Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը» վերտառությամբ 7-րդ գլխում:

Համաձայն Սահմանադրության 163-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ: Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրաիրավական առաքելությունը դատարանների և դատավորների անկախության երաշխավորումն է: Իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար ԲԴԽ-ն օժտված է մի շարք լիազորություններով, այդ թվում՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորների լիազորությունները դադարեցնելու լիազորությամբ: Նշված հարցերը քննելիս, ինչպես նաև Օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

Հաշվի առնելով դիմողի դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ԲԴԽ-ի՝ որպես դատարան հանդես գալու հանգամանքը դիտարկել արդար դատաքննության իրավունքի և դրա ապահովման համար առկա երաշխիքների պահպանման տեսանկյունից՝ հաշվի առնելով, մասնավորապես, հետևյալ նկատառումներն ու դիրքորոշումները.

Սահմանադրության՝ «Արդար դատաքննության իրավունքը» վերտառությամբ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի

անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Արդար դատաքննության իրավունքը ենթադրում է ինչպես դատարան դիմելու հնարավորությունը, այնպես էլ գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, ինչը նշանակում է, որ գործը հրապարակայնության սկզբունքի պահպանմամբ քննելու պահանջ ներկայացնելու հնարավորությունն արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարր է» (02.04.2019թ. ՍԴՈ-1452):

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի դեկտեմբերի 5-ի ՍԴՈ-1393 որոշմամբ նշել է, որ «... ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում և անկողմնակալ, անաչառ դատարանի կողմից»:

Մյուս կողմից, Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ դիրքորոշում է արտահայտվել առ այն, որ « ... Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի գործունեության սկզբունքների և ընթացակարգերի տեսանկյունից առկա երաշխիքներին, ապա դրանց հիմնական ակունքը Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասն է, ըստ որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան այն իմաստով, որ որպես դատարան հանդես եկող անկախ պետական մարմնի թե՛ ձևավորման, թե՛ գործունեության կարգը պետք է համապատասխանի դատարաններին բնորոշ համապատասխան հատկանիշներին»:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է. «Այսպիսով, ամփոփելով ամբողջ վերոգրյալը, մասնավորապես, Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների, ձևավորման կարգի, գործունեության սկզբունքների վերաբերյալ վերլուծություններն ու մեջբերումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով Բարձրագույն

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում Սահմանադրությամբ և այլ օրենքներով նախատեսված են դատարաններին բնորոշ այնպիսի դատավարական երաշխիքներ, ինչպիսիք են, մասնավորապես, բայց ոչ միայն, ողջամիտ ժամկետում գործի քննությունը, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարությունը, դատական վարույթի հրապարակայնությունը, դատական ակտերի պարտադիրությունը, որոնք իրենց ամբողջության մեջ ուղղված են Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացման ապահովմանը»:

Հարկ է նշել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Դատարան) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի վերաբերյալ, համաձայն որի՝ «1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ տրիբունալի կողմից ... լսումների իրավունք: ...», արտահայտել է մի շարք դիրքորոշումներ: Մասնավորապես, Դատարանը նշել է, որ «Այն մարմինը, որը չի դասակարգվում որպես պետության դատարաններից որևէ մեկը, կարող է, այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներով ներառվել «տրիբունալ» հասկացության մեջ՝ տվյալ եզրույթի նյութաիրավական իմաստով (**Sramek-ն ընդդեմ Ավստրիայի, § 36**):

«Դատարան» կամ «տրիբունալ» հասկացությունը բնութագրվում է տվյալ եզրույթի նյութաիրավական իմաստով՝ իր դատական գործառույթով, այն է՝ որոշակի հարցերին լուծում տալն իր իրավասության շրջանակներում՝ հիմնվելով օրենքի նորմերի վրա և սահմանված կարգով վարույթ իրականացնելուց հետո (**նույն պեղում, § 36, Cyprus-ն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], § 233**):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներին համահունչ պարտադիր չէ, որ «տրիբունալը» լինի տվյալ երկրի ստանդարտ դատական համակարգում ընդգրկված ընդհանուր իրավասության դատարան: Այն կարող է ստեղծվել այնպիսի կոնկրետ հարցերով զբաղվելու համար, որոնք կարող են պատշաճորեն կարգավորվել

սովորական դատական համակարգից դուրս: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ համապատասխանությունն ապահովելու համար կարևոր են գործող երաշխիքները՝ թե՛ նյութական, թե՛ դատավարական (**Rolf Gustafson-ն ընդդեմ Շվեդիայի, § 45**):

«Տրիբունալը» պետք է բավարարի նաև մի շարք այլ պահանջներ. անկախություն, մասնավորապես՝ գործադիր իշխանությունից, անաչառություն, դրա անդամների համար սահմանված պաշտոնավարման ժամկետներ, դրա գործունեության կարգով ապահովվող երաշխիքներ, որոնց մի մասը շարադրված է 6-րդ հոդվածի 1-ին կետում (**Le Compte, Van Leuven and De Meyere-ն ընդդեմ Բելգիայի, § 55, Cyprus-ն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], § 233**):

Ինչ վերաբերում է անկախությունը գնահատելու չափորոշիչներին, «Երբ որոշվում է՝ արդյոք տվյալ մարմինը կարող է համարվել «անկախ», Դատարանը հաշվի է առնում, *inter alia*, հետևյալ չափորոշիչները (**Langborger-ն ընդդեմ Շվեդիայի, § 32, Kleyn-ը եւ այլք ընդդեմ Նիդեռլանդների [ՄՊ], § 190**)՝

- i. դրա անդամների նշանակման կարգը և
- ii. նրանց պաշտոնավարման ժամկետը,
- iii. արտաքին ճնշումներից պաշտպանության երաշխիքների առկայությունը, և
- iv. արդյոք այդ մարմինն օժտված է անկախության արտաքին հատկանիշներով»:

Հարկ է նշել, որ Դատարանը պաշտոնավարման որևէ կոնկրետ ժամկետ չի նախանշել որոշում կայացնող մարմնի անդամների համար, չնայած ընդհանուր առմամբ համարվում է, որ պաշտոնավարման ընթացքում նրանց անփոփոխելիությունը բխում է նրանց անկախության պահանջից:

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի ընտրած ԲԴԽ անդամի պաշտոնավարման առավելագույն տարիքին, ապա հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/32 և դեկտեմբերի 13-ի 40/146 բանաձևերով հավանության արժանացած «Դատական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(106)2022

մարմինների անկախության հիմնարար սկզբունքներով» նախատեսվել է, որ՝

«11. Դատավորների լիազորությունների ժամկետը, նրանց անկախությունը, անվտանգությունը, համապատասխան վարձատրությունը, ծառայության պայմանները, թոշակը և թոշակի գնալու տարիքը պետք է պատշաճ ձևով երաշխավորվեն օրենքով:

12. Նշանակված կամ ընտրված դատավորները լիազորությունների երաշխավորված ժամկետ ունեն մինչև պարտադիր թոշակի գնալը կամ լիազորությունների ժամկետի ավարտը, որտեղ այդպիսին հաստատված է»:

Այսինքն՝ դատավորների համար պաշտոնավարման տարիքն ապահովում է դատավորների անփոփոխելիության սկզբունքի իրագործումը: Այդ առումով առավելագույն տարիքը երաշխիք է, որ մինչև այդ ժամկետը որևէ մեկը չի կարող առանց օրինական հիմքերի դադարեցնել դատավորի պաշտոնավարումը: Ազգային ժողովի ընտրած ԲԴԽ անդամների համար նման երաշխիք է Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնավարման հնգամյա ժամկետը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ԲԴԽ-ի՝ որպես դատարան հանդես գալու օրենսդրական պահանջը չի ենթադրում դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված ԲԴԽ անդամների կարգավիճակների նույնացում ամբողջ ծավալով, քանի որ նախ՝ դա չի բխում ԲԴԽ-ի սահմանադրաիրավական կարգավիճակից, բացի դրանից, արդարադատության իրականացման կարևոր նշանակություն ունեցող՝ ԲԴԽ անդամի անփոփոխելիության սկզբունքը հստակ արտացոլված է Սահմանադրական մակարդակում որպես ԲԴԽ անդամի պաշտոնավարման ժամկետ: Իսկ դատավորի պաշտոնավարման 65 տարին լրանալը դատավորի կարգավիճակ ունեցող ԲԴԽ անդամի լիազորությունների դադարման հիմք է այն պատճառով, որ Սահմանադրությամբ նախատեսվել է ԲԴԽ կազմում 5 դատավոր անդամի առկայության անհրաժեշտությունը:

Նշված համատեքստում, ԲԴԽ դատավոր անդամների մասով նախատեսված են լիազորությունների դադարման երկու առանձին հիմքեր՝ տարիքը (65 տարին) լրանալը և պաշտոնավարման ժամկետը (5 տարին)

լրանալը, մինչդեռ Ազգային ժողովի կողմից ընտրած ԲԴԽ անդամների մասով նախատեսված է լիազորությունների դադարման մեկ հիմք՝ պաշտոնավարման ժամկետը (5 տարին) լրանալը: Ընդ որում, եթե պաշտոնավարման ժամկետը նույնական է ԲԴԽ դատավոր և իրավաբան գիտնական կամ այլ հեղինակավոր իրավաբան անդամների համար, ապա 65 տարին լրանալու պահանջը սահմանադիրը նախատեսել է միայն դատավորի համար:

Հարկ է նշել նաև, որ Բարձրագույն դատական խորհուրդը՝ որպես դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող պետական մարմին, իրականացնում է բազմաթիվ լիազորություններ, որոնք չեն առնչվում արդարադատության իրականացման հետ: Որպես դատարան ԲԴԽ-ն հանդես է գալիս միայն Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով նախատեսված դեպքերում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև անդրադառնալ սահմանադրի կողմից դատավորի և ԲԴԽ անդամի կարգավիճակների և նրանց ներկայացվող պահանջների վերաբերյալ կարգավորումների տարբերակման առկայության հարցադրմանը:

Ինչպես դատավորի, այնպես էլ Բարձրագույն դատական խորհրդի անդամի համար ամրագրված սահմանադրական և օրենսդրական կարգավորումներն առաջին հերթին նպատակ են հետապնդում ապահովել դատավորի և ԲԴԽ անդամի գործունեության այնպիսի կարևոր սկզբունքի երաշխավորումը, ինչպիսին անկախությունն է: Հենց վերոնշյալ երաշխիքի ապահովման նկատառումներից ելնելով է սահմանադիրը դատավորի համար նախատեսել պաշտոնավարման հնարավորություն մինչև 65 տարին լրանալը: Պաշտոնավարման նման ժամկետի նախատեսումը կոչված է երաշխավորելու դատավորի անկախությունն ու արդարադատություն իրականացնելիս որևէ հանգամանքով կաշկանդված չլինելը:

Այս առումով հարկ է վկայակոչել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2010)12 հանձնարարականի 49 և 50-րդ պարբերություններով ամրագրված գաղափարներն առ այն, որ՝ «Պաշտոնավարման և անփոփոխելիության երաշխիքները դատավորների անկախության առանցքային տարրերն են: Այսինքն՝ դատավորների պաշտոնա-

վարումը պետք է երաշխավորված լինի մինչև կենսաթոշակային տարիքի հասնելը, եթե այդպիսին սահմանված է: Դատավորների պաշտոնավարման ժամկետները պետք է նախատեսվեն օրենքով»:

Ինչ վերաբերում է ԲԴԽ անդամի պաշտոնավարման ժամկետին, ապա այս առումով սահմանադիրն առաջնորդվել է լիազորությունների ժամկետը հինգ տարի սահմանելու սկզբունքով, որից հետևում է, որ սահմանադիրը ԲԴԽ անդամի գործունեության անկախությունը երաշխավորել է հստակ ժամկետի ամրագրմամբ, ինչպես նաև հետագայում վերընտրվելու արգելքով, որպիսի հանգամանքները ևս կոչված են երաշխավորելու ԲԴԽ անդամի անկախությունն ու գործունեություն իրականացնելիս կողմնակի հանգամանքներով կաշկանդված չլինելու կարևոր երաշխիքների ապահովումը:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ԲԴԽ՝ դատավոր և իրավաբան գիտնական անդամների նկատմամբ կիրառվող տարիքային շեմի և այդ հիմքով լիազորությունների դադարման վերաբերյալ կարգավորումները չեն կարող նույնանալ, քանի որ դատավոր անդամի նկատմամբ շարունակվում են կիրառելի լինել Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով ամրագրված կարգավորումները, մասնավորապես՝ մինչև 65 տարին պաշտոնավարելու հնարավորությունը: Ուստի՝ ԲԴԽ դատավոր անդամի 65 տարին լրանալու պարագայում վերջինս չի կարող շարունակել պաշտոնավարել որպես ԲԴԽ անդամ ոչ թե այն հիմքով, որ ԲԴԽ անդամի համար առկա է պաշտոնավարման նման տարիքային սահմանափակում, այլ բացառապես այն պատճառով, որ ԲԴԽ դատավոր անդամը դարձել է ԲԴԽ անդամ հենց դատավոր լինելու հիմքով, ուստի՝ երբ վերանում է այդ հիմքը, ուղղակիորեն վերանում է նաև որպես ԲԴԽ անդամ պաշտոնավարելու հնարավորությունը: Սակայն նույն մոտեցումը հնարավոր չէ տարածել Ազգային ժողովի կողմից ընտրված անդամի նկատմամբ, քանի որ սահմանադիրը ԲԴԽ այդ անդամի նկատմամբ չի տարածել դատավորի համար սահմանված պաշտոնավարման տարիքային շեմը, ուստի՝ սահմանադրի կամքի բացահայտումը հստակ ցույց է տալիս, որ պաշտոնավարման 65 տարվա շեմը վերաբերում է բացառապես դատավորներին և կոչված է երաշխավորելու վերջիններիս գործունեության անկախությունը:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադիրը դատավորի համար նախատեսել է մինչև 65 տարին լրանալը պաշտոնավարելու հնարավորություն, իսկ ԲԴԽ անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանափակել է հինգ տարով, որպիսի կարգավորումներից հետևում է, որ սահմանադիրը հստակ տարանջատել է այս երկու սուբյեկտները և նրաց պաշտոնավարման ժամկետները՝ մի դեպքում դա պայմանավորելով կոնկրետ տարիքով, մյուս դեպքում՝ հստակ ժամկետով, ուստի՝ այս երկու կարգավորումների նույնացումն ու այդ ձևով մեկնաբանումն անթույլատրելի է և չի բխում սահմանադրի կամքից:

Վերոգրյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական կարգավորումներին համապատասխանության տեսանկյունից Ազգային ժողովի ընտրած ԲԴԽ անդամի 65 տարին լրանալը հիմք չէ լիազորությունների դադարման համար և չի խոչընդոտում Բարձրագույն դատական խորհրդին սահմանված դեպքերում հանդես գալու որպես դատարան:

4.4. Ինչ վերաբերում է դիմողի ներկայացրած դիրքորոշմանն առ այն, որ դատավոր անդամի և Ազգային ժողովի ընտրած անդամի միջև տարիքային շեմի առկայությունը մի դեպքում, իսկ մյուս դեպքում՝ դրա բացակայությունը առաջացնում են «խտրականության արգելքի ռիսկեր», հարկ է նշել, որ ԲԴԽ-ի կազմում դատավոր անդամների և Ազգային ժողովի ընտրած անդամների առկայության պահանջն ունի, նախևառաջ, սահմանադրական ամրագրում (Սահմանադրության 174-րդ հոդված), ընդ որում՝ հենց Սահմանադրությամբ են ամրագրվում ինչպես դատավոր, այնպես էլ Ազգային ժողովի ընտրած անդամներին ներկայացվող պահանջները, որոնք իրենց մասնավորեցումն են ստացել նաև օրենսդրական կարգավորման շրջանակներում:

Բացի դրանից, անդրադառնալով Ազգային ժողովի կողմից ընտրված ԲԴԽ անդամի համար պաշտոնավարման առավելագույն տարիք սահմանված չլինելու հանգամանքին՝ ԲԴԽ դատավոր անդամի համար պաշտոնավարման սահմանափակման համեմատությամբ, խտրական վերաբերմունքի վերաբերյալ դիմողի պնդումներին՝ Սահմանադրական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 29-րդ հոդվածը, ամրագրելով խտրականության արգելքի սկզբունքը, սահմանում է. «խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Ըստ էության, Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված են այն հիմքերը, որոնցով պայմանավորված տարբերակված մոտեցում ցուցաբերելն արգելվում է: Սահմանադրության 29-րդ հոդվածով պաշտպանվող հիմքի առկայության հարցը պարզելիս Սահմանադրական դատարանը հաշվի է առնում, որ դիմողը բարձրացնում է հանրային ծառայության իրավահարաբերություններում պետական նույն մարմնի՝ ԲԴԽ անդամների ընտրության և պաշտոնավարման տարբեր կարգավիճակով պայմանավորված օրենսդրի կողմից տարբերակված մոտեցման հարց: Այսինքն՝ օրենսդրի դրսևորած տարբերակված մոտեցումը պայմանավորված է տարբեր կարգավիճակ ունեցող անձանց պաշտոնի նշանակման հանգամանքով:

Սահմանադրության 29-րդ հոդվածում թվարկված են խտրականության սահմանադրական արգելքով պաշտպանված հիմքերը, որոնք ունեն հստակ և որոշակի բովանդակություն, բացառությամբ նույն հոդվածում պաշտպանվող հիմքերի թվարկման համար օգտագործված «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպմանը, որը, ի տարբերություն պաշտպանվող հիմքերի մնացած մասի, ոչ սպառիչ ցանկ է նախատեսում:

Այդուամենայնիվ, թեպետ «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպումը խտրականության արգելքով պաշտպանվող ոչ սպառիչ ցանկ է նախատեսում, այն խիստ որոշակիորեն սահմանում է այդ ցանկով հնարավոր հիմքերի բնույթը, որոնք պետք է լինեն «անձնական» կամ «սոցիալական»: Այս կապակցությամբ ԲԴԽ անդամ-

ների՝ Ազգային ժողովի կամ դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվելու և որպես դատավոր կամ որպես իրավաբան գիտնական կամ այլ հեղինակավոր իրավաբան պաշտոնավարելու հանգամանքը Սահմանադրության 29-րդ հոդվածի լույսի ներքո չի կարող գնահատվել որպես «անձնական» կամ «սոցիալական»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

6 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1650

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 2(106)2022

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 6-Ի «ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ
ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔԻ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ
ԵՎ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ
ՍԴՈ-1650 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում ենք հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 6-ի «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասի և 86-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1650 որոշման (այսուհետ՝ ՍԴՈ-1650 որոշում) վերաբերյալ:

1. Հաշվի առնելով, որ Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական առաքելությունը դատարանների և դատավորների անկախության երաշխավորումն է, մեծապես կարևորվում է Բարձրագույն դատական խորհրդի **օրինական կազմով** գործելու հանգամանքը: Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման սահմանադրորեն ամրագրված կարգի ցանկացած խախտում հարցականի տակ կդնի Բարձրագույն դատական խորհրդի լեգիտիմությունը՝ դրանով իսկ վտանգելով դատարանների և դատավորների անկախության երաշխավորումը:

2. Վերահաստատում ենք մեր այն դիրքորոշումը, որ **Սահմանադրության գերակայությունն ապահովվում է, երբ սահմանադրական արդա-**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԿԻՔ ◆ 2(106)/2022

րադատություն իրականացնելիս լեզիտիմ կազմով գործող Սահմանադրական դատարանը, լինելով անկախ և ենթարկվելով միայն Սահմանադրությանը, ընդունում է այնպիսի որոշումներ և եզրակացություններ, որոնցում առնվազն բացառվում են սահմանադրական արժեքների, սկզբունքների, նորմերի, ինստիտուտների նենգափոխումը և իմաստազրկումը, ապահովվում են Սահմանադրության միասնականությունը, ինքնաբավությունը և կայունությունը: Սահմանադրական դատարանի որոշումներով և եզրակացություններով պետք է ամբողջ ծավալով լուծվեն քննության առարկա սահմանադրական վեճերը, այլ ոչ հատվածական և աղճատված՝ հարուցելով նոր կամ խորացնելով առկա խնդիրները: Բացի դրանից, Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները պետք է կայացվեն օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության արդյունքում, որոշումների և եզրակացությունների կառուցվածքային ամբողջականությունը և տրամաբանական միասնականությունը խաթարված չլինեն, զերծ լինեն ներքին հակասություններից, երկիմաստ, սխալ ու խեղաթյուրող դիրքորոշումներից: Պակաս կարևոր չէ, որ այդ որոշումները և եզրակացությունները չլինեն անհարկի ծանրաբեռնված, այդ թվում՝ պարզունակ դատողություններով, ոչ վերաբերելի, ընդհանրական վերլուծություններով և դիրքորոշումների վկայակոչումներով:

3. Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով սույն գործով Սահմանադրական դատարանի մոտեցումներն ու եզրահանգումները՝ ՍԴՈ-1650 որոշումը հիմնավոր, հետևաբար՝ ընդունելի չենք համարում: Այսպես՝

Սահմանադրական դատարանը սույն գործով բարձրացված սահմանադրական վեճի շրջանակներում ՍԴՈ-1650 որոշման մեջ, մեր կարծիքով, պետք է անդրադառնար հետևյալ հարցերին.

- 1) արդյո՞ք Բարձրագույն դատական խորհուրդը Սահմանադրության իմաստով դատարան է, և արդյո՞ք որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի անդամներն իրականացնում են արդարադատություն (հանդես են գալիս որպես դատավոր),
- 2) եթե 1-ին հարցի պատասխանը դրական է, ապա կարո՞ղ է արդյոք նույն դատարանի դատավորների համար նախատեսվել տարբեր պահանջներ, այդ թվում՝ սովորական պայմաններում (չպայմանավորված

անցումային դրույթներով՝ կապված դատավորին տրվող երաշխիքների, օրինակ, անփոփոխելիության հետ),

3) արդյո՞ք Սահմանադրությունը նախատեսում է առանձին պահանջներ Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների համար, և արդյո՞ք դրանց մեջ ներառված է պաշտոնավարման տարիքը:

Վերոհիշյալ հարցերի շրջանակներում դատավորի պաշտոնավարման տարիք և/կամ այլ պահանջներ նախատեսող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման առումով Սահմանադրական դատարանը պետք է անդրադառնար նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) համակարգային փոխկապակցված դրույթներին վերաբերող հարցերին, մասնավորապես.

1) արդյո՞ք Դատական օրենսգրքում առկա են վիճարկվող իրավակարգավորումներին ուղղակիորեն հակասող դրույթներ,

2) արդյո՞ք Սահմանադրությամբ դատավորի պաշտոնավարման համար նախատեսված պահանջներն իրացված են այնպես, որ օրենքի բացի արդյունքում չառաջանա հակասահմանադրական կիրառություն:

ՄԴՈ-1650 որոշմամբ վերոհիշյալ հարցերի մի մասին ընդհանրապես անդրադարձ չի կատարվել, իսկ առանձին հարցերի վերաբերյալ չեն արտահայտվել հստակ ու ամբողջական իրավական դիրքորոշումներ:

4. Սահմանադրության «Դատարանները» վերտառությամբ 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ»:

Ըստ վերոհիշյալ կարգավորման՝ **ինստիտուցիոնալ առումով** Բարձրագույն դատական խորհուրդը չի համարվում դատարան: Հաշվի առնելով նաև, որ Բարձրագույն դատական խորհուրդը սահմանադրական մարմին է, այն որևէ պարագայում չի կարող համարվել օրենքով նախատեսված դեպքում ստեղծված մասնագիտացված դատարան:

Միևնույն ժամանակ, Սահմանադրության «Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները» վերտառությամբ 175-րդ հոդվածը սահմանում է, որ «Դատավորին կարգապահական պատասխանատվության

2(106)2022
 ◆ ՍԵՂՈՒԿԻ
 ◆ ՍԵՂՈՒԿԻ
 ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 239

ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան» (2-րդ մաս):

Սույն գործով բարձրացված սահմանադրական վեճի լուծման համար էական էր բացահայտել վերոհիշյալ սահմանադրական դրույթում **«հանդես է գալիս որպես դատարան»** եզրույթի սահմանադրական բովանդակությունը, մասնավորապես, այն առումով, թե նման սահմանումը բավարար է արդյոք Սահմանադրության կարգավորմամբ **դատարան չհամարվող սահմանադրական մարմնի** կողմից արդարադատություն իրականացնելու համար:

Նշված հարցի պատասխանի առումով հարկ է անդրադառնալ Սահմանադրության «Արդարադատության իրականացումը» վերտառությամբ 162-րդ հոդվածի կարգավորմանը, համաձայն որի՝

«1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է»¹:

Վերոհիշյալ կարգավորման սահմանադրական բովանդակությունից բխում է, որ՝

ա) բացի դատարաններից, արգելվում է որևէ այլ մարմնի իրականացնելու արդարադատություն՝ լինի այն քրեական, քաղաքացիական, վարչական թե սահմանադրական՝ դրանով իսկ երաշխավորելով յուրաքանչյուրի համար օրինական, հիմնավորված, պատճառաբանված արդար դատական ակտեր,

բ) եթե որևէ մարմին իրավաչափորեն՝ սահմանադրորեն պատվիրակված դեպքերում, իրականացնում է արդարադատություն, ապա այն դատարան է, որի կազմի անդամները չեն կարող հանդես չգալ որպես դատավոր,

գ) արգելվում է արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն:

Այսպիսով, անհրաժեշտ էր պարզել, Բարձրագույն դատական խորհուրդն արդյո՞ք որևէ դեպքում իրականացնում է (իրավասու է իրականացնել) արդարադատություն, և եթե պատասխանը դրական է, ապա

¹Նույնաբովանդակ դրույթ սահմանված է նաև Դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասով:

դրանից եզրահանգումն այն է, որ Սահմանադրության իմաստով Բարձրագույն դատական խորհուրդը դատարան է:

Այս համատեքստում անհրաժեշտ էր նաև, որ ՍԴՈ-1650 որոշմամբ բացահայտվեր, արտահայտվեր հստակ և ամբողջական իրավական դիրքորոշում «արդարադատության իրականացում» սահմանադրական եզրույթի վերաբերյալ: Ընդամին՝ սույն գործով բարձրացված սահմանադրական վեճի շրջանակներում այն անհրաժեշտ էր կատարել՝ հաշվի առնելով նաև, որ Սահմանադրության 162-րդ հոդվածով չի տրվել «արդարադատության իրականացում» սահմանադրական եզրույթի բովանդակային ողջ ծավալը (ինչպես վերը նշվեց հիշյալ հոդվածով կանոնակարգվում են արդարադատություն իրականացնող սուբյեկտային շրջանակի, արդարադատություն իրականացնելու սահմանադրաիրավական հիմքերի և դրան որևէ միջամտության արգելքի հարցերը), ինչպես նաև նկատի ունենալով, որ Սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումներով ամբողջությամբ չի մեկնաբանել «արդարադատության իրականացում» սահմանադրական եզրույթի սահմանադրական բովանդակությունը և որպես այդպիսին անդարադարձել է միայն դրա որոշ տարրերին:

«Արդարադատության իրականացում» եզրույթի բովանդակությանն անդրադարձ կատարվել է դոկտրինալ մեկնաբանություններով: Մենք համակարծիք ենք, որ արդարադատությունը Սահմանադրությամբ ամրագրված պետական գործունեության հատուկ տեսակ է, որն իրականացնում է միայն դատարանը՝ դատական համապարտադիր որոշումների օրինականությունը, արդարացիությունը, հիմնավորվածությունն ապահովող օրենքով սահմանված պահանջների ու կարգի խստագույն պահպանմամբ, համապատասխան դատավարական ձևերով և ուղղված է սահմանադրական, վարչական, քրեական, քաղաքացիական գործեր քննելուն և լուծելուն: Այսպիսով, արդարադատությունը՝ որպես դատարանների բացառիկ լիազորություն, համարվում է դատական իշխանության իրականացման եղանակը, միջոցը: Մենք համակարծիք ենք նաև, որ արդարադատության իրականացումը դատարանների մենաշնորհն է և չի կարող դրվել որևէ այլ մարմնի վրա, իրականացվում է միայն դատավարության (սահմանադրական, քաղաքացիական, քրեական, վարչական) օրենքով սահմանված կարգով և դատավարական որոշակի ձևերով: Արդարադատության իրականացման ձևը դատական նիստն է,

որին մասնակցում են գործի ելքով շահագրգիռ անձինք և նրանց ներկայացուցիչները¹:

Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշումներ Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակի, Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման կարգի, գործունեության սկզբունքների ու ընթացակարգերի առանձին հարցերի վերաբերյալ: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն ամրագրել է. «Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի գործունեության սկզբունքների և ընթացակարգերի տեսանկյունից առկա երաշխիքներին, ապա դրանց հիմնական ակունքը Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասն է, ըստ որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս **որպես դատարան** այն իմաստով, որ որպես դատարան հանդես եկող անկախ պետական մարմնի թե՛ ձևավորման, թե՛ գործունեության կարգը պետք է համապատասխանի դատարաններին բնորոշ համապատասխան հատկանիշներին:

(...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում Սահմանադրությամբ և այլ օրենքներով նախատեսված են դատարաններին բնորոշ այնպիսի դատավարական երաշխիքներ, ինչպիսիք են, մասնավորապես, բայց ոչ միայն, ողջամիտ ժամկետում գործի քննությունը, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարությունը, դատական վարույթի հրապարակայնությունը, դատական ակտերի պարտադիրությունը, որոնք իրենց ամբողջության մեջ ուղղված են Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացման ապահովմանը:

(...) հաշվի առնելով Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակը, դրա ձևավորման կարգի, ինչպես նաև գործունեության սկզբունքների առկայությունը՝ **Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական**

¹Տես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան 2010թ., «Իրավունք», էջ 897 և 899

խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելը բխում է առկա սահմանադրական իրավակարգավորումներից և չի խախտում անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները»:

Այսպիսով, Սահմանադրության վերաբերելի դրույթների վերլուծությունից բխում է, որ որպես դատարան հանդես գալու դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդն իրականացնում է արդարադատություն, հետևաբար՝ դատարան է, նրա անդամները հանդես են գալիս որպես դատավորներ, որոնք այդ առումով չունեն (չեն կարող ունենալ) որևէ տարբերակվող կարգավիճակ: Այս համատեքստում նաև շեշտադրման ենթակա է, որ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամները, ի մասնավորի՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում, չեն ներկայացնում այն ատյանի դատարանին, որի դատավոր են հանդիսացել Բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրվելու ժամանակ:

Ավելին, հարկ է նշել, որ Բարձրագույն դատական խորհուրդը որպես դատարան հանդես գալու դեպքերում, թե՛ օրենսդրությամբ և թե՛ գործնականում, մասնավորապես, երբ դատավարական գործընթացը կարգավորված չէ Դատական օրենսգրքով, ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի նորմերով, հրավիրում է դատական նիստեր, այդ նիստերին Բարձրագույն դատական խորհրդի **բոլոր** անդամները, անկախ իրենց ընտրվելու կարգից, մասնակցում են դատավորի պատմուճանով, Բարձրագույն դատական խորհրդի ընդունած որոշումները, բացառությամբ Դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի, ստորագրում են նիստին ներկա **բոլոր** անդամները, վերջիններս կարող են ներկայացնել հատուկ կարծիքներ և այլն:

Հարկ է նաև նշել, որ Սահմանադրական դատարանի իրավակիրառ պրակտիկայի համաձայն՝ անհատական դիմումների հիման վրա (Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ) գործերը քննության ընդունելիս և որոշումներ կայացնելիս Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում կայացրած որոշումները համարվում են որպես դատարանի վերջնական ակտեր, որոնք ընդունվել են արդարադատության իրականացման արդյունքում:

5. Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյո՞ք կարող է նույն դատարանի դատավորների համար նախատեսվել տարբեր պահանջներ, այդ թվում՝ սովորական պայմաններում (չպայմանավորված անցումային դրույթներով՝ կապված դատավորին տրվող երաշխիքների, օրինակ, անփոփոխելիության հետ), ապա պետք է նշել, որ դատավորի կարգավիճակը սահմանող առաջնային նորմը Սահմանադրության «Դատավորի կարգավիճակը» վերտառությամբ 164-րդ հոդվածն է: Հատկանշական է, որ նշված հոդվածը վերաբերվում է ինչպես Սահմանադրական դատարանի դատավորներին, այնպես էլ այլ դատարանների դատավորներին (անկախ նրանից, որ առկա են որոշակի տարբերություններ): Այսինքն՝ սահմանադրական մոտեցումն այն է, որ բոլոր դատավորներն ունեն նույն կարգավիճակը, բացառությամբ, եթե կա հատուկ կարգավորում, ինչի մասին առանձին ամրագրված է Սահմանադրության մեջ: Նույն մոտեցումն է դրսևորվել նաև դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջների (165-րդ հոդված), դատավորների ընտրության և նշանակման կարգի (166-րդ հոդված) առումներով: Մինչև նույն ժամանակ, հաջորդող հոդվածներով հատուկ կարգավորումներ կան Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի, վերաքննիչ դատարանների, Բարձրագույն դատական խորհրդի մասով:

Այսինքն՝ սահմանադրական լուծումները հետևյալն են. նախ սահմանվում են կարգավորումներ, որոնք վերաբերելի են բոլոր դատավորներին և բոլոր դատարաններին, իսկ երբ որևէ դատարան ունի հատուկ կարգավորում, ապա այդ մասին հաջորդիվ սահմանվում է նաև առանձին:

Սահմանադրության «Դատավորների ընտրության և նշանակման կարգը» վերտառությամբ 166-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Դատավորները պաշտոնավարում են մինչև վաթսունհինգ, իսկ Սահմանադրական դատարանի դատավորները՝ մինչև յոթանասուն տարին լրանալը»:

Այսպիսով, **Սահմանադրությունը Սահմանադրական դատարանի դատավորներից բացի մնացած բոլոր դատավորների, ներառյալ՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամների պաշտոնավարման համար սահմանել է առավելագույն տարիքային շեմ՝ վաթսունհինգ տարի:**

Բարձրագույն դատական խորհուրդը Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում հանդես է գալիս որ-

պես դատարան՝ իրականացնելով արդարադատություն (ավելին, ի մասնավորի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, վերջնական են, ենթակա չեն բողոքարկման):

Վերոշարադրյալի հիման վրա գտնում ենք, որ սույն գործով վիճարկվող դրույթները սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց են, և Բարձրագույն դատական խորհրդի բոլոր անդամները կարող են պաշտոնավարել մինչև իրենց վաթսունհինգ տարին լրանալը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ԴԵՏՐՈՍՅԱՆ

12 մայիսի 2022թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ◆ 2(106)2022

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի՝ «ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈՒ-1650 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, 2022 թվականի մայիսի 6-ին դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասի և 86-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈՒ-1650 որոշմամբ որոշել է.

«1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

(...)»:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ հատուկ կարծիք Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 6-ի ՍԴՈՒ-1650 որոշման (այսուհետ՝ ՍԴՈՒ-1650 որոշում) պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

նադրական դատարանի դատավորների մեծամասնության մոտեցումներից տարբերվող հետևյալ դիրքորոշումները.

1. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-1650 որոշման 3-րդ կետում սահմանադրաիրավական վեճի լուծման համար պարզման ենթակա հանգամանքների շրջանակում անդրադարձել է, մասնավորապես, այն հարցադրումներին, թե Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամի նշանակման և լիազորությունների դադարման հետ կապված իրավակարգավորումները համահունչ են արդյոք նույն խորհրդի կազմավորմանն ու գործունեությանը վերաբերող սահմանադրաիրավական դրոյթներին, և դատավորների համար Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնավարման առավելագույն տարիքը Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների համատեքստում արդյո՞ք կիրառելի է Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների նկատմամբ:

Սակայն կարծում եմ, որ սույն գործով բարձրացված սահմանադրական վեճի լուծման նպատակով առանցքային կարևորություն պետք է ունենար Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի (Սահմանադրություն, հոդվ. 173) և որպես դատարանի (Սահմանադրություն, հոդվ. 175, մաս 2) սահմանադրական կարգավիճակի քննության առարկա տարրերի՝ լիազորությունների, կազմակերպման ու գործունեության առանձնահատկությունների

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԵԿՏԱԿՆ ԿԵՆՏՐՈՆ 2(106)2022

վերլուծությանը և այդ մարմնի կազմավորման ու գործունեության հնստիտուցիոնալ նշանակության հարցերի պարզումը:

Միաժամանակ, հիշյալ հարցի կապակցությամբ Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակի երկակի նշանակությամբ պայմանավորված անհրաժեշտ էր պարզել՝

մի կողմից՝ Սահմանադրության «Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը» վերտառությամբ 7-րդ գլխի 162-րդ (Արդարադատության իրականացումը), 163-րդ (Դատարանները) և 164-րդ (Դատավորի կարգավիճակը) հոդվածները և սահմանադրական այդ նորմերի պահանջները «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) որոշակիացված կարգավորումները վերաբերելի՞ են արդյոք Բարձրագույն դատական խորհրդին որպես դատարան հանդես գալու դեպքում, հետևաբար՝ համադրելի՞ են դառնում դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամ դատավորների և Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների պաշտոնավարման տարիքին վերաբերող պահանջները,

մյուս կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի և Սահմանադրությամբ նախատեսված՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (հոդվ. 194, մաս 1), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (հոդվ. 195, մաս 1), Հաշվեքննիչ պալատի (հոդվ. 198, մաս 1) և պետական անկախ այլ մարմինների անդամների պաշտոնավարման տարիքը կարգավորող նորմերի բացակայության պայմաններում համադրելի՞ են արդյոք Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների պաշտոնավարման տարիքին վերաբերող պահանջները:

Հիշյալ հարցադրումների շրջանակներում Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամի կարգավիճակը կարգավորող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից Սահմանադրական դատարանը պետք է անդրադառնար նաև նշված անձանց պաշտոնավարման տարիքին առնչվող օրենսդրական կարգավորումների բացի խնդրին և, մասնավորապես, այդ բացի ազդեցության գնահատմանը սահմանադրա-

կանության տեսանկյունից: Սակայն ՍԴՈ-1650 որոշմամբ վերոհիշյալ հարցերին մասնակիորեն է անդրադարձ կատարվել:

2. Սահմանադրական դատարանը պետք է նաև քննարկի վիճելի իրավակարգավորումների սահմանադրականության հարցը Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչ՝ իրավական որոշակիության սկզբունքի ապահովման տեսանկյունից, որը՝ որպես իրավունքի գերակայության ապահովման առանցքային երաշխիք, կանխորոշում է օրենքների որակական այնպիսի հատկանիշներով օժտվածություն, ինչպիսիք են հստակությունը, կանխատեսելիությունն ու մատչելիությունը:

Այսպես՝ Սահմանադրական օրենքի վիճելի 80-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրության 174-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամ կարող է ընտրվել այն իրավաբան գիտնականը կամ այն հեղինակավոր իրավաբանը, որն ունի միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, ընտրական իրավունք, օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառություն:

Միաժամանակ, նույն հոդվածի վիճարկվող 9-րդ մասը սահմանում է, որ Ազգային ժողովի կողմից որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ չի կարող ընտրվել այն անձը, որն ունի նույն օրենսգրքով դատավոր նշանակվելու համար սահմանված որևէ սահմանափակում:

Այսինքն՝ ի լրումն Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամի ընտրության համար նախատեսված սահմանադրական պահանջների՝ Սահմանադրական օրենքը զուգահեռ սահմանում է լրացուցիչ չափանիշներ՝ այդ թվում դատավոր նշանակվելու համար սահմանված սահմանափակումների ձևով:

Այսպես՝ Սահմանադրական օրենքի՝ **«Դատավոր նշանակվելու սահմանափակումները»** վերտառությամբ 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Դատավոր չի կարող նշանակվել այն անձը՝

1) որը դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը մարված կամ հանված չէ.

2(106)2022
 ◆ ՍԵՆԵԿԱՆ
 ◆ ՍԵՆԵԿԱՆ
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 249

2) որը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ է կրել՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից.

3) որն ունի դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն.

4) որը չի անցել պարտադիր զինվորական ծառայություն կամ այլընտրանքային ծառայություն կամ օրենքով նախատեսված կարգով չի ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից (եթե անձն արական սեռի է).

5) որը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ սնանկ, և սնանկության վարույթը չի ավարտվել.

6) որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում.

(...):»:

Իսկ «Դատավորի թեկնածուի հավակնորդին ներկայացվող պահանջները» վերտառությամբ 97-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար որակավորման ստուգմանը կարող են մասնակցել 25-ից 60 տարեկան, ընտրական իրավունք ունեցող անձինք, եթե՝

1) ունեն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

2) Հայաստանի Հանրապետությունում ստացել են իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

3) տիրապետում են հայերենին.

4) ունեն անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկ՝ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակի իմացություն:

5) միայն իրավագիտության բակալավրի աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած

ՍԱՀՄԱՆԱՐՈՎՎԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ
◆ ՏԵԴԵՎՈՐ
◆ 2(106)2022

լինելու դեպքում ունեն առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, իսկ իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան ունենալու կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն:

6) առկա չեն դատավոր նշանակվելու՝ սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները»:

Չնայած այն հանգամանքին, որ ՍԴՈ-1650 որոշման 4.1-րդ կետում Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ՝ «(...) դատավորի թեկնածուի հավակնորդի համար նախատեսված պահանջներն Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի նկատմամբ կիրառելի են միայն դատավոր նշանակվելու համար Օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների մասով», այդուհանդերձ, հիշատակված կարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ դատավորի թեկնածուին առաջադրվող պահանջը՝ իր բովանդակային ու գործառնական նշանակությամբ, ինքնին ընկալվում է միաժամանակ որպես դատավոր նշանակվելու համար սահմանափակում, ուստի կարծում եմ, որ Սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի վիճարկվող 9-րդ մասի կարգավորման համատեքստում դատավորի համար սահմանված սահմանափակումները և դատավորի թեկնածուին առաջադրվող պահանջները հավասարապես վերաբերելի են դառնում Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրելու համար:

Այսպիսով, Սահմանադրական օրենքի հիշատակված կարգավորումներից հետևում է, որ վիճարկվող 80-րդ հոդվածի 9-րդ մասը չի բխում Սահմանադրության 174-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանությունից և իրավական որոշակիության տեսանկյունից ձևակերպված է ոչ բավարար ճշգրտությամբ ու հստակությամբ, ինչով պայմանավորված՝ Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրվելու և այդ անդամի պաշտոնավարելու վերաբերյալ դրույթներն իրավակիրառ պրակտիկայում կարող են հանգեցնել տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱՅԻՆ ◆ 2(106)2022

Հենց այս հանգամանքների բացահայտման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը պետք է բացահայտեր Բարձրագույն դատական խորհրդի ու նրա անդամի իրավական կարգավիճակի քննության առարկա տարրերի սահմանադրաիրավական բովանդակությունը և միայն դրա համատեքստում գնահատեր վիճարկվող նորմերի սահմանադրականությունը:

3. Սահմանադրության հիշատակված 174 և 175-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից նաև հետևում է, որ Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների պաշտոնավարման տարիքին վերաբերող սահմանադրական լուծումներն իրենց արտահայտումը պետք է ունենային Սահմանադրական օրենքում:

Ակնհայտ է, որ կարող է խոսք լինել քննության առարկային անմիջականորեն առնչվող օրենսդրական բացի մասին, քանի որ Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամին վերաբերող իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրերից մեկի՝ պաշտոնավարման տարիքի սահմանումը բացակայում է, ինչի հետևանքով ուղղակիորեն կարող է վտանգվել ոչ միայն Բարձրագույն դատական խորհրդի իրավաչափ գործունեությունը, այլև վերջինիս սահմանադրական գործառույթի՝ դատարանների և դատավորների անկախության երաշխավորումը:

Միաժամանակ, կարծում եմ, որ Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնավարման տարիքին վերաբերող օրենքի բացը, այնուհետև վիճարկվող նորմերի բովանդակությամբ այդ բացի հետևանքով պայմանավորված իրավական անորոշության առկայությունն իրավակիրառական պրակտիկայում իրենց հերթին կարող են հանգեցնել այդ նորմերի երկիմաստ մեկնաբանությունների:

Ելնելով առանց տարիքի պահանջի սահմանման, Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնավարման իրավակիրառ պրակտիկայից և այդ խնդրի կապակցությամբ առկա օրենսդրական բացի հաղթահարման անհրաժեշտությունից՝ գտնում եմ, որ այդ հարաբերությունների ամբողջական կարգավորված լինելը և դրանց բնականոն իրագործումը կարող էին իրականացվել միայն

ՍԱԳՄԱՆԱՐԿՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(106)2022

Սահմանադրական օրենքի համապատասխան դրույթները համակարգելու ու հստակեցնելու արդյունքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամի սահմանադրաիրավական կարգավիճակի տարրեր սահմանող կարգավորումները խնդրահարույց են, ինչը նաև նշանակում է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի համապատասխան դրույթները համակարգման ու հստակեցման կարիք ունեն:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ**

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

13 մայիսի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՐԿՄԱՆ
ԲԱԶԱՅԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԵՎ ՇԱՀՈՒՅԹՆԵՐԻ
ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԲԱԶՄԱԿՈՂՄ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

31 մայիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

«Հ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի
տեղակալ Ա. Պողոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 2(106)2022

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հունիսի 7-ին ստորագրված՝ «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի մարտի 24-ի N 361-Ա որոշմամբ հավանություն է տվել 2017 թվականի հունիսի 7-ին ստորագրված՝ «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիան վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և այդ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի մարտի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կոնվենցիան, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 24-ին Փարիզում Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հարկման բազայի քայքայումը և շահույթների տեղափոխումը ծրագրի (այսուհետ՝ BEPS ծրագիր) անդամ հանդիսացող երկրների կողմից՝ (Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2017 թվականի հունիսի 7-ին) կրկնակի հարկման համաձայնագրերում առկա խնդիրների կարգավորման նպատակով, որոնք վերաբերում են ռեզիդենտության որոշման կանոնների, մշտական հաստատության ձևավորման սկզբունքների հստակեցմանը, փոխկապակցված կազմակերպությունների հայտնաբերմանը, համաձայ-

2(106)2022

◆ ՍԵՂԻԿԻՍ

◆ ՌԵՍՈՐՍ

255

նագրերի դրույթների տարընկալման արդյունքում կրկնակի հարկման դեպքերի բացառմանը, իրավասու մարմինների միջև վեճերի կարգավորման ընթացակարգերի դյուրինացմանը:

2. Դիմումին կից ներկայացված Կոնվենցիան վավերացնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հիմնավորման մեջ և Կոնվենցիայի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանքում նշված է, որ Կոնվենցիայի մշակումը հանդիսանում է BEPS ծրագրի 15-րդ գործողությունը, որի կիրառությունը թույլ կտա Կոնվենցիան ստորագրած բոլոր երկրների հարկ վճարողների համար սահմանել կրկնակի հարկման համաձայնագրերի մի շարք դրույթների կիրառման միասնական մոտեցումներ, ինչն էլ հարկումից խուսափելը, կանխելը և հարկեր չվճարելու դեմ պայքարը կդարձնի ավելի արդյունավետ:

3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիայով փոփոխվում են եկամտի նկատմամբ հարկերի (անկախ այն հանգամանքից՝ այլ հարկեր կարգավորվում են, թե՛ ոչ) գծով կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագրերը (այսուհետ՝ Կարգավորող հարկային համաձայնագիր) (հոդվ. 1 և հոդվ. 2, կետ 1, ենթակետ «ա»):

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

4.1. Կարգավորող հարկային համաձայնագրի նպատակներով այն սուբյեկտի կողմից կամ այն կարգավորման միջոցով ստացված եկամուտը, որը Հայաստանի Հանրապետության հարկային օրենքով ընկալվում է որպես ամբողջովին կամ մասնակի ֆինանսապես թափանցիկ, համարել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի եկամուտ, սակայն միայն այնքանով, որքանով եկամուտը Հայաստանի Հանրապետության կողմից հարկման նպատակներով ընկալվում է որպես Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի եկամուտ (հոդվ. 3, կետ 1),

4.2. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետը (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ կետով) կիրառել Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթների փոխարեն կամ դրանց բացակայության դեպքում այնքանով, որքանով դրանք

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

անդրադառնում են այն հարցին, թե արդյոք այն սուբյեկտների կողմից կամ կարգավորումների միջոցով ստացված եկամուտը, որոնք երկու Պայմանավորվող երկրներից որևէ մեկի (ընդհանուր կանոնի միջոցով կամ որոշակի փաստական հանգամանքների և սուբյեկտների կամ կարգավորումների տեսակների առնչությամբ վարվելակերպը մանրամասն սահմանելու միջոցով) հարկային օրենքով ընկալվում են որպես ֆինանսապես թափանցիկ, համարվում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի եկամուտ, թե՛ ոչ (հոդվ. 3, կետ 4),

4.3. Եթե Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթների պատճառով անհատ չհանդիսացող անձը մեկից ավելի Պայմանավորվող երկրների ռեզիդենտ է, ապահովել որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները մյուս կողմի իրավասու մարմինների հետ ջանքեր գործադրեն՝ փոխադարձ համաձայնությամբ որոշելու, թե որ Պայմանավորվող երկրի ռեզիդենտ է համարվելու այդ անձը Կարգավորող հարկային համաձայնագրի նպատակներով՝ հաշվի առնելով դրա արդյունավետ կառավարման վայրը, ինկորպորացված կամ այլ կերպ կազմավորված լինելու վայրը և համապատասխան այլ գործոններ (հոդվ. 4, կետ 1),

4.4. Կարգավորող հարկային համաձայնագիրը փոփոխել այնպես, որ նախաբանի տեքստում ներառվի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված տեքստը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված պայմանով (հոդվ. 6, կետեր 1 և 2),

4.5. Հնայած Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին՝ Կարգավորող հարկային համաձայնագրով սահմանված արտոնությունը չձնորհել եկամտի կամ կապիտալի տարրի նկատմամբ, եթե հաշվի առնելով բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները՝ հիմքեր կան եզրակացնելու, որ այդ արտոնությունն ստանալն այդ արտոնությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցրած ցանկացած պայմանավորվածության կամ գործարքի գլխավոր նպատակներից մեկն էր, եթե չի հաստատվել, որ այդպիսի հանգամանքներում այդ արտոնությունը ձնորհելը համապատասխան կլիներ Կարգավորող հարկային համաձայնագրի համապատասխան դրույթների առարկային և նպատակներին. վերոհիշյալ դրույթը կիրառել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքում (հոդված 7, կետեր 1 և 2),

4.6. Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրի ռեզիդենտին, անկախ նրանից՝ որակավորված անձ է, թե՛ ոչ, տալ Կարգավորող հարկային համաձայնագրի արտոնությունների

իրավունք՝ Հայաստանի Հանրապետությունից ստացած եկամտի տարրի մասով, եթե ռեզիդենտը նշված առաջին Պայմանավորվող երկրում ներգրավված է ակտիվ բիզնես գործունեության մեջ, և Հայաստանի Հանրապետությունից ստացած եկամուտն առաջանում է այդ գործունեությունից կամ առնչվում է դրան. արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթների նպատակներով «ակտիվ բիզնես գործունեություն» եզրույթը չի ներառում Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 10-րդ կետի «ա» ենթակետում շարադրված գործունեությունները կամ դրանց որևէ համակցություն (հոդվ. 7, կետ 10, ենթակետ «ա»),

4.7. Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթները, որոնց համաձայն մի Պայմանավորվող երկրի ռեզիդենտ ընկերության կողմից վճարվող շահաբաժիններն ազատվում են հարկից, կամ նվազեցվում է դրույթաչափը, որով այդ շահաբաժինները կարող են հարկվել՝ պայմանով, որ փաստացի սեփականատերը կամ ստացողը լինի ընկերություն, որը մյուս Պայմանավորվող երկրի ռեզիդենտ է, և որը տիրապետում, տնօրինում կամ վերահսկում է շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալի, բաժնեմասերի, բաժնետոմսերի, ձայնի իրավունքի, քվեարկելու իրավունքի կամ սեփականության իրավունք ենթադրող այլ համանման իրավունքների որոշակի մասից ավելին, կիրառել միայն այն դեպքում, երբ այդ դրույթներով սահմանված՝ սեփականության իրավունքին առնչվող պայմանները գործում են 365-օրյա ժամկետում, որը ներառում է շահաբաժինները վճարելու օրը (այդ ժամկետը հաշվարկելու նպատակով հաշվի չեն առնվում սեփականության իրավունքին առնչվող փոփոխությունները, որոնք կարող են ուղղակիորեն կապված լինել բաժնեմասերը տնօրինող կամ շահաբաժինները վճարող ընկերության ընդհանուր վերակազմակերպման հետ, ինչպես, օրինակ՝ միաձուլման կամ բաժանման ձևով վերակազմակերպման դեպքում) (հոդվ. 8, կետ 1),

4.8. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին հարկելու իրավունքը սահմանափակելու նպատակով Հարկային համաձայնագրերի կիրառման մասով ապահովել Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված դրույթների կատարումը (հոդվ. 11),

4.9. այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը ՀՀ ձեռնարկության շահույթի մեջ ներառում և համապատասխանաբար հարկում է այնպիսի շահույթներ, որոնց մասով մյուս Պայմանավորվող երկրի ձեռնարկությունից հարկեր են գանձվել այդ մյուս Պայմանավորվող երկրում, և այդպիսով ներառված շահույթներն

այնպիսի շահույթներ են, որոնք Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունը կունենար, եթե երկու ձեռնարկությունների միջև հարաբերությունները լինեին այնպիսին, ինչպիսիք լինում են անկախ ձեռնարկությունների միջև, ապա համապատասխան ճշգրտումներ կատարել այդ շահույթների մասով Հայաստանի Հանրապետության տարածքում գանձված հարկի գումարում (հոդվ. 17, կետ 1),

4.10. Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին կետը կիրառել այն դրույթի փոխարեն կամ բացակայության դեպքում, որով սահմանվում է, որ Պայմանավորվող երկիրը պարտավոր է համապատասխան ճշգրտումներ կատարել իր ձեռնարկության շահույթների մասով իր տարածքում գանձված հարկի գումարում, եթե մյուս Պայմանավորվող երկիրն այդ շահույթը ներառում է այդ մյուս Պայմանավորվող երկրի ձեռնարկության շահույթներում և համապատասխանաբար հարկում է այդ շահույթները, և այդպիսով ներառված շահույթներն այնպիսի շահույթներ են, որոնք այդ մյուս Պայմանավորվող երկրի ձեռնարկությունը կունենար, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք լինում են անկախ ձեռնարկությունների միջև (հոդվ. 17, կետ 2),

4.11. Կոնվենցիայի 28-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ չկատարել Կոնվենցիայի մասով որևէ վերապահում՝ բացի այն վերապահումներից, որոնք ուղղակիորեն թույլատրվում են Կոնվենցիայի 28-րդ հոդվածի 1-ին կետով (հոդվ. 28, կետ 1) և այլն:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա Կոնվենցիային մասնակից երկրների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի հունիսի 7-ին ստորագրված՝ «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

31 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1651

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՅԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԵՎ
ՇԱՀՈՒՅԹՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆԶՎՈՂ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԲԱԶՄԱԿՈՂՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1651 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2017 թվականի հունիսի 7-ին ստորագրված՝ «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1651 որոշմամբ որոշել է, որ «2017 թվականի հունիսի 7-ին ստորագրված՝ «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1651 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴԴ-1651 որոշմամբ «2017 թվականի հունիսի 7-ին ստորագրված՝ «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դա-

տարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանի դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից**

¹Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ստորագրված: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով:** Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են

Էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների

ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 2(106)2022

ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման

էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի

միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

2(106)2022
ՏԵՂԵԿՎՈՐ
ՏԵՂԵԿՎՈՐ
ՍԱԿՄԱՆԱՐԿՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ

◆ **էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև

էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 2(106)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության

պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«31» մայիսի 2022թ.



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ԱՆՑԿԱՑՐԵԼ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԴԵՄՊԱՆԻ ՀԵՏ**



2022 թվականի ապրիլի 25-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլաս Սխերմերսին:

Իր բացման խոսքում Արման Դիլանյանը բարձր է գնահատել Նիդերլանդների Թագավորության շարունակական աջակցությունը Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը, մարդու իրավունքների պաշտպանության ու իրավունքի գերակայության ամրապնդման նպատակով իրականացվող բարեփոխումներին: Սահմանադրական դատարանի նախագահը ընդգծել է հայ-նիդերլանդական միջդատարանական կապերի կարևորությունը, որոնք կարող են նպաստել երկու երկրների միջև բարեկամական կապերի հետագա ամրապնդմանը և արդարադատության ոլորտում փորձի փոխանակմանը:

Նիկոլաս Սխերմերսն իր հերթին շնորհակալություն է հայտնել Սահմանադրական դատարանի նախագահին աշխատանքային հանդիպման հնարավորության համար՝ նշելով, որ Բարձր դատարանը Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության ազգային առաջնային գործընկերներից է: Դեսպան Սխերմերսը վերահաստատել է իր պատրաստակամությունը ներդնել անհրաժեշտ բոլոր ջանքերը, որոնք միտված են իրավունքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության շուրջ համագործակցության խորացմանը:

Աշխատանքային հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվել է սահմանադրական իրավունքի ու սահմանադրական արդարադատության ոլորտներում համատեղ նոր ծրագրերի և միջոցառումների իրականացումը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԴԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆՆԸ**



2022 թվականի ապրիլի 28-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է 2021 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացրած ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) պատվիրակությանը, որի կազմում էին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության ղեկավար Յոհան Մըրֆին, ընտրական նորարարական տեխնոլոգիաների հարցերով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ գլխավոր խորհրդատու Վլադիմիր Միսևը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրական հարցերով խորհրդատու Մունյիկվա Համազիրիպին:

Ողջունելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ պատվիրակության անդամներին՝ Արման Դիլանյանը նշել է, որ Սահմանադրական դատարանը մեծապես արժևորում է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի գործունեությունը՝ հաշվի առնելով կազմակերպության կարևոր դերակատարումը ԵԱՀԿ տարածքում տեղի ունեցող ժողովրդավարական ու իրավական գործընթացներում:

Հանդիպման ընթացքում Արման Դիլանյանը պատասխանել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ պատվիրակության անդամներին հետաքրքրող հարցերին:

◆ 2(106)/2022
◆ ՍԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ



2022 թվականի մայիսի 17-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Սերբիայի արտակարգ և լիազոր դեսպան Տատյանա Պանայոտովիչ Յվետկովիչին:

Ողջունելով նորանշանակ դեսպանի քաղաքավարական այցը

Սահմանադրական դատարան՝ Արման Դիլանյանը նշել է, որ հայ-սերբական բարեկամական հարաբերություններն ամուր հիմք են ստեղծում նաև երկու երկրների սահմանադրական դատարանների միջև փոխշահավետ համագործակցության զարգացման համար:

Այս համատեքստում երկուստեք կարևորվել է հայ-սերբական երկկողմ և բազմակողմ իրավական փոխգործակցության ամրապնդումը:

2(106)2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՆԻԴԵՐԼԱՆԴԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻՆ



2022 թվականի մայիսի 16-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլաս Սխերմերսին, որին ուղեկցում էին նոր մեկնարկող «խորհրդարարական աջակցություն

Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման ծրագրի» փորձագիտական թիմի անդամները:

Ողջունելով դեսպանին և փորձագիտական խմբի անդամներին՝ Արման Դիլանյանը կարևորել է նոր կարճաժամկետ խորհրդատվական ծրագրի մեկնարկը՝ համոզմունք հայտնելով, որ Սահմանադրական դատարանի ու Նիդերլանդների Թագավորության դեսպանության միջև գործուն համագործակցությունը կշարունակի լրացվել նոր փոխշահավետ ծրագրերով:

Իր հերթին դեսպան Նիկոլաս Սխերմերսը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար և նշել, որ նիդերլանդական կողմը մեծապես արժևորում է Սահմանադրական դատարանի հետ ընթացիկ արդյունավետ գործընկերությունը՝ միտված Հայաստանում իրավունքի գերակայության ու ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը:

Հանդիպման ընթացքում կարծիքներ են փոխանակվել հայ-նիդերլանդական իրավական կապերի հետագա ամրապնդման շուրջ:

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԼԵՐ ԲԱԶԻ ՄԱԼՈՐԻԻ ՀԵՏ



2022 թվականի հունիսի 8-ին տեղի է ունեցել Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի հանդիպումը Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն» իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) նախագահ Կլեր Բազի Մալորիի հետ, որը Բարձր դատարանի հրավերով պաշտոնական այցով ժամանել է Հայաստանի Հանրապետություն:

Հանդիպման մեկնարկին Արման Դիլանյանը Կլեր Բազի Մալորիին

շնորհակալություն է հայտնել հրավերն ընդունելու և պաշտոնական այցով Հայաստան ժամանելու համար:

Սահմանադրական դատարանի նախագահը կարևորել է Վենետիկի հանձնաժողովի հետ ավանդաբար ակտիվ համագործակցության հետագա զարգացումը և ընդգծել Սահմանադրական դատարանի հանձնառությունը՝ շարունակելու արդյունավետ գործընկերությունը Սահմանադրական արդարադատության միասնական խորհրդի շրջանակներում:

Իր հերթին Վենետիկի հանձնաժողովի նախագահ Կլեր Բազի Մալորին շնորհակալություն է հայտնել Երևան այց կատարելու հրավերի ու ջերմ ընդունելության համար և նշել, որ իր պաշտոնական այցը կնպաստի երկկողմ և բազմակողմ ձևաչափերով համագործակցության ընդլայնմանն ու խորացմանը: Կլեր Բազի Մալորին հայտնել է, որ Վենետիկի հանձնաժողովը պատրաստակամ է խորացնելու համագործակցությունը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի հետ և դիտարկելու ապագայում համատեղ նախաձեռնությունների իրականացումը:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել ժողովրդավարության խթանման, մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ապահովման ուղղությամբ հետագա համագործակցության օրակարգի շուրջ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 2(106)2022

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ
ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԱՐԻԱ
ՊԵՅԻՆՈՎԻԶ ԲՈՒՐԻԶԻՆ**



2022 թվականի հունիսի 22-ին աշխատանքային այցով Ստրասբուրգում գտնվող Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը հանդիպել է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիշին:

Սահմանադրական դատարանի նախագահը շնորհակալություն է հայտնել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ցուցաբերած ջերմ ընդունելության համար՝ նշելով, որ մեծապես կարևորում է Եվրոպայի խորհրդի շարունակական աջակցությունը Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող դատաիրավական բարեփոխումներին:

Արման Դիլանյանը փաստել է, որ Եվրոպայի խորհուրդը Սահմանադրական դատարանի առաջնային գործընկերներից է, և ձևավորված փոխգործակցությունը առանցքային նշանակություն ունի իրավունքի գերակայության խթանման և դատական համակարգի հանդեպ հանրային վստահության հետագա ամրապնդման համար:

Մարիա Պեյչինովիչ Բուրիշը ողջունել է Սահմանադրական դատարանի նախագահի այցը Ստրասբուրգ՝ նշելով, որ Եվրոպայի խորհուրդն արժևորում է Հայաստանի հետ փոխգործակցությունը և պատրաստակամ է աջակցելու Հայաստանի Հանրապետությունում ընթացող ժողովրդավարական բարեփոխումներին:

Հանդիպման ընթացքում մտքեր են փոխանակվել ՀՀ-ԵԽ Գործողությունների ծրագրի 2019-2022 թթ. իրականացման և հետագա համագործակցության հեռանկարների շուրջ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՔԵՐՏ ՍՊԱՆՈՅԻ ՀԵՏ



2022 թվականի հունիսի 23-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի ստրասբուրգյան աշխատանքային այցի ծրագիրն ավարտվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Ռոբերտ Սպանոյի հետ հանդիպմամբ:

Շնորհակալություն հայտնելով հանդիպման հնարավորության համար՝ Արման Դիլանյանը կարևորել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դերը հիմնարար իրավունքների պաշտպանության գործում՝ ընդգծելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի հանձնառությունը՝ ամրապնդելու համագործակցությունը ՄԻԵԴ-ի հետ:

Շնորհակալություն հայտնելով Արման Դիլանյանին ստրասբուրգյան իր այցի շրջանակներում ՄԻԵԴ այցելելու համար և ՄԻԵԴ դատական տարվա բացման հանդիսավոր նիստին մասնակցելու համար: ՄԻԵԴ-ի նախագահը կարևորել է նման հանդիպումներն ու շփումները և ներկայացրել է անդամ պետությունների ազգային դատարանների հետ ՄԻԵԴ երկխոսության զարգացման և համագործակցության խորացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Կողմերը երկուստեք կարևորել են գործընկերության զարգացումը Եվրոպայի բարձր դատարանների միասնական ցանցի շրջանակներում, որը տեղեկատվության փոխանակման կարևոր հարթակ է, ու որում ներկայումս ընդգրկված են 34 անդամ պետությունների 70-ից ավել բարձր դատարաններ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(106)2022

ՍԱՀՄԱՆԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՐ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ ԴՈՒՆՅԱ ՄԻՅԱՏՈՎԻՉԻ ՀԵՏ



2022 թվականի հունիսի 23-ին աշխատանքային այցով Ստրասբուրգում գտնվող Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը հանդիպել է Եվրոպայի խորհրդի՝ Մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչի հետ:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Արման Դիլանյանն առանձնահատուկ կարևորել է Եվրոպայի խորհրդի՝ Մարդու իրավունքների հանձնակատարի դերը եվրոպական տարածաշրջանում հասարակության տարբեր խմբերի իրավունքների պաշտպանության գործում:

Դունյա Միյատովիչը, շնորհակալություն հայտնելով Սահմանադրական դատարանի պատվիրակությանը Ստրասբուրգ աշխատանքային այց կատարելու համար, նշել է, որ մշտապես հետևում է Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների ու իրավունքի գերակայության ոլորտներում տեղի ունեցող զարգացումներին և ողջունել է մեր երկրում իրականացվող ժողովրդավարական, այդ թվում՝ դատաիրավական բարեփոխումները:

Անդրադառնալով Արցախում հետպատերազմյան իրավիճակին՝ դատարանի նախագահը շեշտել է հայ ռազմագերիների անհապաղ հայրենադարձման հարցի հրատապությունն ու արժևորել է ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի դերակատարումն այս հարցում:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել Սահմանադրական դատարանի և ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի միջև հետագա համագործակցության ակտիվացման շուրջ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԵՆ ԱՅՅԵԼԵԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**



2(106)2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2022 թվականի ապրիլի 13-ին Սահմանադրական դատարան են այցելել Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողները:

Հանդիպման մեկնարկին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը ողջունել է Բարձր դատարան ճանաչողական այց կատարած ուսանողներին:

Արման Դիլանյանն ուսանողներին ներկայացրել է Սահմանադրական դատարանի առաքելությունն ու Սահմանադրական դատարանում առանձին գործերի քննության և լուծման առանձնահատկությունները, ինչպես նաև պատասխանել է նրանց հետաքրքրող հարցերին:

Հանդիպման ավարտին Սահմանադրական դատարանի նախագահն ուսանողներին հորդորել է սովորել բարձր առաջադիմությամբ և ձեռք բերված գիտելիքները ծառայեցնել ի նպաստ Հայաստանի Հանրապետության:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ



2022 թվականի մայիսի 11-ին Սահմանադրական դատարան են այցելել Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողները:

Այցի ընթացքում ուսանողներին ընդունել է Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

Ողջունելով Բարձր դատարան ճանաչողական այց կատարած ուսանողներին՝ Արման Դիլանյանն անդրադարձել է Սահմանադրական դատարանի առաքելությանն ու լիազորությունների շրջանակին, ներկայացրել է Սահմանադրական դատարանում անհատական դիմումներով գործերի քննության կարգը և այդ գործերի լուծման առանձնահատկությունները, ինչպես նաև պատասխանել նրանց հետաքրքրող հարցերին:

ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



2(106)2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2022 թվականի մայիսի 20-ին Սահմանադրական դատարան ճանաչողական այցով հյուրընկալվել էին Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի իրավագիտության ֆակուլտետի ուսանողները:

Այցի շրջանակներում ուսանողներին ողջույնի խոսքով է դիմել Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, որը կարևորել է նմանատիպ այցերի շարունակական կազմակերպումն ու հորդորել է ուսանողներին մշտապես ցուցաբերել նախաձեռնողականություն:

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



2022 թվականի մայիսի 26-ին Սահմանադրական դատարան ճանաչողական այցով հյուրընկալվել էին Հայ-ռուսական համալսարանի՝ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի իրավագիտության բաժնի ուսանողները:

Այցի շրջանակներում ուսանողներին հանդիպել և ողջույնի խոսքով է դիմել Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (IRZ) ՀԵՏ



2022 թվականի հունիսի 3-4-ը Դիլիջանում տեղի է ունեցել «Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումներին առաջադրվող բովանդակային պահանջները և Սահմանադրական դատարանի որոշումների կատարման առանձնահատկությունները» թեմայով երկօրյա

մասնագիտական աշխատաժողովը: Միջոցառումը կազմակերպվել է Սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ՝ Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության կողմից ֆինանսավորվող և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) ղեկավարությամբ Կոնսորցիումի կողմից իրականացվող «Արդարադատության համակարգի ամրապնդման» ծրագրի շրջանակներում: Երկօրյա աշխատաժողովին մասնակցել են Սահմանադրական դատարանի դատավորներ և Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների (Հանրապետության նախագահ, Ազգային ժողով, Կառավարություն, Բարձրագույն դատական խորհուրդ, դատարաններ, դատախազություն, Մարդու իրավունքների պաշտպան, փաստաբաններ) ներկայացուցիչներ:

Երկօրյա աշխատաժողովի շրջանակներում քննարկվել են Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումներին առաջադրվող բովանդակային պահանջները, նշված ոլորտին առնչվող միջազգային փորձը, Սահմանադրական դատարանում իրավակիրառ պրակտիկայի վիճարկման առանձնահատկությունները, Սահմանադրության մեկնաբանության մեթոդաբանական առանձնահատկությունները, Սահմանադրական դատարանի որոշումների կատարման մեթոդաբանական առանձնահատկությունները, ընդունված որոշումները հանրությանն ու հասցեատերերին հաղորդակցելու առանձնահատկությունները:

ՍԱՀՄԱՆԱՊՐԱՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(106)2022

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ «ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ



2022 թվականի հունիսի 8-ին մեկնարկել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի կողմից համատեղ կազմակերպված **«Դատական իշխանությունը՝ որպես ժողովրդավարության երաշխավոր»** խորագրով բարձր մակարդակի խորհրդաժողովը:

Խորհրդաժողովի մեկնարկին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն իր ողջույնի ուղերձում կարևորել է Եվրոպայի խորհրդի և Վենետիկի հանձնաժողովի հետ շարունակական համագործակցությունը և հույս հայտնել, որ հաջորդիվ քննարկումները նոր լիցքեր կհաղորդեն Հայաստանի Հանրապետությունում իրավունքի գերակայության և սահմանադրական մշակույթի ամրապնդման նպատակով հայեցակարգերի ներդրմանը:

Ողջույնի խոսքերով հանդես են եկել նաև Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի՝

մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության՝ մարդու իրավունքների, արդարադատության և իրավական համագործակցության չափանիշների ներդրման վարչության տնօրեն Ֆրեդերիկ Դոլտը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի հրավերով խորհրդաժողովին մասնակցում է նաև Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) նախագահ տիկին Կլեր Բագի Մալորին, որը բացման արարողության ընթացքում հանդես է եկել հիմնական գեկույցով:

Խորհրդաժողովի աշխատանքներին մասնակցում են Հայաստանի Հանրապետության դատական իշխանության ներկայացուցիչներ, Եվրոպայի խորհրդի և անդամ պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներ ու փորձագետներ, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 372/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ**

Գլխավոր խմբագիր՝

Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Խմբագիր՝

Ս. Խաչատրյան

Ստորագրված է տպագրության՝ 15.10.2022թ.

Դասիչ՝ 77754

Գրաչափը 70X100 1/16

Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Բաղրամյան 10

Հեռախոս՝ 011-58-81-81 (189)

E-mail: armlaw@concourt.am

<http://www.concourt.am>


Вестник Конституционного Суда Республики Армения N 2(106)2022

Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 2(106)2022

Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 2(106)2022

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am

ISSN 8888-0000



ABC-abc-1234

